

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
№ 4 (71)

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ
JOURNAL FOR ARMENIAN STUDIES

Հիմնադիր՝ «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամ

Խմբագրական խորհուրդ՝

Լ. Ս. Մկրտչյան (**նախագահ**),

Ա. Վ. Գալստյան (**գլխավոր խմբագիր**),

Ա. Հ. Հարությունյան (**գլխավոր խմբագրի տեղակալ**),

Մ. Ս. Իսախիրյան, Է. Գ. Հովհաննիսյան, Ս. Դ. Դանիելյան,

Ա. Գ. Դոլուխանյան, Վ. Գ. Համբարձումյան,

Ա. Հ. Հակոբյան, Է. Ս. Մկրտչյան, Ս. Պ. Մուրադյան,

Ա. Տազեայան (Բեյրութ), Զ. Պողոսյան (Իտալիա),

Հ. Մարտիրոսյան (Նիդերլանդներ), Ա. Հ. Մանուկեան (Շվեյցարիա)

Գրանցման վկայական՝ 211.200.00182

Գրանցման տարեթիվը՝ 26.03.2003թ.

Պարբերականությունը՝ եռամսյա

Բոլոր նյութերն ուղարկվում են գրախոսության:

Արտատպության դեպքում հղումը «Հայագիտական հանդես»-ին պարտադիր է:

Մեր հասցեն՝ Երևան, Ալեք Մանուկյան փ. 13, հեռախոս՝ 55-60-30 (1-18)

Կայքէջ՝ <https://armenianstudies.aspu.am/index.php/armenianstudies/index>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ԽԱԼԱԹՅԱՆ, ՇՈՒՇԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ռոլանդ Շառոյանի «Մանկապարտեզի ժամանակը» և «Սուրբ հայր Հովհաննեսի վախճանը» պատմվածքների բառապաշարի քննություն-----12

ԼԱՌԻՐԱ ԱՎԱԳՅԱՆ

Դարձվածքները Ջիվանու ստեղծագործություններում-----32

ՀՌԻՓՄԻՄԵ ԿՈՍՏԱՆՅԱՆ

Հոլովի կարգի ըմբռնումը հայ և ռուս լեզվաբանության մեջ-----43

ԹԱՄԱՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ

18-րդ դարի առաջին կեսին Վենետիկում տպագրված աշխարհաբար գրքերի լեզվական բնութագիրը-----56

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ավ. Իսահակյանի «Լիլիթ» պոեմի արձագանքները հայ արվեստի համայնապատկերում-----75

ԿԱՐԵՆ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Լուի Արագոնի, Անդրե Բրետոնի, Անտոնին Արտոյի և Հենրիկ Էդոյանի ստեղծագործությունները սյուրռեալիզմի տեսանկյունից-----92

ՆԵԼԼԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Վազգեն Շուշանյանի «Օրագիր»-ի առանձնահատկությունների շուրջ-----115

ՆԱՐԻՆԵ ԱՐՇԱԿՅԱՆ

Սրբուհի Լիսիցյանի դերը պարերգերի գրառման և ուսումնասիրման գործում--134

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ամերիկացի բողոքական միսիոներ Մուրգես Փերմըլիի հաղորդած տեղեկությունները Արևմտյան Հայաստանի և հայերի մասին-----151

ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ, ՀՐԱՆՏ ՎԻՐԱԲՅԱՆ

Հակապետական խռովությունների ճնշումը ՀՀ Զանգիբասարի, Բոյուք-Վեդիի, Դավալուի շրջաններում, Սուրմալուի գավառում 1918-1920 թթ.-----176

ԱՐՄԱՆ ԱՆԴՐԻԿՅԱՆ

Իրանահայ հոգևոր թեմերը XIX դ. պարսկահայության վիճակի բարելավումը Նասրեդդին և Մոզաֆֆարեդդին շահերի օրոք-----197

ՇԱՀԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Տարածքային վերամիավորման գաղափարի դրսևորումները «Հայաստանի վերամիավորման շարժում» (1966–1967) և «Հայաստանի վերամիավորման միություն» (1969–1971) ընդհատակյա կազմակերպություններում-----208

ՄՇԱԿՈՒՅԹ

ԻՎԵԹ ԹԱՋԱՐՅԱՆ

Իդա Քար. 20-րդ դարի «բոհեմական լուսանկարչուհին»-----223

ՆԱԻՐԻ ԲԱԼԱԲԵԿՅԱՆ

Ուրարտական որմնանկարչական արվեստը հին աշխարհի մշակույթում-----239

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ, ԴԻԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ազգային դպրոցը՝ որպես կրթության և ազգային անվտանգության կայացման հիմնասյուն-----254

ԺԵՆՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Շարահյուսության ուսուցման մեթոդիկայի տեսության ձևավորման և զարգացման պատմական ուղիները-----270

ԱՐՄԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Երաժշտական լսողությունը որպես երաժշտական ընդունակությունները զարգացնող միջոց-----285

ՄԱՆԵ ԲԱՐԵՂԱՍՅԱՆ

Երգչական ձայնալարերի արյունազեղման պաթոգենեզը և դրա հաղթահարման մանկավարժական մեթոդները-----298

ԷԴԳԱՐ ԱՄԻՐՅԱՆ, ՍՊԱՐՏԱԿ ՍՈՂՈՅԱՆ

Մանկավարժության տրանսֆորմացիան թվային դարաշրջանում՝ արհեստական բանականության (AI) և վիրտուալ իրականության (VR) միջոցով-----309

СОДЕРЖАНИЕЛИНГВИСТИКА**ГАЯНЕ ХАЛАТЯН, ШУШАН ХАЧАТРЯН**

Исследование лексики рассказов Роланда Шарояна «Время детского сада» и «Кончина святого отца Ованнеса»-----12

ЛАУРА АВАКЯН

Фразеологизмы в произведениях Дживани-----32

РИПСИМЕ КОСТАНЫН

Восприятие падежной классификации в армянском и русском языкознании-----43

ТАМАРА ПОГОСЯН

Лингвистическая характеристика книг на новоармянском языке, напечатанных в Венеции в первой половине XVIII века-----56

ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ, ЭТНОГРАФИЯ**ЛИЛИТ ГЕВОРГЯН**

Отклики поэмы Ав. Исаакяна “Лилит” в панораме армянского искусства-----75

КАРЕН ХУРШУДЯН

Творчество Луи Арагона, Андре Бретона, Антонена Арто и Генрика Эдоюна с точки зрения сюрреализма-----92

НЕЛЛИ ТАТЕВОСЯН

О специфике «Дневника» Вазкена Шушаняна («Орагир»)-----115

НАРИНЕ АРШАКЯН

Роль Сарбуи Лисицян в записи и изучении танцевальных песен-----134

ИСТОРИЯ

ЭДГАР ОГАННИСЯН, АВЕТИС АРУТЮНЯН

Информация об Западной Армении и армянах, представленная американским протестантским миссионером Моузесом Пармели-----151

ВАНИК ВИРАБЯН, ГРАНТ ВИРАБЯН

Подавление антигосударственных восстаний в Зангибасарском, Беюк-Ведийском, Давалинском районах армении и в провинции Сурмалу в 1918-1920 гг.-----176

АРМАН АНДРИКЯН

Ирано-армянские духовные темы и улучшение положения персидских армян в XIX веке в период правления Насреддина и Мозаффареддина шахов-----197

ШАГЕН АРУТЮНЯН

Проявления идеи территориального воссоединения в подпольных организациях «Движение за воссоединение Армении» (1966–1967) и «Союз за воссоединение Армении» (1969–1971)-----208

КУЛЬТУРА

ИВЕТ ТАДЖАРЯН

Ида Кар: "Богемный фотограф XX века"-----223

НАИРИ БАЛАБЕКЯН

Урартское фресковое искусство в культуре древнего мира-----239

ПЕДАГОГИКА

АСМИК АМИРДЖАНЫН, ДИАНА МАРГАРЯН

Национальная школа как основа образования и национальной безопасности----254

ЖЕНЯ ОГАННИСЯН

Исторические и теоретические пути формирования и развития методики преподавания синтаксиса-----270

АРМИНЕ АЙРАПЕТЯН

Музыкальный слух как средство развития музыкальных способностей-----285

МАНЕ БАРЕГАМЯН

Патогенез кровоизлияния в певческие голосовые складки и педагогические методы его преодоления-----298

ЭДГАР АМИРЯН, СПАРТАК СОГОЯН

Трансформация образования в цифровую эпоху с помощью искусственной интеллекта(AI) и виртуальной реальности (VR)-----309

CONTENTSLINGUISTICS**GAYANE KHALATYAN, SHUSHAN KHACHATRYAN**

Analysis of the vocabulary in Roland Sharoyan’s short stories “Kindergarten time” and “The death of father Hovhannes”-----12

LAURA AVAGYAN

Phraseological units in Jivani’s works-----32

HRIPSIME KOSTANYAN

The Understanding of Case Classification in Armenian and Russian Linguistics-----43

TAMARA POGHOSYAN

Linguistic analysis of the Modern Armenian
(ashkharabar) books printed in the first half of the 18th century in Venice-----56

LITERARY STUDIES, ETHNOGRAPHY**LILIT GEVORGYAN**

The Respeption of Avetik Isahakyan’s “Lilith” Poem in the Panorama of Armenian
Art-----75

KAREN KHURSHUDYAN

The works of Louis Aragon, André Breton, Antonin Artaud, and Henrik Edoyan from the
perspective of surrealism-----92

NELLI TADEVOSYAN

On the Specificity of Vasken Shushanyan’s “*Diary*” (“*Oragir*”)-----115

NARINE ARSHAKYAN

Srpouhi Lisitsian’s role in the documentation and study of dance songs-----134

HISTORY**EDGAR HOVHANNISYAN, AVETIS HARUTYUNYAN**

Information on Western Armenia and the Armenians Presented by the American Protestant Missionary Moses Parmelee-----151

VANIK VIRABYAN, HRANT VIRABYAN

Suppression of anti-state uprisings in the Zangibasar, Boyuk-Vedi, and Davalu regions of Armenia, and in the Surmalu province in 1918-1920-----176

ARMAN ANDRIKYAN

Iranian-Armenian ecclesiastical dioceses and the improvement of the condition of Persian Armenians in the 19th century during the reigns of Nasreddin Shah and Mozaffar Ad-Din Shah-----197

SHAHEN HARUTYUNYAN

Manifestations of the Idea of Territorial Reunification in the Underground Organizations “Union for the Reunification of Armenia” (1966–1967) and “Movement for the Reunification of Armenia” (1969–1971)-----208

CULTURE**YVETTE TAJARIAN**

Ida Kar: A "Bohemian Photographer" of the 20th Century-----223

NAIRI BALABEKYAN

Urartian fresco art in the culture of the Ancient World-----239

PEDAGOGY**HASMIK AMIRJANAN, DIANA MARGARYAN**

The National school as the basis of education and national security-----254

ZHENYA HOVHANNISYAN

Historical and theoretical paths of the formation and development of syntax teaching methodology-----270

ARMINE HAYRAPETYAN

Musical ear as a means of developing musical abilities-----285

MANE BAREGHAMYAN

Pathogenesis of Vocal Fold Hemorrhage in Singers and Pedagogical Methods for Its Overcoming-----298

EDGAR AMIRYAN, SPARTAK SOGHOYAN

Transforming Education in the Digital Age with Artificial Intelligence (AI) and Virtual Reality (VR)-----309

ԼԵՂՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱՅԱՆԵ ԽԱԼԱԹՅԱՆ

ՇՈՒՇԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌՈԼԱՆԴ ՇԱՌՈՅԱՆԻ «ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋԻ ԺԱՄԱՆԱԿԸ» ԵՎ «ՍՈՒՐԲ ՀԱՅՐ
ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱԽՃԱՆԸ» ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.202

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացնում ենք Ռոլանդ Շառոյանի «Մանկապարտեզի ժամանակը» և «Սուրբ հայր Հովհաննեսի վախճանը» պատմվածքների բառապաշարի տարբեր շերտերի քննություն՝ համագործածական բառեր, ժողովրդախոսակցական կամ բարբառային բառեր, դարձվածքներ, հեղինակային նորակազմություններ, կրկնաբանություններ, որոնց միջոցով հեղինակը պատկերավոր է դարձնում Սասնա միջավայրի և կերպարների նկարագրությունը:

Բանալի բառեր և արտահայտություններ. *համագործածական բառեր, ժողովրդախոսակցական և բարբառային բառեր, դարձվածքներ, հեղինակային նորակազմություններ, հնաբանություններ, կրկնաբանություններ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ռոլանդ Շառոյանի պատմվածքների բառապաշարը բազմաշերտ է: Նա, լինելով սասունցի, իր ստեղծագործություններում բազմիցս կիրառել է Սասնա բարբառին բնորոշ բառամիավորներ. դրանցով ներկայացրել է այն միջավայրը, որտեղ կատարվում են գործողությունները: Մեր նպատակն է կատարել «Մանկապարտեզի ժամանակը» և «Սուրբ հայր Հովհաննեսի վախճանը» պատմվածքների բառապաշարի տարբեր շերտերի քննություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքն իրականացնելիս օգտվել ենք առավել գործածական՝ հետազոտական, ոճաբանական, մասնավոր-որոնողական, ստուգման մեթոդներից:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Գեղարվեստական երկի հարստությունը հեղինակի բառապաշարն է, որի մանրակրկիտ վերլուծությունները համարվում են կարևոր, քանի որ տվյալ գրողի լեզվի մասին պատկերացումներ են ձևավորվում:

Հ.Հարությունյանը գրում է, որ գրողն ազատ է բառերի ու դարձվածքների ընտրության, բառակազմական միջոցների գործադրության, ձևաբանական ու շարահյուսական միջոցների նպատակադիր օգտագործման մեջ, բառերը փոխաբերական իմաստներով ու առումներով գործածելու, նոր կապակցություններ ու դարձվածքներ կերտելու, պատկերավոր արտահայտություններ ստեղծելու մեջ, բայց այդ բոլորը տվյալ լեզվում գործող օրինաչափությունների սահմաններում (**Հարությունյան Հ., 1986**):

Գրական երկի բառապաշարի կորիզը, հիմքը կազմում են **համագործածական բառերը**: Դրանք առարկաների, երևույթների, հատկանիշների, գործողությունների առավել սովորական և լայնորեն տարածված անուններն են, որ միևնույն չափով գործածվում են և՛ առօրյա, գործնական, գիտական, տեխնիկական ոճերում, և՛ գեղարվեստական գրականության մեջ (**Խլղաթյան Ֆ., 2007**):

Ռ. Շառոյանի բառապաշարի սովոր մասը կազմում են համագործածական բառերը: Այս բառաշերտը ամենաձավալունն է լեզվի բառապաշարում, հետևաբար նաև գեղարվեստական գրականության լեզվի հիմնական կորիզը: Հեղինակը հմտորեն օգտվում է դրանց իմաստային բազմազանությունից: Քննության ենթակա պատմվածքներում («Մանկապարտեզի ժամանակը», «Սուրբ հայր

Հովհաննեսի վախճանը») հանդիպում են նույն բառի իմաստային նուրբ, տարբեր գործածություններ, որոնց միջոցով հեղինակը ձգտել է ոճավորել իր խոսքը:

...նայում էինք, թե **կապույտ** շորտիկ հագած աղջիկը չոր ընկույզե փայտով ոնց էր օձի քեղերի միջից վախվորած դուրս քաշում գնդակը (**Շառոյան Ռ., 2012**):

Մորս գլխաշորը բաց **կապույտ** չթից էր, սահել ու փռվել էր ուսին:

Մայրս նստել էր աղվիցի քարին, կաթի դույլով լիքը **կանաչ** լոբին ջարդում լցնում էր ծակոտկեն թասի մեջ:

...կողքին մանուշակի թերթերի նման **կանաչ** բորբոս էր բռնում:

Համագործածական բառերի ոճական քննության հիմնական եղանակներից մեկը դրանց դիտարկումն է մերձիմաստ լեզվական իրողությունների՝ հոմանիշ բառերի զուգորդությամբ (**Հալաջյան Մ., 2005**):

Կապույտ և **կանաչ** բառերը ունեն տարբեր հոմանիշներ, սակայն, ինչպես նկատում ենք, հեղինակը նախապատվությունը տվել է նրանց ելակետային բառին, որը ոճականորեն ավելի չեզոք է:

Հոմանշային շարք կազմող բառերը միմյանցից տարբերվում են ոճական, հուզարտահայտչական զանազան առանձնահատկություններով, մինևույն հասկացության արտահայտման տարբեր աստիճաններով կամ իմաստային նրբերանգներով: Ահա հանդիպող բնագրային օրինակներ:

...Մարդուն ամեն ինչ կարելի է, թույլատրելի, բայց որ տղամարդը՝ հայրը, քայլում է մշուշի միջով, մարդիկ նրա **վերջն են տեսնում**, ավելի ճիշտ, նրա **ավարտը**, և այդ պահին ես հանկարծ մեծացա ու տեսա մշուշի միջով քայլող Տարոնի հոր **ավարտը**:

Կարելի է նկատել, որ այստեղ **ավարտ** ասելով հեղինակը նկատի է ունեցել **վախճանը**, սակայն խոսքն առավել պատկերավոր դարձնելու համար նախապատվությունը տվել է **ավարտ** և **վերջ** բառերին:

... Հետո հիշեցի, որ **անոթի** եմ, բայց **սոված** լինելս չէր, որ ինձ շրջեց ճանապարհից և ետ բերեց տուն:

Հետաքրքրական է **անոթի-սոված** հոմանշային իրողության բառամիավորների ընտրությունը: **Անոթի** բառը բարբառային շերտին պատկանող բառ է, **սոված** բառը՝ չեզոք շերտին պատկանող (**Հայոց լեզվի բարբառային բառարան, 2001-2012**):

...քաղաքից **ազգուերամ** ու **բարեկամ** ուշ էին գալիս և նկուղում թառմայի վրա դարսած հացը մնում-չորանում էր...»:

Բարեկամ բառի հոմանիշ ենք դիտարկում **ազգուերամ** բառը, որն այստեղ կիրառված է **«գերդաստան, ընտանիք»** իմաստով: Հարկ է նշել, որ հոմանիշների՝ ըստ իմաստի աստիճանական սաստկացումը ապահովում է երևույթի աստիճանական խորացումը, որը հաճախ կատարվում է փոխաբերաբար գործածված բառով :

-ինձնից առաջ դո՛ւ պիտի **մեռնիս**, չէ, դու **սատկես**, ես **մեռնիմ**:

Նշված խոսքային միջավայրում հեղինակը զուգադրել է **մեռնել-սատկել** հոմանշային զույգը: **Սատկել** բառամիավորում ակնառու երևում է բառի սուբյեկտիվ իմաստը (**Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ., 2018**):

Բերված օրինակները վկայում են, որ գրողը հոմանիշների գործածության գեղարվեստական հնարին է դիմում՝ միևնույն խոսքային միջավայրում գործածելով նույն բառի տարբեր հոմանիշներ, այսինքն՝ ստեղծվում է համակուտակում՝ գրական ոճի բառին զուգադրելով խոսակցական բառաշերտին պատկանող հոմանիշը՝ գաղափարն ավելի ուժեղ և ներգործուն դարձնելու նպատակով:

Դիպուկ և տարողունակ են բերված համատեքստերի միևնույն երևույթները բնութագրող **հականիշները**, որոնք ստեղծում են **օքսիմորոն** (**Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ., 2018**):

Ես առաջին անգամ տեսա **ժպտացող** և **լաց լինող** մարդ:

...թշնամին թշնամի է, թեպետ բարեկամություն է քարոզում, բարեկամդ **թշնամի բարեկամ է**, թեկուզ մի բաժակ ջուր է խմել քեզանից թաքուն:

Ամենից առաջ նկատենք, որ համագործածական բառերի ոճական գործառույթները շատ ավելի սերտորեն են առնչվում գրողի **լեզվաոճի** հետ:

Երանի Տարոնին. կանգնել էր **գլուխկախ** ու աղջկա հորը չէր տեսնում:

Գլուխկախ իսկական բարդությունը կիրառվել է **գլխիկոր** բառի փոխարեն: Գեղարվեստորեն ճիշտ, հոգեբանական առումով համոզիչ ու տեղին է **գլուխկախ** իսկական բարդության գործածությունը տրված խոսքաշարում: Հեղինակը, մի բաղադրիչը փոխելով, ստեղծել է հեղինակային նորակազմություն:

Ես տեսա, թե ինչքան **փափուկ իջավ** աղջկա **հոր** ձեռքը Տարոնի գլխին, և ես մտածեցի, որ այդ **մարդը քեռի** է, որովհետև այդպես **քեռու** ձեռքն էր իջնում ընկերներիս գլխին:

Քայլում էր, ու ետևից փոշի էր բարձրանում, **նոսքերը քրստքրստ քսում էր** գետնին, որ **հողե գետին** էր, քսում էր ու **երեխայի** պես, ինձ պես փոշի հանում:

Ահագին բան գիտեի, բայց իմ իմացածը ի՞նչ բան էր, **երեխի** իմացած էր, դրանով էր ինքը մեծ, որ տարբերում էր **երեխի** իմացածը մեծի իմացածից և հարգում էր իրենից մեծերին:

–Քո ողորմածիկ **քեռի** Աբգարը մեռնելուց առաջ չէ՞ր ասել...

Նշված խոսքաշարում հեղինակը նախընտրել է **քեռի** բառը, այլ ոչ թե **մորեղբայր**, որը դառնում է խոսքի արտահայտչականության վճռական գործոն, մտքի արտահայտման հիմնական միջոց և ոճական հնար:

Քաջ հայտնի է, որ համագործածական բառաշերտի մեջ են մտնում ամենից առաջ ազգակցական կապեր ցույց տվող բառերը: Երկու պատմվածքներում էլ առավել լայն տարածված են դրանք: Վերը նշված առաջին նախադասության մեջ կիրառվող **քեռի** բառը գալիս է գրաբարի **քոյր** բառից, որը, զարտուղի հոլովվելով, սեռական հոլովում դառնում է **քեռ** (**Աբրահամյան Ա., 1976**):

Բնագրում տեսնում ենք **երեխա** բառի կիրառության ինչպես գրական, այնպես էլ ժողովրդախոսակցական զուգորդումները:

Ես գլուխս կախեցի ու մնացի **շվարած-կանգնած**

Ես այնքան կռացա, որ ոտքերիս արանքից տեսա հավերի դատարկ ու տափակ ջրամանի մեջ **ճլորած** և աչքերը **ճպպած** կատվին

Աղամամուրին, երբ հայրս «տունտեղ» թողնում-գնում էր..

Այստեղ ընդգծված բառամիավորները ոճական կամ իմաստային նրբերանգ են պարունակում և դառնում գրողի ոճական նպատակադրման իրականացնողը:

Այդ տարի՝ դեռ **գարնան գլխին**, գյուղը լցվել էր սատկած օձերով:

Գարնան գլուխ բառակապակցության մեջ **գլուխ** բազմիմաստ բառը կիրառելով՝ հեղինակը նպատակ է ունեցել ցույց տալու, որ դեպքերը տեղի են ունեցել գարնան սկզբին: Գլուխ բառի իմաստներից մեկը **գագաթն** է, որը նշված խոսքային միջավայրում գործածվել է փոխաբերաբար:

Ռ. Շառոյանի պատմվածքների թեմատիկան, գյուղաշխարհի անցուդարձը, գործող կերպարների ժողովրդական մտածողությունը լայն հնարավորություն են տալիս ինչպես **ժողովրդախոսակցական**, այնպես էլ **բարբառային բառերի** գործածության համար:

«Մանկապարտեզի ժամանակը» և «Սուրբ հայր Հովհաննեսի վախճանը» պատմվածքներում հաճախ ենք հանդիպում ժողովրդախոսակցական և Սասնա բարբառում կիրառվող բարբառային բառերի և բառաձևերի: Դա պայմանավորված է նրանով, որ հեղինակը Սասունից է, իր կերտած հերոսը՝ նույնպես: Բարբառային բառերից շատերը հաճախ հանդես են գալիս գեղարվեստական խոսքում, որը հիմնականում պայմանավորված է տվյալ երկի բովանդակությամբ և հեղինակի ժողովրդական մտածողությամբ: Գեղարվեստական գրականության, հատկապես արձակի լեզուն հիմնականում սնվում, հարստանում և համապատասխան ոճավորում է ստանում բարբառների, ժողովրդախոսակցական լեզվի միջոցներով (**Եզեկյան Լ., 1986**):

Բերենք բնագրային օրինակներ:

Մեր մեծանալու ճանապարհը **ջաղացի ձորն** էր, խաղողի այգին, Բորեի բաղն ու Հոռոմի գերեզմանոցն էր:

Իսկ քաղաքից գյուղ տարօրինակ հագուստներով շատ մարդիկ էին գալիս՝ հսկա ընկուզենու հովին քնելու, հանգստանալու, **ջաղցիձորի** ջրում լողանալու ու տաք սալաքարերին պառկելու, չորանալու, մաժուն ու թան ուտելու-խմելու:

Ջաղացի ձոր անվանական բառակապակցության փոխարեն հերոսները գործածում էին **ջաղցիձոր** համադրական բարդությունը: Հեղինակը բնագրում երկու տարբերակն էլ նշում է, սակայն հաճախադեպ է ժողովրդախոսակցական ձևը, որը միտված է կերտելու Սասունում բնակվող մարդկանց տիպական կերպարներ, անհատականացնելու նրանց խոսքը:

Նրանք նայում էին մեր ուռած ու բաց փորերին, շոյում էին մեր **բարալիկ** վիզն ու ասում, որ մեզ շատ են սիրում:

Ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ **-լիկ** ածանցի կիրառություն ենք տեսնում քննվող պատմվածքներում: Ժողովրդական լեզվի մեջ **-իկ** ածանցից առաջ երբեմն ավելանում է «լ», ինչպես՝ **սուտլիկ, ձախլիկ, կարճլիկ, կոկլիկ, ցածլիկ, հաստլիկ**: Ածանցից առաջ ավելացող «լ» տառը բառին տալիս է փաղաքշական իմաստ. այս «լ» տառը փոխարինվում է «ռ» տառով, որ բառին տալիս է կոպտության իմաստ (**Աբեղյան Մ., 1965**):

Ցանկորմի ետևից նայող երեխաները ժպտում էին, մի քանիսը՝ ծիծաղում, մյուսները՝ տեղում պար գալիս:

Ցանկապատ համագործածական բառի փոխարեն հեղինակը գործածել է **ցանկորմ** բառը, որ կիրառելի է բարբառներում (**Աղայան Է., 1976**):

... ես **երթամ** Մասիսի ձյուններով **զիմ** սիրտ **հովռեմ** ու գամ մեռնիմ:

Զ նախդրի կիրառությունը Սասնա բարբառում հաճախադեպ է սեռական հոլովի հետ՝ «մակերևույթին, վրա» իմաստներով: Ինչպես գիտենք, այն

գրաբարում գործածվում էր տրական, հայցական, բացառական և գործիական հոլովների հետ՝ արտահայտելով տարբեր իմաստներ (**Աբրահամյան Ա., 1976**):

Ինչ վերաբերում է **հովոել** բային, «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ում նշվում է, որ սա Մշո բարբառին բնորոշ բառամիավոր է, որ նշանակում է «հովանալ, զովանալ» (**Հայոց լեզվի բարբառային բառարան, 2001-2012**):

...երկու, երեք ու չորս **ջղարա ծխելով**, ...Մայրս նստել էր **աղլիզի** քարին,...**Շեփ** ձորի օձերն ու կարիճները, ...**թառմայից** մի լավաշ քաշում ու ուտում..., ...օձապարանի վրայով երեք **շեք** ետ ու առաջ անում:

Ջղարա, աղլիզ (աղլեզ) բառամիավորները Սասնա բարբառին բնորոշ բառեր են . առաջինը նշանակում է «ծխախոտի գլանակ», երկրորդը՝ «սալաքար, որ օգտագործվում է անասուններին աղ տալու համար»: **Շեփ կամ շեպ** բառը տարբեր բարբառներում տարբեր կիրառություններ ունի: «Մանկապարտեզի ժամանակը» պատմվածքում այն գործածվել է Ղարաբաղի բարբառով և նշանակում է «զառիվայր, զառիկող»:

Թառմա կամ թարմա- Արարատյան բարբառին բնորոշ բառ է. այստեղ՝ «տախտակաշեն հարկ գոմում»: **Շեք** բառը հանդիպում է բարբառների գրեթե մեծ մասում, որ նշանակում է մեծ ու լայն բացված քայլ: Սասնա բարբառում նշանակում է «մեկ քայլը որպես երկարության չափ»:

... մի քիչ վեր պինդ կապել էին, խնոցու մածուն քսել, հետո տարել էին **մարեի** հետ:

... ուր հին, փայտե ինքնաշեն սեղան էր դրված, չորս կողմը՝ **իշոտնուկ**:

Գոգնոցի **ճոթով** սրբեց սեղանի փոշին, լավաշը փոեց վրան, ետ դառավ և քթի տակ մոթմոթալով՝ իջավ հացատուն:

-Գնալուց առաջ ասի՝ էս ագռավին սպանեմ, նոր երթամ. **դիմանլուսից կռավում** է:

Մարե- «մայր», Վանի և Մոկսի բարբառ :

Իշոտնուկ- Արարատյան բարբառ, «առանց թիկնակի չորստանի երկար նստարան»:

Ճոթ – հանդես է գալիս բարբառների մեծ մասում և նշանակում է «ծայր, եզր»:

Դիմանլուս/դիմալուս/դեմլուս- Խարբերդի բարբառ, «արշալույս, լուսադեմ»:

Խաչվորկել բառը գործածվել է **խաչկպել** բառի փոխարեն: Այն հանդես է գալիս Մշո բարբառում և նշանակում է «ծեռքերը խաչաձև սպասել» (**Աղայան Է., 1976**):

Խոսքաշարին պատկերավորություն են հաղորդում **դարձվածքները**: Դրանք, լինելով ժողովրդի պատկերավոր լեզվամտածողության, իրերի և երևույթների պատկերավոր գնահատման սեղմ ու կուռ արտահայտիչներ, խոսքին հաղորդում են նաև յուրատեսակ կենդանություն, աշխուժություն՝ լեզուն դարձնելով վառ ու գունագեղ: Անժխտելի է, որ յուրաքանչյուր ազգի գրականության (ընդհանրապես արվեստի) մեծագույն արժանիքներից մեկը ազգային դիմագծի, կոլորիտի, գուներանգի վերարտադրումն է: Իսկ դարձվածքը բոլոր լեզվամիջոցներից ամենից լավ է արտահայտում ժողովրդի լեզվամտածողության ու հոգեբանության ինքնատիպությունը, այլև տվյալ ազգի կենսափորձը, պատմությունը, սովորույթները, կենցաղն ու աշխարհաճանաչումը (**Բաղիկյան Խ., 2000**):

Նկատենք, որ Ռ. Շառոյանը գործածել է ինչպես անվանական, այնպես էլ բայական դարձվածքներ, սակայն մասնավորաբար հաճախված են բայական դարձվածքները:

Ասվածը հավաստենք բնագրային օրինակներով:

...մի բան իր **սրտով էր եղել**:

Սրտով լինել- ցանկացածը կատարվել, հավանել, հավանություն տալ :

Տարոնի **բախտը բերել** էր:

Բախտը բերել- մեկի գործերը իրենից անկախ հաջողվել, հաջողություն ունենալ:

Գլուխը կորցրած Կարապետը զարկում էր կատաղի. ուր որ է կապյթեր դիհող:

Գլուխը կորցնել -1. մի բանից խուճապի մատնվել, 2.շփոթվել, 3. ինքնամոռացության մեջ ընկնել, 4. խելքը թոցնել/հավանաբար պատմվածքում կիրառվել է երրորդ իմաստով/:

-Իմ հոգին ճամփու ենք դնում էնտեղ, ուր ես **շունչ եմ առել**:

Շունչ առնել դարձվածքը դարձվածաբանական բառարաններում դիտարկվում է իբրև համանունություն ունեցող դարձվածք: 1. Կենդանանալ, կենդանություն ձեռք բերել, վերակենդանանալ, ոգեկոչվել: 2. Հանգստանալ, մի ծանրությունից ձերբազատվել, իրեն ազատ զգալ:

Վայնասունը զգել- ողբալ, աղմուկ, իրարանցում սարքել:

Սիրտը վախ ընկնել- վախենալ, վախ զալ (**Սուքիասյան Ա., Գալստյան Ս., 1975**):

Գրողի պատմվածքներում հանդիպեցինք դարձվածքների պատրաստի կառույցների գործածության դեպքերի: Սակայն քննվող պատմվածքներում հանդիպել ենք նաև դարձվածքների **նորակազմ կիրառությունների**, որոնցում հեղինակը ցուցաբերել է ստեղծագործական մոտեցում՝ փոխելով դարձվածքի որևէ բաղադրիչ: Այսպես լեզվում առաջանում են **դարձվածային տարբերակներ**:

Հետո էլ քեզ բերել եմ, որ վերջում էս տանը տեր կանգնես, չթողնես **շան բաժին դառնա**:

Շան բաժին դառնալ- Կիրառվել է **շուն ու գելի բաժին դառնալ** դարձվածքի փոխարեն, որ նշանակում է «ոչնչանալ, փչանալ»:

Մարիամի **սիրտը շրխկաց**:

Սիրտը շրխկալ-Գործածվել է **սիրտը շարժվել** դարձվածքի փոխարեն, որ նշանակում է «հուզվել, գուրջ առաջանալ»:

Հայրս պատասխանում էր, չէր պատասխանում, **երկու խոսք շարտում էր**:

Այս դարձվածքում հեղինակը հավելել է **երկու բառը՝ ստանալով խոսք նետել** դարձվածքի տարբերակը:

– Էլ **քար ու գործ չունի**, ամեն ինչ ներկել է, մնացել նարնջագույնը, քո խիղճը չմեռնի, խելացի ցեղ եք, էլի՛:

Հեղինակային նորակազմ դարձվածքը գործածվել է **բան ու գործ չունենալ** դարձվածքի փոխարեն:

Գողեգող քայլում էր, ոնց որ **վարունգ թոցնող երեխա**:

Վարունգ թոցնող երեխա դարձվածքը գործածվել է **աչքի սուրմա թոցնող** դարձվածքի փոխարեն և նշանակում է «ճարպիկ, գող, ավազակ»:

Քեզ ո՞վ իրավունք տվեց, **ո՞վ քո նժույգին քուռակ կոչեց**, քեզ ի՞նչ եղավ, շատ շուտ չբոցկլտացի՞ր ու հանգար:

Ո՞վ քո նժույգին քուռակ կոչեց- էշին չոչ կամ կաղ ասել դարձվածքի հեղինակային տարբերակ, որ նշանակում է «վիրավորել, մեկին նեղացնել» (**Սուրիասյան Ա., Գալստյան Ս., 1975**):

Տավորիկցի սուրբ Հովհաննեսը մռայլվեց, **աչքերից շանթեր թռան**, ապա մի լուսավոր շող բացվեց դեմքին:

Հեղինակը **կայծեր** բառաձևի փոխարեն գործածել է **շանթեր** բառաձևը: Այն նշանակում է «աչքերի առաջ կայծեր երևալ» (**Բեդիրյան Պ., 2011**):

Է՛ս մեծ ուրախություն է, տղա՛, լա՛ո, էս իմ **հոգու հարսանիքն է**:

Հոգու հարսանիք դարձվածքը հեղինակային նորակազմություն է և խոսքաշարում հանդես է եկել «ուրախություն» նշանակությամբ:

Հեղինակային նորակազմությունները գեղարվեստական լեզվի բառապաշարի թերևս ամենից ավելի աչքի ընկնող շերտն են կազմում: Բառի նոր, հետևաբար և անսովոր լինելու հանգամանքը այն մի տեսակ դարձնում է հեշտ նկատելի, տպավորվող, ուշադրություն է գրավում: Ուստի և նորակազմությունը ինքնին ոճույթ է, խոսքը ոճավորելու, արտահայտիչ դարձնելու ուրույն միջոց: Գրողի ոճը պայմանավորող հատկանիշներից մեկը, անշուշտ, լեզվամտածողության ինքնատիպությունն է, ինչը դրսևորվում է ինչպես բառագործածության, այնպես էլ թերևս առավել ցայտուն ու ընդգծված ձևով բառաստեղծման ասպարեզում: Հեղինակային նորակազմությունների քննությունը պարզորոշ պատկերացում է տալիս գրողի լեզվաոճական սկզբունքների,

հակումների ու նախասիրությունների մասին, քանի որ դրանք անմիջականորեն կապված են գրողի անհատական լեզվամտածողության ու աշխարհընկալման հետ (**Հալաջյան Մ., 2005**):

Երանի Տարոնին. կանգնել էր **գլուխկախ** ու աղջկա հորը չէր տեսնում:

Հանկարծ ձիուս փայտե գլուխը **ձեռնափերս** քերծելով պոկվեց:

«Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» հանդիպում ենք **ձեռնափ** բառը, որը բացատրվում է «ձեռքի ավ», և նշվում է, որ բառն առաջին անգամ կիրառվել է մամուլում:

Լվացվեցի ու կուշտ ջուր խմեցի, հետո ձիուս գցեցի **աղբրառվի** մեջ, որ սուրալուց փոշի չհանի...

Ձայնի ուղղությամբ թռան նաև աչքերն ու մի **խաչաճյուղի** վրա «բռնեցին» ագռավին:

Հրացանի **ուսնանցուկը** ձեռքն ի կախ, սատկած ագռավը ոտքերի առաջ, քարացած կանգնած էր Հայր Հովհաննեսը:

Խոսույթին ոճական մեծ լիցքեր են հաղորդում նաև **հնաբանությունները**:

Գյուղից քաղաք միայն **կոլտնտեսության նախագահն** էր գնում. նրա քաղաքը Երևանն էր, գյուղից քաղաք միայն գյուղի **պայտար** հորեղբայրս էր գնում. նրա քաղաքը **Լենինականն** էր, և գյուղից մեծ քաղաք միայն ինքնագործ պարի խումբն էր գնացել. նրանց քաղաքը Մոսկվան էր:

Մի օր էլ մորաքրոջս տղայի հետ (նա ինձնից մի քանի ամսով մեծ էր) գնում էի **կալերը**՝ մաժուն տանելու, մորաքույրս զգուշացրեց...

Կոլտնտեսություն և նախագահ բառերն այժմ պատմաբառ են, քանի որ նրանք փոխարինված չեն նոր բառերով, և երևույթը չկա: Ինչ վերաբերում է **նախագահ** բառին, հարկ է նշել, որ այն դարձել է իմաստային հնաբանություն:

Լենինական քաղաքն այժմ կոչվում է **Գյումրի**, հետևաբար այն հնաբառ է:

Կալը հնաբառ է, փոխարինված է նոր բառով՝ «**ամբար, մառան**»:

Խոսքին պատկերավորություն է հաղորդում նաև կրկնաբանությունը, որի նպատակն է խոսքի մեջ բառերի, բառակապակցությունների, նախադասությունների կրկնության միջոցով շեշտել, ընդգծել այս կամ այն միտքը, ուժեղացնել գեղարվեստական խոսքի հուզականությունը, ռիթմը, երևույթի սաստկականությունը: Կրկնությունները բազմաբնույթ են իրենց կառուցվածքով, նախադասության մեջ գրաված դիրքով:

Ցավ չես տեսել **մրմո՛ւռ, մրմուռ**, թե չէ երեսուն տարի գլուխդ կախ կապրեիր:

Ջաղցիձոր չգնաս, դու էլ որ քաղաքից կգաս, **ջաղցիձոր** կգնաս, հիմա գնա հորդ մոտ, թող քեզ տեսնի ու ուրախանա:

...յոթ օրից բուժում-**լավացնում, լավացնում են** ու վրեժ լուծում:

Այստեղ էր, որ առաջին անգամ **տխրեցի, տխրեցի**, որովհետև հասկացա, թե ինչ տխուր բան է մեծերին չհասկանալը:

Տարոնի հայրը շրջվեց ու **քայլեց մշուշի միջով**, կասեի, որ Տարոնի հայրը նման էր **մշուշի միջով քայլող** տղամարդու, իսկ դրանից սարսափելի բան չկա, երբ որ տղամարդը, ոչ թե մարդը, այլ տղամարդը **քայլում է մշուշի միջով**:

Մայրս **սրբեց** աչքերը: Անիկը **սրբեց** իր աչքերը: Իմ աչքերից արցունք չէր եկել, բայց զգում էի, որ լաց եմ եղել: Դա իմ առաջին լացն էր **առանց արցունքի, առանց մի կաթիլ արցունքի**:

Քեզ ո՞նց **փախցրի**, լավ **փախցրի**, չէ՞քեզ փախցնողը ե՛ս չէի, է՛, ձի՛ն էր, էդ ձին հիմի չկա ախր, դու կաս, թերմաշ անտեր,- **խոսեց, խոսեց**, խոսքով մոտեցավ, գրկեց կնոջն ու համբուրեց:

Գեղարվեստական ստեղծագործության համար մեծ արժեք է ներկայացնում նաև երկի **հերոսների լեզվի անհատականացումը**: Գեղարվեստական ստեղծագործության հերոսների խոսքի միջոցով բացահայտում ենք տարբեր խառնվածքների տեր կերպարների հայացքները, մտածելակերպը, ստեղծագործության մեջ կարևորվում է նրանցից յուրաքանչյուրի լեզուն:

«Սուրբ հայր **Հովհաննեսի վախճանը**» պատմվածքում առավել պարզ է երևում Սասունցի տղամարդու առնական և բիրտ կերպարը իր խոսքի միջոցով:

-Բարի՛ լույս, Մարիա՛ մ, բարի լույս, **կնի՛կ ջան**, տո բարի՛ լույս, **կյանքակեր**, տո ի՞նչ ես անում, **թերմա՛ շ կնիկ**:

- Լավն էն է, Մարիա՛ մ, **խելառ** մեռնիս, չէ բուրդ գգողների ցեղից կնիկ ունենաս:

- **Տո ես քո՛...,-** հայիոյեց Հայր Հովհաննեսն ու մտքում խոսեց:

-Ինձնից առաջ դո՛ւ պիտի մեռնիս, չէ, դու **սատկես**, ես մեռնիմ:

Նման ձևերը գրողը գործածում է հատկապես այն խոսքային միջավայրում, որում խոսքը կենցաղային բնույթի է: Ինչպես նկատում ենք, խոսողը անտարբեր չէ ասվածի նկատմամբ. մտքերի հաղորդումը ուղեկցվում է վերաբերմունքի արտահայտությամբ, ինչը հաճախ դրսևորվում է զանազան դիմելաձևերով, կոչականների առատ գործածությամբ:

Կնոջ խոսքը նույնպես հարուստ է համապատասխան կոչականների կիրառությամբ:

-Ո՛ր, տո **խելառ**, ո՛ր կերթաս, էսօր շաբաթ է, ուր որ է տղան, հարս ու թոռ կգան:

- **Այ մարդ**, քեզ ի՞նչ է եղել:

- Իա՛ , քնել-ելել ես, ամոթդ կորցրե՛լ, **տնաշեն**, - կինը մի կողմ հրեց ամուսնուն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր հոդվածում փորձ ենք արել քննելու Ռ. Շառոյանի «Մանկապարտեզի ժամանակը» և «Սուրբ հայր Հովհաննեսի վախճանը» պատմվածքների բառապաշարը: Նկատել ենք, որ հեղինակի խոսքում առավելաբար առկա են համագործածական բառեր, ժողովրդախոսակցական լեզվին և բարբառներին հատուկ բառեր ու արտահայտություններ, հնաբանություններ, հեղինակային նորակազմություններ, կրկնաբանություններ, որոնք խոսույթին հաղորդում են ոճական մեծ լիցքեր:

Հեղինակը մեր լեզվում գործածվող դարձվածքների զուգադրությամբ ստեղծել է նաև դարձվածային տարբերակներ որևէ բաղադրիչի փոփոխությամբ, նույնիսկ կերտել է նորակազմ դարձվածքներ:

Կերպարների խոսքն անհատականացնելիս Ռ. Շառոյանը մեծ չափով գործածել է ժողովրդախոսակցական-բարբառային բառեր ու բառաձևեր, օտարաբանություններ, դարձվածքներ, անեծքներ, խոհական մտքեր, որոնք հիմնականում օգտագործվում են խոսքաչափի ոճավորման նպատակներով: Բառապաշարային նշված միջոցներով հեղինակին հաջողվել է վարպետորեն տիպականացնելու յուրաքանչյուր հերոսի: Դրանք բացահայտում են կերպարների բնավորությունը, որ միջավայրից լինելը, ժողովրդական մտածողությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբեղյան Մ. (1965)**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, ԵՊՀ հրատ. :
2. **Աբրահամյան Ա. (1976)**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, «Լույս» հրատ.:
3. **Աղայան Է. (1976)**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ.:
4. **Հայոց լեզվի բարբառային բառարան (2001-2012)**, Հրաչյա Աճառյանի անվան Լեզվի Ինստիտուտ, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա, Երևան, էլեկտրոնային:
<http://nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=48>
5. **Բաղիկյան Խ. (2000)**, Դարձվածային ոճաբանություն, Երևան, ԵՊՀ հրատ.:
6. **Բեդիրյան Պ. (2011)**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:
7. **Խալաթյան Գ., Ջուլֆայան Ռ. (2018)**, Տեսական և գործնական հայոց լեզու, (հնչյունաբանություն, բառագիտություն), Բուհական ձեռնարկ, Երևան, «Արտագերս» հրատ.:

8. **Հալաջյան Մ. (2005)**, Հրանտ Մաթևոսյանի բառապաշարը, Երևան, «Հայաստան» հրատ.:
9. **Շառոյան Ռ. (2012)**, «Հովն ընկավ» ժողովածուն, Երևան, «Նաիրի» հրատ.:
10. **Ջահուկյան Գ., Խլղաթյան Ֆ. (2007)**, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, «Զանգակ» հրատ.:
11. **Սուքիասյան Ա., Գալստյան Ս. (1975)**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:
12. **Սուքիասյան Ա. (2009)**, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:

REFERENCES

1. **Abegyan M. (1965)**, Hayoc lezvi tesowt'yown /*Theory of the Armenian Language*/, Yerevan, Yerevan State University ed.
2. **Abrahamyan A. (1976)**, Grabari d'er'nark /*Manual of Classical Armenian (Grabar)*/, Yerevan, “Luys” ed.
3. **Aghayan E. (1976)**, Ardi hayereni bacatrakan bar'aran *Explanatory /Dictionary of Modern Armenian*/, Yerevan, “Hayastan” ed.
4. **Ardi hayereni bacatrakan bar'aran /Dialectal Dictionary of the Armenian Language/ (2001-2012)**, Hrachya Acharyan Institute of Language, Yerevan, electronic. <http://nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=48>
5. **Badikyan Kh. (2000)**, Dard'vac'ayin otwabanowt'yown /*Phraseological Stylistics*/, Yerevan, Yerevan State University ed.
6. **Bediryan P. (2011)**, Hayeren dard'vac'qneri y'ndard'ak bacatrakan bar'aran /*Comprehensive Explanatory Dictionary of Armenian Idioms*/, Yerevan, Yerevan State University ed.

7. **Khalatyan G., Julfayan R. (2018)**, Tesakan & gorc'nakan hayoc lezow,(hnchyownabanowt'yown, bar'agitowt'yown) /*Theoretical and Practical Armenian Language (Phonetics, Lexicology)*/: University Textbook, Yerevan, “Artagers” ed.
8. **Halajyan M. (2005)**, Hrant Mat'&osyani bar'apashary' /*The Vocabulary of Hrant Matevosyan*/, Yerevan, “Hayastan” ed.
9. **Sharoyan R. (2012)**, «Hovn y'nkav» jhoghovac'own /*The Collection “Hovn Inkav”*/, Yerevan, “Nairi” ed.
10. **Jahukyan G., Khlghatyan F. (2007)**, Hayoc lezvi otwabanowt'yown /*Stylistics of the Armenian Language*/, Yerevan, “Zangak” ed.
11. **Sukiasyan A., Galstyan S. (1975)**, Hayoc lezvi dard'vac'abanakan bar'aran /*Phraseological Dictionary of the Armenian Language*/, Yerevan, Yerevan State University ed.
12. **Sukiasyan A. (2009)**, Hayoc lezvi homanishneri bacatrakan bar'aran /*Explanatory Dictionary of Synonyms of the Armenian Language*/, Yerevan, Yerevan State University ed.

Gayane Khalatyan, Shushan Khachatryan

Analysis of the vocabulary in Roland Sharoyan's short stories "Kindergarten time" and "The death of father Hovhannes"

Conclusion

Key words and expressions: collocations, colloquial and dialectal words, idioms, authorial neologisms (coinages), archaisms, pleonasms (tautological expressions).

In our article, we attempted to analyze the vocabulary of R. Sharoyan's short stories "Kindergarten Time" and "The Death of Father Hovhannes." We observed that the author's language predominantly features colloquial words, expressions characteristic of folk and dialectal speech, archaisms, authorial neologisms, and repetitions, which impart strong stylistic expressiveness to the text.

By combining existing idioms of the Armenian language, the author has also created idiomatic variants through the modification of certain components, and even coined entirely new idioms.

In individualizing the speech of his characters, R. Sharoyan extensively uses folk and dialectal words and forms, borrowings, idioms, curses, and reflective expressions, mainly for stylistic purposes. Through these lexical means, the author masterfully typifies each character, revealing their personality traits, social background, and the essence of folk mentality.

Гаяне Халатян, Шушан Хачатрян

Исследование лексики рассказов Роланда Шарояна «Время детского сада» и «Кончина святого отца Ованнеса»

Заключение

Ключевые слова и выражения: разговорные слова, народно-разговорная и диалектная лексика, фразеологизмы, авторские неологизмы, архаизмы, повторы.

В нашей статье предпринята попытка проанализировать лексику рассказов Р. Шарояна «Время детского сада» и «Кончина святого отца Ованнеса». Мы отметили, что в речи автора преимущественно присутствуют разговорные слова, выражения, характерные для народно-разговорного языка и диалектов, архаизмы, авторские неологизмы и повторы, придающие речи значительный стилистический заряд.

Автор, сопоставляя существующие в языке фразеологизмы, создает их варианты посредством изменения отдельных компонентов, а также формирует новые устойчивые выражения.

Индивидуализируя речь персонажей, Р. Шароян широко использует народно-разговорную и диалектную лексику, заимствования, фразеологизмы, проклятия, размышления, которые применяются в основном для стилизации речи. С помощью этих лексических средств автору удалось мастерски типизировать каждого героя. Они раскрывают характер персонажей, их социальную среду и народное мировоззрение.

Գայանե Խալատյան - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց լեզվի եւ նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու: Հեղինակ է յոթ տասնյակ հոդվածների, բուհական գիտամեթոդական ձեռնարկների: gayane.khalatyan.1958@mail.ru

Շուշան Խաչատրյան - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ երրորդ կուրսի ուսանող: Գիտական հետաքրքրությունը՝ ժամանակակից հայոց լեզու: khachatryanshushan-1@aspu.am

Гаяне Халатян – Профессор Государственного университета имени Хачатура Абовяна, кандидат педагогических наук, преподаватель кафедры армянского языка и методики его преподавания. Научные интересы: все современные курсы армянского языка. Автор семидесяти статей, университетских научных методических учебников. 091341434 gayane.khalatyan.1958@mail.ru

Шушан Хачатрян- Студентка третьего курса АГПУ университета имени Хачатура Абовяна. Научный интерес: современная филология армянского языка.
khachatryanshushan-1@aspu.am

Gayane Khalatyan -Professor at ASPU named Khachatur Abovyan, a candidate of pedagogical sciences, and a lecturer of the Armenian Language and its Teaching Methodology. Scientific interests: all modern Armenian language courses. She has authored seven dozen articles and university scientific methodological manuals.
gayane.khalatyan.1958@mail.ru

Shushan Khachatryan- Third-year student at ASPU named after Khachatur Abovyan. Scientific interest: the modern Armenian language lexicology. khachatryanshushan-1@aspu.am

Խմբագրություն է ուղարկվել 01.10.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 14.10.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ԼԱՌԻԱ ԱՎԱԳՅԱՆ

ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ ՋԻՎԱՆՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.203

ԱՄՓՈՓՈՒՄ

Ջիվանու ստեղծագործություններում իրենց ուրույն տեղն ունեն դարձվածքները, որոնք բառապաշարի կարևոր և յուրահատուկ մասն են կազմում: Ջիվանու դարձվածքային արտահայտությունները քննելիս նախապատվություն չենք տվել դասակարգման այս կամ այն հենքի վրա կառուցվող և առ այսօր էլ տարակարծություն պարունակող լեզվաբանական որևէ տեսակետի: Դիտարկելով Ջիվանու դարձվածքային հարադրությունները՝ փորձել ենք արժևորել դրանց իմաստային և ոճական նշանակությունը: Եվ որպես հետևություն, վստահաբար կարող ենք ասել, որ դրանց մի մասը՝ որպես Ջիվանու անհատական մտածողությունը բնութագրող ինքնատիպ լեզվական միավորներ, իրավամբ կարող են համարվել հեղինակային և որպես ժողովրդախոսակցական ոճին ու գեղարվեստական-փիլիսոփայական ժանրին պատկանող կայուն կապակցություններ՝ համարել հայոց լեզվի դարձվածային արտահայտությունների ցանկը:

Բանալի բառեր և արտահայտություններ: Հայոց լեզու, Ջիվանի, դարձվածք, դարձվածային արտահայտություն, սոմատիկ դարձվածքներ, բառապաշար, խոսքի արտահայտչականություն և պատկերավորություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դարձվածքների բնութագրման հարցերում մինչև այսօր հայ լեզվաբանության մեջ չի ձևավորվել միասնական տեսակետ. լեզվական ո՞ր միավորները կարելի է դարձվածք համարել: Որպես ընդհանուր սահմանում մեծամասամբ ընդունվում է հետևյալը. «Դարձվածք է կոչվում փոխաբերական-

այլաբանական միասնական իմաստ ունեցող ամեն մի կայուն բառային անբաժանելի, պատրաստի վերարտադրելի կապակցությունը» (**Զահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., 1980**): Լեզվաբանների մի մասն էլ լայնացնում է դարձվածքների շրջանակը՝ նրանց շարքի դասելով առաձները, ասացվածքները, թևավոր խոսքերն (աֆորիզմները) ու արտահայտությունները (**Եզեկյան Լ. 2003**): Ի տարբերություն ավանդական սահմանման՝ Վ. Համբարձումյանը տալիս է հետևյալ սահմանումը. «Դարձվածային միավորը մեկից ավելի բառերի հարադրական կամ կապակցական այնպիսի բաղադրություն է, որն աչքի է ընկնում բաղադրիչների իմաստային սերտությամբ, մթագնումով, վերաիմաստավորումով, այդ նույն բաղադրիչների բազմազանությամբ, անփոխարինելիությամբ, միասնությամբ, ինչպես նաև ֆունկցիոնալ-ոճական նպատակամղվածությամբ և կողմնորոշվածությամբ» (**Համբարձումյան Վ., 2013**): Դարձվածքները խոսքը պատկերավոր կերպով ոճավորող, խոսքին սեղմություն, հակիրճություն, հուզաարտահայտչական երանգ, վերաբերմունքային լիցք հաղորդող լեզվական միջոցներ են: Առօրյա-խոսակցական ոճին բնորոշ բառային այս միավորներն արտացոլում են ժողովրդի ազգային մտածողությունը, աշխարհաճանաչումը, բարքերը, կենցաղը և նպաստում են լեզվի ժողովրդայնությանը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներկա հոդվածում հետազոտությունը և ուսումնասիրությունը կատարելիս կիրառել ենք համալիր քննության, վերլուծության և համադրման մեթոդներ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Զիվանու ստեղծագործություններում իրենց առանձնահատուկ տեղն ունեն դարձվածքները: Դիտարկելով Զիվանու դարձվածային արտահայտությունները՝ փորձել ենք արժևորել դրանց իմաստային և ոճական նշանակությունը: Քննության առարկա ենք դարձրել այնպիսի դարձվածային իրողությունները (կապակցությունները), որոնց արտահայտած ընդհանուր իմաստը դադարում է բառակապակցային միավորների (բաղադրիչների) ուղղակի իմաստների

մեխանիկական գումարը լինելուց, և որոնք իրենց փոխաբերական-այլաբանական իմաստը ձեռք են բերում լեզվական այլ միավորների հետ շարահյուսորեն իմաստակիր ամբողջություն կազմելու դեպքում միայն: Դրանք դիտարկել ենք ոչ թե որպես մեկուսի բառային կազմություններ, այլ քերականական և շարահյուսական այնպիսի ամբողջություններ, որոնք կկորցնեն իրենց փոխաբերական իմաստը, եթե դիտարկվեն վերաիմաստավորումը պայմանավորող համատեքստային այլ բառերի շարակարգից դուրս:

Խոսքի պատկերավորությունը և արտահայտչականությունն էլ ավելի ընդգծելու համար հեղինակներն աշխատում են գործածել առօրեական, առավել մատչելի բառեր, իսկ այդպիսի բառերից են մարմնի մասերի անունները: Ջիվանու ստեղծագործություններում քիչ չեն սոմատիկ դարձվածքները (մարդու մարմնի մասերի անուններով կառուցված): Օրինակ՝ **գլխից անցնել**-կյանքից ձեռ քաշել, կյանքը չխնայել. «Պատերազմ կա Հայաստանում//...Յուր գլխից անցնողը թող գա» (**Ջիվանի**, 1988), **սրտին չոքել**-ճնշել, նեղը գցել. «Չոքել են սրտիս ցավերն ընդհանուր» (**Ջիվանի**, 1988), **թևի տակ առնել**-նեցուկ կանգնել, հովանավորել, խնամել, պահել. «...Կառնի (Ռուսաստանը-Լ. Ա.) ողջ հայերուն յուր թևի տակ» (**Ջիվանի**, Թ. Պողոսյան, 1996), **լեզվի վրա սանձ դնել**-քիչ խոսել, խոսքերը չափավորել. «Ո՛վ կին...Լեզվիդ վրա սանձ դիր, մի խոսիլ վրաս» (**Ջիվանի**, Թ. Պողոսյան, 2009), **տիկ դառնալ և ուրիշին անել՝ դարձնել բերան** - թաքնված մնալով մեկին մի բան անել տալ, կամքը թելադրել՝ նրան դարձնելով խոսափող. «Դուք (իսլամի որդիներ, թուրքեր-Լ.Ա.) տիկ եղել, քրդին շինել եք բերան» (**Ջիվանի**, Թ. Պողոսյան, 1996), **երես առնել** - չափը կորցնել, լաիրշանալ, լկտիանալ. «Սխալվեցա տեղիք տվի անմիտին// Երես առավ, ելավ նստավ իմ ուսին» (**Ջիվանի**, 1988), **գլխին կրակ մաղել** (=գլխին կրակ թափել)-մեկի վրա սաստիկ բարկանալ, զայրանալ, կատաղել. «Ո՛հ, թշնամիս չընկնի չար լեզվի տակ// Ամեն կողմից գլխին կմաղեն կրակ» (**Ջիվանի**, 1988) :

Դարձվածքների բաղադրիչների կայունությունն ու անփոփոխելիությունը դարձվածքների կառուցվածքային-ոճական յուրահատկություններից է: Սակայն,

երբեմն ոճական նպատակադրմամբ կամ հեղինակային նախասիրությամբ գրողները կատարում են տարբեր բնույթի փոփոխություններ՝ թուլացնելով կամ ուժեղացնելով դարձվածքի կամ արտահայտության պատկերավորության աստիճանը: Փոփոխությունները կարող են լինել ինչպես բառային կազմի, նրանց արտահայտած իմաստների, այնպես էլ բաղադրիչների շարահյուսական առումով: Այս երևույթը նկատելի է **Ջիվանու ստեղծագործություններում**: Օրինակ՝ **վար ձգել(=վար զարկել)**- պարսավել, արժեքն իջեցնել, վատաբանել. «Մնանք միշտ իրարու օգնական, մնանք//Ոչ թե ուզենք ձգել մեկս մեկու վար» (**Ջիվանի**, 1988), **գլխին կրակ մաղել (=գլխին կրակ թափել)**-մեկի վրա սաստիկ բարկանալ, զայրանալ, կատաղել. «Ո՛հ, թշնամիս չընկնի չար լեզվի տակ//Ամեն կողմից գլխին կմաղեն կրակ» (**Ջիվանի**, 1988), **սարը տեղից հանել (=սարեր շուռ տալ)**-վիթխարի գործեր կատարել. «Ժողովուրդի հետը չի լինի կատակ//Թե միացավ, սարը տեղից կհանել» (**Ջիվանի**, 1988), **սևերես անել (=անել սև երես)**-ամոթով թողնել. «...նրանց (բարեկամների-Լ.Ա.) մոտ ինձի արիր սև երես» (**Ջիվանի**, 1988):

Ջիվանու դարձվածային արտահայտությունների մի ստվար մասն այսօր էլ գործածվում է ժողովրդախոսակցական լեզվում կամ այլ գրողների ստեղծագործություններում: Օրինակ՝ **գաղափարին հարմար գալ**-կարողություններին համապատասխանել, գաղափարին հարմարել. «Գաղափարիս հարմար գալով, կերգեմ հայ ու Հայաստան» (**Ջիվանի**, 1988), **կյանքը տալ**- զոհաբերել. «...պապերս կյանքերն են տվել //Որ իրանց կրոնը պաշտեն անարգել» (**Ջիվանի**, 1988), **ցավ ճարել** - հոգսի տակ ընկնել. «Իզուր սիրո վերջը, ...մարդ կճարե ցավ» (**Ջիվանի**, 1988), **կաղ ու ծուռ շլինք լինել** - խեղճ լինել. «Մեր գոյության վնաս գործերը ատենք//Որ չլինենք կաղ ու ծուռ շլինք» (**Ջիվանի**, 1988), **վար ձգել(=վար զարկել)**- պարսավել, արժեքն իջեցնել, վատաբանել. «Մնանք միշտ իրարու օգնական, մնանք//Ոչ թե ուզենք ձգել մեկս մեկու վար» (**Ջիվանի**, 1988), **հուղա լինել** - դավաճանել. «...Դավաճան հուղա կլինենք, թե որ նրանց (մեր լեզուն ու եկեղեցին-Լ.Ա.) ուրանանք» (**Ջիվանի**, 1988),

խորհուրդ լուծել, բանալ -բացահայտել. «Բազում երեսանի գիրք ես, տիեզերք//...Մուգ խորհուրդդ լուծել, բանալ չի լինի» (**Ջիվանի**, 1988), **խելք ճարել**(=**խելքի գալ**)-իմաստնանալ, խելացի, խելահաս դառնալ, **ճամփից հանել** - շեղել. «Քնած եք, արթնացեք ու **խելք ճարեցեք**» (**Ջիվանի**, 1988), «...Ե՞րբ պիտի **խելքի գանք**...Որ այդ գազանը (գաղթականությունը-Լ.Ա.) մեզ **ճամփուց չհանե**» (**Ջիվանի**, 1988), **խաղալիք դառնալ** - ծաղրի առարկա դառնալ. «Երբ որ ունի (ազգը-Լ.Ա.) իրան սեփական լեզու// Նա **չի դառնար** օտար ազգաց **խաղալիք**» (**Ջիվանի**, 1988), **գերեզման մտնել**-մեռնել, թաղվել. «Ինչպես հայ ծնար մորից//Հայ մտիր **գերեզմանը**» (**Ջիվանի**, 1988), **արմատ գցել**-արմատավորվել, հաստատվել, հիմնավորվել. «Ադամա լեզուն ես հաստատ// Ծլիր, ծաղկիր, **գցիր արմատ**» (**Ջիվանի**, 1988), **տանկ ու տնազ անել**-ծաղրել, ծամածռել. «Քաջ բազեին **տանկ ու տնազ է անում** (ազոավը-Լ.Ա.)» (**Ջիվանի**, 1988), **գրող չափել**- ձեռքով մեկին հանդիմանական-արհամարհական շարժում անել. «Ճանճերը ուղտերուն **գրող են չափում**» (**Ջիվանի**, 1988), **ձեռքի տակ մնալ** - դառնալ մեկին ենթակա. «Մնացածն էլ **այլոց ձեռքի տակ մնաց**» (**Ջիվանի**, 1988), **սրտին դանակ դնել**-սաստիկ վշտացնել, տխրեցնել, խոցել, **սև անել**-փչացնել, հարամել. «...խեղճերուս **սրտին դրիր դանակ**//Զատիկներս **սև արիր** (մարտ ամիս-Լ.Ա.)» (**Ջիվանի**, 1988), **մուխը մարել**-տունը քանդել, օջախը մարել. «Սուգ պահելով դու **մեր մուխը մարեցիր**» (**Ջիվանի**, 1988), **կամ ու կաս (կաց) անել** - խոսքը դետուդեն գցել. «Ջիվանս կպահեմ մաքուր ծոմ ու պաս// Որ չխոսես ինձ դեմ (զատիկ-Լ.Ա.), **չանես կամ ու կաս**» (**Ջիվանի**, 1988), **ջարդ ու հալածանք ուտել**-կոտորվել. «Արաբացիք ձեր պապերից ...**Կերել են ջարդ ու հալածանք**» (**Ջիվանի**, 1988), **թև ու թիկունք լինել**-պաշտպանել, նեցուկ լինել. «Գնա **եղիր թիկունք ու թև** հայերուն» (**Ջիվանի**, 1988), **Պիղատոսի վճիռ տալ**-երկդիմի, կեղծավոր վճիռ կայացնել, **աչք խփել**-աչք փակել, չնկատելու տալ. «**Պիղատոսի վճիռ կուտա** (Եվրոպան-Լ.Ա.) **խփելով յուր աչքերը**» (**Ջիվանի**, 1988), **թև թևի տալ** - իրար օգնել, իրար գրկել, իրար թևանցուկ անել. «Կռունկները խումբ-խումբ, **թև-թևի տված...**» (**Ջիվանի**, 1988), **ատամին խփել**-փորձարկել, փորձելով

հասկանալ. «Ամեն մարդ խփում է մեզ յուր ատամին» (**Ջիվանի**, 1988), **գործ տեսնել**-իրականացնել, իրագործել. «Անվայել գործ տեսան երկու հարևան» (**Ջիվանի**, 1988), **գլխի ճարը տեսնել**-դժվար՝ անելանելի վիճակից դուրս գալու, փրկվելու միջոց գտնել. «Թշվառ, եղկելի մարդ, գլխիդ ճարը տես» (**Ջիվանի**, 1988), **գայլի գլխին ավետարան կարդալ**-խրատել, ապարդյուն ջանալ մեկին ուղիղ ճանապարհի բերել, **բռունցք ցույց տալ**-սպառնալ, վախեցնել, ահաբեկել. «Գայլի գլխին ավետարան կարդալով չի զսպվի//Նրան պետք է բռունցք ցույց տալ, որ վախիցը ընկճվի» (**Ջիվանի**, 1988), **ցեց ընկնել**-քայքայվել. «Արդեն մեջդ ցեց է ընկել...հին սառույց» (**Ջիվանի**, 1988), **գառան մորթի առնել (հագնել)** - միամիտ ձևանալ. «Գայլը գառան մորթի առած մտել է մարդկության մեջը (**Ջիվանի**, 1988), **գրիչ վերցնել**- գրել, գրի առնել. «Ամեն մի գրիչ վերցնող չի կարող լինել հոռետոր» (**Ջիվանի**, 1988), **փայտը ձեռքում պահել**-զգոն, աչալուրջ լինել. «Կծողին բարեկամ լինենք, փայտը պահենք ձեռքներումս» (**Ջիվանի**, 1988), **ճանապարհին քար գցել**-խոչընդոտել, խանգարել. «Քար է գցում (քաջ հարևանը-Լ.Ա.) ճանապարհիս առջև...» (**Ջիվանի**, 1988), **հում-հում կուլ տալ** -հեշտությամբ մեկին հաղթել, ոչնչացնել. «Թե չլինի օրենք, կրթություն, ուսում//Ուժեղը անուժին կուլ կուտա հում-հում» (**Ջիվանի**, 1988), **գրողի ծոցը գնալ** -սատանայի բաժին դառնալ, դժոխք գնալ. «Երբ ծերանաս, գրողի ծոցը գնա...» (**Ջիվանի**, 1988), **ցեց լինել**-հոգեպես չարչարել, տանջել. «Սերը ցեց է եղել ջանիս» (**Ջիվանի**, 1988), **քար քաշել**-չարաչար աշխատել. «Գիտունի հետ քար քաշելը հեշտ է խիստ...» (**Ջիվանի**, 1988), **սևերես անել**-ամոթով թողնել. «...նրանց (բարեկամների-Լ.Ա.) մոտ ինձի արիք սև երես» (**Ջիվանի**, 1988), **սարը տեղից հանել (=սարեր շուռ տալ)**-վիթխարի գործեր կատարել. «Ժողովուրդի հետը չի լինի կատակ//Թե միացավ, սարը տեղից կհանե» (**Ջիվանի**, 1988), **տունը քանդել**-մեծ վնաս հասցնել. «Լսածը չդատած թերուս հանճարը//Խոսելով կքանդե շատերի տունը» (**Ջիվանի**, 1988), **սրտի մեջ կրակ գցել** - մտատանջել, հուզմունք պատճառել. «...Դուն ձգել ես սրտիս մեջը վառ կրակ» (**Ջիվանի**, 1988), **երկար արև**

ունենալ -երկար ապրել. «...Մեր բախտից **ունեցար** շատ **երկար** **արև**» (Ջիվանի, 1988), **հողին պահ տալ**-թաղել. «Մուշեղի մարմինը **հողին պահ տվին**» (Ջիվանի, Թ. Պողոսյան, 2009) և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դժվար չէ նկատել, որ դարձվածային կապակցությունների այս շարքում կան և՛ նույնությամբ ժողովրդախոսակցականների հետ համընկնող, և՛ մասնակի փոփոխությունների ենթարկված տարբերակներ, որոնցից մի քանիսը բարբառային են կամ փոխառյալ: Եվ սա բնական է, քանի որ դրանք՝ որպես ժողովրդականություն վայելող հեղինակի անհատական մտածողությունը բնորոշող լեզվական միջոցներ, չէին կարող չհամապատասխանել ժամանակաշրջանի ժողովրդախոսակցական լեզվի և ոճի առանձնահատկություններին: Եվ որպես հետևություն՝ վստահաբար կարող ենք ասել, որ դրանց մի մասը՝ որպես Ջիվանու անհատական մտածողությունը բնութագրող ինքնատիպ լեզվական միավորներ, իրավամբ կարող են համարվել հեղինակային և որպես ժողովրդախոսակցական ոճին ու գեղարվեստական-փիլիսոփայական ժանրին պատկանող կայուն կապակցություններ՝ համարել հայոց լեզվի դարձվածային արտահայտությունների ցանկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Բեդիրյան Պ. (2011)**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Եգեկյան Լ.(2003)**, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, Երևանի համալս. հրատ.:
3. **Համբարձումյան Վ. (2013)**, Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
4. **Սուքիասյան Ա., Գալստյան Ս. (1975)**, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:

5. **Ջահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ. (1980)**, Հայոց լեզու, Մ. 1, Պրակ Ա, Երևան, «Լույս» հրատ.:
6. **Ջիվանի (1988)**, Երգեր, Գրական-գեղարվեստական հրատարակություն, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
7. **Ջիվանի (1996)**, Անհայտ երգեր (բանաստեղծություններ), աշխատասիրությամբ Թ. Պողոսյանի, Երևան, «Հայաստան» հրատ.:
8. **Ջիվանի (2009)** (Աշուղ Ջիվանի), Անհայտ երգեր, աշխատասիրությամբ Թ. Պողոսյանի, Երևան, «Լուսակն» հրատ.:
9. **Виноградов В. (1971)**, О теории художественной речи, Москва, Изд. “Высшая школа”.

REFERENCES

1. **Bediryan P. (2011)**, Hayeren dard'vac'qneri y'ndard'ak bar'aran /Unabridged Dictionary of Armenian Phraseological Units/, Yerevan, YSU ed.
2. **Yezekyan L. (2003)**, Hayoc lezvi otwagitowt'yown /Stylistics of the Armenian Language/. Yerevan. YSU ed.
3. **Hambardzumyan V. (2013)**, Hovhan Mamikonyani «Taroni patmowt'yan» lezown & otwy' /The Language and Style of Hovnan Mamikonyan's “History of Taron”/, Yerevan, Armenian SSR Academy of Science, “Gitutyun” ed.
4. **Suqiasyan A., Galstyan S. (1975)**, Hayoc lezvi dard'vac'abanakan bar'aran /Phraseological Dictionary of the Armenian Language/, Yerevan, YSU ed.
5. **Jahukyan G., Aghayan E., Araqelyan V., Qosyan V. (1980)**, Hayoc lezow /The Armenian Language/, Part 1, Volume A, Yerevan, “Luis” ed.
6. **Jivani (1988)**, Erger /Songs/, Yerevan, “Sovetakan grogh” ed.
7. **Jivani (1996)**, Anhayt erger (banasteghc'owt'yownner) /Unknown Songs (Poems)/, compiled by T. Poghosyan, Yerevan, “Hayastan” ed.

8. **Jivani (Ashugh Jivani) (2009)**, Anhayt erger /Unknown Songs/, compiled by T. Poghosyan, “Lusakn” ed.
9. **Vinogradov V.V. (1971)**, O teorii khudozhestvennoy rechi /On the Theory of Artistic Language/, Moscow, Vysshaya Shkola ed.

Laura Avagyan

Phraseological units in Jivani’s works

Conclusion

Keywords and expressions: *the Armenian language, Jivani, phraseological units, phraseological expressions connected with body parts, vocabulary, speech expressiveness and imagery.*

Phraseological units hold a significant place in Jivani’s works and are an important and unique feature of the vocabulary. To further emphasize the figurative and expressive nature of his language, Jivani uses phraseological units connected with body parts. The stability and invariability of components of phraseological units are important structural and stylistic features. However, sometimes, for stylistic purposes or according to his preferences, Jivani makes various changes, weakening or strengthening the figurativeness of phraseological units.

When considering phraseological units used by Jivani, we did not give preference to particular linguistic approaches that are still controversial and are based on different classifications. During the analysis of Jivani’s phraseological units, we have tried to evaluate their semantic and stylistic significance. As it becomes obvious, some of them, which characterize Jivani’s way of thinking, can justifiably be considered part of the author’s unique style. Besides, they should be regarded as fixed expressions belonging to a vernacular and colloquial style, as well as to the literary-philosophical genre, and complement the list of phraseological expressions of the Armenian language.

Лаура Авакян

Фразеологизмы в произведениях Дживани**Заключение**

Ключевые слова и выражения: армянский язык, Дживани, фразеологические выражения, соматические выражения, словарный запас, выразительность и образность речи.

Особое место в произведениях Дживани занимают фразеологизмы, которые являются важной и уникальной частью лексики. Чтобы подчеркнуть образность и выразительность речи, автор использует повседневные, обыденные слова и выражения, как, например, названия частей тела. В произведениях Дживани много соматических выражений (построенных на названиях частей человеческого тела). Стабильность и неизменность компонентов фразеологических выражений являются одной из их структурно-стилистических особенностей. Однако иногда, в стилистических целях или в соответствии с авторскими предпочтениями, писатель вносит различные изменения, ослабляя или усиливая образность выражений.

При рассмотрении фразеологизмов Дживани мы не отдали предпочтение какой-либо лингвистической точке зрения, основанной на той или иной классификации, которая до сих пор считается спорной. Анализируя фразеологические выражения Дживани, мы попытались оценить их семантико-стилистическую значимость. В результате можно с уверенностью сказать, что некоторые из них, как оригинальные языковые единицы, характеризующие индивидуальное мышление Дживани, по праву могут считаться авторскими и, как устойчивые выражения, принадлежащие к народно-разговорному стилю и художественно-философскому жанру, дополняют список фразеологических выражений армянского языка.

Լաուրա Ավագյան - Բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՊՄՀ սկզբնական կրթության ֆակուլտետի Ա. Տեր-Գրիգորյանի անվ. մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, ոճագիտություն և խոսքի մշակույթի հիմնահարցեր, տեքստագիտության և խոսքի զարգացման հիմնախնդիրներ, ինքնուրույն ընթերցանության հիմնահարցեր: Հեղինակ է դասագրքերի, 15 ուսումնաօժանդակ ձեռնարկի, ավելի քան 40 հոդվածի: Lauraavakian@mail.ru

Лаура Авакян – Кандидат филологических наук, доцент на кафедре армянского языка и методики его преподавания имени А. Тер-Григоряна, АГПУ имени Х. Абовяна. Научные интересы: современный армянский язык, основы стилистики и культуры речи, основы анализа текста и развития речи, основы самостоятельного чтения. Автор учебников, 15 учебных пособий и более 40 статей. Lauraavakian@mail.ru

Laura Avagyan – PhD in Philology, Associate Professor at Kh. Abovyan ASPU, Primary Education Faculty, Department of Armenian Language and Methods of Teaching named after A. Ter-Grigoryan. Research interests: Modern Armenian, fundamentals of stylistics and rhetoric, fundamentals of textual analysis and speech development, fundamentals of reading strategies. Author of textbooks, 15 teaching manuals and more than 40 articles. Lauraavakian@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 3.10.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 25.10.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ՀՌԻՓՍԻՄԵ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՀՈԼՈՎԻ ԿԱՐԳԻ ԸՄԲՈՆՈՒՄԸ ՀԱՅ ԵՎ ՌՈՒՍ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.204

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայերենը և ռուսերենը ունեն հոլովական հարուստ համակարգեր, որոնք թեև կառուցվածքային ու գործառույթային առումներով որոշ ընդհանրություններ ունեն, սակայն դրսևորում են նաև էական տարբերություններ՝ թե՛ հոլովների քանակի, թե՛ նրանց գործառույթների տեսանկյունից: Սույն աշխատանքում նպատակ է դրվել զուգադրական դիտարկման ենթարկել հայերենի (մասնավորապես՝ արևելահայ գրական լեզվի) և ռուսերենի հոլովական համակարգերը՝ փորձելով բացահայտել դրանց միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները:

Ներկայացրել ենք յուրաքանչյուր լեզվի հոլովական համակարգը՝ ըստ ժամանակակից հայ և ռուս լեզվաբանության մեջ ընդունված տեսությունների:

Բանալի բառեր և արտահայտություններ. *հոլովի կարգ, հոլովների քանակն ու բնույթը, հայերենագիտություն, ռուսերենագիտություն, հոլովական համակարգ, շարահյուսական և ձևաբանական առնչություններ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդեն մի քանի տասնամյակ է՝ հոլովների քանակի և բնույթի հարցերը պարբերաբար դառնում են քննարկումների թեմա: Հայերենագիտության մեջ հոլովների վերաբերյալ մի քանի տեսություններ են առաջադրվել, որոնցից առավել ընդունված է հինգհոլովական տեսությունը: Որոշ հայերենագետներ սեռականն ու հայցականը ձևաբանության մեջ վերականգնեցին որպես առանձին հոլովներ, բայց այս հարցի շուրջ քննարկումները մինչ այժմ էլ չեն դադարում: Հայերենագետներից շատերը վիճում են ուղղականն ու հայցականը, սեռականն ու

տրականը ինքնուրույն հոլովներ համարելու հարցի շուրջ: Ի տարբերություն հայերենի, ռուսերենում սեռականը (родительный падеж) և տրականը (дательный падеж) հստակ սահմանազատված և ձևաբանական առումով տարբեր հոլովներ են: Դրանք ընդունում են տարբեր հարցեր, ունեն տարբեր վերջավորություններ և շարահյուսական գործառույթներ: Ռուս լեզվաբան Ա. Զալիզնյակը ռուսերենում ընդունում է *երկրորդ նախդրայինի* (второй предложный) ձևի առանձնահատկությունները՝ ձևաբանորեն ու գործառույթային իմաստով, բայց այն ինքնուրույն հոլով չի համարում (**Зализняк А., 2002**), իսկ, օրինակ, Վ. Վինոգրադովը, Ա. Ռեֆորմատսկին և ուրիշներ հակված են այն համարելու *նախդրային հոլովի* ենթաձև (**Виноградов В., 1986; Реформатский А., 1998**):

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացվել է զուգադրական քննության միջոցով՝ անդրադառնալով գրական հայերենի և ռուսերենի հոլովի կարգին: Վերլուծությունն ընդգրկում է հետևյալ քայլերը.

1. **Երկու լեզուների ուսումնասիրություն և ներկայացում.** ներկայացրել ենք երկու լեզուների հոլովական համակարգերը, հայ և ռուս լեզվաբանների տեսակետները:
2. **Զուգադրական վերլուծություն.** երկու լեզուների հոլովական համակարգերի զուգադրական վերլուծություն՝ առանձնացնելով հոլովների շարահյուսական դերերը և ձևաբանական առանձնահատկությունները:
3. **Տեսական հիմնավորում.** հայերենագիտության և ռուսերենագիտության մեջ առկա տեսությունների համադրմամբ արված եզրահանգումներ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայերենագիտության մեջ, ըստ հինգ հոլովական տեսության, տարբերակվում են *ուղղական, սեռական-տրական, բացառական, գործիական* և *ներգոյական* հոլովները:

Այս մոտեցման մեջ սեռականն ու տրականը դիտվում են որպես մեկ հոլով՝ սեռական-տրական, քանի որ հաճախ չունեն ձևաբանական տարբերակվածություն. դրանք առանձնանում են միայն իրենց շարահյուսական գործառույթներով:

Ռուսերենագիտության մեջ ավանդաբար ընդունված է վեց հոլովների համակարգը՝ *ուղղական* (именительный), *սեռական* (родительный), *տրական* (дательный), *հայցական* (винительный), *գործիական* (творительный) և *նախդրային* (предложный):

Կապակցված խոսքում գոյականները շարահյուսական հարաբերությունների մեջ են մտնում այլ բառերի հետ: Ըստ այդմ էլ գործածվում են տարբեր հոլովաձևերով, որոնք ցույց են տալիս նախադասության մեջ գոյականի շարահյուսական պաշտոնը և նրա արտահայտած իմաստը: Հոլովի ուսումնասիրության և ճիշտ լուսաբանության համար, նախ, պահանջվում է նկատի ունենալ, թե այն ինչպիսի քերականական կարգ է, ինչ է արտահայտում և ինչպիսի համակարգ է այն ներկայացնում հայերենում և ռուսերենում: Այդ առումով կարևոր է պարզել, թե լեզվաբանները ինչ են հասկանում «հոլով» ասելով: Այսպես.

Ս. Պալասանյանը գրական արևելահայերենում ընդունում է յոթ հոլովի առկայությունը՝ ուղղական, հայցական, սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական (**Ասատրյան Մ., 1970**): Նա յոթ հոլովի տարբերակումը կատարում է միայն իմաստային հիմունքով և, ըստ էության, անտեսում է հոլովական ձևը:

Մ. Աբեղյանը ճանաչել է միայն հինգ հոլովի առկայությունը՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներգոյական (**Աբեղյան Մ., 1906**): Նրա կարծիքով, հայցական հոլովը ինքնուրույն գործածության ձև չունի, այն ձևով նման է կա՛մ ուղղականին, կա՛մ տրականին: Այսպիսի գործածության դեպքում հայցականը չի կարող առանձին հոլով համարվել: Ըստ Մ. Աբեղյանի՝ առանց հատուկ ձևի առանձին հոլով լինել չի կարող:

Ըստ Ս. Աբրահամյանի՝ «հոլովը գոյականի (և գոյականական գործածություն ունեցող բառերի) քերականական այն փոփոխությունն է, որով արտահայտվում են առարկայի (կամ որպես առարկա մտածված հատկանշի) վերաբերական տարբեր հարաբերությունները՝ ա) առարկայի հարաբերությունն այլ առարկայի նկատմամբ (գրքի թերթերը), բ) առարկայի հարաբերությունը գործողության կամ այլ հատկանշի նկատմամբ (*կարդալ գիրքը, գիրքը հեղափոխական է*)» (Աբրահամյան Ս., 1969):

Վ. Վինոգրադովը ռուսերենի համար նշում է, որ հոլովը խոսքում մյուս բառերի նկատմամբ վերաբերմունք արտահայտող անվանական ձև է: Ժամանակակից ռուսերենում միևնույն հարաբերությունները կարող են արտահայտվել հոլովական տարբեր ձևերով՝ *և՛ նախդիրներով, և՛ առանց նախդրի (Виноградов В., 1986):*

Ա. Ռեֆորմատսկին, կարևոր համարելով ոչ միայն հոլովի իմաստի, այլև ձևի հարցը, գրում է. «Քերականության առավել դժվար հարցը քերականական ձևի հարցն է» (Реформатский А., 1998): Այս հարցը քննելիս՝ հեղինակը եկել է այն եզրակացության, որ «1. Ձևը քերականության մեջ այն չէ, ինչ քերականական միջոցն է: 2. Ձևը չի կարող նույնական լինել իմաստին: 3. Ձևը քերականության մեջ քերականական իմաստի և քերականական միջոցի հարաբերությունն է՝ նրանց միասնությամբ» (Реформатский А., 1998):

Այժմ անդրադառնանք խնդրին ավելի մանրամասն:

Քերականական կարգերը որոշվում են ձևերի հակադրությամբ: Եթե չունենք ձևերի հակադրություն, ապա քերականական կարգ նույնպես չունենք: Քերականական կարգը բնորոշվում է իմաստային ու ձևային կողմով, որից էլ ունենում ենք հետևյալ սահմանումները՝

- քերականական կարգը քերականական իմաստ է, որն արտահայտված է որևէ ձևով,

- քերականական կարգը ձև է, որն արտահայտում է որևէ քերականական իմաստ (Ասատրյան Մ., 1970):

Ըստ ձևային հատկանիշի՝ ժամանակակից գրական արևելահայերենում կա միայն 5 հոլով՝ ուղղական (-հայցական), սեռական (-տրական), բացառական, գործիական և ներգոյական, որովհետև կա 5 հոլովական ձև՝ -Օ, -ի (/ու, -ան, -ոջ, -վա, -ց) արտաքին հոլովում կամ ա (ո) ներքին հոլովում, -ից (/ուց), -ով (/բ) և -ում: Հոլովներից յուրաքանչյուրն ունի իր իմաստն ու հակադրվում է մյուսներին:

Չպետք է շփոթել քերականական ձև և քերականական կարգ հասկացությունները: Քերականական ձևը կապված է արտահայտության միջոցի հետ, որը քերականական իմաստի (նշանակության) և այդ իմաստի արտահայտության քերականական միջոցի հարաբերությունն է՝ նրանց միասնությամբ: Այն լեզվաբանները, որոնք անվան «հնչյունական ձևը» և «քերականական նշանակությունը» չեն զատել իրարից և հիմք են ընդունել հոլովների արտահայտած հարաբերությունը, մեծ մասամբ ճիշտ են որոշել նաև նրանց թիվը:

Ի տարբերություն հայերենի՝ ռուսերենում հոլովման ժամանակ էական նշանակություն ունեն սեռի (արական, իգական և չեզոք), թվի (եզակի ու հոգնակի) և դեմքի (առաջին, երկրորդ, երրորդ) քերականական կարգերը, որոնք ձևային հատկանիշը ավելի արտահայտված են դարձնում:

Ուղղական հոլով: - Ռուսերենում և հայերենում ուղղական հոլովը շարահյուսական պաշտոններով հակադրվում է մյուս հոլովներին, այսինքն՝ ուղղականը արտահայտում է գոյականի անկախ դրությունը, իսկ մյուս բոլոր հոլովները՝ կախյալ: Ռուս լեզվաբանները, որոշելով հոլովների բնույթն ու արժեքը, նշում են երկու կարգ՝ *ուղիղ* և *թեք* հոլովներ, որոնք փոխադարձաբար կապվում են միմյանց հետ (**Виноградов В., 1986; Современный русский литературный язык, 1988**): Միանգամայն պարզ է, որ ուղիղ է կոչվում ուղղականը (ըստ ռուսական տերմինաբանության՝ *именительный*)), իսկ թեք՝ մյուս բոլոր հոլովները (**Шанский Н., Тихонов А., 1981**): Այն լեզվաբանները, որոնք բառի հնչյունական ձևն ու քերականական նշանակությունը չեն տարանջատել իրարից և հիմք են ընդունել հոլովների արտահայտած հարաբերությունը, մեծ

մասամբ ճիշտ եզրահանգումներ են արել: Հենց այս հիմունքով են ուսուցվածքները ուսերենի համար 6 հոլոված տարբերել (**Современный русский язык, 1981; Шанский Н., Тихонов А., 1981**):

Հայցական հոլովը ուսերենում կա, քանի որ այդ հոլովի գործառույթը գոյություն ունի այդ լեզվի մեջ: “Я встретил брата, подругу и преподавателя” նախադասության մեջ ուսները չեն ասում, թե брата սեռական է, подругу ուղղական և преподавателя հայցական, այլ երեքն էլ ասում են հայցական, որովհետև երեքն էլ միևնույն գործառույթը ունեն այդ խոսքի մեջ (**Современный русский язык, 1981; Шанский Н., Тихонов А., 1981**):

Սեռական(-տրական) հոլով:- Այս հոլովի համար պետք է տարբերել «երկու հիմնական կիրառություն՝ սեռական(-տրականը) որպես գոյականի կամ գոյականաբար գործածված բառի վերադիր (սեռական) և սեռական(-տրականը) որպես բայի, բայանվան կամ ածականի խնդիր (տրական)» (**Ասատրյան Մ., 1970**): Օր.՝ *Տիգրանի* ուղարկած գրքերը շատ օգտակար տեղեկություններ էին պարունակում (սեռական հոլով): Երեխաները տուն հասան *լուսաբացին* (տրական հոլով): Альберт Эйнштейн человек большого *ума* (родительный падеж). Сын не торопиться написать письмо *матери* (дательный падеж):

Ռուսերենում սեռական հոլովը տարբեր իմաստներ է ստանում՝ կախված նրանից՝ արդյոք օգտագործվում է գոյականների, թե բայերի հետ:

Տրական հոլովը բայի հետ (приглагольный дательный) ցույց է տալիս անուղղակի լրացում, դեպի որը ուղղված է գործողությունը, օր.՝ подарить девушке цветы (աղջկան ծաղիկներ նվիրել), купить сыну пальто (որդուն վերարկու գնել), помогать товарищу (օգնել ընկերոջը): Անդեմ բայերի և վիճակ արտահայտող բառերի հետ ցույց է տալիս մարդու կամ առարկայի վիճակը, օր.՝ маме не спится (մամայի քունը չի տանում), мальчику нездоровится (տղան վատառողջ է), Мише скучно (Միշան ծանձրանում է), ногам жарко (ոտքերը տաք են), цветам холодно (ծաղիկների (համար) սառն է): Տրական հոլովը գոյականի հետ (приименный дательный падеж) արտահայտում է անուղղակի լրացում, օր.՝ служение родине

(ծառայություն հայրենիքին), письмо родителям (նամակ ծնողներին) (**Шанский Н., Тихонов А., 1981; Современный русский язык, 1981**):

Բացառական հոլով: - Մ. Աբեղյանը, խոսելով բացառականի մասին, նշում է, որ այն ցույց է տալիս սկզբնակետը կամ ելակետը (**Աբեղյան Մ., 1965**), նույն կարծիքն ունի նաև Ս. Աբրահամյանը (**Աբրահամյան Ս., 1969**): Գ. Զահուկյանը նշում է, որ այս հոլովով արտահայտված բառերը ունեն անջատման իմաստ (**Զահուկյան Գ., 1974**), իսկ Է. Աղայանի կարծիքով դրանք ունեն ելման քերականական իմաստ (**Աղայան Է., 1967**): Ռուսերենում չկա հայերենին համարժեք առանձնացված բացառական հոլով, որովհետև իմաստները ռուսերենում արտահայտվում են նախդիրներով (из, с, от և այլն) և գոյականի սեռական հոլովով: Օր.՝ он упал с дерева (Ընկավ **ծառից**), он пришёл из школы (Եկավ **դպրոցից**) (**Виноградов В., 1986**):

Գործիական հոլով: - Մ. Աբեղյանը գործիականի համար նշում է, որ այս հոլովի միջոցով, օգնությամբ կամ միասնությամբ է կատարվում մի բան (**Աբեղյան Մ., 1965**): Գ. Զահուկյանը այս հոլովի իմաստը համարում է *ուղեկցում կամ մասնակցություն սկզբից մինչև վերջ* (**Զահուկյան Գ., 1974**), Է. Աղայանը՝ իրացման քերականական իմաստը (**Աղայան Է., 1967**), իսկ Ս. Աբրահամյանը՝ միջոցի իմաստը (**Աբրահամյան Ս., 1969**):

Ռուսերենում գործիական հոլովը գոյականի հետ (приименный творительный падеж) հիմնականում արտահայտում է նույն իմաստները, ինչ որ բայի հետ, օր.՝ удар топором (կացնով հարված), руководство работой (աշխատանքի ղեկավարում), прогулки вечерами (երեկոյան զբոսանքներ), пение басом (բասով երգել), вышивание крестом (խաչով ասեղնագործել): Գործիական հոլովը ածականների հետ ցույց է տալիս, որ նշված հատկանիշն ունի սահմանափակ դրսևորում: Օր.՝ слаб здоровьем (վատառողջ է), высокий ростом (բարձրահասակ է), сильный духом (հոգով ուժեղ է) (**Современный русский язык, 1981; Шанский Н., Тихонов А., 1981**):

Ներգոյական հոլով: - Մ. Ասատրյանը ներգոյականի ընդհանուր հոլովական իմաստը համարում է պարունակման իմաստը (**Ասատրյան Մ., 1970**): Ըստ Մ. Աբեղյանի՝ այս հոլովը գործածվում է տեղի, ժամանակի և սահմանափակման նշանակությամբ (**Աբեղյան Մ., 1965**): Վերջինիս համակարծիք են նաև Է. Աղայանն (**Աղայան Է., 1967**) ու Ս. Աբրահամյանը (**Աբրահամյան Ս., 1969**): Իսկ ըստ Գ. Զահուկյանի՝ ներգոյականը արտահայտում է ներարկություն, պարունակում (**Զահուկյան Գ., 1974**):

Հինգ և յոթ հոլովների տեսությունների առկայությամբ 1960-ական թվականներին Է. Աղայանը ներկայացրեց վեց հոլովի իր համակարգը, որի մասին թեև այլևս գրեթե չի խոսվում գիտական բանավեճերում, այդուհանդերձ ունի ոչ պակաս լեզվաբանական փաստարկում:

Հինգ կամ յոթ հոլովի տարբերակման հիմքում ընկած է ձևի և բովանդակության (իմաստի) միասնության գաղափարը, որը հատուկ է քերականական կարգերին:

Հինգ հոլովի տեսության հետևորդներն ընդունում են աբեղյանական բնորոշումը՝ հոլովը նախ և առաջ ձև է (**Աբեղյան Մ., 1965**), իսկ յոթ հոլովի կողմնակիցները կարևորում են հոլովական նշանակությունը: Մի դեպքում հոլովը ձևաբանական կարգ է, մյուս դեպքում՝ շարահյուսական:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով՝ հայ հեղինակները հիմնականում կենտրոնացել են հոլովների շարահյուսական գործառույթի, զարգացման և դասակարգման վրա, իսկ ռուս հեղինակները շեշտը դրել են ձևաբանական, նախդիրների կիրառման և հոլովների կառավարման վրա, և հաճախ՝ համակարգային կարգավորումներով: Կարծում ենք, որ նպատակահարմար է հինգ հոլովի համակարգը, իսկ դերանունների դեպքում՝ վեց հոլովի համակարգը, չնայած անվանական հոլովման դեպքում սեռականի և տրականի տարբերակումը խնդիրներ կարող է առաջացնել: Հինգ հոլովի համակարգը տրամաբանական է հիմնական քերականական կապերի տեսանկյունից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբաջյան Ա. (2006)**, Հայերենի հոլովական համակարգի ըմբռնումը և պատմական զարգացումը հայ քերականագիտության մեջ, Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Աբեղյան Մ. (1906)**, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, Տպարան «Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի»:
3. **Աբեղյան Մ. (1965)**, Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք» հրատ.:
4. **Աբրահամյան Ս. (1969)**, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, «Լույս» հրատ.:
5. **Աղայան Է. (1967)**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
6. **Ասատրյան Մ. (1970)**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հատ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ.:
7. **Ջահուկյան Գ. (1974)**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
8. **Виноградов В. (1986)**, Русский язык, Москва, “Высшая школа”.
9. **Зализняк А. (2002)**, Русское именное словоизменение, Москва, “Языки славянской культуры”.
10. **Реформатский А. (1998)**, Введение в языковедение, Москва, “Аспект” Пресс.
11. **Современный русский литературный язык (1988)**, под ред. П. А. Леканта, Москва, “Высшая школа”.
12. **Современный русский язык (1981)**, под ред. В. А. Белошапковой, Москва, “Высшая школа”.
13. **Шанский Н., Тихонов А. (1981)**, Современный русский язык, часть II, Москва, “Просвещение”.

REFERENCES

1. **Abajyan A. (2006)**, Hayereni holovakan hamakargi y'mbr'nowmy' & patmakan zargacowmy' hay qerakanagitowt'yan mej /The Understanding and Historical Development of the Armenian Case System in Armenian Grammar/, YSU Publishing, Yerevan.
2. **Abeghyan M. (1906)**, Ashxarhabari qerakanowt'iwn /Grammar of Modern Armenian/, Vagharshapat, Printing House of the Mother See of Holy Etchmiadzin.
3. **Abeghyan M. (1965)**, Hayoc lezvi tesowt'yown /Theory of the Armenian Language/, Yerevan, "Mitk" Publishing.
4. **Abrahamyan S. (1969)**, Jhamanakakic hayereni qerakanowt'yown /Grammar of Modern Armenian/, Yerevan, "Luys" Publishing.
5. **Aghayan E. (1967)**, Jhamanakakic hayereni holovowmy' & xonarhowmy' /Declension and Conjugation in Modern Armenian/, Yerevan, Publishing of the Academy of Sciences of the Armenian SSR.
6. **Asatryan M. (1970)**, Jhamanakakic hayoc lezvi d'&abanowt'yan harcer /Issues in the Morphology of the Modern Armenian Language/, Vol. I, Yerevan, YSU Publishing.
7. **Jahukyan G. (1974)**, Jhamanakakic hayereni tesowt'yan himownqneri' /Fundamentals of the Theory of Modern Armenian/, Yerevan, Publishing of the Academy of Sciences of the Armenian SSR.
8. **Vinogradov V. (1986)**, Russkiy yazyk /The Russian Language/, Moscow, "Visshaya Shkola".
9. **Zaliznyak A. (2002)**, Russkoye imennoye slovoizmeneniye /Russian Nominal Inflection/, Moscow, Languages of Slavic Culture.
10. **Reformatsky A. (1998)**, Vvedeniye v yazykovedeniye /Introduction to Linguistics/, Moscow, "Aspect" Press.
11. **Sovremennyy russkiy literaturnyy yazyk /Modern Russian Literary Language/ (1988)**, ed. P. A. Lekant, Moscow, "Visshaya Shkola".

12. **Sovremennyy russkiy yazyk /Modern Russian Language/ (1981)**, ed. V. A. Beloshapkova, Moscow, “Visshaya Shkola”.
13. **Shansky N., Tikhonov A. (1981)**, *Sovremennyy russkiy yazyk /Modern Russian Language/*, Part II, Moscow, “Prosveshchenie”.

Рипсима Костанян

Восприятие падежной классификации в армянском и русском языкознании

Заключение

Ключевые слова и выражения: падежная система, количество и характер падежей, арменистика, русистика, синтаксические и морфологические отношения.

Цель нашего исследования - анализ полемик, развернувшихся вокруг падежей в армянском и русском языках. Армянский и русский обладают богатыми падежными системами, которые, несмотря на некоторые структурные и функциональные сходства, демонстрируют и существенные различия - как по количеству падежей, так и по их функциям.

Более того данное исследование устремляется провести сравнительный анализ падежных систем армянского языка (в частности, литературного восточноармянского) и русского языка, пытаясь выявить их сходства и различия. Мы представили падежные системы каждого языка на основе теорий, признанных в современной лингвистике.

Армянские теоретики в основном сосредоточились на синтаксической функции, развитии и классификации падежей, тогда как русские исследователи большее внимание обратили на морфологических аспектах, использовании предлогов и управлении падежами, зачастую предлагая системные подходы к их упорядочиванию. Мы считаем целесообразной модель из пяти падежей, а в случае местоимений - систему из шести падежей, несмотря на то, что разграничение родительного и дательного падежей в именительном склонении может вызывать

определённые трудности. Система из пяти падежей представляется значительно логичной с точки зрения основных грамматических связей.

Hripsime Kostanyan

The Understanding of Case Classification in Armenian and Russian Linguistics

Conclusion

Keywords and expressions: *case classification, number and nature of cases, Armenian studies, Russian studies, case system, syntactic and morphological relations.*

The aim of our study is to examine the debates surrounding the case systems in Armenian and Russian. Both Armenian and Russian have rich case systems which, despite sharing certain structural and functional similarities, also display significant differences - in terms of the number of cases and their functions.

Moreover, this work aims to conduct a comparative analysis of the case systems of Armenian (specifically the literary form of Eastern Armenian) and Russian, with the goal of revealing their similarities and differences. We have presented the case system of each language based on theories accepted in contemporary linguistics.

Armenian theorists have mainly focused on the syntactic functions, development, and classification of cases, while Russian scholars have emphasized morphological aspects, the use of prepositions, and case governance, often within systematized frameworks. We consider the five-case system to be the most appropriate, and for pronouns - a six-case system, although distinguishing between the genitive and dative in nominal declension may present certain challenges. The five-case system appears considerably more logical from the perspective of core grammatical relationships.

Հոփսիմե Կոստանյան - Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի պատմության և ընդհանուր

լեզվաբանության ամբիոնի հայցորդ: Հեղինակ է հինգ տպագրված գիտական հոդվածի: hripsime.kostanyan@ysu.am

Рипсима Костанян - Аспирант кафедры истории армянского языка и общего языкознания филологического факультета Ереванского государственного университета. Автор пяти опубликованных научных статей.
hripsime.kostanyan@ysu.am

Hripsime Kostanyan - PhD student at the Department of History of the Armenian Language and General Linguistics, Faculty of Armenian Philology, Yerevan State University, author of five published scholarly articles.
hripsime.kostanyan@ysu.am

Խմբագրություն է ուղարկվել 26.08.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 07.09.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ԹԱՄԱՐԱ ՊՈՂՈՍՅԱՆ

18-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՄԻՆ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ
ԳՐՔԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ¹

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.205

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է 18-րդ դարի առաջին կեսին Վենետիկում տպագրված աշխարհաբար գրքերի լեզվական համակարգի քննությանը: «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց», «Գիրք քրիստոնեականի վարդապետութեան» գրքերը մեծ դեր են ունեցել հայ տպագրության, նաև հայոց լեզվի պատմության մեջ: Մի. Սեբաստացին իր գիտական, ուսումնական նպատակներն իրագործելու համար դրանք գրել է ժողովրդին հասկանալի՝ աշխարհաբար լեզվով՝ արտահայտելով վաղ արևմտահայ աշխարհաբարի լեզվական համակարգի տարբեր իրողություններ:

Հոդվածում քննել ենք վերոնշյալ երկերի հնչյունական համակարգի, բառապաշարի առանձնահատկությունները, ուսումնասիրել ենք ձևաբանական համակարգի տարբեր իրողություններ՝ հոլովակազմություն, հոդառություն, հոգնակիակազմություն, խոնարհում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սույն գրքերի լեզվական համակարգին հատուկ են արևմտյան բարբառներին, արևմտահայերենին բնորոշ իրողություններ: Թեև քննվող երկերում շարունակում են գրաբարյան կազմություններ հանդիպել, կան արևելյան բարբառներին, արևելահայերենին հատուկ լեզվական որոշ երևույթներ, սակայն երկերի լեզուն կարելի է բնութագրել որպես վաղ արևմտահայ աշխարհաբարի արտահայտություն:

¹ Հոդվածը տպագրվում է NAASR-ից ստացած դրամաշնորհով Վենետիկում իրականացրած գիտահետազոտական աշխատանքի շրջանակում:

Բանալի բառեր և արտահայտություններ. 18-րդ դար, Միս. Սեբաստացի, տպագիր գիրք, արևելյան և արևմտյան բարբառներ, աշխարհաբար, հնչյունական համակարգ, բառապաշար, ձևաբանական համակարգի առանձնահատկություններ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վենետիկի ս. Ղազար կղզում Միս. Սեբաստացու հիմնած Մխիթարյան միաբանության գործունեությունն անփոխարինելի դեր ունի հայ ժողովրդի պատմության մեջ: Միս. Սեբաստացու մահից հետո միաբանությունը շարունակում է գործել: 1772 թ. տեղի ունեցած վեճերի պատճառով միաբանության մի մասը տեղափոխվում է Տրիեստեն, 1811 թ.՝ Վիեննա: Այսպիսով՝ առաջանում են կաթոլիկ հայ հոգևորականների երկու՝ Վենետիկի և Վիեննայի միաբանությունները, որոնք կոչվում են Մխիթարյան: Դրանք շատ մեծ դեր են ունեցել հայ ժողովրդի գիտամշակութային կյանքում՝ ունենալով նշանավոր գիտնականներ, թարգմանիչներ, բանաստեղծներ: Հիմնել են նաև դպրոցներ, հրատարակել պարբերականներ և գրքեր (**Իշխանյան Ռ., 1981**): Շատ կարևոր իրադարձություն էր 1788 թ. Վենետիկի Ս. Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հայկական տպարանի հիմնադրումը:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Քննությունը կատարվել է մի քանի մեթոդների զուգակցմամբ՝ նկարագրական, վերլուծական, զուգադրահամեմատական, համադրական:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. 18-րդ դարի առաջին կեսին Վենետիկում տպագրված աշխարհաբար գրքերը: Աշխարհաբար գրքի տպագրությունը կապվում է հասարակական կյանքում ստեղծված գաղափարական հոսանքների գործունեության հետ: Ստեղծվում էին մի շարք ինքնուրույն մտավոր կենտրոններ, որոնք ունեին իրենց տպագրական օջախները (**Դավթյան Հ., 1963**): Այդ կենտրոնների թվում նշանավոր էր հատկապես Վենետիկը: Միս. Սեբաստացին ցանկանում էր ամբողջությամբ յուրացնել աշխարհաբարը, մշակել ու կատարելագործել:

Ըստ Հ. Դավթյանի «Հայ տպագրության սկզբից մինչև 1850 թ. լույս տեսած աշխարհաբար գրքերի և պարբերականների» ցուցակի՝ 18-րդ դարի առաջին կեսին Վենետիկում տպագրված աշխարհաբար գրքերն են՝ 1. Մխ. Սեբաստացի, Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց, շարադրեցեալ տաճկականաւ լեզուաւ: Վենետիկ, տպ. Անտոնի Բորտոլիի, 1727, 149 էջ, 2. Մխ. Սեբաստացի: Գիրք քրիստոնէականի վարդապետութեան, շարադրեցեալ աշխարհաբարիւ լեզուաւ... ընդ որում և երգք տաղից: Վենետիկ, տպ. Անտոնի Բորտոլիի, 1727, 132 էջ, 3. Մխ. Սեբաստացի: Գիրք քրիստոնէականի վարդապետութեան, շարադրեցեալ աշխարհաբարիւ լեզուաւ... ընդ որում և երգք տաղից: Վենետիկ, տպ. Անտոնի Բորտոլիի, 1732, 120+203 էջ: Այս գիրքը հրատարակվել է ևս մեկ անգամ 1771 թ.՝ Վենետիկ, տպ. Անտոնի Բորտոլիի, 120+203 էջ (**Դավթյան Հ., 1963**): Հարկ է նշել, որ «Բառգիրք Հայկազեան լեզուի» բառարանի Ա հատորը տպագրվել է 1749 թ., գրաբարից աշխարհաբար, աշխարհաբարից գրաբար բաժիններ չունի, ինչպես բառարանի Բ հատորը, որը տպագրվել է 1769 թ.: Մեր հոդվածում այն չենք ներառել, քանի որ տպագրվել է 18-րդ դարի երկրորդ կեսին:

Մխ. Սեբաստացի, «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց», Վենետիկ, 1727 թ.

Գրքի ամբողջական անվանումը հետևյալն է՝ «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց շարադրեցեալ տաճկականաւ լեզուաւ առ ի յօգուտ այնց հայոց, որք զտաճկական լեզու միայն գիտեն և փափաքին ուսանիլ զաշխարհաբար հայերէնն»²: Սա առաջին հայաստան թուրքերեն գիրքն է, որը, ինչպես նշում է Հ. Ստեփանյանը, պատահական հրատարակություն չի եղել: Մխ. Սեբաստացին ցանկանում էր զարգացնել բոլորին հասկանալի և հեռանկար ունեցող աշխարհաբարը, օգնել թրքախոս, բայց հայերեն սովորել ցանկացող հայերին, կապել նրանց մայր լեզվին, մասնակից դարձնել լուսավորական շարժմանը (**Ստեփանյան Հ., 2001**): Այս առումով ուշագրավ է նաև Մխ.

² Հետայսու բոլոր օրինակները բերվելու են այս աղբյուրից: Գրքի անվանումը տրված է նաև «Դուռն քերականութեան», «Դուռն...» տարբերակներով:

Սեբաստացու հետևյալ միտքը. «Ձայս քերականութիւնս գրաբառ լեզուով չգրեցի, քանզի ձեզի աշխարհաբար հայերէնն պէտք է» (**Սեբաստացի Մ., 1727**):

Վ. Դևրիկյանը նշում է, որ արտաքուստ պարզ թվացող նման ձեռնարկ գրելը շատ ավելի դժվար էր դասական գրաբարի քերականություն գրելուց, քանի որ գրաբարը համակողմանիորեն մշակված, համակարգված լեզու էր, իսկ արևմտահայ աշխարհաբարը գտնվում էր ձևավորման շրջանում: Հարկավոր էր տարրորոշել նրա հոլովական և խոնարհման ձևերը, այնուհետև դրանք ներկայացնել համապատասխան համակարգով: Դա է պատճառը, որ Միս. Սեբաստացին երբեմն քերականական համակարգն է հարմարեցնում լեզվական իրողություններին և ոչ թե հակառակը: Պատահական չէ նաև գրքի վերնագիրը՝ «Դուռն քերականութեան»՝ որպես քերականության մուտք, որի նպատակն էր ճիշտ կարդալ սովորեցնելը (**Դևրիկյան Վ., 2016**):

Գրքի «Բան առ ընթերցողս» առաջաբանում Միս. Սեբաստացին նշում է, որ աշխարհաբարով գրել է անունների հոլովման և բայի լծորդության մասին: Բովանդակել է դրանք երկու գրքերում, որոնցից մեկը սա է, որ կոչվում է «Դուռն քերականութեան»: Նա հավելում է. «...եւ մյուսն է զվարդապետութեան մասանց քանի եւ զշարայարութեան նոցին, որ այժմոյս ոչ տպագրի» (**Սեբաստացի Մ., 1727**): Հեղինակը նշում է, թե գիրքն ում կարող է օգտակար լինել. «Արդ, սոյնս, որ տպագրի, պիտոյանայ նոցին, որք ոչ գիտեն զհայկական լեզու, և կամին ուսանիլ...» (**Սեբաստացի Մ., 1727**):

Առաջաբանին հաջորդում է «Բառք քերականականք» մասը, որտեղ տրվում են քերականական եզրույթները և թուրքերեն թարգմանությունը. սկզբում նշվում է թուրքերեն բառը, այնուհետև՝ հայերեն, օրինակ՝ Ալէթի Գործիական, Ա՛սլի Սեռական, Էմրի Հրամայական ևն: Հաջորդում է հայատառ թուրքերեն քերականությունը, որը կազմված է Ա.-ԺԸ. գլուխներից, այնուհետև՝ բառգիրքը՝ «Բառգիրք, որ հետևի դրան քերականութեան»: Բառգիրքն ունի հետևյալ կառուցվածքը՝ տրված է հայերեն բառը, որն ունի համապատասխան քերականական նկարագիր, ապա թուրքերեն թարգմանությունը, օրինակ՝ Բազուկ, կի, ներ. դօլ և ևն: Գոյականի դեպքում նշվում է եզակի սեռականի

վերջավորությունը, բայերի դեպքում՝ սահմանական եղանակի ներկա ժամանակի երրորդ դեմքը և հրամայական եղանակի երկրորդ դեմքը:

Մի. Սեբաստացի, «Գիրք քրիստոնեականի վարդապետութեան», Վենետիկ, 1727 թ.

Գրքի ամբողջական անվանումը հետևյալն է՝ «Գիրք քրիստոնեականի վարդապետութեան: Շարադրեցեալ աշխարհաբարսի լեզուաւ աշխատասիրութեամբ Տեառն Մխիթարայ Վարդապետի Սեբաստացոյ Աբբայ հայր կոչեցելոյ: Ընդ որում և երգք տաղից առադրին, որք ի վաղնջուց ժամանակաց շինեցեալք են ի նոյնոյ Վարդապետե»³: Գիրքը բաղկացած է հետևյալ մասերից՝ 1. Բան առ ընթերցողս, էջ 3-5: 2. Գլուխ Ա.-Է., էջ 7-74: Է. գլուխն ավարտվում է հետևյալ մասով՝ «Մէկ հարցմունք մի այլ անեմ, և վերջացնենք», էջ 73-74: 3. Տաղարան, էջ 77-132:

Մի. Սեբաստացու առաջին «Քրիստոնեական»-ը լույս է տեսել 1725 թ.: Այն գրված էր գրաբար: 2 տարի անց տպագրվում է աշխարհաբար «Քրիստոնեական»-ը, որը հասանելի և ըմբռնելի էր հասարակ դասակարգի համար: Վ. Դերիկյանը նշում է, որ Մի. Սեբաստացուն չի բավարարում «Քրիստոնեական»-ի թեկուզ պարզ, սակայն միայն գրաբարով շարադրված լինելը, հետևաբար ընթերցողների ավելի լայն շրջանակի համար 1727 թ. հրատարակում է աշխարհաբար համառոտ տարբերակը (**Դերիկյան Վ., 2016**):

Գիրքը նախատեսված է եղել ոչ միայն մանուկների, այլև բոլոր անձանց համար, ովքեր ունեին քրիստոնեական ուսմունքի կարիք: Առաջին «Քրիստոնեական»-ը Մի. Սեբաստացին գրել է 30-ամյա մանկավարժական գործունեությունից հետո: Նա եղել է գրուսույց կամ գրուսույցների ղեկավար Հայաստանի տարբեր վայրերում, Կոստանդնուպոլսում, Հունաստանում, Իտալիայում: Հնարավորություն է ունեցել այդ տեղերում ծանոթանալու հայ և օտար լեզուներով գրված ուսումնական գրքերին (**Գասպարյան Մ., 1960**):

³ Հետալու օրինակները բերվելու են այս աղբյուրից: Գրքի անվանումը տրված է նաև «Գիրք...» տարբերակով:

3. Քննվող երկերի լեզվական համակարգի բնութագիրը: Ռ. Իշխանյանը 17-րդ դարի աշխարհաբար տպագիր գրքերն ուսումնասիրելիս դիմել է խոսքը լեզվական բաղադրիչներով բնութագրելու միջոցին: Նա ընտրել է քսան բաղադրիչներ, որոնք պայմանականորեն անվանել է գլխավոր: Այդ բաղադրիչները վերաբերում են լեզվական տարբեր իրողությունների, օրինակ՝ մի շարք բնորոշ բառաձևերի օգտագործում, գոյականների հոգնակիի կազմություն, գրաբարյան հոլովաձևերի կազմություն, բայերի ներկա ժամանակի կազմություն ևն (**Իշխանյան Ռ., 1979**): Մենք կփորձենք քննվող գրքերի լեզվական բնութագիրը ներկայացնել՝ հիմք ընդունելով խոսքը լեզվական բաղադրիչներով բնութագրելու միջոցը, քննելով և համալրելով Ռ. Իշխանյանի նշած լեզվական իրողությունները: Նրա առանձնացրած բաղադրիչները խմբավորել ենք՝ ըստ ուսումնասիրվող երկերի բնութագրական առանձնահատկությունների:

Հնչյունական համակարգի առանձնահատկություններ

ա. Ուսումնասիրվող երկերի հնչյունական համակարգին բնորոշ են ձայնավորների, երկբարբառների տարբեր փոփոխություններ, ինչպես՝ *ի>ը՝ ընձի, ընչու, իւ>ը՝ արընովն* (**Մեքաստացի Մ., Գիրք..., 1727**), ույ>ու՝ *կապուտ* (**Մեքաստացի Մ., Դուռն..., 1727**) ևն, ձայնավորների անկումներ (սղումներ)՝ *ա՝ կու մոռնամ, անուշնալ* (**Մեքաստացի Մ., Դուռն..., 1727**), *ճակտիս, գիտցածդ* (**Մեքաստացի Մի., Գիրք..., 1727**) ևն, *ն, է՝ սօրվեցնօղ* (**Մեքաստացի Մ., Դուռն..., 1727**), *սօրվեցնելու // սօրեցնել* (**Մեքաստացի Մ., Գիրք..., 1727**), *է՝ խնցնել* (**Մեքաստացի Մ., Դուռն..., 1727**), *չգիտնալով* (**Մեքաստացի Մ., Գիրք..., 1727**) ևն: Միջնավանկի ձայնավորի անկումը հայոց լեզվի զարգացման ընթացքում փոխանցվել է արևմտյան մի շարք բարբառների, ապա թափանցել արևմտահայ գրական լեզվի սահմանները:

բ. Քննվող երկերի լեզվական համակարգին բնորոշ է ձայնեղների խլացումը, օրինակ՝ *բ>պ՝ դարիպ* (**Մեքաստացի Մ., Դուռն..., 1727**), *դուրպան* (**Մեքաստացի Մ., Գիրք..., 1727**), *գ>կ՝ հինկերորդ, գանկատ* (**Մեքաստացի Մ., Գիրք..., 1727**), *դ>տ՝ սնտուկ* (**Մեքաստացի Մ., Դուռն..., 1727**), *ձ>ծ՝ բրինձ, խնծոր* (**Մեքաստացի Մ., Դուռն..., 1727**), *դ>խ՝ շըխթայ* (**Մեքաստացի Մ., Դուռն..., 1727**), շնչեղ խուլերի

խլացումը՝ փ>բ՝ *ճանքով* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727), ք>կ՝ *ճեխկ, ճեխկել* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727) ևն: Պայթական և պայթաշփական բաղաձայնների փոփոխությունների հիման վրա Ա. Ղարիբյանի առանձնացրած բաղաձայնական համակարգի տեղաշարժերի և բարբառների հնչյունաբանական դասակարգման տեսանկյունից նշենք, որ ձայնեղների խլացումը բաղաձայնական համակարգի առաջին տեղաշարժն է, որը բնորոշ է Ղարաբաղի, Մարաղայի, Ուրմիայի, Խոյի, Վանի և այլ բարբառների (Ղարիբյան Ա., 1953):

Բառապաշարի առանձնահատկություններ

ա. Քննվող երկերի բառապաշարում գործածվում են արևմտյան բարբառներին, արևմտահայ խոսքին բնորոշ բառեր և բառաձևեր, ինչպես՝ *ան աստենն, հիմակուց ետև, քիչուկ* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727), *դեպ ի յաջիկ կուշտս, մեկն մեկային / մեկայնե, աղեկ* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) ևն:

բ. Կիրառվում են արևմտահայերենին բնորոշ ամբողջական կառույցներ, ինչպես նշում է Ռ. Իշխանյանը, ամբողջական խոսքեր (Իշխանյան Ռ., 1979), օրինակ՝ *«Ես ձեզի լաւ խրատներ տուի կամ կուպահեք կամ չեք պահեք»* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727), *«Մեկնէ՛ ընձի զհինկերորդ բաժինն»* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) ևն:

գ. Անդրադառնանք նաև որոշ տարբերակների, որոնք, ինչպես վերը նշեցինք, նկատի է ունեցել Ռ. Իշխանյանը՝ խոսքը լեզվական բաղադրիչներով բնութագրելու միջոցն օգտագործելիս:

1. *Մին* և *մը, մըն՝* արևելյան և արևմտյան (հետագայում՝ գրական արևմտահայերեն) բարբառային տարբերակներ: *Մին* ժողովրդական բառաձևն առաջացել է *մի* բառի և *ն* հոդի միացությունից: Այն ավանդվել է գրաբար դասական բնագրերում, նույն ձևով պահպանվել արևելյան որոշ բարբառներում (Արարատյան, Ն. Ջուղայի, Արցախի) (Իշխանյան Ռ., 1979): Արևմտահայ խոսքին հատուկ են ոչ թե *մին*, այլ *մը* կամ *մըն* ձևերը: Ինչ վերաբերում է *մեկ*-ին, այն համարվում է առավել գրական ձև, ինչպես՝ *«...մեկ տեղէն մեկ ալ տեղն գնաց...»*, *ի ներքոյ մեկ գլխոյ* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) ևն: «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան» երկում կիրառվում է *մի*-ն, օրինակ՝ *«...մեղադրութեան բան*

մի չունիս...» (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) և: Արևմտահայերենին բնորոշ *մը*-ն չի գործածվում:

2. *Այլ* բառի (1. ուրիշ, ոչ նույն: 2. Տարբեր: 3. մկ. էլ) բարբառային, ժողովրդախոսակցական *էլ* տարբերակը հատուկ է արևելահայ խոսքին, *ալ* տարբերակը՝ արևմտահայ: *էլ-այլ*, *ալ* տարբերակներից «Դուռն քերականութեան» երկի լեզվական համակարգում գործածվում է *ալ*-ը, *էլ* տարբերակը չի հանդիպում, օրինակ՝ «...*ալ էլէլ գինի կուզեր խմել*», «*Բայց դուք ալ պիտի ջանաք լաւ կարդալ*» (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727): «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան» երկում հանդիպում են *այլ/ալ*-ը, ինչպէս՝ «...*այլ ուրիշ խորհուրդ ալ ունի*» (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) և:

3. *էս*, *աս-այս տարբերակներ*: Հայտնի է՝ դերանունների *էս*, *էտ*, *էն* տարբերակները բնորոշ են արևելահայ խոսքին, *աս*, *ատ*, *ան*-ը՝ արևմտահայ: «Դուռն քերականութեան» երկում դերանունների հոլովմանն անդրադառնալիս Մի. Սեբաստացին բերում է հոլովման հարացույց, որտեղ տրված են արևմտահայ *աս*, *ատ*, *ան* դերանունները համապատասխան հոլովածներով, ինչպէս՝ *աս-ասոր-գաս-ասկից-ասով* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727) և:

Ձևաբանական համակարգի առանձնահատկություններ. հոլովման համակարգ

ա. Սեռական-տրական հոլովի վերաբերյալ նշենք, որ երկերում գործածվում են արևմտահայերենին բնորոշ կազմություններ, ինչպէս՝ *դիզի*, *իրիցու* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727), *վնասուն վերայ* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) և: Հաճախադեպ են *ի* ընդհանրական հոլովմամբ կազմությունները, որոնք փոխանցվել են հայերենի զարգացման նոր փուլին, ինչպէս՝ *գետնի* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727), *պատուիրանին* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) և: «Գիրք քրիստոնէականի վարդապետութեան» երկի լեզվում շարունակում են կիրառվել բազմաթիվ գրաբարյան կազմություններ, օրինակ՝ *ի ձեռաց*, *այթոռոյն* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) և:

Այն գոյականները, որոնց հոգնակի թիվը կազմվել է *-եր* կամ *-ներ* հոգնակերտներով, քննվող երկում սեռական-տրականի հոգնակին ձևավորել են *ու*

թեքմամբ, որը բնորոշ է արևմտահայերենին, ինչպես՝ *դիզերուն, բաղնիքներուն* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727), *մշակներուն* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) ևն:

բ. Հայցական հոլովի վերաբերյալ հարկ է նշել, որ «Դուռն քերականութեան» երկի հոլովման համակարգում հայցական հոլովով կազմություններն առանց *զ* նախդրի են, ներկայացված են *ը* հոդով, ինչպես՝ *զեսինը, դիզերը* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727) ևն: «Գիրք քրիստոնեականի վարդապետութեան» երկում շարունակում են հանդիպել *զ* նախդրով գրաբարյան կազմություններ, ինչպես՝ *զայս հաւատամքս, զկենդանիս* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) ևն:

գ. Բացառական հոլովը հիմնականում կազմվում է *է* հոլովիչով, որը հատուկ է գրաբարին, միջին հայերենին և արևմտյան բարբառներին: Գործածվում են *և՛ ն* հոդով կազմություններ, *և՛* առանց *ն* հոդի, ինչպես՝ *զեսնէն* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727), *ի կուսէն, յառաջմէ* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) ևն: «Դուռն քերականութեան» երկի լեզվում գործածվում են նաև բացառականի *ու*-ով կազմություններ, ինչպես՝ *ցրտուն, իրիցուն* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727) ևն:

դ. Գործիական հոլովի վերաբերյալ նշենք, որ գործածվում են հիմնականում *ու*/*ի* հոլովիչով կազմություններ, օրինակ՝ *հացով* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727), *լեզուովն, կերպով* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) ևն: Հանդիպում են նաև այս հոլովի՝ *ն* հոդով կազմություններ: Կան արևմտահայերենին հատուկ կառույցներ, օրինակ՝ *անով, ասնցմով* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) ևն:

ե. Քննվող երկերի հոլովման համակարգում ներգոյական հոլովը բացակայում է: «Դուռն քերականութեան» երկի հոլովման հարացույցում ներգոյական հոլովը տրված չէ, իսկ «Գիրք քրիստոնեականի վարդապետութեան» երկում այս հոլովի իմաստը հիմնականում արտահայտվում է *սեռական-տրական+մէջ (ն)* կապակցություններով, օրինակ՝ *հաւատամքին մէջ, խորհրդին մէջ* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) ևն: Շարունակում են հանդիպել գրաբարյան որոշ կազմություններ, ինչպես՝ *ի յերկինս, ի յարգանտին* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) ևն:

Հոգնակիականություն: Քննվող երկում գոյականների հոգնակի թիվը հիմնականում կազմվում է *-եր, -ներ* հոգնակերտների միջոցով, ինչպես՝ *հաւեր,*

բարեկամներուդ (Մեքաստացի Մ., Դուռն..., 1727), *լայթերն, խրատներ* (Մեքաստացի Մ., Գիրք..., 1727) ևն: Շարունակում են գործածվել -ք հոգնակերտով գրաբարյան կազմություններ: Հանդիպում են -ենք՝ *Կիրակոսենք* (Մեքաստացի Մ., Դուռն..., 1727), *ինք՝ անձինք, վերջինք, -իկ՝ մարդիք* (Մեքաստացի Մ., Գիրք..., 1727) հոգնակերտները: Գործածվում են արևմտյան բարբառներին բնորոշ կազմություններ, ինչպես՝ *տեր-տիրուրտիք, ծաղիկ-ծաղկներ* (Մեքաստացի Մ., Դուռն..., 1727), *չերեցածներն* (Մեքաստացի Մ., Գիրք..., 1727) ևն: Ուշագրավ են հոգնակի ստացականի ձևերը, օրինակ՝ *մտքերնիդ* (Մեքաստացի Մ., Դուռն..., 1727), *ձեռքերնիս, բերրննիս* (Մեքաստացի Մ., Գիրք..., 1727) ևն:

Խոնարհման համակարգ

ա. Ներկա ժամանակի կազմություն: Քննվող երկերի խոնարհման համակարգում ներկան և անցյալ անկատարը կազմվում են *կու (կը, կ)* եղանակիչով: *Կու* եղանակիչի գրությունը քննվող երկերում կայուն չէ. այն բաղաձայնից առաջ հանդիպում է ինչպես բային միացյալ, այնպես էլ անջատ, օրինակ՝ *կուվառեմ, կու լուան* (Մեքաստացի Մ., Դուռն..., 1727), *կու հաղորդուէին* (Մեքաստացի Մ., Գիրք..., 1727) ևն:

բ. -եր վերջավորությամբ վաղակատար ձևաբայով ժամանակաձևեր: -եր-ով վաղակատարը հանդիպում է միջին հայերեն բնագրերում, այն բնորոշ է արևմտյան մի շարք բարբառների, օրինակ՝ Կարինի, Մուշի, Խարբերդ-Երզնկայի, Արաբկիրի ևն: Իսկ -ել-ով վաղակատարը հատուկ է արևելյան բարբառներին, ինչպես՝ Արարատյան, Նոր Ջուղայի, Աստրախանի ևն (Աբրահամյան Ա., 1953): Քննվող երկերի խոնարհման համակարգում գործածվում են -եր վերջավորությամբ վաղակատար ձևաբայով ժամանակաձևեր, օրինակ՝ *մոռցեր էք, թողեր են* (Մեքաստացի Մ., Դուռն..., 1727), *իջեր է, հրամայեր է* (Մեքաստացի Մ., Գիրք..., 1727) ևն:

գ. Պիտի + խոնարհված բայ կապակցություններ: «Գիրք քրիստոնեականի վարդապետութեան» երկի խոնարհման համակարգում *պիտի*-ն կիրառվում է որպես եղանակիչ, օրինակ՝ *պիտի գայ, պիտի հաւատանք* (Մեքաստացի Մ., Գիրք..., 1727) ևն: Թեև այն երկում որպես դիմավոր բայ չի գործածվում, սակայն

հանդիպում է *պիտեր* ձևը, ինչպես՝ «...ասելով, թե *ահ ինձ պիտեր, զի լաւ է»* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727): Հայտնի է՝ լեզվի զարգացման ընթացքում *պիտիւ* բայի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքը վերածվել է եղանակիչի, որն անցել է արևելահայերենին և արևմտահայերենին, սակայն իմաստային տարբերությամբ: Արևելահայերենում դրանք արտահայտում են հարկադրական կամ անհրաժեշտական գործողություն, իսկ արևմտահայերենում՝ ապառնի ժամանակի իմաստ: Գործածվում են նաև *պիտի* կամ *պետք է + անորոշ դերբայ* կապակցություններ, ինչպես՝ *պիտի առնել, պիտի խոստովանի* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727): *Պիտի* կամ *պիտի-ի դիմավոր ձև + անորոշ դերբայ* կապակցությունը բնորոշ է արևելյան բարբառներին: Հ. Աճառյանը նշում է, որ արևելյան բարբառներն ավելի երկար ժամանակ են պահել *պիտի* բայի խոնարհված ձևերը, ապա այն սկսել են վերածել եղանակիչի (Աճառյան Հ., 1954):

դ. Հրամայական եղանակի կազմության առանձնահատկություններ: «Դուռն քերականութեան» երկի խոնարհման համակարգում է խոնարհման բայերը բուն հրամայականի եզակի թիվը կազմում են է վերջավորությամբ, ինչպես՝ *վառէ՛, վառու՛է՛* ևն, *ա* խոնարհման բայերը՝ *ա*, օրինակ՝ *լուա՛, իր՝ մոռցի՛ր*, պատճառական բայերը՝ *ուր՝ հաշտեցո՛ւր* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727) ևն: Որպես եզակի հրամայականի կազմություն՝ բերվում են նաև *թող* բառով հարադրությունները, ինչպես՝ *թող անձրևէ, թող չանձրևէ* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727) ևն: Հոգնակին կազմվում է *-էք* վերջավորությամբ՝ *մոռցէ՛ք, հաշտեցուցէ՛ք* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727) ևն: «Գիրք քրիստոնեականի վարդապետութեան» երկում հրամայական եղանակի ժամանակաձևեր հաճախ չեն գործածվում: Բացի զրաբարյան հատուկենտ կազմություններից՝ հանդիպում են հրամայականի *ա, է* վերջավորությամբ ձևեր՝ *ասա՛, մեկնէ՛* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727): Նշենք, որ միջինհայերենյան *-է* վերջավորությամբ կազմությունները պահպանվել են արևմտահայերենում *ե* և *ի խոնարհման* աններածանց, կրավորական և բազմապատկական բայերի համար:

Արգելական հրամայականի եզակիի ձևերն ունեն *-ր* վերջավորություն, որը բնորոշ է արևմտյան բարբառներին, արևմտահայերենին, ինչպես՝ *մի՛ վառեր, մի՛*

հաշտեցնէր (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727), *մի՛ սպաննէր* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) ևն:

ե. Ժխտական խոնարհում: Քննվող երկերի խոնարհման համակարգում գործում է *կու*-ով (*կը, կ*) ներկայ և անցյալ անկատար ժամանակաձևերի ժխտական խոնարհման կազմության հետևյալ հիմնական օրինաչափությունը՝ չ ժխտական մասնիկով օժանդակ բայ և *-ր* վերջավորությամբ դերբայ, ինչպես՝ *չեմ լուանար-չես լուանար-չի լուանար* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727), *չէր թողուր* (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) ևն: Ժխտական դերբայն անորոշ դերբայի վերջին *-լ* ձայնորդը *ր-ի* անցումով է կազմվում արևմտյան բարբառներում, ինչպես՝ Խարբերդ-Երզնկայի, Տրապիզոնի, Մալաթիայի, Պոլսի, Արաբկիրի, Ակնա ևն (Աբրահամյան Ա., 1953): Այս օրինաչափությունը հետագայում բնորոշ դարձավ արևմտահայերենին:

զ. Բացի վերոնշյալ իրողություններից՝ հավելենք նաև հարակատար դերբայով ժամանակաձևերի կիրառությունը, ինչպես՝ «*Ես ժամանակ չունէի, թէ չէ շատոնց դրած էի գատնք ձեզի*» (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727), «*Մինչև հիմիկ եղած գովքն կուսին Գաբրիէլ հրեշտակապետէն շարադրած էր*» (Սեբաստացի Մ., Գիրք..., 1727) ևն: Արևմտահայերենում, ի տարբերություն արևելահայերենի, հարակատար դերբայը ժամանակաձևեր է կազմում նաև ներգործական սեռի բայերից: Արևելահայերենում *հարակատար դերբայ+եմ-էի* կազմությունները բայի խոնարհման հարացույցի մեջ չեն մտնում:

է. *Լինել-ըլլալ* արևելահայերեն-արևմտահայերեն տարբերակներից գործածվում է արևմտյան բարբառներին և արևմտահայերենին բնորոշ *ըլլալ* բայը, ինչպես՝ *ըլլամ-ըլլաս-ըլլայ, ըլլանք-ըլլաք-ըլլան* (Սեբաստացի Մ., Դուռն..., 1727) ևն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. 18-րդ դարի դարի առաջին կեսին Վենետիկում տպագրված աշխարհաբար գրքերը շատ կարևոր դեր ունեն հայ տպագրության և հայոց լեզվի պատմության մեջ: Մի. Սեբաստացին իր գիտական, ուսումնական նպատակներն իրագործելու համար գրել է ժողովրդին հասկանալի՝ աշխարհաբար լեզվով: Այդպիսով՝ նա իր

մեծ ներդրումն է ունեցել արևմտահայ աշխարհաբարի տարածման, մշակման և ուսուցման անչափ կարևոր գործում:

Բ. Քննվող երկերի հնչյունական համակարգին հիմնականում բնորոշ է բաղաձայնական համակարգի առաջին տեղաշարժը՝ ձայնեղների խլացումը, որը հատուկ է Ուրմիայի, Խոյի, Վանի և այլ բարբառների: Հանդիպում են նաև շնչեղ խուլերի խլացման օրինակներ: Այս հնչյունական փոփոխությունները պայմանավորված են ժամանակի խոսակցական լեզվավիճակի, բարբառների ազդեցությամբ: Շատ բնութագրական է հատկապես միջնավանկի ձայնավորի անկումը, որը արևմտյան մի շարք բարբառներից թափանցել է արևմտահայ գրական լեզվի սահմանները:

Գ. Վերոհիշյալ երկերի բառապաշարին բնորոշ են արևմտյան բարբառներին, արևմտահայերենին հատուկ բառեր և բառաձևեր, ամբողջական կառույցներ: Որոշ բառային տարբերակների գործածության քննությունը ևս վկայում է այդ մասին, օրինակ՝ *էլ-այլ*, *ալ* տարբերակներից *ալ*-ի, *էս*, *աս-այս* տարբերակներից *աս* (*ատ*, *ան*)-ի գործածությունը: Սակայն *մին-մը*, *մըն* տարբերակներից երկերին բնորոշ է արևելյան բարբառներին հատուկ *մի*-ի կիրառությունը:

Դ. Սեռական-տրական հոլովի դեպքում թեև հաճախադեպ են *ի* ընդհանրական հոլովաձևերը, սակայն գործածվում են նաև արևմտահայերենին բնորոշ մի շարք կազմություններ: *-էր* կամ *-նէր* հոգնակերտներով գոյականները սեռական-տրականի հոգնակին ձևավորել են *ու* թեքմամբ, որը բնորոշ է արևմտահայերենին: Ուշագրավ են հատկապես հոգնակի ստացականի՝ արևմտահայերենին հատուկ կազմությունները:

Թեև շարունակում են հանդիպել հայցական հոլովի *զ* նախդրով կազմություններ, կան նաև հայցականի ոչ կանոնավոր ձևեր, սակայն նկատելի է ուղղական և հայցական հոլովների նույնացման երևույթը: Բացառական հոլովը հիմնականում կազմվում է *է* հոլովիչով, որը հայերենի զարգացման ընթացքում բնորոշ դարձավ արևմտահայերենին: Գործիական հոլովի համար ընդհանրացել է *ու/հոլովիչը*, որը հատուկ է աշխարհաբարի երկու ճյուղերին:

Ե. Երկերի հոլովման համակարգում գործածվող բացառական, գործիական հոլովաձևերի՝ *և* հոդով կազմությունները ևս բնորոշ են արևմտահայերենին: Գործածվում են այսօր միայն արևմտահայերենին հատուկ հոդավոր կապակցություններ:

Զ. Վերոհիշյալ երկերի խոնարհման համակարգը բնութագրվում է աշխարհաբարյան մի շարք իրողություններով, որոնք բնորոշ են հիմնականում արևմտյան բարբառներին և արևմտահայերենին, ինչպես՝ ներկա ժամանակի կազմությունը *կու (կը, կ)* եղանակիչով, *-եր* վերջավորությամբ վաղակատար ձևաբայով ժամանակաձևերը, բուն հրամայականի եզակիի *-է*, արգելական հրամայականի եզակիի *-ը* վերջավորությունները, հարակատար դերբայով ժամանակաձևերի կիրառությունը, ներկայ և անցյալ անկատար ժամանակաձևերի ժխտական խոնարհման կազմությունը ևն: Պիտի + խոնարհված բայ կապակցություններն արևելահայերենում և արևմտահայերենում ունեն իմաստային տարբեր արտահայտություններ, իսկ հանդիպող *պիտի* կամ *պետք է + անորոշ դերբայ* կապակցությունները հատուկ են արևելյան բարբառներին:

Է. Այսպիսով՝ թեև 18-րդ դարի առաջին կեսին Վենետիկում տպագրված աշխարհաբար գրքերի լեզվական համակարգում շարունակում են հանդիպել գրաբարյան կազմություններ, կան արևելյան բարբառներին, արևելահայերենին հատուկ լեզվական որոշ երևույթներ, հնչյունական համակարգն ամբողջությամբ չի համապատասխանում արևմտահայերենի հնչյունական համակարգին, սակայն երկերի լեզուն կարելի է բնութագրել որպես արևմտահայ աշխարհաբարի արտահայտություն, որը դեռևս նորմավորման ուղի պիտի անցներ՝ մշակվելով և կատարելագործվելով: Կարծում ենք՝ քննվող երկերը մեծ դեր են ունեցել արևմտահայ աշխարհաբարի նորմավորման կարևոր գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ա. (1953), Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, ՀՍՄՀ ԳԱ հրատ.:

2. Աճառյան Հ. (1951), Հայոց լեզվի պատմություն, II մաս., Երևան, Հայպետհրատ:
3. Աճառյան Հ. (1954), Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, հատ. IV, Բ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
4. Գասպարյան Մ. (1960), Մեսրոպյան այբբենարանները ԺԵ-ԺԸ. դարերում, «Էջմիածին» ամսագիր, Ը., էջ 34-42, Ս. Էջմիածին, Հայրապետական արձողոյ Ս. Էջմիածնի հրատ.:
5. Դավթյան Հ. (1963), Աշխարհաբար գիրքը հայ տպագրության սկզբից մինչև 1850 թվականը, Երևան, ՀՍՍՌ Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. ռես. գրադ., https://haygirk.nla.am/upload/1941-/ashxarhabar_girq@_1964_ocr.pdf:
6. Դերիկյան Վ. (2016), Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մասն Գ, Սուրբ Ղազարից Սուրբ Էջմիածին (18-րդ դար), Երևան, «Զանգակ» հրատ.:
7. Իշխանյան Ռ. (1979), Նոր գրական հայերենը XVII–XVIII դդ., Երևան, ԵՊՀ հրատ.:
8. Իշխանյան Ռ. (1981), Հայ գիրքը 1512–1920, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
9. Ղարիբյան Ա. (1953), Հայ բարբառագիտություն. հնչյունաբանություն և ձևաբանություն, Երևան, ՀՍՍՌ պետ. հեռ. մանկ. ին-տ, <https://arar.sci.am/Content/281966/Barbaragitytyun.pdf>:
10. Սեբաստացի Մ. (1727), «Դուռն քերականութեան աշխարհաբար լեզուին հայոց», Վենետիկ, տպ. Անտոնի Բորտոլիի:
11. Սեբաստացի Մ. (1727), «Գիրք քրիստոնեականի վարդապետութեան, շարադրեցեալ աշխարհաբարի լեզուաւ... ընդ որում և երգք տաղից»: Վենետիկ, տպ. Անտոնի Բորտոլիի, տպ. Անտոնի Բորտոլիի:
12. Ստեփանյան Հ. (2001), Հայատառ թուրքերեն գրականությունը, Երևան, ԵՊՀ հրատ.:

REFERENCES

1. Abrahamyan A. (1953), Hayereni derbaynerë ew nranc' jevabanakan nšanakut'yunë /Participles of the Armenian Language and Their Morphological

- Significance/, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
2. **Acharyan H. (1951)**, Hayoc' lezvi patmut'yun /History of the Armenian Language/, Part II, Yerevan, State Publishing House.
 3. **Acharyan H. (1954)**, Liakatar k'erakanut'yun hayoc' lezvi hamematut'yamb 562 lezuni /Complete Grammar of the Armenian Language in Comparison with 562 Languages/, Vol. IV, Part B, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press.
 4. **Davtyan H. (1963)**, Ašxarhabar girkë hay tpagrut'yan skzbic' minč'ev 1850 t'vakanë /The Modern Armenian (Ashkharabar) Book from the Beginning of Armenian Printing to 1850/, Yerevan, State Republican Library named after Alexander Myasnikyan, Armenian SSR. URL: https://haygirk.nla.am/upload/1941-/ashxarhabar_girq@_1964_ocr.pdf.
 5. **Devrikyan V. (2016)**, Hay girkë ašxarhi xačmeruknerum, masn G, Surb Ġazarič' Surb Eĵmiacin (18-rd dar) /The Armenian Book at the Crossroads of the World, Part 5: From San Lazzaro to Holy Etchmiadzin (18th Century)/, Yerevan, Zangak Publishing.
 6. **Gasparyan M. (1960)**, Mesropyan aybbenarannerë ŽE–ŽĚ darerum /Mesropyan Alphabets in the 15th–18th Centuries/, Etchmiadzin, No. 8, p. 34-42. Etchmiadzin, Publishing House of the of the Patriarchal See of Holy Etchmiadzin.
 7. **Gharibyan A. (1953)**, Hay barbaragitut'yun: Hnčyunabanut'yun ew jevabanut'yun /Armenian Dialectology: Phonology and Morphology/, Yerevan, State Pedagogical Institute of the Armenian SSR. URL: <https://arar.sci.am/Content/281966/Barbaragitytyun.pdf>.
 8. **Ishkhanyan R. (1979)**, Nor grakan hayerenë XVII–XVIII dd. /Modern Literary Armenian in the 17th–18th Centuries/, Yerevan, Yerevan State University Press.
 9. **Ishkhanyan R. (1981)**, Hay girkë 1512–1920 /The Armenian Book, 1512–1920/, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.

10. **Sebastatsi M. (1727)**, Durn k'erakanut'e an ašxarhabar lezuin hayoc' /The Door of Grammar of the Modern Armenian Language/, Venice, Antonio Bortoli press.
11. **Sebastatsi M. (1727)**, Girk' k'ristoneakani vardapetut'e an, šaradrec'e al ašxarhabariw lezuaw... ënd vorum ew yergk' tagic' /The Book of Christian Doctrine, Composed in the Modern Armenian Language... Including also Songs of Hymns/, Venice: Antonio Bortoli Press.
12. **Stepanyan H. (2001)**, Hayatař t'urkeren grakanut'yunë /Armenian-Script Turkish Literature/, Yerevan, Yerevan State University Press.

Tamara Poghosyan

Linguistic analysis of the Modern Armenian

(ashkharabar) books printed in the first half of the 18th century in Venice

Conclusion

***Key words and expressions:** 18th century, Mkhitar Sebastatsi, printed books, eastern and western dialects, Modern Armenian (ashkharabar), phonological system, vocabulary, characteristics of morphological system.*

This article is dedicated to the study of the linguistic system of the Modern Armenia (ashkharabar) books printed in Venice in the first half of the 18th century. These books played a significant role in the history of Armenian printing and in the development of the Armenian language. Mkhitar Sebastatsi, in order to realize his scholarly and educational goals, wrote them in the Modern Armenian language understandable to the people, reflecting various features of the linguistic system of the early Western Armenian.

The article discusses the formation of the Western Armenian, analyzes the phonetic system and vocabulary features of these books, and examines various aspects of the morphological system — including inflection, conjugation, case formation, and declension. The study shows that the linguistic system of these books is primarily characterized by features typical of Western Armenian dialects. Although the books still contain classical Armenian (Grabar) constructions as

well as some linguistic phenomena typical of Eastern Armenian dialects, the language of these works can be described as an expression of the early Western Armenian language.

Тамара Погосян

Лингвистическая характеристика книг на новоармянском языке, напечатанных в Венеции в первой половине XVIII века

Заключение

Ключевые слова и выражения: XVIII век, Мхитар Себастици, печатная книга, восточные диалекты, западные диалекты, новоармянский язык, фонетическая система, лексика, морфологические особенности.

Настоящая статья посвящена исследованию языковой системы книг на новоармянском языке, изданных в Венеции в первой половине XVIII века. Эти издания сыграли значительную роль в истории армянского книгопечатания, а также в развитии армянского языка. Мх. Себастици, реализуя свои научные и образовательные цели, писал их на понятном народу новоармянском языке, отражая различные явления раннего западноармянского языка.

В статье подробно анализируются особенности фонетической системы и лексики этих произведений, а также изучаются различные аспекты морфологической системы: словоизменение по падежам, использование артиклей, образование множественного числа, спряжение глаголов. Кроме того, рассматриваются вопросы становления западноармянского языка. Исследование показывает, что языковая система указанных книг в основном характеризуется чертами западных диалектов, присущими западноармянскому языку. Несмотря на наличие в произведениях конструкций, характерных для габара, а также отдельных языковых явлений восточных диалектов и восточноармянского языка, в целом язык этих книг можно охарактеризовать как выражение раннего западноармянского языка.

Թամարա Պոգոսյան – «Մատենադարան». Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները՝ հայոց լեզվի

պատմություն, ձեռագրագիտություն: Հեղինակ է շուրջ 20 հոդվածների:
Tnelsonovna@gmail.com

Тамара Погосян — научный сотрудник Института древних рукописей имени Месропа Маштоца («Матенадаран»), кандидат филологических наук. Научные интересы: история армянского языка, рукописоведение. Автор около 20 научных статей. Tnelsonovna@gmail.com

Tamara Poghosyan – Researcher at the Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts (Matenadaran), PhD in Philology. Research interests: history of the Armenian language and codicology. Author of 20 scholarly articles. Tnelsonovna@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 28.09.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 10.10.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԼԻԼԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ «ԼԻԼԻԹ» ՊՈԵՄԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ
ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.206

ԱՍՓՈՓՈՒՄ

Ավետիք Իսահակյանի «Լիլիթ» պոեմը հայ գրականության բացառիկ արժեքներից է, որտեղ առասպելաբանական նախատիպը վերափոխվում է գեղարվեստական և խորհրդանշական կերպարի: Իսահակյանը Լիլիթին ներկայացնում է որպես հրեղեն, ազատատենչ, անկախ կնոջ, որի գեղեցկությունն ու անհաս լինելը վեր են իրականությունից: Կերպարը մարմնավորում է կանացիության, անկախության, երազանքի և անհաս սիրո գաղափարները:

Պոեմն ազդել է հայ գրականության հետագա զարգացումների վրա, հետագա գրողները, մասնավորապես՝ Հովհաննես Շիրազի, Սիլվա Կապուտիկյանի, Վահագն Դավթյանի, Արա Ալոյանի ստեղծագործություններում, վերահաստատվել է՝ դառնալով հոգեվիճակային ու խորհրդանշական կերպար:

«Լիլիթը» լայն արձագանք է ստացել նաև կերպարվեստում. ստեղծվել են կերպարի գեղանկարչական, գրաֆիկական և մոնումենտալ լուծումներ (Գ. Խանջյան, Ս. Մուրադյան, Վ. Խաչատրյան և ուրիշներ): Քանդակում այն մարմնավորվել է որպես տարերային ուժի խորհրդանիշ, իսկ թատրոնում և կինեմատոգրաֆում դարձել է ռոմանտիկ և միստիկ բեմականացման հիմնական առանցք:

Ուսումնասիրությունը փաստում է, որ Իսահակյանի «Լիլիթը» վաղուց դուրս է եկել գրական տեքստի սահմաններից՝ դառնալով համահայկական մշակութային խորհրդանիշ, որը միավորում է գեղագիտական, հոգեբանական և ցեղակրոն ընկալումներ:

Քանալի բառեր և արտահայտություններ. գեղարվեստական կերպար, համադրական վերլուծություն, խորհրդանիշ, արվեստ, կերպարաբանություն, ժամանակի համատեքստ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ավետիք Իսահակյանը հայ գրականության այն երախտավորներից է, որի ստեղծագործական ժառանգությունը ոչ միայն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հայ գեղարվեստական գրականության պատվավոր բարձունքներում, այլև խոր նստվածք ունի հայ ժողովրդի ազգային գիտակցության տարբեր շերտերում:

Թեև ժողովրդական ընկալմամբ Ա.Իսահակյանն առաջին հերթին հանճարեղ բանաստեղծ է, բայց նրա արձակը նույնպես պատվավոր տեղ ունի հայ գրականության մեջ՝ շնորհիվ յուրահատուկ հմայքի, որը ռոմանտիկ խառնվածքով բանաստեղծը հաղորդել է իր աձակին: Պետք է նշել, որ նրա արձակն ու չափածոն ոչ միայն փոխկապակցված են, այլև միմյանց մեջ ներթափանցելով՝ լրացնում են մեկը մյուսին՝ ստեղծելով ժամանակի փորձությունը հաղթահարած, բոլոր ժամանակներում արդիական ու մնայուն երկեր: Նրա ստեղծագործությունների գլխավոր առանձնահատկությունը համամարդկայինը հայկականության յուրահատուկ տարրերով օժտելն է, համամարդկայինն ազգայինին հարաբերելու և կապելու բացառիկ տաղանդը, ինչի շնորհիվ էլ նրա ստեղծագործական ժառանգությունը դուրս է թե՛ տարածական և թե՛ ժամանակային սահմաններից:

«Լիլիթ» պոեմը (1899–1907) հայ գրականության այն ստեղծագործություններից է, որտեղ բանաստեղծականին միախառնված են առասպելաբանականը, արևելյան փիլիսոփայությունը և եվրոպական ռոմանտիկ գրականության շերտերը: Լիլիթի կերպարը, ունենալով դիցաբանական և առասպելաբանական սկիզբ, Իսահակյանի պոեմում ձեռք է բերում այլ որակներ, իսկ հետագայում հայ գրականության մեջ մեկնաբանվում է անհաս սիրո,

երագային կնոջ, կանացի ուժի, ազատատենչության, կնոջ կամքի և ինքնադրսևորման, մերժման և զգացմունքայնության տեսանկյունից:

Գրականությունից դուրս՝ «Լիլիթի» կերպարը վերածվում է մշակութային բազմաշերտ կերպարի, ինչի արդյունքում այն սկսում է ներգրավվել տարբեր արվեստաձևերում՝ գեղանկարչություն, քանդակագործություն, թատրոն, ժամանակակից մեդիաարտադրություն:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն իրականացվել է միջառարկայական տեսանկյունից՝ համադրական-վերլուծական մեթոդով՝ գուգադրելով գրականագիտական (տեքստաբանական վերլուծություն, կերպարի և խորհրդանիշի մեկնաբանություն), ինչպես նաև արվեստաբանական արխիվային աղբյուրները (պատկերամտածողության վերլուծություն, կոմպոզիցիոն-ռճային քննություն, կերպարային տիպաբանություն): Ուշադրություն է դարձվել Իսահակյանի ստեղծած կերպարի մեկնաբանությանը և դրա մշակութային կերպարանափոխությանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Իսահակյանական «Լիլիթ»-ը

«Լիլիթը» Ավ.Իսահակյանի գրական ժառանգության թերևս ամենագեղեցիկ ստեղծագործություններից է: Առասպելաբանական հայտնի կերպարը իսահակյանական մեկնության մեջ ներկայաված է գեղարվեստական, հոգեբանական, փիլիսոփայական համադրությամբ, որպես անհասանելի երագ-կնոջ, իդեալի, անմարմին սիրո խորհրդանիշ: Շնորհիվ Իսահակյանի փիլիսոփայական ընկալման և դրա նորովի մեկնաբանման՝ այն դուրս է ն'առասպելական, և՛ գեղարվեստական կերպարի սահմաններից: Այն կնոջ հոգեկերտվածքը, բազմաշերտ ու առեղծվածային էությունը մեկնաբանող մշակութային ծածկագիր է: «Իսահակյանական Լիլիթը հավերժական կանացիի մարմնացումն է, կնոջ էությունը, դա հավերժական այրումն է և հոգու թոփչքը, ոգու ազատությունն ու անհնազանդությունը, դա պոռթկումն է, ձգտումը և չիրականացվող երագանքը, սակայն ընդմիշտ հրաշագեղ և կենսունակ: Երագանքը

գեղեցիկ է հատկապես իր անիրականանալիության հասողության մեջ: Հենց այդպես էլ ապրում է Լիլիթ Ադամի սրտում», - «Իսահակյանի «Լիլիթ» առասպելի մասին» հոդվածում գրում է Մ. Ջանփոլադյանը:

Իսահակյանական Լիլիթը և՛ իրական է, և՛ երագ: Գրողը, ի սկզբանե, կերպարի ծագումնաբանական մտահղացմամբ կանխորոշում է թե՛ կերպարի էությունը, թե՛ սյուժեի հետագա ընթացքը՝ ընդգծելով հողածին Ադամի ու հրածին Լիլիթի անհամատեղելիությունը: Ա. Մկրտումյանը նրանց ստեղծման պատմությունը ներկայացնելիս ցույց է տալիս խնդրի բուն էությունը. «Մայր հողին միախառնված աստվածային արարչագործ շնչի փոխարեն Իսահակյանը պարզապես գրում է, որ Ադամը ստեղծվեց անասունների ոտքի տակ ընկած հողից: Մարդու հողեղեն բնույթի գիտակցված ավելի հասարակացումը Վարպետը կատարում է առավել ընդգծելու ստեղծագործության հիմքում ընկած կոնֆլիկտը, որը կառուցվում է Ադամի հողեղենության և Լիլիթի հրեղեն բնույթի հիման վրա» (Մկրտումյան Ա., <https://arar.sci.am/dlibra/publication/401417/edition/371534/content>):

Եվ բռնեց դեպի վեր սուրացող կրակը և նրա բեկբեկուն, ճախրուն բոցերից ստեղծեց անդրանիկ կնոջը՝ Լիլիթին: Եվ նայելով իր ստեղծածի վրա՝ հիացած ասաց. «Բարի է, որովհետև գեղեցիկ է» (Իսահակյան Ա., 1983):

Աստված բարին ու գեղեցիկը համարժեք է համարում: Գեղեցիկը բարու հետ նույնացնելը գեղագետ Իսահակյանի աշխարհընկալումն է, որը կապված է նաև Պլատոնի փիլիսոփայական ուսմունքի հետ՝ իդեալական, կատարյալ գեղեցիկը միաժամանակ ճշմարիտ է ու բարի: Սակայն Լիլիթի ու Ադամի ծագումնաբանական հակադրությունը նրանց անհամատեղելիության գլխավոր պատճառն է, մինչդեռ այլ էր Աստծո նպատակը նրանց արարելիս.

- Ես ստեղծեցի Ադամին հողից և քեզ կրակից, որ իրար լրացնեք (Իսահակյան Ա., 1983):

Լիլիթը չէր կարող և չպիտի լրացներ հողանյութ, հողածին, հողաբույր և ծանրաշարժ Ադամին: Հրածին Լիլիթը ներքուստ էլ հրին բնորոշ հատկանիշներ ուներ:

«Եվ քաղցր ձայնով կանչեց կարապետներին. ու երբ Լիլիթ ծունկի եկավ նրանց փայփայելու, հանկարծ ջրերի վրա տեսավ մի հրաշալի, մի հրաբողբոջ պատկեր. և երբ հասկացավ, որ այդ իր ցուլքն է, սքանչացավ իրենով և հպարտացավ»:

«Եվ տեսավ Լիլիթ, որ արևը այնքան հրեղեն չէ, ինչքան իր աչքերի կրակը, և երկինքը այնքան խորունկ չէ, ինչքան իր աչքերի հունը: Ինքն է ամենակատարյալը դրախտի մեջ, և լիճն ու դրախտը լցված են իր դեմքի լույսով» (Իսահակյան Ա., 1983):

Իր արտացոլանքը տեսնելուց հետո է՛լ ավելի գիտակցեց իր արժանիքներն ու առավելությունները, ինչը նրան դարձրեց անմատչելի ու Ադամի համար ավելի ցանկալի:

Ինչպես կրակը, երբ վերահսկում ես, լույսու ջերմություն է տալիս, իսկ վերահսկողությունը կորցնելիս, տարերքի է վերածվում՝ այրելով, ավերելով ոչնչացնում, այնպես էլ Լիլիթի սերը այրեց ու ամայացրեց Ադամի հոգին:

«Ադա՛մ, քո բոլոր օրերիդ մեջ հետևի՛ր Լիլիթին, և դո՛ւ, Լիլիթ, հնազանդ եղիր Ադամին: Լիլիթ ուշի ուշով նայեց Ադամին, և կավի հոտ զգաց իր հոտոտելիքը: Եվ զգաց, որ Ադամի հայացքը հողի ծանրությամբ իջավ իր մազերի և ուսերի վրա: Ու հապճեպով ձեռքը դուրս քաշեց Ադամի ափի միջից: Ադամ նայեց Լիլիթին և գեղեցկության մի անհուն ծավալվեց ու խորացավ իր առջև, որ դյուրում էր ու քաշում իր հոգին դեպի ահավոր անդունդը՝ ոչնչացնելու համար» (Իսահակյան Ա., 1983):

Կրակի նման չսանձվող, չհնազանդվող, չենթարկվող, ազատատենչ և դիմադրող, կրակի նման դեպի իրեն ձգող, բայց կրակի նման վտանգավոր ու կործանող. այդպիսին է իսահակյանական Լիլիթը: Նա կնոջ իդեալն է, կնոջ նախասկիզբը, կնոջ մեջ հենց կինն է՝ անմեկնելի ու անվերժանելի, ուստի հաճախ նաև՝ չհասկացված: Իսահակյանը հող ու կրակ հակադրության բոլոր շերտերը բացում է Լիլիթ և Ադամ հակասությունը ներկայացնելիս:

Դրանցից մեկն այն է, որ հողը մարում է կրակը, և Լիլիթը շատ լավ է զգում իրենց համատեղության անհնարինությունը՝ պայմանավորված իրենց բնույթով: Լիլիթի համար անտանելի է Ադամի սերը: Որքան էլ նա փորձում է ընդունել,

հարմարվել, նրա էությունն դիմադրում է, ըմբոստանում, նրա ներքին «եսը» հրաժարվում է համակերպվել ու հնազանդվել՝ նույնիսկ Աստծո պատժի սպառնալիքն անտեսելով՝ դառնալով Ադամի տառապանքների անվերջանալի շղթան:

Հայտնի է նաև, որ կրակը կարող է այրել այն աստիճանի, որ հողը երկար ժամանակ զրկվի և կորցնի իր բնական նշանակությունը և Լիլիթը հրեղեն էությունը հենց դրան էլ հանգեցնում է. նա այրում է Ադամի սիրտն ու հոգին՝ մոխրացնելով այն աստիճանի, որ անգամ դրախտն է նրան ամայի թվում. «Անհույս էր Ադամի հոգին և, նզովելով աստված ու անմահություն, մահ էր տենչում: Եվ աստծուն լսելի եղան Ադամի հառաչանքները. կարեկցեց նրան, և ինքն իր մեջ սուզված խորհեց, որ անկարելի էր վերև սլացող հուրը ընկերացնել երկրին կառչող հողին» (Իսահակյան Ա., 1983):

Այս ստեղծագործությունն ամբողջացնում է Իսահակյան գրողի, գեղագետի և մարդու մասին պատկերացումները: Նա «Լիլիթի» կերպարը մեկնաբանում է կնոջ հոգեբանությանը քաջատեղյակ տղամարդու տեսանկյունից, ինչի շնորհիվ էլ իսահակյանական «Լիլիթը» վերածվում է հավաքական խորհրդանիշ-կերպարի, կանացի հոգեբանության ծածկագրի: Ու պատահական չէ, որ ոչ թե առասպելական, այլ իսահակյանական՝ նախատիպից առանձնացած, նորովի մեկնաբանված «Լիլիթը» հայ արվեստում պիտի մեծ արձագանք ստանար, դառնար ոգեշնչման անսպառ աղբյուր՝ ծնունդ տալով արվեստի բազմաթիվ գործերի:

«Լիլիթը» արձագանքները հայ գրականություն մեջ

Իսահակյանի «Լիլիթը» հայ խորհրդապաշտության ու ռոմանտիզմի ավանդույթներում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում: Այն մեծ ազդեցություն է թողել XX դարի սկզբի հայ գրողների և արվեստագետների վրա: Պոեմի լեզվամտածողության մեջ «Լիլիթը» ներկայացվում է որպես երկկողմանի էություն՝ զգացմունքային ու խորհրդավոր, լուսավոր ու մութ:

«Լիլիթը» կանացիության և ազատության խորհրդանիշ է. նա միաժամանակ և՛ մերժված է, և՛ սիրված: Կերպար, որը XX դարասկզբին երևան եկավ հայ խորհրդապաշտ և ռոմանտիկ մի շարք հեղինակների ստեղծագործություններում,

իր յուրօրինակ դրսևորումը ստացավ հատկապես չափաճոյում, որտեղ «Լիլիթը» դարձավ ավելի հոգեվիճակային, կանացի բնավորության խորհրդանիշ:

1958 թ. լույս է տեսնում **Հովհաննես Շիրազի** «Արաքսի ճերմակ հարսնացուն» շարքը, որտեղ ի հայտ է գալիս կնոջ նոր կերպար՝ հոգեհարազատ իսահակյանական «Լիլիթին»: Բազմաթիվ բանաստեղծություններում կրակային, գայթակղող, ինքնիշխան կերպարը, որը բանաստեղծի վրա ունի ազդեցություն, բառացիորեն նույնացվում է «Լիլիթի» կերպարին: Այս շարքում Շիրազի պատկերած կերպարն անցնում է խոնարհության, հեզության, հնազնդության սահմանները՝ ի ցույց դնելով կնոջ բնույթի մյուս կողմը՝ ուժը, ազաբաղձությունն ու ըմբոստությունը: «Քեզ չեմ մոռանա», «Աչքերիդ նման», «Համբույրիդ բոցը», «Կրակոտ աղջիկ», «Գիշերային երգ», «Արաքսի ճերմակ հարսնացուն» բանաստեղծություններում կինը դուրս է ավանդական սիրո մեղմ ու նուրբ սահմաններից, նա ձեռք է բերել տարերային զօժեր, ներկայացվում է որպես բոց և կրակ, գիշերային մենության և գայթակղության խորհրդանիշ:

Իսահակյանի «Լիլիթից» է սերում Ս. Կապուտիկյանը նույնանուն բանաստեղծությունը (**Կապուտիկյան Ս., 1981**), որտեղ Լիլիթը և՛ ցնորք է, և նյութեղեն, հին ու նոր ժամանակների կանացի ինքնության, ուժի և պայքարի խորհրդանիշ:

Շուրջը՝ հողէ, ու հաց, ու հոգս – իսկ դու ցնորք,

Դու՝ միայն փայլ, ամեն օր՝ այլ, ամեն օր՝ նոր,

Կանչող, տանջող, այրվող, այրող – ու հոգնեցնող,

Լիլիթ, Լիլիթ:

Այնտեղ սենյակ գողտ ու տաքուկ – ու դու՝ փողոց,

Այնտեղ օջախ – դու՝ անհանգիստ խարույկի բոց,

Այնտեղ անդորր – դու՝ անդադրում խռովք ու խոց,

Լիլիթ, Լիլիթ:

Ս. Կապուտիկյանի մյուս բանաստեղծություններում Իսահակյանի սիմվոլիկ հերոսուհին տեղափոխվում է 20-րդ դարի սոցիալ-հոգեբանական այլ հարթություն՝ իբրև կանացիության, ինքնաբավության, համարձակության, ազատության,

ինքնուրույնության մարմնացում՝ սիրող, հեռացող, վերադարձող, պայքարող, բայց երբեք չհանձնվող տեսակ: Կապուտիկյանի պոեզիայի մի ամբողջ շերտ անուղղակի առնչվում է Լիլիթի կերպարին՝ «Անմոռացիր», «Աչքերդ», «Հանդիպում», «Գիշերային խոստովանություն», «Ես քո երգին չեմ գա», «Ես չեմ դառնա ստվերդ»:

Թեև **Վահագն Դավթյանի** սիրային քնարերգության մեջ «Լիլիթ» անունը չի նշվում, բայց երազային սիրո, իդեալի մշտական ներկայությունը պահպանում է հույզի և հեռավոր անհաս սիրո միջև լարվածությունը, ինչն ուղիղ համեմատական է Լիլիթի՝ խորհրդավոր, անրջային կերպարի՝ անշոշափելի, անմարմին սիրո («Անհաս սեր», «Լույս ու միգ», «Քեզ հասնելու ճամփան...», «Ես սիրում եմ քեզ, իբրև կորուստ»):

Ժամանակակից բանաստեղծների շրջանում իսահակյանական «Լիլիթի» յուրովի մեկնաբանությունն է տալիս **Արա Ալոյանն** իր «Լիլիթերգ» բանաստեղծությամբ (**Ալոյան Ա., 2014**): Բանաստեղծությունը հեղինակի իսկ բնորոշմամբ Ադամերգ է՝ ձոնված հայտնի կերպարին և ակնհայտ է, որ իսահակյանական արձակի չափածո բառակերպումն է: Լիլիթի կանացի թովչանքն ու գեղեցկությունը, նրբությունն ու նազանքը, զգացմունքայնությունն ու սերը բանաստեղծը յուրովի է ներկայացնում: Կին, որ բանաստեղծի համար, թեև մարդեղեն է, բայց բանաստեղծի կյանքում բեկումնային ինչ-որ պահից դարձել է կիսաստված, նա և՛ սրբացված է, և՛ միևնույն ժամանակ տառապանքի դիվական հատկանիշներով է օժտված:

Գրականությունից դուրս Լիլիթի կերպարը աստիճանաբար ձևավորվում է որպես մշակութային կերպար, արտահայտվելով արվեստի տարբեր ճյուղերում:

Իսահակյանի «Լիլիթը» հայ կերպարվեստում:

Իսահակյանի ստեղծած «Լիլիթի» կերպարը լայն արձագանք է ստացել հատկապես կերպարվեստում: Այն դրսևորվել է մի շարք հեղինակների գեղանկարչական գործերում, գրաֆիկական մոտիվներում, ժամանակակից մոնումենտալ արվեստում:

Պահպանվել է գեղեցիկ պատմություն, որտեղ Վարպետը անձամբ նկարիչ Սարգիս Խաչատրյանին հորդորում է պատկերել Լիլիթի կերպարը՝ իր պատկերացումներով:

1947թ. նյույորքաբնակ նկարչուհի **Վալա (Վարդուհի) Խաչատրյանը** «Լրաբեր» հանդեսի խմբագիր Վահան Ղազարյանի միջոցով Ե. Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանին է փոխանցում իր և ամուսնու՝ նկարիչ Սարգիս Խաչատրյանի արխիվի մեծ մասը:

Բազմաթիվ արժեքավոր փաստաթղթերի մեջ պահպանվել էին նաև Իսահակյանի ութ նամակները, որոնցից չորսը տպագրվել էին մամուլում, իսկ չորսը՝ անտիպ էին, որոնք հրատարակվեցին «Ավետիք Իսահակյանի նամակները» գրքում:

Նկարիչ Սարգիս Խաչատրյանն ու Իսահակյանը ծանոթացել են 1922թ. Վենետիկի Ս. Մարկոսի հրապարակում աղավնիներին կերակրելիս: Իսահակյանը ցանկանում էր, որ Սարգիս Խաչատրյանը ստեղծի «Լիլիթի» կերպարը՝ *«Ուղղակի ոսկով ու լույսով ու բոցերով պիտի նկարես այս իսկական կնոջը՝ հոգի ու մարմին այրող: Եվ միշտ երազ...»*, - գրում է Իսահակյանը նկարիչ Սարգիս Խաչատրյանին, որը հանձն էր առել նկարել «Լիլիթին» (**Ավետիք Իսահակյանի նամակները, 2016**):

Նկարիչն այդպես էլ չի պատկերում «Լիլիթի», սակայն նա ունի իր կնոջը Վալա Խաչատրյանին նվիրված երեք դիմանկար, որտեղ, մեր կարծիքով, կանացի թովչանքը, ինքնավստահությունն ու ինքնաբավությունը, հայացքի դրամատիզմը, այնուամենայնիվ փոխանցում են այդ տրամադրությունը (Ընդգծումը՝ Լ.Գ.):

Ավելի ուշ Լիլիթի կերպարը ստեղծել է նրա կինը՝ Վալա Խաչատրյանը: Թե որտեղ է գտնվում այն նկարը, հայտնի չէ, բայց ահա թե ինչ է գրել տիկին Վալան այդ մասին.

«Ես կարդացել էի Իսահակյանի «Լիլիթ»-ը: Քանիցս Սարգսին խորհուրդ էի տվել այն մարմնավորել կտավի վրա, մի հիանալի անակնկալ անել Վարպետին՝ նկարելով «Լիլիթը»՝ «բոլոր տանջող և ապրեցնող հրապույրների աղբյուրը»: Սարգիսը գտնում էր, որ «Լիլիթի» կերպարը հաղթահարելու համար ժամանակ է պետք, ստեղծագործական հանգիստ, մտորումների խաղաղ մթնոլորտ: Մի բան, որ և՛ այդ, և՛ հետագա տարիներին միշտ պակասում էր մեզ: Հետագայում, երբ ես սկսեցի նկարել, իմ չորրորդ ստեղծագործությունը «Լիլիթի» եղավ (**«Հայրենիքի ձայն», 1975, N 44**):

Հայ հայտնի նկարիչներից շատերն են ուղղակի կամ անուղղակի անդրադարձել խորհրդավոր և անմեկնելի կնոջ կերպարին:

Չնայած **Մարտիրոս Մարյանը** հատուկ այդ թեմայով ստեղծագործություն չունի, բայց այն, որ պոեմի տրամադրությանը համընկնող մի շարք գուգորդումներ կան, ակնհայտ է: Հատկապես պոեմի մթնոլորտին շատ մոտ է Ավ. Իսահակյանի «Աֆորիզմներ» գրքի սիրային թեմայով նկարագրումները (**Իսահակյան Ա., 2001**):

Իսահակյանի «Լիլիթի» կերպարի հայտնի պատկերային շարք է ստեղծել **Գ. Խանջյանը**:

Հակոբ Կոջոյանի գրաֆիկական աշխատանքները, արևելյան գեղարվեստի ազդեցությամբ, հիշեցնում են «գայթակղիչ վտանգավոր կնոջ», որը խիստ մոտ է պոեմի մթնոլորտին (**ՀՀ Ազգային պատկերասրահ, Հակոբ Կոջոյանի ֆոնդ**):

Վարդգես Սուրենյանցի էսքիզներում միատիկ-էկզոտիկ կանացի կերպարը՝ մազերի և հայացքի մեջ ընդգծված հրապույրով Իսահակյանի պոեմի խորհրդապաշտական մթնոլորտն է հիշեցնում (**Սուրենյանց Վ., canvas.yatuk.am**):

Ժամանակակից հայ արվեստագետները իրենց կտավներում նույնպես վերածնունդ են տալիս «Լիլիթի» կերպարին՝ որպես անկախ և ազատ կին, ինչը Իսահակյանի ստեղծած կերպարին նոր համատեքստ է տալիս:

Նկարիչ **Ռուբեն Գրիգորյանի** գծանկարները (1950–60-ական թթ.) ամբողջությամբ խարսխվում են իսահակյանական «Լիլիթի» մեկնաբանության վրա: Նա չի փորձում վերարտադրել պատմությունը կամ անել ժանրային պատկերներ: Փոխարենը նա արտացոլում է զգայական կերպար՝ հուզական, անհասանելի, երազային կնոջ՝ հոգու խորությամբ: Իսահակյանի և Գրիգորյանի ստեղծագործություններում Լիլիթը հանդես է գալիս որպես գոյաբանական խորհրդանիշ:

Սարգիս Մուրադյանի գրաֆիկական էսքիզները «Լիլիթի» մոտիվներով (1970-ականներ) ունեն արտահայտիչ սև-սպիտակ լուծումներ՝ ներշնչված իսահակյանական դրամատիզմով (Մուրադյանի ընտանիքի մասնավոր հավաքածու):

Հայ ժամանակակից նկարիչ **Արամ Իսաբեկյանի** ստեղծագործություններում կան մոտիվներ, որոնք գաղափարապես հաստվում են իսահակյանական պոեմին: Նրա կտավները հագեցած են գայթակղությամբ, մոգականությամբ, ուժով և դրամատիզմով («Կախարդ» (1997), «Կախարդներ» (1996), «Սալոմե» (1997), «Հեթանոս Հայաստան» (1996) (**Իսաբեկյան Ա., www.aramisabekyan.com**))

Հրայր Խոստեղյան «KhosTo 2019»

Հրայր Խոստեղյանի «Լիլիթ» (Lilith) վերնագրված գրաֆիկական աշխատանքը ուղղակիորեն կապված է Ավետիք Իսահակյանի պոեմին: Բացի այս նկարից՝ Խոստեղյանը ունի մի քանի կոմպոզիցիաներ, որոնք առնչվում են այս թեմային: Մարդու սկզբնավորման առասպելի մասին է «Ադամ և Լիլիթ» նկարը: Խոստեղյանի Լիլիթը ազատատենչության, ինքնուրույնության խորհրդանիշ է:

Քանդակագործությունը և Իսահակյանի «Լիլիթը»:

Հայ քանդակագործության մեջ թեման արտահայտված է Վ. Պետրոսյանի «Կրակի պար (Լիլիթ)» մոնումենտալ աշխատությունում (Երևան, Ուրուգուայի հրապարակ, 1994), որտեղ Լիլիթը ներկայացվում է որպես տարերային ուժի մարմնավորում:

Այստեղ կերպարը վերածվում է խորհրդանիշի՝ կապված կնոջ հրե տարերքի հետ, ինչը համահունչ է Իսահակյանի պոեմի խորհրդապաշտական շերտերին:

Թատերական և բեմարվեստային արձագանքներ

Իսահակյանի Լիլիթը մի քանի անգամ դարձել է թատերական բեմադրությունների հիմք:

«Լիլիթը» բեմադրվել է Երևանի և Գյումրու դրամատիկական թատրոններում որպես խորհրդապաշտական-ռոմանտիկ բեմադրություն՝ ընդգծելով սիրո և մահվան թեմաները:

Թատրոնում Լիլիթի կերպարի մարմնավորման մասին պահպանված են արխիվային նյութեր, որոնք փաստում են, որ Վ.Աճեմյանը ներկայացրել է «Լիլիթ» պլաստիկ բեմադրություն (Երևանի Մունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն, 1968 թ., պլաստիկ բեմադրություն՝ մինիմալիստական ձևավորումով, երաժշտական միջավայրը՝ Գրիգոր Հովհաննիսյանի):

Հետագայում Հրաչյա Ղափլանյանի անվան պետական դրամատիկական թատրոնում (2003 թ.) ռեժիսոր՝ Վահե Շահվերդյանը ներկայացրել է «Լիլիթ» նոր բեմադրություն, որի ժամանակ Լիլիթը վերածվում է խորհրդանշական կերպարի: Սա իր տեսակով առաջին թատերական ներկայացում էր, որտեղ Լիլիթը վերածվում է էքզիստենցիալ հակադրության խորհրդանիշի:

Իսահակյանի «Լիլիթ»-ը կինեմատոգրաֆիկ պատկերացումներում

Կինեմատոգրաֆիական մոտիվներում (շարժապատկերային նախագիծ կամ հեղինակային կարճամետրաժ ֆիլմ) Լիլիթը հանդես է գալիս որպես առասպելաբանական կերպար, որը ազգային գեղագիտական դաշտում է ներառված: Համո Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիան 1972թ. ներկայացրեց հեռուստապատում (**ՀՀ ազգային կինոկենտրոնի արխիվ, <http://ncca.am/>**):

Իսահակյանի «Լիլիթը» հայ երգարվեստում

Իսահակյանի գրական ստեղծագործությունները իրենց հատուկ արտացոլանքն են գտել երաժշտության աշխարհում: Նա բացարձակ ռեկորդակիր է կենդանության օրոք իր ստեղծագործությունների հիման վրա գրված երգերով: Նրա կենդանության օրոք ձայնագրվել է շուրջ 160 երգ: Բավական է հիշել միայն «Մաճկալ ես, բեզարած ես» երգի մասին հուշը¹: Սակայն Իսահակյանի արձակն էլ հետ չի մնացել:

Տիգրան Մանսուրյանը՝ անդրադառնալով Իսահակյանի պոեմին նշել է՝ որ Իսահակյանի՝ բանաստեղծի ոգով ստեղծված պոեմն ունի խորքային ուժ և առանց բառերի է խոսում մշակութային լեզվով: Ռ.Սահակյանցի ստեղծած ֆիլմում (1972) հնչում է Տ.Մանսուրյանի երաժշտությունը:

¹ Մի անգամ դաշտում զբոսնելիս Իսահակյանը լսում է իր բառերով գրված «Մաճկալ ես, բեզարած ես...» երգը: Վարպետը տեսնում է, որ վար անող գյուղացին է երգողը: Մոտենում, հարցնում է, թե ինչ էր երգում:

-էդ քո խելքի բանը չէ, էդ մեր երգն է, - պատասխանում է գյուղացին՝ ոտքից գլուխ չափելով կոստյումով Վարպետին:

Մեր օրերում նույնպես շարունակվում են արձագանքները: **Մարիա Կոհանյանը**՝ 2019 թ. գրում է կամերային վոկալ ցիկլ՝ նվիրված Իսահակյանի «Լիլիթ» ստեղծագործությանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կարող ենք ասել, որ հիմնվելով գրականագիտական աղբյուրների, արվեստաբանական մեկնությունների և կոնկրետ ստեղծագործությունների վրա՝ վստահաբար կարելի է ասել, որ Իսահակյանի Լիլիթը ոչ միայն հայ դասական գրականության ժառանգությունն է, այլև վաղուց դարձել է հայ արվեստի անքակտելի մասնիկը ու դեռ շարունակում է տպավորել ժամանակակից արվեստագետներին՝ ձևավորելով միջառարկայական երկխոսություն՝ գրականություն, կերպարվեստ, թատրոն, երաժշտություն և քանդակագործություն: Շնորհիվ իր կենսունակության, բազմաշերտության և թեմատիկ խորության՝ այն ձեռք է բերում նոր ժամանակների համատեքստին համապատասխանող բովանդակություն՝ «Լիլիթին» դիտարկելով ոչ թե «գայթակղիչ չարագործի», այլ՝ անկախ, ինքնիշխան կնոջ նախատիպի:

Կերպարը փուլային զարգացում է ապրել, վերաիմաստավորվել և դարձել է կանացի ինքնությունը գիտակցող, հոգեբանական ներքին բախումներով, պայմանականությունները ժխտող, միստիկ ոգեղեն և միաժամանակ մարմնավոր կերպար-խորհրդանիշի:

Վերոնշյալ բոլոր նյութերը փաստում են, որ Ավետիք Իսահակյանի «Լիլիթը» արդիականությունը երբեք չկորցնող, խորհրդանշական և գեղարվեստական հազեցվածությամբ ստեղծագործություն է: Առասպելաբանական նախասկզբից անջատվելով՝ իսահակյանական «Լիլիթը» իր խորքայնությամբ մեծ արձագանք է ստացել հայ արվեստի տարբեր ճյուղերում, ընկալվել ոչ միայն սիրո և գայթակղության խորհրդանիշ, այլև կնոջ բազմաշերտ կերպար՝ համադրելով համաշխարհային առասպելաբանությունն ու ազգային գեղարվեստական մտածողությունը՝ վերածվելով կնոջ հավաքական խորհրդանիշի:

1. Ալոյան Ա. (2014), Ոտնահետքեր ջրաներկով, Երևան, «Արտագերս» հրատ.:
2. Ավետիք Իսահակյանի նամակները (2016), Կազմ.՝ Ա. Ավետիսյան, Երևան, ԵՊՀ հրատ.:
3. «Հայրենիքի ձայն» (1975), Հոդված №44, Երևան:
4. Կապուտիկյան Ս. (1981), Բանաստեղծություններ, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
5. Իսահակյան Ա. (1983), Լիլիթ, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
6. Իսահակյան Ա. (2001), Աֆորիզմներ, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ.:
7. Իսաբեկյան Ա., www.aramisabekyan.com:
8. ՀՀ Ազգային կինոկենտրոնի արխիվ, ռեժիսոր՝ Ռ.Սահակյանց, <http://ncca.am/>:
9. Մկրտումյան Ա., Իսահակյանի «Լիլիթը» հին արևելյան գրույցների ու եվրոպական գրականության համատեքստում- <https://arar.sci.am/dlibra/publication/401417/edition/371534/content>
10. Սուրենյանց Վ., canvas.yatuk.am.

REFERENCES

1. Aloyan A. (2014), Otnahetqer jranerkov /Footprints in watercolor/, Yerevan, “Artagers” publisher.
2. Avetiq Isahakyan namaknery' /Avetik Isahakyan's Letters/ (2016), Compl. By A.Avetisyan, Yerevan, ESU publish.
3. “Hayreniki Dzayn” (1975), [Voice of the Homeland]-Article No. 44, Yerevan.
4. Kaputikyan S. (1981), Banasteghc'owt'yownner /Poems/, Yerevan, “Sovetakan grogh”,
5. Isahakyan A. (1983), Lilith, Yerevan, “Sovetakan grogh” publish.
6. Isahakyan A., (2001), Aphorisms, Yerevan, «Tigran Mets» publish..
7. Isabekyan A., www.aramisabekyan.com.
8. HH Azgayin kinokentroni arxiv /Archive of the National Film Center of the Republic of Armenia/, director: R. Sahakyants, <http://ncca.am/>

9. **Mkrtumyan A.**, Isahakyan «Lilit'y'» hin ar&elyan zrowycneri ow evropakan grakanowt'yan hamateqstowm /Isahakyan's "Lilith" in the Context of Ancient Eastern Tales and European Literature/ –
<https://arar.sci.am/dlibra/publication/401417/edition/371534/content>
10. **Surenyants V.**, canvas.yatuk.am.

Lilit Gevorgyan

**The Respeption of Avetik Isahakyan's "Lilith" Poem in the Panorama
of Armenian Art**

Conclusion

Key words and expressions: Artistic image, comparative anlysis, study of character, historical context, art, mythology, cultural discourse.

Avetik Isahakyan's poem "Lilith" is one of the most distinctive works of Armenian literature, where a mythological prototype transforms into an artistic and symbolic cultural figure. Isahakyan interprets Lilith as a fiery, free-spirited and independent woman-ideal, whose beauty and unattainability transcend reality. She becomes a symbol of femininity, individuality, inner freedom and unfulfilled love.

The poem influenced later Armenian literature, particularly the works of Hovhannes Shiraz, Silva Kaputikyan, Vahagn Davtyan and Ara Aloyan, in which Lilith appears not only as a literary character, but also as a psychological and symbolic embodiment.

The character received wide artistic responses in painting, graphic arts and monumental sculpture (G. Khanzhyan, S. Muradyan, V. Khachatryan, etc.). In sculpture, Lilith is represented as an elemental force, while theatrical and cinematic interpretations highlight her mystical and existential nature.

This study demonstrates that Isahakyan's Lilith has moved beyond the boundaries of literature, becoming a cultural archetype that reflects artistic, aesthetic and psychological dimensions and continues to inspire Armenian art today.

Лилит Геворгян

Отклики поэмы Ав. Исаакяна “Лилит” в панораме армянского искусства.**Заклучение**

Ключевые слова и выражения: художественный образ, сравнительный анализ, символ, исследование характера, исторический контекст, искусство, мифология, культурологический дискурс.

Поэма Аветика Исаакяна «Лилит» — одна из вершин армянской литературы, где художественное мышление соединяется с глубинными слоями общечеловеческой мифологии. Произведение выделяется своеобразным толкованием женского образа, которое превосходит его мифологическое начало и превращается в самостоятельную культурную единицу — подчеркивая идеи свободной воли, недостижимости идеала и духовной красоты.

Научная новизна исследования заключается в рассмотрении литературного произведения с междисциплинарной точки зрения, что позволяет выявить процесс преобразования мифологического персонажа в художественный образ, показать этапы его развития и становления символом.

В исследовании анализируется влияние художественного образа-символа на различные отрасли армянского искусства. В основу положен сравнительно-аналитический метод, который охватывает литературный образ и его отражение в литературе, его переосмысление в современном культурном дискурсе (изобразительное искусство, музыка, театр), а также использование архивных источников (постановки, кино, анимация, материалы выставок).

Актуальность темы заключается в комплексном исследовании армянской литературы и искусства как ключевого подхода современной науки.

Լիլիթ Գևորգյան – Բանասիրական գիտությունների թեկնածու, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, Հայագիտության ամբիոնի դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և միջնադարյան, նոր շրջանի գրականություն, արտասահմանյան գրականություն, ճարտասանություն, հոգեկենտրոնականություն, արվեստ: Հեղինակ է շուրջ քսաներկու հոդվածի: lilit_gevorgyan_79@mail.ru

Lilit Gevorgyan - PhD in Philology, Associate Professor Yerevan Brusov State University, Armenology chair. Scientific interests: Ancient Armenian, medieval and new literature, World Literature and Art, Psycholinguistics, Rhetoric. Scientific articles-22.
lilit_gevorgyan_79@mail.ru

Лилит Геворгян - К.ф.н., доцент, Государственный университет имени В. Брюсова, Ереван, кафедра Арменологии. Сфера научных интересов: Древнеармянская и средневековая, новая армянская литература, мировая литература и искусство, психолингвистика, риторика. Научные статьи -22.
lilit_gevorgyan_79@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 25.09.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 11.10.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ԿԱՐԵՆ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

ԼՈՒԻ ԱՐԱԳՈՆԻ, ԱՆԴՐԵ ԲՐԵՏՈՆԻ, ԱՆՏՈՆԻՆ ԱՐՏՈՅԻ ԵՎ ՀԵՆՐԻԿ
ԷԴՈՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՅՈՒՐՈՒԵԱԼԻԶՄԻ
ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.207

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը ներկայացնում է Լուի Արագոնի, Անդրե Բրետոնի, Անտոնեն Արտոյի և Հենրիկ Էդոյանի ստեղծագործությունների համեմատական վերլուծությունը՝ սյուրռեալիզմի գեղագիտական, փիլիսոփայական և պատմամշակութային տեսանկյուններից: Ֆրանսիական սյուրռեալիզմը դիտարկվում է որպես 20-րդ դարի այն շարժումը, որը ձևավորվեց դադաիզմի ապստամբությունից և հստակ քայլերն ուղղեց մարդու գիտակցության սահմանները կոտրելուն՝ բացահայտելով ենթագիտակցության, երազի, աբսուրդի և անգիտակցականի ստեղծագործական ուժը: Արագոնը, Բրետոնը և Արտոն ձգտել են ազատագրել բանականությունը և արվեստը սոցիալական ու բարոյական սահմանափակումներից՝ պոեզիան դարձնելով հոգեկան ինքնաբերական հարթություն: Նրանց ստեղծագործություններում երևում է մարդու ներքին աշխարհի, ցավի և զգացմունքների բախումը արտաքին իրականության հետ: Բրետոնը և Արագոնը պոեզիան տեսնում են որպես ազատության և սիրո մետաֆիզիկական տարածք, իսկ Արտոն՝ որպես լեզվի, մարմնի և գիտակցության ապամոնոտաժման դաշտ:

Հենրիկ Էդոյանի պոեզիան հայ ժամանակակից գրականության համատեքստում ներկայացնում է սյուրռեալիզմի փիլիսոփայական ժառանգության ինքնատիպ շարունակությունը: Նա արևմտյան ավանգարդիզմի գեղագիտական

սկզբունքները զուգորդում է հայկական պատմական հիշողության, գոյաբանական մտածողության և ազգային ինքնության հետ: Էդոյանի բանաստեղծություններում երազն ու իրականությունը միաձուլվում են՝ դառնալով հիշողության, ցավի և գոյության որոնման տարածքներ: Նրա մոտ սյուրռեալիզմը դադարում է լինել ուղղություն և վերածվում է հոգևոր փորձառության, ներքին դիմադրության և պատմական վերապրման ձևի:

Հոդվածը եզրակացնում է, որ թե՛ ֆրանսիական սյուրռեալիստներն իրենց հեղափոխական գեղագիտությամբ, թե՛ Հենրիկ Էդոյանը՝ իր էքզիստենցիալ և ազգային մեկնաբանությամբ, պոեզիան դիտարկել են որպես սահմանների հաղթահարման և ներքին ազատության բացահայտման ճանապարհ: Պոեզիան նրանց համար դառնում է ինքնության և հիշողության նոր ձևակերպման միջոց, որտեղ միախառնվում են ենթագիտակցությունը, երազը և մարդկային գոյության փիլիսոփայական ընկալումները:

Բանալի բառեր և արտահայտություններ. սյուրռեալիզմ, պոեզիա, քննադատություն, փիլիսոփայություն, հիշողություն, ապրում, տրանսդիսցիպլինարություն, գեղագիտական ապստամբություն, ենթագիտակցության, արսուրդի և գոյաբանական ըմբռնումներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սյուրռեալիզմը 20-րդ դարի բանաստեղծական և գեղարվեստական շարժում է, որն ուղղակիորեն բխում է Առաջին համաշխարհային պատերազմի վերջում դադախված շարժման սկսած գեղագիտական ապստամբությունից: Ընդգրկելով ստեղծագործության և արտահայտման բոլոր ոլորտները (նկարչություն, գծանկար, երաժշտություն, լուսանկարչություն, կինո, պոեզիա, պատմվածքներ և այլն)՝ օգտագործելով բոլոր հոգեկան ուժերը (ավտոմատ գիր, երազներ, անգիտակցական իրավիճակ), ազատված բանականության վերահսկողությունից և ստացված արժեքների դեմ պայքարից. բնութագրվում է իր տրանսդիսցիպլինարությամբ (պոեզիա, նկարչություն, առարկաներ, կոլաժ, կինո,

զգեստներ...) և բառերի, առարկաների, հնչյունների միջև կարևոր համագործակցությամբ:

1924 թվականին Անդրե Բրետոնը սյուրռեալիզմի մանիֆեստում այս նոր համակարգը սահմանեց որպես «մաքուր հոգեկան ավտոմատիզմ, որով մենք առաջարկում ենք արտահայտել մտքի իրական գործառությունը կա՛մ բանավոր, կա՛մ գրավոր, կա՛մ այլ կերպ: Մտքով թելադրված, բանականության կողմից իրականացվող որևէ վերահսկողության բացակայության դեպքում, գեղագիտական կամ բարոյական որևէ մտահոգությունից դուրս **(Breton A., 1924)**:

Սյուրռեալիզմը հիմնական համոզումն այն է, որ գոյություն ունի ավելի բարձր իրականություն նախկինում անտեսված ասոցիացիաների որոշ ձևերում, ինչպիսիք են՝ երազների ամենակարողությունը կամ մտքի անկաղապար խաղը: Ստեղծագործողը հրճվում է ակնհայտ անհաշտ երևույթների միջև անսպասելի կապերից, որպեսզի դուրս բերի նոր իմաստ կամ, ինչպես Բրետոնն է ասում, «յուրահատուկ լույս, պատկերի լույսը» **(Breton A., 1924)**: Սյուրռեալիզմը «հակված է վերջնականապես քայքայել բոլոր հոգեկան մեխանիզմները և փոխարինել դրանք կյանքի հիմնական խնդիրների լուծման գործում» **(Breton A., 1924)**: Թարմացնելով գեղանկարչության բանաստեղծական հարթությունը՝ սյուրռեալիզմը առերեսվում է ոչ պատկերավորի և անասելիի ներկայացման հարցի հետ:

Ֆրանսիական ավանգարդը՝ ի դեմս Լուի Արագոնի, Անդրե Բրետոնի և Անտոնին Արտոյի, 20-րդ դարի առաջին կեսին ձևավորեց գրականության նոր լեզու, ուր ռացիոնալիզմի սահմանները հաղթահարվեցին ի նպաստ ենթագիտակցության, արսուրդի և գոյաբանական ըմբռնումների:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հենրիկ Էդոյանը՝ ժամանակակից հայ գրականության կարևոր հեղինակներից մեկը, կարելի է ասել ժառանգել է եվրոպական ավանգարդիզմի որոշ գաղափարներ՝ զուգորդելով դրանք հայկական գոյաբանական

փիլիսոփայության փորձառությանը: Նրա բանաստեղծությունները հաճախ ակնարկում են աղբյուրներ, որոնց փարածման աշխարհագրությունն ընդգրկում է մշակութային քարտեզի գրեթե բոլոր արեալները՝ Հին Եգիպտոսից մինչև ժամանակակից երկու Ամերիկաները, Հին Հնդկաստանից ու Հունաստանից մինչև Նոր ժամանակների ռուսական, եվրոպական, չինական ու ճապոնական արվեստի ու պոետիկայի փարրերը (Էդոյան Հ., 2009): Այս ուսումնասիրությունը նպատակ ունի համեմատական վերլուծությամբ ներկայացնել նշված հեղինակների ստեղծագործությունները, բացահայտել նրանց թեմատիկ, պատկերային, լեզվամտածողության և աշխարհաքաղաքական ընկալումների ընդհանրությունները և տարբերությունները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Թեմատիկ ընդհանրություններ և հակադրություններ

Արագոնը և Բրետոնը հիմնականում թիրախային են դարձրել սիրո, հեղափոխության և երազի թեմաները: Արագոնի գեղագիտական հայացքներում սերը հաճախ վերածվում է փրկության միջոցի, ինչպես օրինակ « Սրտի կոտրվածքը և Էլզայի աչքերը» (<https://pandor.u-bourgogne.fr/pleade/functions/ead/detached/BMP/brb5741.pdf>) գրքում բառ որն օգտագործել է 121 անգամ (Aragon L., 1941), և « Արցունքները բոլորը նման են» ստեղծագործությունը մարդկային ցավը հաղթահարում է բանաստեղծական երգով՝

Ի՞նչ գիտեի ես պարտության մասին

Երբ երկրումս սերն է արգելված

Երբ կեղծ մարգարեների ծայն է հարկավոր

Վերակենդանացնելու հույսը կորուսյալ (Aragon L., 1941):

Ինչպես նաև « Բողոք սիրո չորրորդ հարյուրամյակի համար » ստեղծագործության մեջ նաև սիրո և պոետիկ արտահայտության համառությունը որպես վերջնական ապաստան և գոյատևման հույս:

Սերը գոյապևում է մեր զենքերի անհաջողություններին

Կեսգիշերին է բացվում Սիրո պատյանը

Ադամանդներն են ծնվում արցունքների խորքից (Aragon L., 1941):

Իսկ Բրետոնն այն դիտարկում է որպես մետաֆիզիկական դուռ դեպի ենթագիտակցություն: Մինչև իսկ ծայրահեղական. «Գեղեցկությունը կամ կլինի պարոքսիզմալ, կամ չի լինի»

(https://www.ebooksgratuits.com/pdf/breton_nadja.pdf)

Անտոնեն Արտոյի մտածողության մեջ գերիշխող թեման հոգեկան ցավն է, մարմնական տառապանքը, ու կախյալ վիճակի և ներքին ապստամբության բախումները: Լուի Արագոնը, Անդրե Բրետոնը և Անտոնեն Արտոն, որպես ֆրանսիական սյուրռեալիզմի և ավանգարդիզմի հիմնական առաջատարներ, ստեղծեցին այնպիսի պոեզիա, որի թեմատիկ առանցքում կանգնած էր մարդու անգիտակցականի, ճակատագրի և քաղաքակրթական կործանման պատկերը: Արագոնի պոեզիայում հաճախ հանդիպում ենք սիրո պատկերների և քաղաքական ճակատային դիրքորոշումների համաձույլ հյուսվածքներ, Բրետոնի մոտ՝ երազի ու իրականության զուգահեռումներ, իսկ Արտոն, առավել ռադիկալ ձևով, դիմում է մարդկային մարմնի և լեզվի ապամոնտաժման՝ ընդգծելով ցավը, ճիչը, հոգեկան խեղումներն ու լեզվական փլուզումը:

Հենրիկ Էդոյանի բանաստեղծություններում՝ հատկապես «Երկու երազներ» և «Անվերջություն» գործերում, գերիշխում են երազի և իրականության միջակայքում տեղի ունեցող գոյաբանական որոնումները:

Բայց ի՞նչ փարբերություն
քնի և արթնության,
երբ նույն երազն ենք փեսնում իրար
հետ,
դու ինձ՝ քո արթնության,
ես քեզ՝ իմ քնի մեջ:
Դանդաղ մեր միջև բարձրացող մի
աշխարհ
պահում է պատկերները
մեր անհրակա՛ն ուղևորության
(Էդոյան Հ.,
**[https://granish.org/henrik-edoyan-
poems/](https://granish.org/henrik-edoyan-poems/)**)

Մենք արթուն էինք,
մենք չէինք քնել,
մեր աչքերի դեմ
գիշերն էր լողում
Ադամի փեսքով,
հետո մի կնոջ
մարմին էր երևում... **(Էդոյան Հ.,**
**[https://granish.org/henrik-edoyan-
poems/](https://granish.org/henrik-edoyan-poems/)**)

«Կյանքը տխուր է» բանաստեղծության մեջ կյանքի իմաստագրկումը գրողի կողմից դիտարկվում է համընդհանուր պատմական նարատիվի մեջ: Հենց սա էլ հանդիսանում է թեմատիկ ընդհանրություն գոյաբանական տագնապների (Անտոնեն Արտո) և անհատի՝ պատմության մեջ չգոյության զգացողության միջև (Լուի Արագոն): Հենրիկ Էդոյանի պոեզիան՝ հատկապես իր ուշ շրջանի գործերով, արձագանքում է այս ավանգարդ հոսանքներին՝ միևնույն ժամանակ պահպանելով պատմամշակութային հայկական ինքնության, պատերազմի և աքսորի խորհրդանշական պատկերները: Եթե Բրետոնի «Նադյա» ստեղծագործությունը յուրովի հարցադրում է իրականության սահմանների վերաբերյալ, ապա Էդոյանի ստեղծագործություններում այդ սահմանը անցնում է գոյաբանական ցավի միջով՝ միաժամանակ լինելով էքզիստենցիալ և ազգային: Բրետոնը «Նադյա» ստեղծագործության մեջ գրում է. *«Սա այն պատմությունն է, որը ես նույնպես հնազանդվեցի քեզ պատմելու ցանկությանը, երբ հազիվ էի ճանաչում քեզ, քեզ, ով այլևս չի կարողանում հիշել, բայց որը, կարծես պատահաբար իմանալով այս գրքի սկզբի մասին, այնքան հարմար, այնքան բռնի և այնքան արդյունավետ միջամտեց ինձ հետ, անկասկած, հիշեցնելու համար, որ ես ուզում եմ, որ այն «ճոճվի ինչպես դուռը», և որ այս դռնով ես, հավանաբար, երբեք չեմ տեսնի, որ քեզանից բացի որևէ մեկը մտնի: Մուտքն ու ելքը միայն քեզ»* (Breton A., 1964; Gallimard É., 1998):

Հենրիկ Էդոյանն իր բանաստեղծություններից մեկում մի փոքրիկ պատկերով տալիս է գրեթե նույն տրամադրությունը.

Կյանքը տխուր է –

նկարում էր մի նկարիչ

մի աղավնի: (Էդոյան Հ. <https://granish.org/henrik-edoyan-poems>)

Մի հոգու համար ստեղծված ճոճվող դուռը, որ տանում է մեկ այլ աշխարհ, իրականությունից դուրս՝ երևակայականը, ցնորականը և նկարիչի ստեղծած աղավնու նկարն իբրև տարածություն, որ բազմաթիվ խորհուրդներ ունի (խաղաղ

աշխարհ, նոր կյանքի ավետում և այլն) նույնանում են: « *Եվ քանի որ գործ ունենք մոտ կեսդարյա գրական ժառանգության հետ, Հենրիկ Էդոյանի պոեզիայի համակարգի ձևավորման ներքին պարմաշրջանների քննությունը ենթադրում է ոչ միայն տրոհում վերլուծության մակարդակում, որը ներառում է սկզբնավորման և ընթացքի գաղափարը,...* » (Աբրահամյան Ա., 2020), կարելի է ասել, որ Հենրիկ Էդոյանն իր գեղագիտական ըմբռնումներով արձագանքում է սյուրռեալիստական այնպիսի մտածումներին ինչպիսիք են՝ գոյաբանական տազնապները, երազի և իրականության բախումը, անհատի անհաշտությունն ու էքզիստենցիալ լինելության պատրանքը, որը տանում է չգոյության:

Պատկերային լեզու և սյուրռեալիստական ազդակներ

Սյուրռեալիստական պոեզիան խարսխված է ենթագիտակցականի ազատ արտահայտման վրա: Արագոնը կոտրում է բանաստեղծական կառույցի շարահյուսական ստանդարտները՝ բառերն ու պատկերները վերածելով արստրակցիայի: Բրետոնն իր մանիֆեստում պահանջում էր «ինքնաբերական (ավտոմատ) գիրը», առանց գիտակցական գրաքննության: Արտոն այդ գիրն արդարացնելով ասում է. «*Այս դողերը, այս մանկական ճիչերը, այս կրունկի հարվածը գեղնին՝ ռիթմով հետևելով ազափագրված ենթագիտակցության հենց ավտոմատիզմին, այս կրկնապատկերը, որը տվյալ պահին թաքնվում է իր սեփական իրականության ետևում, սա վախի նկարագրություն է, որը վավեր է բոլոր ճոխությունների համար և որը ցույց է տալիս, որ թե՛ մարդկային, թե՛ գերմարդկային կերպարներում արևելքի բնիկները կարող են մեզ միավորներ տալ իրականության հարցերում*» (Artaud A., 1938), և ընդհանրապես հրաժարվում է ավանդական բանաստեղծական ձևից. նրա համար լեզուն ընդամենը ցավի արտահայտման միջոց է:

Բրետոնի սյուրռեալիստական պատկերները հիմնվում են անվերահսկելի ասոցիացիաների և անսպասելի կապերի վրա: Արտոյի պատկերները հաճախ

մարմնական են՝ արյուն, մարմին, վերք: Արագոնի մոտ հաճախ հանդիպում ենք նուրբ, քնարական պատկերների, որոնք արտացոլում են սիրո պոետիկությունը: Սյուրռեալիզմն ունի մի յուրօրինակություն, որը տարբերակում է այն մյուս գրական շարժումներից. այն գրական շարժում չէ եզրույթի դասական իմաստով. ձգտելով «վերափոխել աշխարհը» և «փոխել կյանքը», այն « *անբաժանելիորեն կապում է բանաստեղծական հեղափոխությունը և քաղաքական հեղափոխությունը առանց երբևէ շփոթելու*» (Reynaud-Paligot C., 1994):

Մոդեռնիստական և հետմոդեռնիստական շրջանի գրական զանազան մտայնությունները հախուռն կերպով ներթափանցեցին հայ իրականություն, մասնավորապես՝ գրականություն: Իհարկե, իր հատկականությամբ պայմանավորված պոեզիան ավելի զգայուն էր նորարարական միտումներին, մանավանդ, որ միջավայրն էլ դասական քնարերգության ավանդները կազմաքանդելու ջանքի ընտրությամբ էր առանձնանում, ինչն սկսվել էր դեռևս 60-70-ական թվականներին մի շարք գրողների կողմից: Նրանց մեջ կարևոր ներկայություն էր նաև Հենրիկ Էդոյանը:

Հետևաբար, նորի աշխարհընկալումն ենթադրում էր բանաստեղծական նոր արտահայտչաձևեր, որի ձևավորումը կախված էր շարժման շրջադարձով, ինչը հնարավորություն է ընձեռում մեկնաբանել հայ բանաստեղծության ընթացքը նոր ժամանակներում, անշուշտ, հաշվի առնելով ինչպես ժանրի վերելքի, այնպես էլ անկման փուլերը:

Այսինքն՝ պատմական նոր իրողությունները առիթ են հանդիսացել նոր՝ կաղապարներից ազատագրված բանաստեղծության ստեղծման, որն անշուշտ պահպանում է ազգային ինքնության հաստատման տեսակետները, միևնույն ժամանակ դրանց տալիս նոր իմաստավորումներ: XXI դարում գրականության մեջ ամբողջովին փոխվում են տարածության և ժամանակի կարծրացած ընկալումները, և գրողը կյանքի ու իրականության հարաբերակցման նոր

մոդելներ է առաջարկում: Այս անցումը միանգամից չի եղել: Նոր բանաստեղծության բեկումն իբրև պատմական իրողություն սկսվել է 1960-ական թվականներին, և գրականագետները ճիշտ են վարվում, որ հենց այստեղից են սկսում գնահատումը: Համենայն դեպս, այս ժամանակաշրջանում էլ սկսվում է պոեզիայի ճյուղավորումները, որոնք զարգացման տարբեր ընթացքներ են ստանում:

Էդոյանի պոեզիան բանաստեղծության բեկման կարևոր ելակետեր է առաջադրում: Նրա բանաստեղծություններում ընդգծվում է պատկերների խտացվածությունը: Օրինակ՝ «Քո կյանքի բաղեղը թեքվում է ներքև» (**Էդոյան Հ., <https://times.am/232445/>**) արտահայտությունը մատնանշում է ոչ միայն կյանքի անցողիկությունը, այլ նաև հոգեվիճակի անշարժ շարժումը: «Արգելված վայրեր, գտնված և նորից կորցրած ճշմարտություն» պատկերում նկատելի է Բրետտնյան խորհրդավորությունը: «Պոեզիայի և պոետի մասին» պոեմում գրողը պոեզիան ներկայացնում է որպես միստիկական ուժ, որն անընդհատ «երիտասարդնում է» բառերի մահվան հետ: Այս փիլիսոփայական դրույթը, ինչպես նաև պատկերային համակարգը կարելի է տեղավորել Անտոնեն Արտոյի էսթետիկական դաշտում:

Հենրիկ Էդոյանի բանաստեղծությունների պատկերային համակարգում, հատկապես գործերից մեկում, կարելի է տեսնել լեզվաբանական ապակառուցում՝ ցնցող ու մղձավանջային պատկերներ.

*Երազիս մեջ հագած-կապած ես մեկնում էի
Բուենոս Այրես, բայց ինքնաթիռը առանց ինձ արդեն օդ էր
բարձրացել, կամ գնում էի Սան Ֆրանցիսկո, Աֆրիկա,
Թաիթի, Բալիի կղզի,
բայց միշտ ուշանում էի, բայց միշտ մնում էի նույն
պեղում կանգնած, կամ ինքնաթիռն էր շարքից դուրս
գալիս, կամ ծովն էր ցամաքում,
ճանապարհները խառնվում էին, կորցնում էի ուղին:*

Պեղք է մեկնեի, բայց ոչինչ չէր ստացվում:

(Էդոյան Հ., <https://times.am/264316/>)

Գեղարվեստական լեզվամտածողություն և ձև

Լուի Արագոնն ու Անդրե Բրետոնը հաճախ խաղում են բառերի, հնչյունների և ասոցիացիաների հետ՝ գրական լեզուն դարձնելով մոգական իրականության ստեղծման հենակետ: Արտոյի լեզուն դառնում է գրեթե նյութական, ֆիզիկապես շոշափելի. նա պահանջում է, որ լեզուն պատռի մարմինը, լինի արյունահոսության ակունք: Բրետոնը արմատական ազատություն է տալիս լեզվին՝ հրաժարվելով տրամաբանական կառուցվածքից: Արտոն խոսքը դարձնում է փորձառության արտահայտություն՝ հաճախ անշղթա, ֆրագմենտային: Արագոնի լեզուն սահուն է, երաժշտական՝ սակայն հաճախ լի քաղաքական ուղերձներով:

Ոչինչ, ոչինչ արժեք չունի և ոչինչ չարժեն

փողոցում կենդանի սպասավորները թռուցիկներ բաժանող,

Վերցրու, անվճար է

թռուցիկը և դրան մեկնող ձեռքն է անվճար (Արագոն Լուի,

<https://insoumisduboutdumonde.jimdofree.com/2019/06/26/front-rouge-po%C3%A8me-de-loui-aragon/>)

Հենրիկ Էդոյանի լեզուն կոմպոզիցիոն կառուցվածքով մոտ է Արագոնին, բայց խորքային շերտերում երբեմն մոտենում է նաև Արտոյի լեզվակիրառմանը՝ հատկապես կանոնիկությունից շեղումների ու բազմիմաստությունների օգնությամբ: Նրա պոեզիան ունի արտահայտչական ճկունություն՝ վերածելով յուրաքանչյուր տող ապրող համակարգի. «Ամեն տող ապրում է ինքնուրույն կյանքով»: **(Էդոյան Հ., <https://granish.org/henrik-edoyan-poems/>)**

Էդոյանն, ի տարբերություն Բրետոնի և Արտոյի, գիտակցում է լեզվի նկատմամբ ճակատագրական պատասխանատվությունը: Բանաստեղծը իր ինքնությունը և ազատությունը ձեռք է բերում բառի/պատկերի մեջ, որ բանաստեղծի մենության հայելին է՝ տիեզերքի, աստծո և ճակատագրի առջև

դրված: Ուստի այն, ինչ կրում է և պահպանում լեզուն, բանաստեղծի աշխարհն է, որ անցման և փոխակերպման միջոցով լեզվից վերածում է ոչ-լեզվի, ինչը նույնն է բառի և խոսքի փոխատեղման միջոցով միմյանց ժխտելը և հաստատելը: «Ուրեմն, կարող ենք ասել, որ Էդոյանի պոեզիան, որպես լեզվի և ոչ-լեզվի բևեռների միասնություն, զուտ «լեզվական սիմվոլիզմի» քննության հարցադրում է անում» (Աբրահամյան Ս., 2020), հետևաբար Էդոյանի պոեզիայի քննության ելակետը ճիշտ է արտահայտում Լ. Վիտգենշտայնի մի գրառումը, ուր ասվում է. «Իմ լեզվի սահմանները նշանակում են իմ աշխարհի սահմանները», իսկ այն «փաստը, որ աշխարհը իմ (իր) աշխարհն է, դրսևորվում է այն բանում, որ լեզվի սահմանները... նշանակում են իմ աշխարհի սահմանները» (Բրուստյան Գ., 1972): Ուստի նա չի փորձում անհիմաստության գեղագիտություն կառուցել՝ ինչպես Արտոն, այլ խոսում է գոյաբանական անհիմաստության ակունքներից՝ որպես պատմական հետևանք.

Շուտով կբացվի

մի դուռ, որի առջև

կյանքն ավելի պարզ չէ, քան դռնից այն կողմ:

Մենք դեռ պիտի ապրենք

երեք օր առանց Տիրոջ,

ժամանակի երեք փլվածքների մեջ:

(Էդոյան Լ., <https://granish.org/henrik-edoyan-poems/>)

Հենրիկ Էդոյանի տեքստերը հաճախ օգտագործում են բազմաշերտ պատմություն, վկայություն և ինքնության ստրուկտուրա՝ բանաստեղծությունը վերածելով ազգային փաստաթղթի, լեզվաբանական մարմնավորումով: Ճիշտ է, ազգային շերտերը արտաքին պաճուճանքներով չեն երևում, սակայն դրանք թաքնված են բնագրերի նշանային համակարգում: Այսինքն, կարելի է ասել ազգային գիտակցությունը ներկայացվում է համաաշխարհային և համամարդկային համատեքստում:

Քաղաքական դիրքորոշում և հակաավանդականություն

Լուի Արագոնը՝ Կոմունիստական կուսակցության անդամ լինելով, իր պոեզիայում ներառում է հստակ քաղաքական ուղերձներ՝ հատկապես ֆաշիզմի դեմ պայքարի տարիներին: Անդրե Բրետոնը, թեև ավելի վերացարկված տեքստն էր նախընտրում, սակայն հանդես էր գալիս քաղաքական անարխիստական մոտեցումներով: Անտոնեն Արտոն առավել արմատական էր. ամբողջությամբ մերժելով քաղաքակրթությունը, այն համարում էր հիվանդություն: Արագոնը և Բրետոնը ակտիվորեն մասնակցում էին քաղաքական իրողություններին: Արագոնը՝ կոմունիստ, իսկ Բրետոնը՝ հակաֆաշիստական պայքարի մեջ: Արտոն քաղաքական դաշտն օգտագործում էր որպես անձնական ընդվզման ձև:

Մարդիկ, որոնք աշխատանքից դուրս են գալիս

կարծես մղձավանջից դուրս գան նրանք,

դողում են ոտքերը դեռ, բայց աչքերը մնում են պարզ:

Պրոլետարիապ, ճանաչիր քո ուժը,

ճանաչիր քո ուժն ու ազատ արձակիր:

(Aragon L., <https://plaisirsintello.blog/2024/01/16/front-rouge-poeme-de-louis-aragon/>)

Հենրիկ Էդոյանի պոեզիայում քաղաքականությունն ավելի ներհուն է. նա ընտրում է գոյաբանական դիմադրության ուղին: Օրինակ՝ «Այսքան առավոտներից հետո» բանաստեղծության մեջ հնչող «ցերեկը դատարկ է մնում առանց քեզ» (Էդոյան Հ., <https://granish.org/henrik-edoyan-poems/>) ձևակերպումը ենթադրում է ինքնության բացակայության կամ իրականության նկատմամբ գրողի քաղաքական դիրքորոշման նշանակությունը: Հենրիկ Էդոյանը ներսից է արտահայտում իր քաղաքական մոտեցումները. նա չի բացականչում մարգինալություն, այլ խոսում է կորուստի, աքսորի, պատմության հանդեպ կատարված բռնության մասին: Նրա «Իսկ եթե ոսկին ժանգոտվո՞ւմ է» բանաստեղծությունը սյուրռեալիստական է ոչ միայն ձևով, այլ գոյաբանական

Էությունը այն խախտում է իրականության օրենքները՝ հոգևոր բացահայտման համար: Այն կարելի է հասկանալ որպես մտքի լուռ աղոթք, որտեղ մարդը հարցնում է – Եթե ամեն բան քայքայվում է, ի՞նչն է մնայունը, եթե տեսնում ես մի աշխարհ՝ անհավերժ, փոփոխական, ինչպես ծառի ճյուղին թռչունի երազ : Ի՞նչն է որ ժամանակի պես չի շեղվում երբեք, *ինչպես Հին Հռոմից ներված մի նիզակ (Էդոյան Հ., Իսկ եթե ոսկին ժանգոտվում է, <https://www.cultural.am/hy/2020-03-06-09-14-27/grakanutyun/123-hetgrutyun-grqic>):*

Եվ պատասխանը ենթատեքստում է՝ միայն այն, ինչը չի երևում: Հավերժը՝ մեր ներսում է, ոսկու, մարգարիտի, աստղերի և ստվերների ետևում : Այստեղ է, որ Էդոյանի քաղաքականությունը դառնում է ոչ թե գաղափարախոսական, այլ սիմվոլիկ և հոգևոր:

*Ի սկզբանե խոսքն էր, բայց ահա
խոսքն սկսել է անջատվել խոսքից,
Պատմությունն իջել է պատմության վրա,
հողը՝ հողի դեմ, ոսկու դեմ՝ ոսկին:*

(Էդոյան Հ., <https://granish.org/maynak-ory/>)

Հենրիկ Էդոյանի տեղը համաշխարհային գրականության ավանգարդում

60-ական սերնդի բանաստեղծների ստեղծած պոեզիայի շուրջ անընդհատ կարելի է ծավալվել, և ուշագրավ է, որ միևնույն գրական երևույթին կարելի է անդրադառնալ տարբեր տեսանկյուններից: Այնուամենայնիվ այս սերնդի ստեղծած գեղագիտությունն անընդհատ անդրադառնալու հնարավորություններ ստեղծելու է: Գրականագիտական բազմաթիվ անդրադարձներ եղել են, սակայն ավելի ամբողջական ու համապարփակ անդրադարձել է Սուրեն Աբրահամյանն իր «Պոեզիայի գեղագիտական համակարգը» ուսումնասիրության մեջ: Իրոք, հասունացել է պահը ստեղծված գրանյութին անդրադառնալու տարբեր տեսական

համադրություններից, փորձելով ճանաչել այսօրվա բանաստեղծությունը, որն ավելի բազմաձայն ու բազմաշերտ դրսևորումներ է ի հայտ բերում մեր օրերում: Ի վերջո բանաստեղծությունը հայ մարդու համար դարեր ի վեր կարևոր ու ավելի գործառնական է եղել, քան որևէ այլ գրական ժանր: Եվ պատահական չէ, որ անդրադառնալով հայ գրականության պատմությանը, դժվար չէ նկատել, որ բանաստեղծության առավել բարդ ժանրն ավելի հեշտությամբ է տրվել հայ գրողին, քան մյուսները:

Յուրաքանչյուր գրական շրջափուլի բանաստեղծությունը հատկապես, ունեցել է այնպիսի անհատականություններ, որոնք իրենց ուսերին են կրել ժամանակի պոեզիայի զարգացման ծանր ընթացքը: 60–ականների սերնդի այդ կարևոր անհատականություններից է Հենրիկ Էդոյանը:

«XX դարավերջին հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցան նոր քաղաքակալակա-հասարակական իրողություններ՝ անկախություն, Արցախյան հերոսամարտ, արժեկարգերի փոփոխություն, ազատություն, որը հաճախ շփոթվում էր ամենաթողության հետ, և անցումային այս ժամանակներում, հայ գրականության մեջ, մասնավորապես՝ պոեզիայում, այդ քաշող ուժը, կարծես թե ամբողջ ջությամբ չդրսևորվեց» **(Ավանեսյան Ա., 2017)**: Այս առիթով դիպուկ է նկատել գրականագետ Սեյրան Գրիգորյանը. «Դեռ երեկ պետական պլանով իր գրքերը հրատարակող ու հոնորար ստացող «ազատ» արվեստագետը կարծես միանգամից փոխակերպվեց, դարձավ ցուցարար, գործազուրկ, պատերազմիկ, կամ քաղաքական գործիչ» **(Գրիգորյան Ս., 2002)**: Սակայն միայն պատճառները քաղաքական-հասարակական չէին: Բանն այն է, որ հախուռն իրավիճակներում ստեղծագործողը՝ հատկապես բանաստեղծը նոր իրականության մեջ ժամանակային արագ անցումներին չէր կարողանում հոգեբանորեն ճիշտ արձագանքնել, մինչև մի նորին սովորում էր, այն այլևս հին էր դառնում: Սա բնական է, քանզի երբ ինչ-որ բան խառնվում է, հետո ընթացքի մեջ ընկնելու համար բավականին ժամանակ է պահանջվում: 1990-ական

թվականներին այդ անկանոն ընթացքը շարունակվեց, և շատերը խոսք բացեցին ճգնաժամի կամ «պոեզիայի մահվան» մասին: Սակայն այսօր արդեն որոշակի համակարգ, կարելի է ասել ձևավորվել է: Ուստի Հենրիկ Էդոյանի պոեզիայում սյուրռեալիստական արձագանքների երևումները պայմանավորված է նաև բանաստեղծության արդի զարգացումների մարտահրավերներով: Այս դիտանկյունից քննելով Էդոյանի պոեզիան, պիտի փաստենք, որ եթե սյուրռեալիստները ձգտում էին հոգևոր և լեզվաբանական հեղափոխության, ապա Էդոյանի ջանքն ուղղված է հիշողության էթիկային: Նրա քնարական հերոսը, պատկերները, լեզվական ընդհատումները և կրկնվող համակարգային վկայությունները իրենց մեջ պարունակում են և՛ արդիական գրական ավանգարդի լեզվամտածողությունը, և՛ մաշված քաղաքակրթության հիշողության անքակտելի մաշկը:

Էդոյանը սյուրռեալիստ չէ՝ բառի դասական իմաստով: Սակայն նա ժամանակակից հայ եզակի պոետներից է, որի պոեզիայում սյուրռեալիզմը մուտք է գործում ոչ թե որպես շարժում, այլ որպես հետևանք: Այդպիսի սյուրռեալիզմը բխում է ցեղասպանության իրականությունից, ազգային ինքնության խաթարումից և հողի կորստից՝ ոչ թե թատերականացված, այլ օրգանական, ցնցող կերպով:

Լուի Արագոնը, Անդրե Բրետոնը և Անտոնեն Արտոն սյուրռեալիզմի հիմնադիրներն էին՝ իրենց տեսական ընդհանրություններով: Նրանց շնորհիվ թափ հավաքեցին համաշխարհային ավանգարդ շարժումները: Էդոյանը, թեև ավելի ուշ (պայմանավորված մեր երկրի քաղաքական-հասարակական իրողություններով. ԽՍՀՄ, երկաթյա վարագույր և այլն), կարողացավ իր պոեզիայում համադրել արևմտյան ավանգարդիզմը հայկական փորձառության հետ: Նրա պոեզիան բնիկ է՝ բայց ներառական, մետաֆիզիկ է՝ բայց փորձառական: Նրա «Պոեզիան ակնարկ է – նետված մեր կյանքին» տողերը արտացոլում են համաշխարհային պոեզիայի վրա ունեցած մետաֆորիկ և փիլիսոփայական արձագանքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չնայած Լուի Արագոնի, Անդրե Բրետոնի, Անտոնին Արտոյի և Հենրիկ Էդոյանի ստեղծագործությունները տարբեր ժամանակաշրջաններից և մշակութային համատեքստերից են, նրանց գործերում հանդիպում ենք ընդհանուր թեմատիկ, պատկերային ու լեզվամտածողական շերտեր: Եթե այս ֆրանսիացի հեղինակները ձևավորեցին գրական ապստամբության ոճը, ապա Էդոյանը՝ հավատարիմ լինելով ավանդույթին, նրանց փորձառությունը ձուլեց հայկական ինքնության փիլիսոփայությանը՝ ստանալով յուրօրինակ տեղաբնիկ ավանգարդ: Այս համեմատությունը փաստում է, որ պոեզիայի լեզուն ունակ է հարաբերվել պատմության, քաղաքականության և գիտակցության բոլոր խմբերում՝ անկախ աշխարհագրական սահմաններից: Հենրիկ Էդոյանի պոեզիան արժանի է դիտարկվելու որպես 20-րդ դարի և հետայուրոնեալիստական ավանգարդ գրականության լիարժեք և ինքնատիպ արտահայտություն: Տարբեր լինելով Արագոնից՝ նա, այնուամենայնիվ, կիսում է վերջինիս բանաստեղծության միջոցով պատմություն գրելու մղումը: Տարբեր լինելով Բրետոնից՝ ընդունում է իրականության ու երազի միջակայքում եղած լեզվական բախումները: Եվ ի վերջո, տարբեր լինելով Արտոյից՝ նրա պոեզիան նույնպես կրում է մարմնական ցավի գեղագիտությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամյան Ս. (2020)**, Արդի հայ պոեզիայի գեղագիտական համակարգը, Երևան, «Արմավ» հրատ.:
2. **Ավանեսյան Ա. (2017)**, Անկախության պոեզիան, Երևան, «Արմավ» հրատ.:
3. **Գրիգորյան Ս. (2002)**, Բանասիրություն և բանավեճ, Երևան, «Զանգակ-97» հրատ.:
4. **Էդոյան Հ. (2001)**, Իսկ եթե ոսկին ժանգոտվո՞ւմ է, Հետգրություն, Երևան:

5. **Էդոյան Հ. (2000-2020)**, Երկու երազներ և այլ բանաստեղծություններ, Երևան, Գրական մամուլ:
6. **Էդոյան Հ (2009)**. Շարժում դեպի հավասարակշռություն, Երևան, «Սարգիս Խաչենց-Փրինթինֆո»:
7. **Բրուսյան Գ.**, Փիլիսոփայություն և լեզու, Երևան, 1972:
8. **Artaud A. (1938)**, Le Théâtre et son double. Gallimard:
9. **Aragon L. (1941)**, Le Crève-Cœur. Gallimard.
10. **Breton A. (1924)**, Manifeste du surréalisme. Éditions du Sagittaire :
11. **Breton, A. (1964)** Nadja, Éditions Gallimard :
12. **Reynaud-Paligot, C. (1994)** « Histoire politique du mouvement surréaliste (1919-1969)», Les Cahiers du Centre de Recherches Historiques :

REFERENCES

1. **Abrahamyan S. (2020)**, Ardi hay poyeziayi geghagitakan hamakargy / The aesthetic system of modern Armenian poetry/, Yerevan, «Arnav» publishing house.
2. **Avanesyan A. (2017)**, Ankakhut'yan poyezian /The poetry of independence/, Yerevan, «Arnav» publishing house.
3. **Grigoryan S. (2002)**, Banasirut'yun yev banavech /Philology and debate/, Yerevan, «Zangak-97» publishing house.
4. **Edoyan H. (2001)**, Isk yet'e voskin zhangotvo?wm E /What if gold rusts?/, Postscript, Yerevan:
5. **Edoyan H. (2000-2020)**, Yerku yerazner yev ayl banasteghtsut'yunner, Yerevan, Literary press.
6. **Edoyan H. (2009)**, Sharzhum depi havasarakshrrut'yun /Movement towards balance/, Yerevan, «Sargis Khach'ents'-P'rint'info» publishing house:

7. **Brutyan G. (1972)**, P'ilisop'ayut'yun yev lezu /Philosophy and language/ Yerevan.
8. **Artaud A. (1938)**, Le Théâtre et son double. Gallimard.
9. **Aragon L. (1941)**, Le Crève-Cœur. Gallimard.
10. **Breton A. (1924)**, Manifeste du surréalisme. Éditions du Sagittaire.
11. **Breton, A. (1964)**, Nadja, Éditions Gallimard.
12. **Reynaud-Paligot, C. (1994)**, “Histoire politique du mouvement surréaliste (1919-1969)”, Les Cahiers du Centre de Recherches Historiques.

Կայքեր

<https://www.cultural.am/hy/2020-03-06-09-14-27/grakanutyun/123-hetgrutyun-grqic>

<https://granish.org/henrik-edoyan-poems/>

https://fr.wikisource.org/wiki/Le_th%C3%A9%C3%A2tre_et_son_double/Texte_entier

<https://granish.org/maynak-ory/>

<https://insoumisduboutdumonde.jimdofree.com/2019/06/26/front-rouge-po%C3%A8me-de-loui-aragon/>

<https://pandor.u-bourgogne.fr/pleade/functions/ead/detached/BMP/brb5741.pdf>

https://www.ebooksgratuits.com/pdf/breton_nadja.pdf

Karen Khurshudyan

The works of Louis Aragon, André Breton, Antonin Artaud, and Henrik

Edoyan from the perspective of surrealism

Conclusion

Keywords and expressions: *surrealism, poetry, criticism, philosophy, memory, experience, transdisciplinarity, aesthetic rebellion, subconscious, absurdity, and ontological interpretations.*

The article presents a comparative analysis of the works of Louis Aragon, André Breton, Antonin Artaud, and Henrik Edoyan through the aesthetic, philosophical, and historical-cultural dimensions of Surrealism. French Surrealism is examined as a twentieth-century movement born from the rebellion of Dadaism, which consciously sought to shatter the boundaries of human consciousness, unveiling the creative powers of the subconscious, of dream, of absurdity, and of the unconscious.

Aragon, Breton, and Artaud aspired to liberate reason and art from social and moral constraints, transforming poetry into a realm of spontaneous psychic revelation. Within their works unfolds the collision between the human inner world, its pain and its passions, and external reality. For Breton and Aragon, poetry becomes a metaphysical space of freedom and love; for Artaud, it is a field of disassembly-of language, body, and consciousness.

Within the context of contemporary Armenian literature, Henrik Edoyan's poetry emerges as a singular continuation of Surrealism's philosophical legacy. He intertwines the aesthetic principles of Western avant-gardism with Armenian historical memory, existential reflection, and national identity. In Edoyan's verse, dream and reality are interwoven, becoming terrains of memory, suffering, and the quest for being. In his hands, Surrealism ceases to be a mere movement and transforms into a spiritual experience, an act of inner resistance, and a mode of historical re-living.

The article concludes that both the French Surrealists, with their revolutionary aesthetics, and Henrik Edoyan, with his existential and national interpretation, perceive poetry as a path toward transcendence of limits and the unveiling of inner freedom. For them, poetry becomes a means of rearticulating identity and memory, where the subconscious, the dream, and the philosophical apprehension of human existence converge into a unified creative vision.

Творчество Луи Арагона, Андре Бретона, Антонена Арто и Генрика

Заключение

Ключевые слова и выражения: сюрреализм, поэзия, критика, философия, память, переживание, трансдисциплинарность, эстетическое восстание, подсознание, абсурд и онтологические представления.

Статья представляет собой сравнительный анализ творчества Луи Арагона, Андре Бретона, Антонена Арто и Генрика Эдоэна в эстетическом, философском и историко-культурном контексте сюрреализма. Французский сюрреализм рассматривается как движение XX века, возникшее из бунта дадаизма и направившее свои усилия на разрушение границ человеческого сознания, раскрытие творческих сил подсознания, сна, абсурда и бессознательного.

Арагон, Бретон и Арто стремились освободить разум и искусство от социальных и моральных ограничений, превращая поэзию в пространство спонтанного душевного самовыражения. В их произведениях проявляется столкновение внутреннего мира человека, его боли, чувств и страстей, с внешней реальностью. Для Бретона и Арагона поэзия становится метафизическим пространством свободы и любви, тогда как для Арто – полем демонтажа языка, тела и сознания.

В контексте современной армянской литературы поэзия Генрика Эдоэна предстает как самобытное продолжение философского наследия сюрреализма. Он соединяет эстетические принципы западного авангардизма с армянской исторической памятью, экзистенциальным мышлением и национальной идентичностью. В поэзии Эдоэна сон и реальность переплетаются, превращаясь в пространства памяти, боли и поиска бытия. У него сюрреализм перестаёт быть направлением и становится духовным опытом, внутренним сопротивлением и формой исторического переживания.

В заключение отмечается, что как французские сюрреалисты со своей революционной эстетикой, так и Генрик Эдоян, с его экзистенциальным и национальным прочтением, воспринимают поэзию как путь преодоления границ и раскрытия внутренней свободы. Поэзия для них становится средством нового осмысления идентичности и памяти, где подсознание, сон и философское постижение человеческого существования сливаются в единое творческое целое.

Կարեն Խուրշուդյան - ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի հայցորդ, բանաստեղծ, թարգմանիչ, իրավաբան, գրական և հասարակական գործիչ, 2021 թվականից Հայաստանի գրողների միության անդամ, 2023 թվականից Հայաստանի գրողների միության վարչության անդամ: Մարտի 15. Արուսյանի անվան վարժարանի նախագահ: 2025 թվականին արժանացել է Ֆրանսիայի Հանրապետության «Ազգային արժանիքի շքանշանի ասպետ» պարգևատրմանը khurshudyan@hotmail.fr ORCID ID: 0009-0000-8562-7643

Karen Khurshudyan - Armenian poet, translator, lawyer, and literary and public figure - has been a member of the Writers' Union of Armenia since 2021 and a member of its governing board since 2023. His body of work includes poems, narrative poems, quatrains, short stories, as well as critical and publicist essays. He has also translated works from French. By Decree No. 0114 of May 15, 2025, issued by the President of France, Emmanuel Macron, he was awarded the rank of Chevalier of the National Order of Merit of the French Republic. khurshudyan@hotmail.fr ORCID ID: 0009-0000-8562-7643

Карен Хуршудян - Армянский поэт, переводчик, юрист, литературный и общественный деятель, с 2021 года является членом Союза писателей Армении, а

с 2023 года - членом правления Союза писателей Армении. Автор стихотворений, поэм, четверостиший, рассказов, критических и публицистических статей, а также переводов с французского языка. Указом Президента Франции Эммануэля Макрона № 0114 от 15 мая 2025 года награждён орденом «Кавалер Национального ордена заслуг» Французской Республики. khurshudyan@hotmail.fr
ORCID ID: 0009-0000-8562-7643

Խմբագրություն է ուղարկվել 01.12.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 13.12.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ՆԵԼԼԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՎԱՋԳԵՆ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ «ՕՐԱԳԻՐ»-Ի ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՈՒՐՋ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.208

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածի նպատակն է ներկայացնել ֆրանսահայ արձակագիր Վազգեն Շուշանյանի սակավ ուսումնասիրված «Օրագիրը» (1936-1941): Հոդվածի քննության առարկան «Օրագիր»-ում արձարժված հարցադրումներն են՝ գրողի դրաման, գոյաբանական խորհրդածությունները, խոստովանությունները, ժամանակի գրամշակութային խնդիրների վերհանումը, Սփյուռքում առկա տազնապները, ինչպես նաև պատերազմը՝ իր ավերիչ հետևանքներով:

Իբրև ինքնակենսագրական արձակի ենթատեսակ՝ «Օրագիրը» իր մտերմիկ և անկեղծ շարադրանքի շնորհիվ առավել լսելի է դարձնում հեղինակի ձայնը, կապվում մյուս ստեղծագործությունների հետ: Այն ժամանակագրական առումով շարունակում է 1925-ից սկիզբ առած «Խառնիխուն», «Ներքին դաշտանկար» և «Քրոնիկոն քնարական» ստեղծագործություններին, սակայն այստեղ Շուշանյանը, հետևելով օրագրային ժանրի կանոններին, գրի է առել 1936-ից թվագրվող իր կյանքի իրադարձությունները, իր առօրյան՝ օրագրային գրառումների միջոցով ստեղծելով ներքին և արտաքին կենսագրության տարածք:

Բանալի բառեր եւ արտահայտություններ: *Ֆրանսահայ գրականություն, Վազգեն Շուշանյան, օրագիր, ինքնակենսագրական արձակ, խոստովանական արձակ, ներքին և արտաքին կենսագրություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու ընդարձակ ու բազմաշերտ էությունը, հատկապես մարդու ներաշխարհի քննությունը սփյուռքահայ գրականության սկզբնավորման հենց առաջին շրջանից առաջնային դարձրին «Փարիզի տղաքը». «Արտաքին աշխարհը զիս չի՛ հետաքրքրեր: Ներքին աշխարհն է, ներքին յոյզերն ու մտածումներն են, որ զիս իրենց կը քաշեն» (**«Բազին», 1963**),- Ն. Սարաֆյանի այս դիտարկումը վերաբերում է նաև գրչընկերներին՝ Շ. Շահնուրին, Զ. Որբունուն, Փ. Միքայելյանին և, իհարկե, Վ. Շուշանյանին, որը, ի տարբերություն գրչընկերների, երբեք «չտեղավորվեց» վիպագրության դասական կանոնների մեջ և մշակեց «արձակի բոլորովին նոր, եզակի և ինքնուրոյն սեռ մը» (**Աճեմեան Գ.**, 2018): Շուշանյանական արձակը առանձնացավ իր անկանոն, իր բնորոշմամբ՝ «խառնիխուռն» բնույթով, որտեղ առաջնայինը մարդու հոգեաշխարհի քննությունն է. «Մարդոց իրական պատմությունը գրեթե միշտ ներքին է» (**Շուշանեան Վ.**, 2014),- նշում է Շուշանյանը, ինչը նշանակում է, որ գրողը իր առջև բարդագույն խնդիր է դրել՝ գրականության միջոցով «մերկացնել մարդուն», ազատագրել արտաքին կեղևից, պեղել հոգու անդունդները և բառերով պատմել ներքին, «չպատմվող» պատմությունը: Ընդհանրությունների հասնելու համար արվեստագետը, նախ, մերկացնում է ինքն իրեն, խուզարկում առաջին հերթին իր եսը:

Իր ներաշխարհը քննող «խառնիխուռն», «Ներքին դաշտանկար», «Քրոնիկոն քնարական» արձակ էջերում արձակագիրը դեպքերն ու իրադարձությունները մեկնում է առաջին դեմքով՝ զրուցելով ինքն իր հետ: 1936 թ.-ից Շուշանյանը սկսում է շարադրել իր «Օրագիրը», որն արտացոլում է գրողի կյանքի բարդագույն շրջանը՝ կամավոր աքսորը հայկական միջավայրից, ականա հեռացումը գրական դաշտից, ապա՝ ահանգնացող պատերազմն ու գործազրկությունը: «Օրագիրը» շարունակվում է մինչև 1941 թ. ապրիլ ամիսը՝ մինչև գրողի հիվանդության սրացումը:

Պատահական չէ, որ իր խոստովանական ինքնակենսագրությունը շարադրող գրողը պարավելու ու ինքնարտահայտման համար ընտրում է անկանոն, գրական մշակում չենթադրող տեքստը՝ չիղկելով ներսից դեպի դուրս հոսող «անկարգ բառերը»։ դրանք կաղապարների մեջ դնելը ենթադրում է գրողական «շինծու» միջամտություն, մինդեռ օրագրությունը «պահանջում է» ազատություն և կատարյալ անկեղծություն:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում ուսումնասիրությունն իրականացրել ենք կենսագրական, պատմահամեմատական, վերլուծական և համադրական մեթոդների հիման վրա:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

20-րդ դարի սկզբից օրագրությունը դառնում է համաշխարհային գրականության ամենատարածված արտադրությունը: Օրագրեր են մշակել Ա. Ժիդը, Ժ. Ռենարը, Ֆ. Մորիաքը, Է. Դաբին, Ֆ. Կաֆկան, Վ. Վուլֆը և այլք:

Ի տարբերություն համաշխարհային գրական այս ընթացքների՝ 20-րդ դարի հայ գրականության մեջ օրագրությունը այնքան էլ լայն տարածում չունեցավ: Սփյուռքահայ գրականության ձևավորման առաջին շրջանում հրապարակ եկած գրողներից Վ. Շուշանյանից բացի օրագրեր ունեն նաև «Փարիզի տղոց» ևս երկու ներկայացուցիչ՝ Շ. Նարդունին, որը 1915 թ. գրել է իր «Աքսորի օրագիր»-ը (Պեյրուֆ, 2000) և Զ. Որբունին, որի ամբողջական «Օրագիրը» լույս է տեսել գրողի մահից քառասունչորս տարի անց (Երևան, 2024), ավելի ուշ լույս են տեսել նաև սփյուռքահայ գրող Վահրամ Մավյանի «Անկապ օրագիր»-ը (Երուսաղեմ, 1968) և պոլսահայ գրող, խմբագիր Ռոպեր Հատտեճյանի «Օրագրիս տասնըհինգ էջերը» (Իսթանպուլ, 1977):

Խորհրդահայ գրողներից օրագրեր են պահել Լեռ Կամսարը: Հիշարժան է արձակագիր, թարգմանիչ Կարպիս Սուրենյանի երկհատորյա «Օրագիր»-ը (Երևան, 2005, 2007):

Անդրադառնալով օրագրի ժանրային առանձնահատկությանը՝ գրականագետ Ա. Առաքելյանը նշում է. «Օրագիրը ինքնակենսագրական արձակի (Memoire) չորս հիմնական ենթատեսակներից մեկն է, որը ուղեգրության, հուշագրության և ինքնակենսագրական վեպի հետ կազմում է ժանրային մեկ ամբողջություն» (Առաքելյան Ա., 2016), իսկ գրականագետ Էդ. Ջրբաշյանը նշում է, որ այն «իր ժանրային բնույթով մեմուարային գրականության առավել պարզ ձևն է» (**«Գրական ժանրեր պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը»**, 1973), ինչը նշանակում է, որ օրագրերում գերակշռողը փաստական նյութն է, այսինքն՝ գրի է առնվում օրագրողի կենսագրությունը: Օրագրին բնորոշ այս առանձնահատկությունը առիթ է տալիս վիճարկումների. արդյո՞ք գրողների օրագրերը պետք է դիտարկել գեղարվեստական գրականության համակարգում: Սակայն կա նաև հարցի մյուս կողմը՝ հեղինակային ազատությունը, որը կարող է խախտել իրականի «սահմանները» և իրադարձությունները մեկնել գեղարվեստական պատուհանից: Այս պարագայում արդեն «օրագրողը, իբրև ստեղծագործող, ականա կանգնում է գրողի կողքին» (Առաքելյան Ա., 2016): Օրագրերին բնորոշ փաստական և մտահղացված տեքստերի միաձուլումը խիստ առանձնացնում է օրագիրը արձակի մյուս ժանրերից, սակայն սա պատճառ չէ, որ օրագրերը չդիտարկվեն իբրև գեղարվեստական ստեղծագործություն: Այս առումով տեղին է հիշել բեյրութահայ գրող, քննադատ Գևորգ Աճեմյանի նկատառումը «գրական արտայայտութեան բազմաթիւ եղանակներ»ի մասին, մասնավորապես՝ արձակի, որը թույլ է տալիս գրողներին արտահայտվել «անհամար եղանակներով»՝ ըստ գրողի նկարագրի, ճաշակի, նախընտրության, ըմբռնումների: Քննադատը իրավացիորեն նկատում է՝ պարտավոր ենք գեղարվեստական գրականության մաս համարել նաև «զարտուղի» ձևերով արտահայտվող արվեստագետներին, քանզի արձակը չի սահմանափակվում միայն վեպով կամ պատմվածքով: Իր հոդվածում Գ. Աճեմյանը հիշատակում է նաև ինքնատիպ ձեռագիր ու ոճ ստեղծած Վ. Շուշանյանի նույնատիպ պարագան,

որը թեև այդպես էլ չհասավ վիպագրության արվեստի կատարելությանը, քանզի կառույց և տիպարներ չունեն իր վեպերը, սակայն այս «թերացումը» չխանգարեց նրան կայանալ իբրև արձակագիր. «Շուշանեան վիպագիր կամ պատմուածագիր չըլլալով հանդերձ, էր ու կը մնայ մեր լաւագոյն արձակագիրներէն մէկը» (**Աճեմեան Գ., 2018**),- ընդգծում է Գ. Աճեմյանը և հավելում՝ իր արտահայտվելու մասնավոր եղանակով և տաղանդի ուժով գրողը կարողանում է նվաճել գեղարվեստական արձակը, եթե անգամ խոսքը օրագրերի մասին է, «ուր կը հանդիպինք թէ՛ գրական եւ թէ՛ հրապարակագրական սքանչելի հարիւրաւոր էջերու» (**Աճեմեան Գ., 2018**):

Նշենք, որ Վ. Շուշանյանի «Օրագիրն» ունի համադրական կառուցվածք: Այն պարունակում է նկարագրական տեքստեր (դիտարկում և նկարագրում է երևույթները), պատմողական տեքստեր (պատմում է կատարված իրադարձությունների մասին՝ ներկայի, անցյալի, մանկության տարիների, տալիս վկայություններ ժամանակակիցների մասին), ինքնաքննական տեքստեր (վերլուծության է ենթարկում սեփական ես-ը): Օրագրում կան նաև հրապարակախոսական էջեր, դասախոսություններ: Օրագրային գրառումների միջոցով Շուշանյանը ստեղծում է ներքին և արտաքին կենսագրության տարածք, ժանրին հատուկ մտերմիկ և անկեղծ շարադրանքի շնորհիվ առավել լսելի են դառնում հեղինակի ձայնը, նրա դրաման, գոյաբանական խորհրդածությունները:

«Օրագիր»-ի առաջին մասը հատկանշվում է առավել «չոր» շարադրանքով. գրողն այնտեղ մանրամասնորեն ներկայացրել է կուսակցական խնդիրներն ու հակասությունները, ՀՅԴ-ից հեռացվելու պատճառները, «Մարտկոցական շարժման» պատմությունն ու տխուր ավարտը: Շուշանյանը չի զլացել և ներկայացրել է անգամ ֆինանսական հաշվետվություններ: «Օրագիր»-ի վերջին հատվածում (1939-1941) իրական և մտահղացված տեքստերի սահմանը երբեմն հնարավոր չէ որոշել. քնարական երակը, գրողի ստեղծագործական

ազատությունը այն մոտեցրել են գեղարվեստական գրականության սահմաններին:

Հավելենք՝ «Օրագիր»-ի՝ 1936, 1937, 1938 թթ. ներկայացնող առաջին և երկրորդ մասերի ձեռագրերը դեռևս անտիպ են և պահվում են Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանում, «Օրագիր»-ի Գ. մասը լույս է տեսել Բեյրութի «Նայիրի» շաբաթաթերթում՝ 1956-1958 թթ.: Չորրորդ մասից որոշ հատվածներ հրատարակվել են Բոստոնի «Հայրենիք» ամսագրում՝ 1942 թ. օգոստոսից մինչև 1943 թ. հունիս: Ընդ որում՝ «Հայրենիք»-ում լույս տեսած հատվածը մինչև պատերազմը Շուշանյանն անձամբ էր ուղարկել Համաստեղին տպագրելու խնդրանքով: 1999 թ. Երևանում «Նոր Դար» հրատարակչությունը լույս է ընծայում Վ. Շուշանյանի «Օրագիրը»՝ Շ. Տասնապետյանի խմբագրությամբ: Թվում է՝ «Օրագիր»-ի հայաստանյան հրատարակությունը կրկնում է «Նայիրի»-ում տպված հատվածը, սակայն համեմատական աշխատանքը պարզում է Վ. Շուշանյանի ձեռագրի դեմ նոր մեղանշումներ. Երևանում լույս տեսած «Օրագիր»-ում կամայական մոտեցմամբ ոչ միայն խախտված է հաջորդականությունը, այլև առկա են բազմաթիվ կրճատումներ: Հաշվի առնելով Երևանյան հրատարակության թերությունները՝ մեջբերումները կատարվել են «Նայիրի» շաբաթաթերթից:

1936-1937 թթ. գրված «Օրագիր»-ի նախաբանում արձակագիրը կրկին բացատրում է այն պատճառները, որոնք ստիպել են «մենակեաց մարդուն» հակել «կոյս տետրակի մը էջերուն առջեւ», այն է՝ «աւելի՛ քաջութեամբ ու աւելի ազնուութեամբ ապրիլ», ինչը նշանակում է, որ կրկին փորձ է արվելու ես-ի դիտանկյունից վերլուծել կյանքը, մեկնաբանել դեպքերն ու իրադարձությունները՝ թույլ չտալով, «որ սուտն ու կամաւոր խեղաթիւրումը սպրդին այս էջերուն մէջ» (**ԳԱԹ, Վ. Շուշանյանի ֆոնդ**, Օրագիր 1936-1937-1938): Ճշմարտությանը մոտենալը Վ. Շուշանյանի համար դառնում է մտասևեռում. գրողն այն համոզմունքն ունի, որ չկա «ճշմարտութիւն մը որուն դպիլը սրբապղծութիւն ըլլար»

(«Նայիրի», 1956): Վերահաստատելով, որ գրականության մեջ անկեղծությունը առաջնային նախապայման է, այնուհանդերձ, Ն. Սարաֆյանը չի հավատում «կատարելալ խոստովանութանը»: Ըստ գրողի՝ որքան էլ արվեստագետը ցանկանա բացել հոգին «իր թերութիւններով, տկարութիւններով, ախտերով եւ չար ու բարի արարքներով, առաւելութիւններով նաեւ» անհնար է մինչև վերջ անկեղծանալ («Բագին», 1973): Հայացք նետելով Վ. Շուշանյանի արձակին՝ հարց է առաջանում՝ կարողանո՞ւմ է վերջինս հաղթահարել հոգեբանական այդ խութերը, որքանո՞վ է անկեղծ և ի՞նչ չափով է մեր առջև բացում «իր հոգու անչափելի վիհերը»: Կարող ենք փաստել, որ հայ գրականության մեջ դժվար թե գտնենք Վ. Շուշանյանի նման երկրորդ գրող, որը անկեղծության նման չափաբաժին ապահովի, սակայն արդեն «Օրագիր»-ի վերջում գրողը ստիպված է խոստովանել, որ «լրիւ, ամբողջական անկեղծութիւնը լոկ հեռաւոր անհաս, նպատակ մըն է» («Նայիրի», 1957): Նկատենք՝ անգամ ամենաանկեղծ գրիչն ունեցող արձակագիրը բախվում է Ն. Սարաֆյանի մատնանշած լիովին անկեղծ լինելու խնդրին, ինչի մասին բազմիցս բարձրաձայնում է:

Այստեղ կա նաև մյուս հարցադրումը՝ ո՞ւմ համար է ինքը գրում, քանզի յուրաքանչյուր օրագրող նախ հաստատում է, որ գրում է առաջին հերթին ինքն իր համար, ինչը ենթադրում է, թե բացառում է ընթերցող ունենալու հանգամանքը: Այս պարագայում հեղինակն առավել ազատ է. գրում է այն, ինչ մտածում է և ինչպես որ կա՝ երկրորդական դիտարկելով գեղարվեստական հորինումի պարագան, սակայն հաճախ օրագրողը կորցնում է այդ նուրբ թելը և սկսում շարադրել, գեղարվեստականություն հաղորդել փաստական նյութին, այսինքն՝ սկսում է հաշվի նստել «ուրիշի» հետ:

Իբրև օրագրող՝ Շուշանյանը ևս բախվում է այս խնդրին և հաստատում, որ որքան էլ ձգտում է կատարյալ անկեղծության, այդուհանդերձ դեպքերն ու իրադարձությունները անկախ իրենից մատուցում է յուրատեսակ «շպարով», գեղեցկության լույսի ներքո, «կեղծ» ու «անկատար», քանզի իրականում գրում է ոչ

թե իր, այլ ուրիշի՝ ընթերցողի համար: Նկատենք՝ արտաքին իրականությունից լիովին ազատագրվելու և ինքն իր համար գրելու անհնարինության մասին է խոստովանում գրողը:

Նշենք՝ «Օրագիր»-ում Շուշանյանն արժարժում է տարբեր խնդիրներ՝ գրական, պատմական, մշակութային, քաղաքական. գրողը համարձակորեն և անկաշկանդ օրագրում է նաև իր ներանձնային, ինտիմ կյանքը. «սիրային ու սեռային դրուագները յաճախ խառնուած են ազգային, գրական և քաղաքական հարցերու հետ» (**«Նայիրի» (1957)**), - նկատում է «Նայիրի» շաբաթաթերթի խմբագիրը: Հիրավի, Շուշանյանն այստեղ զգացական և ճոխ նկարագրություններով թղթին է հանձնել տարբեր կանանց հետ իր սիրային և սեռային բուռն արկածները, սակայն իրական են դրանք, թե պարզապես մտահղացված տեքստեր են, որոնց միջոցով փորձել է գեղարվեստական շունչ հաղորդել օրագրին, չենք կարող ասել:

Արձակագիրը այստեղ ևս չի մնում միայն ներկայի տիրույթում, այլ անընդհատ ետ է նայում, վերլուծում անցած ճանապարհը, գնահատականներ տալիս երևույթներին ու մարդկանց:

Հետաքրքրական է՝ սկսվող պատերազմի, ահագնացող սարսափի ու անորոշության այդ «գէշ» օրերում Վ. Շուշանյանը փորձում է «չկորսնցնել ապրելու հրճուանքը» և ընթերցում է սիրելի գրողների օրագրերը. «Սենեակս փակեցի քաղաքին դէմ ու փորձեցի կարդալ: Ու այդ օրերուն՝ այս գրքերուն ընտրութիւնն իսկ յատկանշական չէ՞ր միթէ,- Անդրէաս Ժիտի, Ժիլ Ռընարի ու Էօժէն Տապիթի փորիչ օրագիրները, ուր երեք մարդիկ կը տուայտէին կեանքի մագիլներուն մէջ» (**«Հայրենիք», 1942**):

Չենք կարող չնկատել գրողական հիացումը այս երեք գրող-արվեստագետների նկատմամբ, ուստի պատահական չէ, որ օրագրային գրականության մոլի սիրահար Վ. Շուշանյանը կերտում է սեփական «տարածքը»՝ օրագիրը, արդեն իր կյանքի, իր տառապանքի պատմությունը պատմելու համար:

Առհասարակ գրողը «Օրագիր»-ում կիսվում է բոլոր այն գրքերով, որոնք «զբաղեցրել են» իրեն այդ օրերին՝ Ա. Շոպենհաուեր, Մ. Մոնտեն, Ֆ. Դոստոևսկի, Ժ. Ռլնար, Մ. Մեթերլինկ, Ժ. Ժիոնո, Է. Ջոլա, Փ. Լուիս, Ֆ. Մորիաք, Կ. Համսուն, Ս. Ունսեթ, Լ. Տոլստոյ, Ի. Տուրգենև, Է. Վերհարն և այլն: Այս անդրադարձով գրողը ոչ միայն մշակութային երկխոսության դաշտ է բացում, այլ նաև կարծես ուղղորդում է իր ընթերցողին, ճաշակ թելադրում:

Մեկ հանգամանք ևս՝ Շուշանյանի կյանքի այս ներքին մենախոսությունը բացահայտում է ոչ միայն նրա անձնական ապրումները, հոգեկան ցնցումներն ու մտահոգությունները, այլև խորքով բացում է ժամանակաշրջանը՝ 1930-ական թթ. Սփյուռքի համապատկերով, ուր տեսանելի են հայության տագնապները, ֆրանսիական միջավայրն ու գերմանական արշավանքն՝ իր բերած ավերով:

Ինչպես նշել ենք, Վ. Շուշանյանն անցյալի և ներկայի միջև տարուբերվող արվեստագետն է, որը, որքան էլ փորձ է անում ապրել ներկայում, այնուհանդերձ, չի կարողանում ազատվել անցյալի հաճախանքից:

Գրողը ետին մանրամասնություններով հիշողության ծալքերից հանում է մանկության տարիների յուրաքանչյուր դրվագ ու ապրում, սակայն հուշերի առթած զգացողությունները իրարամերժ են՝ երջանկության, ինքնամոռացումի վայելքը երբեմն ընդհատվում է զղջումի ու տառապանքի ապրումներով. հոգեկլկման ու ինքնախարագանման պատճառ է դառնում նաև իրեն այդքան դժվարությամբ «շնորհված» կյանքը: Արձակագիրը խոստովանում է՝ երկու հակադիր կյանքով է ապրում՝ երազի և իրականության: Իրական կյանքում շարունակում է «քինախնդիր համակերպութամբ» իր ճամփան բանալ՝ ուրիշներից թաքցնելով, նույնիսկ ամաչելով իր ապրումներից, մինչդեռ գիշերը ուրիշ, ցանկալի իրականության պատրանքն է բերում իր հետ. ինքը մենակ չէ, այլ սիրելի մեռելների՝ հոր, մոր, քրոջ ու եղբոր հետ, որոնք «դիպական կեանքով» են ապրում ու հանդիպում են իրեն «տան ու դաշտերուն, կալերուն ու ճամբաներուն բոլորտիքը» («Նայիրի», 1957). «Տեսակ մը հոգեկան մնայուն կապ կայ հիմա

մեռնողներուն ու իմ միջեւ: Ու իրապէս տաժանելի է երբեմն ապրիլ՝ յիշելով ամէն ժամ չորս մեռելներ ու զգալով, որ գուցէ արժանի չես եղած անոնց յիշատակին» (**«Նայիրի»**, 1957):

Գիտակցում է՝ անցյալի այս «անվերապահ իշխանութիւնը» հաճախ ցավագին ապրումների դուռ է բացում, իսկ «կորուսեալ էակներու հետ մշտատես կենսակցութիւնը» (**«Նայիրի»**, 1957) հեռացնում է ներկայից, բթացնում իրական կյանքի զգացողությունը, բայց անզոր է ազատվել հիշատակների «քաղցր» բեռից, իրեն կեղեքող անհագ կարոտից:

Անդրադառնալով գրական-հասարակական դեմքերին՝ Շուշանյանը երբեմն ծայրահեղ և մտավորական պարկեշտության սահմանները հատող ոճով է ներկայացնում նրանց: Անկաշկանդ թղթին է հանձնում իր կարծիքը, որը հաճախ տարբեր է հասարակության մեջ ամրացած տպավորություններից: Այս առումով հիշատակելի են, օրինակ, Փարիզի «Յառաջ» օրաթերթի խմբագիր Շավարշ Միսաքյանի, հասարակական-քաղաքական գործիչ, պատմաբան Կարո Սասունիի, իր գրական հակառակորդ Շ. Շահնուրի, գրող, ՀԲԸՄ-ի ընդհանուր քարտուղար Վահան Մալեգյանի և այլոց մասին գրառումները: Հակիրճ անդարադարձներ կան նաև Վ. Թեքեյանին, Վ. Թաթուլին, Ոստանիկին (Ոստանիկ Հովհաննիսյան), Ա. Չոպանյանին, Կ. Զարյանին, Շ. Նարդունուն:

«Օրագիր»-ի էջերում Շուշանյանը ներկայացնում է իր և Շ. Շահնուրի զրոյցները, բախումներն ու վեճերը: Անդրադառնում է Շահնուրի «լրագրական յարձակումներից» թերևս ամենաաղմկահարույցին՝ Ռ. Զարդարյանի «Գամփո» պատմվածքի մեկնությանը, որը ժամանակին անգամ ֆիզիկական հաշվեհարդարի պատճառ դարձավ: Շուշանյանի գնահատությամբ՝ Շահնուրի հողվածը «մեկնաբանեալ ընթերցումի փորձ մըն է լոկ, ամբողջովին ձախողած, քանի որ չէ հասկցած գրութիւնը» (**«Նայիրի»**, 1956): Ավելին՝ անընդունելի մեծամտությամբ Շուշանյանը հոխորտում է Շահնուրի հասցեին. «Ե՛ս է, որ պիտի պայթեցնեմ պարապ օդապարիկդ: Ու ցոյց տամ, թէ լոկ հիւանդ ատելութիւն մըն

է, որ կ'առաջնորդէ քեզ» (**«Նայիրի», 1956**): Հավելենք՝ Շ. Շահնուրի նկատմամբ Շուշանյանի ատելությունը առավել հանգամանալից պիտի արտահայտվեր 1939 թ. գրված «Մարդ մը որ Արարատ չունի իր հոգւոյն խորը» աշխատության մեջ:

Բացառիկ է Շուշանյանի հիացումը բանաստեղծ Ե. Չարենցի նկատմամբ, որին, ի դեպ, անդրադարձել էր դեռևս 1920-ականների սկզբին մի քանի հոդվածներում, որտեղ գրողական բացառիկ «հոտառությամբ» Չարենցին բնորոշում էր իբրև ապագայի բանաստեղծ:

«Օրագիր»-ի տետրակներից մեկը Շուշանյանը վերնագրել է «Գերմանական արշավանքի շրջանին, 1940», որտեղ արտացոլված են ոչ միայն պատերազմի դեմ մենակ ու տագնապահար մարդու ապրումները, այլև ժամանակաշրջանը՝ իր ողջ այլանդակությամբ: Ահագնացող պատերազմի պատճառով Շուշանյանի՝ առանց այն էլ անհանգիստ էությունը կրկին ավելոծվում է, կորցնում խաղաղությունը: Ներկան սարսափեցնող է. երբեմնի անհաղթ թվացող Ֆրանսիան արյան ու բոցերի մեջ է: Պատմությունը կարծես կրկնվում է Շուշանյանի համար. ջարդ, արքոր ու պատերազմ տեսած, գաղթական դարձած արձակագիրը կենաց և մահու սահմանագծին է հայտնվում այս անգամ արդեն Եվրոպայի սրտում: Ներկայի անապահով վիճակը և ապագայի անորոշությունը վախ ու տագնապ են առաջացնում: 1940 թ. հունիսի 13-ին երկյուղով արձանագրում է. «Ակնարկս կը սառի սարսափէ՝ երբ կը դիտեմ հեռանկարը: Ի՞նչ պիտի ըլլայ մեր ապագան: ...Քառորդ դար առաջ՝ 1915-ին նոյնանման պայմաններու մէջ: - Անփոխարինելի դրամագլուխ մը ունէր կեանքս, երիտասարդութիւնը: Այժմ իրապէս երիտասարդ իսկ չեմ՝ կեանքը դիմագրաւելու համար» (**«Նայիրի», 1957**):

Մոտալուտ վտանգին դեմ Շուշանյանը համախմբումի ու «դէպի վերանորոգ երկիր» վերադարձի կոչ է անում՝ չմոռանալով նաև խոսքն ուղղել Խորհրդային Հայաստանի կառավարությանը, որը պարտավոր է «եղբայրօրէն հիւրընկալել» «անհայրենիք» ժողովրդին: Պատերազմը, օտարության նվաստությունը, «օտար ափունքներուն վրայ» «ոսկորները ձգելու» հավանականությունը ստիպում են

գրողին, որ երկիր վերադառնալու ցանկությունն ու հույսը կրկին տիրական դառնան: Պանդխտության դառնությունը «ցմրուր ըմպած» Շուշանյանը հիշեցնում է՝ որքան էլ հյուրընկալ և քաղաքակիրթ է Ֆրանսիան, այնուհանդերձ, իրենց գոյությունն այստեղ արժեք չունի, իրենք ընդամենը «աղտոտ օտարական են» տեղացիների համար. «Օտարութիւնը նուաստութիւն է լոկ» (**«Նայիրի»**, 1957), - ցավով արձանագրում է գրողն ու կյանքը շարունակելու միակ ուղին դիտարկում վերադարձը դեպի հայրենի հողը, որը Շուշանյանի համար միակ մնայուն ու նվիրական արժեքն է, «Ալֆան ու Օմեղան». «Ո՛չինչ անելի թանկագին է երկրի վրայ քան հայրենի հողը: Կ'անցնին բոլոր փառքերն ու բոլոր որոտընդոստ երգերը, երբ անոնք չեն բխիր հայրենի երկրի ընդերքներէն» (**«Հայրենիք»**, 1943):

Պետք է ընդգծել, որ անվերապահ վստահություն չունեի Խորհրդային Հայաստանի, այնտեղ տիրող վարչակարգի նկատմամբ: Գրողը լավ էր հասկանում, որ արտաքին «խաղաղության» տակ երկրում «անշնչելի մթնոլորտ» է: Սակայն վերադարձի երազը չէր լքում նրան անգամ այս պարագայում: Դեռևս 1920 թ. մի քանի ամսով Հայաստանում ապաստանած Շուշանյանը գիտեր, ավելին՝ իր մաշկի վրա էր զգացել մշակութային այդ խորթությունը, շատ լավ էր պատկերացնում ներգաղթողների առջև ծառացող խնդիրները, ինչի մասին բարձրաձայնել էր «Սիրո և արկածի տղաքը» ինքնակենսագրական վեպում (1928), սակայն տարիներ անց «խորապէս, անդառնալիօրէն արեւմտահայ» Շուշանյանն արդեն պատրաստ էր տանել նաև այդ «յաւելուածական տառապանքը եւս», այն է՝ սեփական երկրում «հաւանական օտարութիւնը». «Ի՛նչ փոյթ թէ անոնք կրնան մեզ *Լըվանթէն* կոչել, եթէ վերջապէս յաջողինք վերադառնալ: ...Կեանքը պիտի կրնա՞յ արդեօք պարգեւել մեզի այս վերջին ուրախութիւնը» (**«Նայիրի»**, 1956):

Գիտակցում էր, որ «փախուստը» և նորոգվելու բոլոր ճիգերը անկատար պիտի մնան, ուստի իր և իր սերնդի արմատախիլ ու նվաստ գոյության մղձավանջը շարունակվելու է:

Հմայաթափ, միջավայրից լիովին օտարացած, ապրելու հանգրվանները կորցրած գրողը կանգնում է «բիրտ» ճշմարտության առջև ու օրագրի էջերում ցավով ու ավստոսանքով կատարում իր կյանքի հաշվեփակը. անասելի դյուրությամբ սպառել ու շռայլել էր երիտասարդությունը, հանուն գրականության ու գաղափարների զոհել ամեն ինչ ու քառասունի հանգրվանին մնացել ձեռնունայն, հայտնվել կյանքի լուսանցքում. «Տարագիր թռչունն իսկ՝ գէթ մէկ եղանակի համար բոյն մը կը հիւսէ ծառի մը վրայ: Իսկ ես երկրի վրայ անկին մը չունիմ, ուր կարենամ բեռս վար ձգել ու հանգչիլ» («**Հայրենիք**», 1942):

Համաշխարհային գրականության մեջ ինքնակենսագրությունը ստեղծագործական նյութ դարձրած անգերազանցելի վարպետ Ֆրանց Կաֆկայի մասին խոսելիս գրականագետ, բանաստեղծ Հենրիկ Էդոյանը նշում է. «Դժվար է գտնել համաշխարհային գրականության մեջ մի այլ գրող, որի ապրած կյանքը և ստեղծագործություններն այդքան միասնական, այդքան միմյանց հետ կապված լինեն: ...Նրա ստեղծագործությունները նրա կյանքի արտահայտությունն են, բայց և նրա կյանքը իր ստեղծագործությունների արտահայտությունն է» (**Էդոյան Հ., 2009**):

Ֆրանց Կաֆկային ուղղված այս խոսքերը լիովին կիրառելի են նաև Վ. Շուշանյանի պարագայում: Վստահաբար կարող ենք փաստել, որ հայ գրականության մեջ դժվար թե գտնվի մեկ այլ գրող, որի գրականությունն ու անձնական կյանքը այսքան միաձուլված են միմյանց:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թե՛ եռագրության էջերում, թե՛ «Օրագիր»-ում Վ. Շուշանյանը շարադրում է իր ինքնակենսագրությունը, որտեղ գծագրվում են հուսահատ, տառապող, միայնակ, բազմերես մարդը, քնարական խառնվածքով գրողն ու գաղափարապաշտ մտավորականը: Օրագրային շարադրանքի միջոցով գրողը փորձում է պարպել ներսում կուտակված ողջ դառնությունը, անկեղծորեն խոստովանում, լույսին բերում իր ներաշխարհը, իր օրինակով ցույց տալիս

արմատախիլ սերնդի ողբերգական ճակատագիրը: «Օրագիր»-ում գրողը քննում է նաև ժամանակի քաղաքական, գրամշակութային խնդիրները, ցույց տալիս համաշխարհային գրականության մեծերի հանդեպ իր վերաբերմունքի սահմանները: Ըստ էության՝ այս երկով Շուշանյանը Սփյուռքի գրականության մեջ առաջիններից է, որ նվաճում է օրագրության ժանրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աճեմեան Գ. (2018)**, Քննադատական երկեր, հատ. Դ, Երևան, «Զանգակ» հրատ.:
2. **Առաքելյան Ա. (2016)**, Ֆրանս Կաֆկայի օրագրերը, Երևան, ԵՊՀ հրատ.:
3. **Գրական ժանրեր պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը (1973)**, Երևան, ՀՍՍՀ Գիտությունների ակադեմիայի հրատ.:
4. **«Բագին» (1963)**, Ամսագիր գրականութեան եւ արուեստի, Բ. տարի, Մարտ, Պէյրուօ, թիւ 2:
5. **«Բագին» (1973)**, Ամսագիր գրականութեան եւ արուեստի, ԺԲ. տարի, Մարտ, Պէյրուօ, թիւ 3:
6. **ԳԱԹ, Վ. Շուշանյանի ֆոնդ**, թիվ 10, Օրագիր 1936-1937-1938 թ., Ռուան:
7. **Էդոյան Հ. (2009)**, Շարժում դեպի հավասարակշռություն: Հոդվածներ, էսսեներ, Եր., Սարգիս Խաչենց, Փրինթինֆո:
8. **«Հայրենիք» (1942)**, Ամսագիր, ԻԱ տարի, Նոյեմբեր-Դեկտեմբեր, Պոսթըն, թիւ 6:
9. **«Հայրենիք» (1943)**, Ամսագիր, ԻԱ. տարի, Մայիս-Յունիս, Պոսթըն, թիւ 3:
10. **«Նայիրի» (1956)** Գրական շաբաթաթերթ, Ե տարի (ԺԶ), Պէյրուօ, 4 Նոյեմբեր, թիւ 8:
11. **«Նայիրի» (1956)** Գրական շաբաթաթերթ, Ե. տարի (ԺԶ) , Պէյրուօ, 25 Նոյեմբեր, թիւ 11:

12. «Նայիրի» (1957), Գրական շաբաթաթերթ, Ե տարի (ԺՁ), Պեյրուֆ, 10 Փետրուար, թիւ 22:
13. «Նայիրի» (1957), Շաբաթաթերթ, Ե. տարի (ԺՁ), Պեյրուֆ, 10 Մարտ, թիւ 26:
14. «Նայիրի» (1957), Գրական շաբաթաթերթ, Ե. տարի (ԺՁ), Պեյրուֆ, 17 Մարտ, թիւ 27:
15. «Նայիրի» (1957), Գրական շաբաթաթերթ, Զ. տարի (ԺԷ), Պեյրուֆ, 6 Հոկտեմբեր, թիւ 2:
16. «Նայիրի» (1957), Գրական շաբաթաթերթ, Զ. տարի (ԺԷ), Պեյրուֆ, 20 Հոկտեմբեր, թիւ 4:
17. **Շուշանեան Վ. (2014)**, Ալեկոծ տարիներ (1920-1932), «Օջական» մատենաշար, Մոնթրէալ, Գանատա:

REFERENCES

1. **Achemyan Kevork (2018)**, K'nnadatakan erker, hator D., /Critical writings, volume IV/, Yerevan, Zangak hrat.
2. **Arak'elyan A. (2016)**, Frans Kafkai oragrereš, /The Diaries of Franz Kafka/, Yerevan, EPH hrat.
3. **"Grakan zhanrer patmakan zargats'umě ev zhamanakakits vichakě"** /"Literary genres: Historical development and contemporary state"/(1973), Yerevan, SSH Gitut'yunneri akademiayi hrat.
4. **"Bagin"/"Pagine"/(1963)** amsagir grakanut'ean ev aruesti /A Magazine of Literature and Art/, B. tari, Mart, Peyrut', t'iv 2.
5. **"Bagin"/"Pagine"/(1973)** amsagir grakanut'ean ev aruesti /A Magazine of Literature and Art/, ZHB. tari, Mart, Peyrut', t'iv 3.

1. **GAT** (Museum of literature and art after Yeghishe Charents), V. Shushanyani fond, t'iv 10, "Oragir" 1936-1937-1938, /V. Shushanyan's archive, N 10, "Diary" 1936-1937-1938, Ruan.
2. **Ēdoyan H. (2009), Sharzhum depi havasaraksharut'yun:** Hodsvatsner, ēssener/ Movement towards balance. Articles, essays/, Yerevan, Sargis Khach'ents'-P'rintinfo.
6. **"Hayrenik"**/Homeland/ (1942) Amsagir/ Monthly/, IA tari, Noyember-Dektember, Post'ēn, t'iv 6.
7. **"Hayrenik"**/Homeland/ (1943) Amsagir/ Monthly/, IA tari, Mayis-Yunis, Post'ēn, t'iv 3.
3. **"Nayiri" (1956) grakan shabat'**at'ert' /Literary Weekly/, E. tari (ZHZ), Peyrut', 4 Noyember, t'iv 8.
8. **"Nayiri" (1956) grakan shabat'**at'ert' /Literary Weekly/, E. tari (ZHZ), Peyrut', 25 Noyember, t'iv 11.
9. **"Nayiri" (1957) grakan shabat'**at'ert'//Literary Weekly/, E. tari (ZHZ), Peyrut', 10 P'etruar, t'iv 22.
10. **"Nayiri" (1957) grakan shabat'**at'ert'/Literary Weekly/, E. tari (ZHZ), Peyrut', 24 P'etruar, t'iv 24.
11. **"Nayiri"(1957) grakan shabat'**at'ert'/Literary Weekly/, E. tari (ZHZ), Peyrut', 10 Mart, t'iv 26.
12. **"Nayiri" (1957) grakan shabat'**at'ert'/Literary Weekly/, E. tari (ZHZ), Peyrut', 17 Mart, t'iv 27.
13. **"Nayiri" (1957) grakan shabat'**at'ert'/Literary Weekly/, Z. tari (ZHĒ), Peyrut', 6 Hoktember, t'iv 2.
14. **"Nayiri" (1957) grakan shabat'**at'ert'/Literary Weekly/, Z. tari (ZHĒ), Peyrut', 20 Hoktember, t'iv 4.

15. Shushanyan V. (2014), *Alekots tariner/Turbulent years (1920-1932)/, "Oshakan" matenashar, Mont'real, Ganata.*

Համառոտագրություններ

ԳԱԹ – Գրականության և արվեստի թանգարան

Abbreviations

GAT - Museum of Literature and Art

Нелли Татевосян

О специфике «Дневника» Вазгена Шушаняна («Орагир»)

Заключение

Ключевые слова и выражения: французско — армянская литература, Вазген Шушанян, дневник, автобиографическая проза, исповедальная проза, внутренняя и внешняя биография.

Цель этой статьи — представить малоизученный «Дневник» (1936–1941) французо-армянского писателя Вазгена Шушаняна. Исследование сосредоточено на ключевых вопросах, поднятых в «Дневнике»: личная драма писателя, его экзистенциальные размышления и исповеди, исследование литературных и культурных проблем того времени, тревоги, характерные для Диаспоры, и разрушительные последствия войны.

Как поджанр автобиографической прозы, «Дневник» — через свою интимную и искреннюю манеру повествования — делает голос автора более слышимым и устанавливает органические связи с его другими произведениями. Хронологически он продолжает серию произведений, начавшуюся в 1925 году - «Беспорядок», «Внутренний пейзаж» и «Лирическая хроника». Однако в «Дневнике» Шушанян, придерживаясь норм жанра дневника, записывает события своей жизни, начиная с 1936 года, изображая повседневную рутину и через записи в дневнике создавая пространство, где пересекаются внутренняя и внешняя биографии.

Nelli Tadevosyan

On the Specificity of Vasken Shushanyan's "Diary" ("Oragir")

Conclusion

Keywords and expressions: French-Armenian literature, Vasken Shushanyan, diary, autobiography prose, confessional prose, external and internal biography.

The aim of this article is to present the little-studied "Diary" (1936–1941) by the French-Armenian prose writer Vasken Shushanyan. The study focuses on the key questions raised in the "Diary": the writer's personal drama, his existential reflections and confessions, the exploration of the literary and cultural issues of the time, the anxieties characteristic of the Diaspora, and the destructive consequences of war.

As a subgenre of autobiographical prose, the "Diary" —through its intimate and sincere mode of narration—makes the author's voice more audible and establishes organic links with his other works. Chronologically, it continues the series of writings that began in 1925 with "Messy", "Inner Landscape", and "Chronicle Lyrical". However, in the "Diary", Shushanyan, adhering to the conventions of the rules of the diary genre, records the events of his life beginning in 1936, depicting his daily routine and, through his diary entries, creating a space where internal and external biographies intersect.

Նելլի Թադեոսյան – Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի գիտական աշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ նորագույն շրջանի հայ գրականություն: Հեղինակ է շուրջ տասը հոդվածի: nellytadevosyan@gmail.com

Нелли Татевосян - Научный сотрудник Научно-образовательного центра «Диаспора» АГПУ им. Х. Абовяна. Научные интересы — новейшая армянская литература. Автор около десяти статей. nellytadevosyan@gmail.com

Nelli Tadevosyan - A research staff member at the "Diaspora" Research and Educational Center of the ASPU named after Kh. Abovyan. Scientific interests: Modern

Armenian literature. She is the author of around ten articles.
nellytadevosyan@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 08.09.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 17.09.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ՆԱՐԻՆԵ ԱՐՇԱԿՅԱՆ

ՍՐԲՈՒՀԻ ԼԻՍԻՑՅԱՆԻ ԴԵՐՆ ՊԱՐԵՐԳԵՐԻ ԳՐԱՌՄԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.209

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը նվիրված է հայ էթնոպարագիտության հիմնադիր Սրբուհի Լիսիցյանի (1893-1979) աշխատություններում հայոց պարերգային բանահյուսության հետազոտությանը: Անուրանալի է այն փաստը, որ Սրբուհի Լիսիցյանի աշխատությունները կարևոր աղբյուր են ինչպես հայ, այնպես էլ այլազգի ազգագրագետների, մշակութաբանների համար: Հոդվածում քննվում են Ս.Լիսիցյանի դիտարկումները՝ կապված հայկական ժողովրդական պարերգերին, որոնք ունեն խոր արմատներ և փոխկապակցված են հինավուրց ծիսական, պաշտամունքային և համայնքային ավանդույթների հետ: Ըստ հեղինակի՝ պարերգը ժողովրդական թատերականացված պարային ներկայացումների կարևոր բաղադրիչներից մեկն է՝ խոսքային տեքստը, որ սերտորեն փոխկապակցված է հատկապես շարժողական տեքստի՝ պարի հետ, և այս սերտ կապը պայմանավորված է վաղեմի ծիսապաշտամունքային արմատներով: Այս հնագույն շերտը պահպանվում է հատկապես երգերի կրկներգերում, որոնք համեմատաբար կայուն են և դժվար են փոփոխվում: Ի տարբերություն դրա, երգային բնագրի տներն ու տողերը առավել հեշտ կարող են փոփոխվել՝ ստեղծելով նոր բովանդակություն և այդպիսով ազդելով նաև պարի վրա:

Լիսիցյանն իր ուսումնասիրություններում անդրադարձել է պարերգերի ժանրային մի շարք առանձնահատկությունների, դրանց ձևի, կատարման կերպի, թեմատիկ ու բովանդակային խորքի զանազան խնդիրներ է շոշափել: Լիսիցյանը

հսկայական դերակատարում է ունեցել պարերգային բնագրերի գրառման և պահպանման հարցում, հանդես է եկել ոչ միայն որպես այդ երգերի գրառող, այլև տարբեր լեզուներից թարգմանել է դրանք: Լիսիցյանի պարերգային բնագրերի գրառումներն այսօր հայ պարերգային բանահյուսության ժառանգության մեջ հսկայական տեղ են գրավում, դրանք վերահրատարակվել են հայ երաժշտական բանագետների կողմից և հարուստ նյութ են հետագա ուսումնասիրությունների համար:

***Քանալի բառեր և արտահայտություններ.** Սրբուհի Լիսիցյան, ազգային մշակույթ, ժողովրդական պարերգ, ծես, բարբառ, կառուցվածք:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայոց պարի, այնպես էլ պարերգերի ուսումնասիրման հարցում անուրանալի է Սրբուհի Լիսիցյանի դերը, որն իր «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները» (**Лисицян С. 1958; 1972**) հիմնարար աշխատության մեջ պարին զուգահեռ քննության առարկա է դարձրել նաև պարն ուղեկցող երգային բնագրերը: Երկհատոր ուսումնասիրությունը նվիրված է հայկական հինավուրց պարերի նկարագրությանն ու վերլուծությանը, ավանդական տոների և ծեսերի ժամանակ կատարվող պարերին և երգերին: Այնտեղ ներկայացվում են պարերի գծապատկերները, նոտագրությունը, երգերի տեքստերը, տարազների, հանդերձների նկարագրությունն ու լուսանկարները:

Մինչ Սրբուհի Լիսիցյանի ուսումնասիրությունները, ժողովրդական երգերը, այդ թվում նաև պարերգերը, արդեն իսկ գրառվել և որոշ քննության են ենթարկվել Կոմիտասի կողմից: Կոմիտասը ձայնագրել է շուրջ երեք հազար երգ: Լիսիցյանի ուսումնասիրությունից առաջ արդեն գրվել էր Կոմիտասի հայտնի «Հայ գեղջուկ պարը» (**Կոմիտաս Վարդապետ, 2005**) աշխատությունը. պարերգերի մասին խոսելիս Լիսիցյանը բազմիցս անդրադառնում է այս աշխատությանը (**Лисицян С. 1972**):

Սրբուհի Լիսիցյանին կարելի է համարել «հայկական պարի Կոմիտաս»: Այնպես, ինչպես Կոմիտասն է մոռացությունից փրկել և հարազատ ժողովրդին նվիրել իր երգարվեստի գոհարները, այնպես էլ Սրբուհի Լիսիցյանը, կապելով իր կյանքը պարարվեստին, կարողացավ ուսումնասիրել և իր կողմից ստեղծված գրառման համակարգի միջոցով գրառել դեռ վաղ անցյալում գոյություն ունեցող հայկական պարանմուշները:

Լիսիցյանը կատարել է դանդաղ և արագ երգերի միակցման քննություն, խոսել երգերի բարբառային զանազանությունից, որոնք խոսակցական լեզվի ճյուղավորումների նման գոյացվել են հայ գյուղական երաժշտական մեղեդիական «բարբառների»: Այդ ամենը հարստացրել են ազգային – ժողովրդական երգի ոճը իրենց հետաքրքրական տարբերակներով:

Սրբուհի Լիսիցյանը իր ուսումնասիրություններում հատկապես խոսում է թատերականացված պարային ներկայացումների երաժշտական հիմքի, դիթամի և չափի մասին, բեմականացման և ծիսականության, հագուստի և ատրիբուտների, շարժումային համակարգի տարածաշրջանային առանձնահատկությունների մասին:

Քննելով հեղինակի ուսումնասիրությունները՝ տեսնում ենք, որ Լիսիցյանն իր առջև ունեցել է համակարգված պլան: Հատորներն ունեն որոշակի հաջորդականություն՝ ըստ պարերի բնույթի, գավառական առանձնահատկությունների կամ կիրառական նշանակության: Առաջին հատորը մեծ մասամբ պարունակում է ընդհանուր տեսական նյութ և հիմք հանդիսանում հետագա ուսումնասիրությունների համար, իսկ երկրորդը կենտրոնացած է մանրամասն նկարագրությունների և վերլուծությունների վրա, որոնք ցույց են տալիս յուրաքանչյուր տարածաշրջանի առանձնահատկությունները, ինչպես նաև՝ դրանց միջև առկա ընդհանրությունները:

Սրբուհի Լիսիցյանը չորս հիմնական բաղադրիչ է առանձնացնում ժողովրդական թատերականացված պարային ներկայացումներում՝ դիտարկելով դրանց հիմնական հատկանիշներն ու բազմազան դրսևորումները:

1. Գլխավոր բաղադրիչն ըստ Լիսիցյանի ինքը՝ պարն է, որն ուսումնասիրողն անվանում է **շարժումների տեսք**:

2. Որպես երկրորդ գլխավոր բաղադրիչ դիտարկվում է **երաժշտական տեսք**, որի մեջ մտնում են *վոկալ* և *գործիքային* ուղեկցումները: Վոկալ ուղեկցումների մեջ դիտարկվում են պարերգային, երաժշտական կատարումները:

3. Պարերգային բնագրերի մասին առավել հանգամանալից անդրադարձ է կատարվում ժողովրդական թատերականացված պարային ներկայացումների երրորդ բաղադրիչում, որը Սրբուհի Լիսիցյանն անվանում է **խոսքային տեսք**՝ որպես այդպիսիք դիտարկելով *պարերգերը* և *դրամատիկական խոսքային տեսքերը*:

4. Եվ վերջապես, որպես ժողովրդական թատերականացված ներկայացումների պարային նյութի չորրորդ բաղադրիչ Լիսիցյանն առանձնացնում է նրա ձևավորումը կամ **պատկերային տեսք**, որի մեջ հեղինակը դիտարկում է արտաքին ձևավորման ամենատարբեր դրսևորումներ՝ սկսած հրապարակի ձևավորումից, պարողների ձեռքերին եղած զանազան ատրիբուտներից, հագուստից, մինչև առասպելական բովանդակությամբ դիմակներ և դիմազարդեր:

Պարերգը կամ խոսքային տեսքտը թատերականացված պարային նյութում

Ինչպես տեսանք, Լիսիցյանն առանձին անդրադարձ է կատարում պարերն ուղեկցող վոկալ և խոսքային տեսքտերին՝ յուրաքանչյուր դեպքում անդրադառնալով պարերգերի կատարման առանձնահատկություններին և բնագրային յուրահատկություններին: Անկախ ժանրից, երգի խոսքային տեսքտը միշտ կապված է մեղեդու (երաժշտական հնչողության) և ռիթմի հետ:

Ուշագրավ է Լիսիցյանի այն նկատառումը, որ հայկական գյուղերում հայ ժողովուրդը հիմնականում պարում էր երգի հնչողության ներքո: Երաժշտական գործիքներն ավելացել են համեմատաբար ավելի ուշ՝ նվագեցնելով

երգեցեղության և պարերգային բնագրերի դերը, թեև երգային բնագրերը շատ երկար ապրում են ժողովրդի մեջ և գալիս են օգնության հատկապես այն դեպքում, երբ երաժիշտներ չեն լինում (**Лисицян С., 1958**) :

Լիսիցյանը նկատում է, որ հայերի մեջ պարերգ կատարում են հիմնականում հենց իրենք՝ պարողները: Ընդ որում, սովորաբար նրանցից երկուսը երգում են երգի տունը, հետո երկու այլ մասնակիցներ, կրկնելով երգվածի վերջին երկու, երեք բառերը՝ շարունակում են նույն տոնով: Վերջիններիս երգային տան վերջին խոսքերը կրկնում են առաջինները և երգում են մյուս տունը: Այնուհետև հոգնած երգողները փոխարինվում են այլ երգողներով: Այսպիսի երգեցողությունը Լիսիցյանն անվանում է **«Երկու մարդ կասեն, երկուսը կդարձնեն»**: **Դարձ** է անվանվում նաև երգի կրկներգը:

Լիսիցյանը նկատում է, որ հայկական պարային նյութում որպես պարերգի կատարող են ներկայացվում և՛ պարի անմիջական մասնակիցները, և՛ չմասնակցողները, որոնք պարբերաբար մասնակցում են պարերգի կատարմանը՝ ընդ որում, և՛ երգային միջամտություններով, և՛ զանազան ձայնարկություններով (**Лисицян С., 1958**):

Պարերգերի կատարողների բաշխտվածությունն, ըստ Լիսիցյանի, տարբեր է լինում տարբեր ժողովուրդների մեջ, ինչպես նաև՝ նույն ժողովրդի տարբեր հատվածներում: Այսպես, Լիսիցյանն առանձնացնում է հետևյալ դրսևորումները.

1. Երգային բնագիրը երգում են մեկ կամ երկու ձայնակցող, իսկ կրկներգը երգում են խմբակային կամ միայն մի քանիսի կողմից: Այսպես կարող է լինել և՛ այն դեպքում, երբ երգը երգում են պարողները, և՛ երբ երգում են չպարողները:
2. Տեքստը երգում են պարողները, իսկ կրկներգը՝ չպարողները:
3. Կրկնակը կամ երգային տան տողերը երգում են ձայնակցողները, նույն խոսքերը շարունակում են կատարել խմբակային կամ երկու, երեք կատարողներով:

4. Երբ երգի տեքստը երկխոսական է, կատարում են համապատասխան դերակատարները:

5. Երկխոսությունը երգում են չպարողները, իսկ պարողները պատկերում են այն, ինչի մասին երգվում է (**Лисицян С., 1958**):

Պարերգերի բուն խոսքային տեքստն ըստ Լիսիցյանի կազմված է կրկներգերից և երգային տների բնագրից, որոնք հաճախ ունենում են երկխոսական բնույթ (**Лисицян С., 1958**): Ի տարբերություն կրկներգերի, երգային բնագրի տներն ավելի հեշտ են իմպրովիզացիաների ենթարկվում, փոփոխվում, և այս իմպրովիզացիաները կատարվում են անմիջապես պարերգի կատարման ժամանակ (**Лисицян С., 1958**): Այսպիսի իմպրովիզացիաները ծնում են հաճախ երգի նոր բովանդակություն, որն աստիճանաբար սկսում է ազդեցություն ունենալ նաև շարժողական և երաժշտական բնագրի վրա (**Լիսիցյան Ս., 1958**): Երգային բնագրի նոր տողերի կամ ամբողջապես նոր տների ի հայտ գալը հանգեցնում է նրան, որ պարային, շարժողական տեքստը սկսում է կորցնել իր հին իմաստաբանությունը, առանձին շարժումների իմաստաբանությունը և հիմնական բաղադրիչների միասնությունը սկսում է փլուզվել (**Лисицян С., 1958**): Երգի նոր բովանդակությունը թելադրում է պարի ավանդական համակարգի մեջ նոր շարժումների ի հայտ գալը՝ պայմանավորված ժողովրդի ստեղծագործականությամբ:

Պարերգային բնագրերի զարգացման և փոփոխության մեկ այլ պատճառ է հանդիսանում այն, որ ժողովրդական պարերը հիմնականում տևում են 15, 20 կամ ավել րոպեներ, հետևապես երգային բնագիրը սպառվում է և կարիք է առաջանում նորը սկսելու: Այսպիսի իրավիճակներում սովորաբար ձայնակցողը կամ սկսում է երգել այլ երգերի տողեր, կամ հորինում է նորը: Այս հանգամանքում Լիսիցյանը տեսնում է նախկին կանոնակարգված բնագրերի աստիճանական փլուզումը, կայուն երգային բնագրերի փոփոխությունը: Այս հանգամանքը ուսումնասիրողը նկատում է հատկապես աշխարհիկ պարերգերի դեպքում, երբ

պարերգի կատարումը արդեն կապված չի ծեսի հետ: Մինչդեռ ըստ նախնական հավատալիքային աշխարհի, ծիսերգերի խոսքերի փոփոխությունը կարող էր բացասականորեն ազդել ծեսի հանգուցալուծման վրա (Лисицян С., 1958):

Պարերգերի անվանումները

Պարերգի հնագույն անվանումն ըստ Լիսիցյանի **գեղոնն** է: Այսպես է կոչվել նաև բանաստեղծական ստեղծագործությունը, որն ամփոփել է առասպել կամ ավանդություն (Лисицян С., 1958):

Գրական լեզվում այս ժանրաձևն անվանվում է **պարերգ՝ պար** և **երգ** բառերի միացությունից: Ըստ Լիսիցյանի, երգ բառն ավելի վաղ նշանակել է հենց պարելով երգելը (Лисицян С., 1972): Ժողովրդի մեջ առավել տարածված է եղել **խաղը**, որ նշանակել է ինչպես պարել, այնպես էլ պարելով երգել կամ միայն երգել: Հայաստանի տարբեր շրջաններում տարածված են եղել անվանման **խաղպար, պարխաղ, խաղ ըսելով խաղ, փուն, խանա, խանե, խանե ըսելով խաղ, խաղով պար, թաղալու** տարբերակները (Лисицян С., 1972):

Կրկներգերը պարերգային բնագրերում

Ըստ Լիսիցյանի, պարերգերի բանավոր տեքստերում ամենապահպանված և կարգավորված մասը նրա կրկներգն է և կրկներգերում պահպանվում են հնամենի երգերի մնացուկներ, որոնք ժամանակին սերտորեն շաղկապված են եղել շարժումների բնագրին:

Կրկներգը հետևում է երգի տան տողերին տարբեր հաջորդականությամբ.

1. Տան մեկ տողից հետո,
2. Տան երկու տողից հետո,
3. Հազվադեպ՝ տան երեք տողից հետո,
4. Կրկներգով սկսվում է տունը կամ էլ ավարտվում այն (Лисицян С., 1972):

Սովորաբար կրկներգի առաջին տողը լինում է պարերգի վերնագիրը: Այս օրինաչափությունը, որ Լիսիցյանը նկատում է նաև ռուսական, ուկրաինական, վրացական և այլ ժողովուրդների պարագայում, ուսումնասիրողը մեկնաբանում է

հենց նրանով, որ կրկներգը երգի ամենահին բաղադրիչն է (**Лисицян С., 1972**):
Կրկներգը կարող է ունենալ նաև տարբերակներ:

Երգի խոսքային բնագրում կրկներգը լինում է.

1. Անփոփոխ, նույն ձևով կրկնվող:

2. Փոփոխական, երբ երգի որոշակի անփոփոխ հիմնական մասին ավելացվում են արտահայտություններ երգային տների տողերից, սովորաբար՝ վերջին բառերը:

3. Փոփոխվող, երբ երգվում են կրկներգի տարբեր տողեր՝ հերթափոխությամբ:

Կրկներգ բառը հայերենում ունի հոմանշային տարբերակներ, որոնց ևս անդրադառնում է Լիսիցյանը: Ընդ որում, այս տարբերակներից յուրաքանչյուրը իմաստային նրբերանգներ է պարունակում, որով բնութագրվում է նաև կրկներգի տեսակը:

Ա. **հորդորակ**, որ նշանակում է խրախուսում,

Բ. **կրկնակ**, որ նշանակում է կրկնություն

Գ. **դարձ**, որ նշանակում է վերադարձ, քանի որ երգողները, «խլելով» երգի բառերը, կարծես վերադարձնում էին դրանք (**Лисицян С., 1972**):

Վերջինն իր հերթին ունի բարբառային տարբերակներ՝ **այդակլամա** (Ալաշկերտ), **ջուխար ասոցի** (Ապարան), **հիլու** (Վասպուրական), **գիրգնարկ** (Փոքր Հայք) (**Лисицян С., 1972**):

Հեղինակը խորապես քննել է երգային տեքստը: Ըստ հեղինակի երգային բառերը առանձին-առանձին արտահայտում են դիպուկ առոգանությամբ ու ժեստերով: Օրինակ, նույն՝ «Սիրուն աղջիկ» բառակապակցությունը, կարող է նույն երգի մեջ տարբեր կրկներգներում ստանալ մի քանի երանգներ: Շատ տարածված է նաև կրկներգներում մի բառի փոփոխությունը: Օրինակ առաջին տան «Սիրուն աղջիկ», երկրորդ տանը «Անխիղճ աղջիկ», երրորդում՝ «Մենուճար աղջիկ» և այլն:

Գործողություն և խոսք համադրություն

Ինչպես ցույց են տալիս Սրբուհի Լիսիցյանի ուսումնասիրությունները, պարի շարժումների և խոսքերի բնագրերը սերտորեն փոխկապակցված են: Պարերգերը

ոչ միայն համապատասխան հուզական ֆոն են ստեղծում, այլև երբեմն մեկնաբանում պարային շարժումները:

Ըստ Լիսիցյանի, երգային բնագրերի բովանդակությունը՝ առասպելական, էպիկական, քնարական, ծիսապաշտամունքային, աշխարհիկ, արտադրական, ռազմական կամ այլ բնույթի, սերտ փոխկապակցվածություն ունի պարի շարժողական բնագրի հետ (**Лисицян С., 1972**):

Լիսիցյանը հետաքրքիր վերլուծություններ է կատարում պարերգերի բնագրերի բովանդակային վերլուծության հետ կապված, բացահայտում ուշագրավ ենթաշերտեր՝ կապված պարերգերի բնագրերի հնագույն ծիսահավատալիքային շերտերին, որոնք կապ են ստեղծում երգի խոսքային և շարժողական բնագրերի միջև: Բազմաթիվ այդպիսի օրինակներից բերենք միայն մեկը՝ «Շարեցի՛ն, մորքուր ջան» պարերգի վերլուծությունը ըստ ազգագրական և բանահյուսական նյութերի, որտեղ Լիսիցյանը ցույց է տալիս մարդ-շինարարական զոհ սովորույթի վերապրուկները պարերգում (**Лисицян С., 1972**):

Ըստ տեղեկությունների, հայերի մեջ եղել է հավատալիք, որ հետևյալ կառույցները՝ կամուրջներ, կամարներ, տներ, պարիսպներ, կարող են առավել անառիկ լինել, եթե դրանց մեջ ողջ-ողջ մարդ, երիտասարդ աղջիկ, տղա կամ կին զմռսվի: 1985 թվականին գրանցած «Շարեցի՛ն, մորքուր ջան» պարի այս տարբերակը շարժական է, երաժշտական տեքստով ու ծիսակարգի նկարագրությամբ:

Ա-Շարեցի՛ն ,մորքուր ջան, շարեցի՛ն

Չուրի ճաներս քարեցին:

Մ -Թո շարեն բալա ջան, թո շարեն,

Չուրի ճաներդ թո քարեն

Ա-Շարեցի՛ն ,մորքուր ջան, շարեցի՛ն

Չուրի ճաներս քարեցին, Չուրի չոքերս քարեցին

Մ-Թո շարեն բալա ջան,թո շարեն,

Չուրի ճաներդ թո քարեն, Չուրի չոքերդ թո քարեն (**Лисицян С., 1958**):

Պարերգի տեքստը երկխոսություն է, մեկը հայտարարում է իրավիճակը, մյուսը՝ հաստատում: Ըստ ավանդության, այն ապահովում է կառույցի երկարակեցությունը:

Նման պարերգի վերլուծությունը խորքային կապեր է բացահայտում ժողովրդական սովորույթների մեջ, որոնցով էլ պայմանավարտված են պարի և պարերգի սերտ կապը՝ խոսքի և գործողության փոխապայմանավորվածությամբ:

Սրբուհի լիսիցյանը՝ որպես պարերգերի գրառող և թարգմանիչ

Երգային բնագրերը հարուստ տեղ են զբաղեցնում Սրբուհի Լիսիցյանի աշխատություններում (**Лисицян С., 1958; 1972; 1983**): Երգային բնագրերի գրառումների մասին Լիսիցյանը խոսում է իր երկհատոր ուսումնասիրության տարբեր հատվածներում: Նա նշում է, որ ժողովրդական պարերգերի մեծ մասն արդեն աստիճանաբար մոռացության է տրվել իր ժամանակներում, և որ ոչ բոլոր երգերն է հաջողվել ամբողջությամբ գրի առնել: Հաճախ դրանց հատվածներն են միայն պահպանվել (**Лисицян С., 1972**):

Լիսիցյանի կողմից գրառված պարերգերը նրա արխիվում այսօր հսկայական թիվ են կազմում: Ինչպես նշում է Մարգարիտ Սարգսյանը, Արվեստի ինստիտուտի ժողովրդական արվեստի բաժնի ձայնադարանի Սրբուհի Լիսիցյանի ֆոնդում այսօր առկա է մոտավորապես 1100 ձայնագրություններ, որոնց մեծ մասը (836 նմուշ) պարերգեր և պարեղանակներ են, որոնցից 609-ը պարերգեր են: Այս պարերգերից 191-ը լույս են տեսել Ս.Լիսիցյանի «Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները» և «Հայկական հնագույն պարերը» ուսումնասիրություններում (**Սարգսյան Մ. 2004**): Բարձր գնահատելով Լիսիցյանի խորիմացությունն ու նյութի հանդեպ անաչառ մոտեցումը՝ Զ.Թազակչյանը արժևորում է նաև Լիսիցյանի կողմից Սպ.Մելիքյանի, Մ.Աղայանի, Ա.Քոչարյանի և այլոց 112 երաժշտական և Բանահյուսական բնորոշ

և համահունչ նմուշներով սեփական գրառումները լրացնելը (**Թագակյան Զ. 2004**):

Սրբուհի Լիսիցյանը որոշակի սկզբունքներ է կիրառել նաև պարերգերի թարգմանության հարցում: Հավաքագրած նյութերի թարգմանական պրոցեսը եղել է բարդ, քանի որ պարերգերը գրառվել են տարբեր լեզուներով: Ինչպես նշում է Լիսիցյանը, բոլոր երգերը թարգմանել է հենց ինքը: Եթե հայերեն բնագրերն ուղղակի ռուսերեն են թարգմանվել, ապա քրդերեն և թուրքերեն բնագրերը ռուսերեն թարգմանելիս Լիսիցյանը օգտվել է նաև դրանց հայերեն թարգմանություններից (**Лисицян С., 1958**):

Չուգերգերում գրվում է համապատասպան տան կատարողի կրճատ անունը, դերը, պաշտոնը, սեռը, կոչումը հետևյալ կերպ՝ Մայր-Մ, Տղա-S, Աղջիկ-Ա, Մորքուր-Մ և այլն:

«Ծանոթագրություններ» բաժնում Լիսիցյանը լրացուցիչ տեղեկություններ է տալիս երգերի շուրջ: Այս բաժնում ներառված են բոլոր հասկացությունները, որոնք լիարժեք բացահայտված չեն պարերգային տեքստում:

Ծանոթագրությունները թույլ են տալիս հիմնական տեքստը չծանրաբեռնել երկրորդական կամ տեխնիկական տեղեկատվությամբ: Ինչպես նաև հեղինակը երգերի փնտրումն ավելի դյուրին դարձնելու համար այբբենականացրել է բոլոր երգերը՝ քրդերեն, թուրքերեն, ռուսերեն, հայերեն:

Լիսիցյանի հիմնարար ուսումնասիրության երկու հատորների վերջում տրվում են մեծ թվով պարերգերի նոտագրված նմուշներ՝ խոսքային բնագրերի և դրանց թարգմանությունների զուգադիր հրատարակություններով: Հեղինակը նշում է, որ թարգմանությունների ժամանակ կարևորել է երգի բովանդակության ճշգրիտ փոխանցումը, այդ է պատճառը, որ երաժշտության հետ դրանք կարող են չհամապատասխանել (**Лисицян С., 1972**):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սրբուհի Լիսիցյանը իր աշխատություններով մեծ դեր է կատարել ոչ միայն ժողովրդական պարերի, այլև պարերգային բնագրերի ուսումնասիրության հարցում: Հիմնվելով հնագույն ձեռագրերի, բանահյուսական նյութերի, իր իսկ դաշտային հետազոտությունների վրա՝ ուսումնասիրողը հստակեցրել է երգային բնագրի տեղն ու դերը ժողովրդական թատերականացված պարային ներկայացումներում: Հեղինակի գրքերը պարունակում են մանրամասն նկարագրություններ հին հայկական ավանդույթների, պարերի, երգերի, ծեսերի, որոնք թույլ են տալիս ավելի լավ հասկանալ պարերգերի բովանդակությունն ու նրանց պարային կատարման ձևը: Սրբուհի Լիսիցյանը կարևորել է ազգային պարերգի պատմական և մշակութային կոնտեքստը: Նա իր ուսումնասիրություններում մեծ ուշադրություն է դարձրել պարի և պարերգի ծագման, զարգացման և հասարակական գործառույթներին՝ շեշտելով դրանց կապը ազգային ավանդույթի հետ:

Լիսիցյանը կատարել է նաև բանահյուսական նյութերի հավաքագրում: Նա համակարգել է տարբեր շրջանների երգերն ու պարերը՝ տալով համապարփակ պատկերացում այդ ժանրի բազմազանության և ժողովրդական պարային ներկայացումներում դրանց կատարման յուրահատկությունների մասին: Սրբուհի Լիսիցյանի աշխատությունները բացառիկ արժեք ունեն հայկական մշակութային և պատմության մեջ՝ քանի որ նրա գրառումները ոչ միայն փաստագրում են անցյալի ժողովրդական արվեստը, այլև կարևոր աղբյուր են հանդիսանում հետագա սերունդների համար՝ ազգային մշակույթը ճանաչելու և պահպանելու տեսանկյունից:

Սրբուհի Լիսիցյանի հետազոտություններից պարզ է դառնում, որ պարերգային ժանրը հանդիսանում է մեկ ամբողջություն, որտեղ երգը թելադրում է պարի շարժումների ռիթմը, իսկ պարը՝ երգի թեմատիկան: Լիսիցյանի

հետազոտությունները օգնում են մեզ հասկանալու, որ բանահյուսական պարերգային ժանրում պարը չի գործում որպես պարզ ուղեկից երգին, այն ունի իր հատուկ շարժումները, որոնք համահունչ են երգի բովանդակությանը և կարող են արտահայտել ծիսապաշտամունքային պատկերացումներ և հուզականություն: Այն հասարակության բոլոր շերտերը միավորող գործոն է, որի բնութագրերը դարձնում են պարերգային ժանրը յուրահատուկ և կարևոր՝ որպես ազգային մշակույթի ինքնության մաս:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Սարգսյան Մ. (2004)**, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ձայնադարանի Սրբուհի Լիսիցյանի ֆոնդը «Պար և երաժշտություն», Սրբուհի Լիսիցյանի ծննդյան 110-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, էջ 5-9:
2. **Թագակչյան Զ. (2004)**, Պարերգերը ԳԱԱ արվեստի ինստիտուտի ձայնադարանի Սրբուհի Լիսիցյանի հավաքածուում ըստ Դավիթ Դերոյանի անտիպ ժողովածուի «Պար և երաժշտություն»: Սրբուհի Լիսիցյանի ծննդյան 110-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, էջ 10-14:
3. **Կոմիտաս Վարդապետ (2005)**, Ուսումնասիրություններ և յօդուածներ, գիրք Ա, Երևան, Սարգիս Խաչենց:
4. **Лисиця С. (1958)**, Старинные пляски и театральные представления армянского народа, Ереван, т. 1, АН Армянской ССР.
5. **Лисиця С. (1972)**, Старинные пляски и театральные представления армянского народа, Ереван, изд. т. 2, АН Армянской ССР.
6. **Лисиця С. (1983)**, Армянские старинные пляски, Сост. И отв. Редк. Э.Х.Петросян, Ереван, изд. Арм ССР.

REFERENCES

1. **Sargsyan M. (2004)**, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժայռարանի Տրբուհի Լիսիցյանի ֆոնդի՝ «Փար & արայիստովյոն» /The Srбуhi Lisitsyan Fund in the Audio Archive of the Institute of Arts of the NAS RA /Dance and Music/: Materials of the Conference Dedicated to the 110th Anniversary of Srбуhi Lisitsyan, Yerevan, pp. 5–9.
2. **Tagakchyan Z. (2004)**, Փարերգերի՝ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժայռարանի Տրբուհի Լիսիցյանի հավաքածուում յժտ Դավիտի Դերոյանի անթիվ յիղոհովածուի «Փար & արայիստովյոն» / Dance Songs in the Srбуhi Collection of the Audio Archive of the Institute of Arts of NAS RA Based on the Unpublished Compilation by Davit Deroyan /Dance and Music/: Materials of the Conference Dedicated to the 110th Anniversary of Srбуhi Lisitsyan, Yerevan, pp. 10–14.
3. **Komitas Vardapet (2005)**, Օսոսմնասիրովյոններ & յովձովածներ /Studies and Articles/, Book I, Yerevan, Sargis Khachents.
4. **Lisitsyan S. (1958)**, Տարիննյե փլյասկի ի տեատրալնյե քրեժավենիյա արմյանկոցո ռարոձա /Ancient Dances and Theatrical Performances of the Armenian People/, Vol. 1, Armenian SSR Publishing House, Yerevan.
5. **Lisitsyan S. (1972)**, Տարիննյե փլյասկի ի տեատրալնյե քրեժավենիյա արմյանկոցո ռարոձա /Ancient Dances and Theatrical Performances of the Armenian People/, Vol. 2, Armenian SSR Publishing House, Yerevan.
6. **Lisitsyan S. (1983)**, Արմյանկիյե տարիննյե փլյասկի /Armyanskiye starinnye plyaski/ Armenian ancient dances, Comp. and ed. E.Kh.Petrosyan, Armenian SSR Publishing House, Yerevan.

Narine Arshakyan

Srբուհի Լիսիցյանի դերը ժայռարանում և յիղոհովածուների ուսումնասիրության մեջ

Conclusion

Key words and expressions: *Srbuhi Lisitsian, national culture, folk dance song, ritual, dialect, structure.*

The article is dedicated to the study of Armenian dance-song folklore in the works of Srbuhi Lisitsian (1893–1979), the founder of Armenian ethnodance studies. It is an undeniable fact that her works are a vital source not only for Armenian ethnographers and cultural scholars but also for their foreign counterparts. The article examines Lisitsian’s observations regarding Armenian folk dance songs, which are deeply rooted and intertwined with ancient ritual, cultic, and communal traditions. According to the author, the dance song is one of the essential components of folk theatrical dance performances: it is a spoken or sung text that is closely tied to the movement-based text—the dance itself—and this close connection is shaped by ancient ritualistic roots. This archaic layer is preserved especially in the refrains of the songs, which are relatively stable and resistant to change. In contrast, the verses and lines of the song lyrics are more flexible and subject to transformation, thus creating new content and influencing the dance as well.

In her research, Lisitsian addressed a range of genre-specific characteristics of dance songs, their form, modes of performance, and various issues of theme and content. She played a crucial role in documenting and preserving these song texts, acting not only as a recorder but also as a translator from various languages. Lisitsian’s notations of dance-song texts now hold a significant place in the heritage of Armenian dance folklore. They have been republished by Armenian musicologists and remain a rich resource for future studies.

Нарине Аршакян

Роль Сарбуи Лисицян в записи и изучении танцевальных песен

Заключение

Ключевые слова и выражения: Србуи Лисицян, национальная культура, народная танцевальная песня, обряд, диалект, структура.

Статья посвящена исследованию армянского песенно-танцевального фольклора в работах основательницы армянской этнохореографии Србуи Лисицян (1893–1979). Неоспорим тот факт, что творчество Србуи Лисицян является важным источником как для армянских, так и для зарубежных этнографов и культурологов. В статье рассматриваются наблюдения С. Лисицян, касающиеся армянских народных танцевальных песен, имеющих глубокие корни и связанных с древними ритуальными, культовыми и общинными традициями. По мнению автора, танцевальная песня является одним из ключевых компонентов народных театрализованных танцевальных представлений: это текст, произносимый или поющийся, который тесно связан с движенческим текстом — самим танцем, а эта тесная связь обусловлена древними культовыми корнями. Этот древний слой особенно сохраняется в рефренах песен, которые относительно устойчивы и с трудом поддаются изменениям. В отличие от этого, куплеты и строки песенного текста легче изменяются, создавая новое содержание, что также влияет на сам танец.

Лисицян в своих исследованиях затронула целый ряд жанровых особенностей танцевальных песен, их форму, способы исполнения, различные вопросы тематики и содержания. Она сыграла огромную роль в фиксации и сохранении этих текстов, выступая не только как собиратель песен, но и как их переводчик с различных языков. Записи Лисицян сегодня занимают значительное место в наследии армянского песенно-танцевального фольклора, они переиздавались армянскими музыковедами и являются ценным материалом для дальнейших исследований.

Նարինե Արշակյան - ԵՊՀ Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ ազգային պարերգեր, մանկավարժություն, բանահյուսություն, մշակութաբանություն: narine.arshakyan@ysu.am

Нарине Аршакян - Аспирант кафедры истории армянской литературы и теории литературы имени Гранта Тамразяна Ереванского государственного университета. Научные интересы: национальные танцевальные песни, педагогика, фольклор, культурология. narine.arshakyan@ysu.am

Narine Arshakyan - PhD student at the Chair of History of Armenian Literature and Literary Theory named after Hrant Tamrazyan, Yerevan State University. Scientific interests: national dance songs, pedagogy, folklore, cultural studies. narine.arshakyan@ysu.am

Խմբագրություն է ուղարկվել 17.09.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 29.09.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԷՂԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԲՈՂՈՔԱԿԱՆ ՄԻՍԻՈՆԵՐ ՄՈՈՒԶԵՍ ՓԵՐՄԸԼԻԻ ՀԱՂՈՐԴԱԾ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ¹

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.210

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամերիկացի բողոքական միսիոներների քարոզչական աշխատանքների արդյունքում Արևմտյան Հայաստանի բազմաթիվ բնակավայրերում 19-րդ դարում ձևավորվել էին բողոքական համայնքներ: 19-րդ դարի երկրորդ կեսերին արևմտահայերի շրջանում քարոզչություն իրականացնելու նպատակով Օսմանյան կայսրություն է ժամանում Մոուզես Փեյսն Փերմըլին: Վերջինիս իր գործունեությունը ներկայացնում է երկու գրքերում, որոնք հրատարակվում են ԱՄՆ-ում 1868 և 1888 թվականներին՝ համապատասխանաբար «Կյանքի տեսարանները Արարատի լեռների շրջանում» (Life Scenes Among the Mountains of Ararat) և «Տունն ու աշխատանքը Եդեմի գետերի մոտ» (Home and work by the rivers of Eden) խորագրերով:

Հեղինակն այս աշխատանքներում հիմնականում ներկայացնում է իր միսիոներական գործունեությունը: Դրանցում տեղ են գտել նաև բազմաթիվ հետաքրքրական տեղեկություններ Արևմտյան Հայաստանի և արևմտահայության հասարակական, մշակութային կյանքի, կենցաղի ու սովորությունների և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Այդ առումով սույն աշխատանքներն ունեն որոշակի պատմագիտական և աղբյուրագիտական արժեք հայության շրջանում

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ «25RG-6A056» ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

բողոքականության տարածման պատմության և 19-րդ դարի հայոց պատմության մի շարք հարցերի ուսումնասիրման համար:

Սույն հոդվածում քննության են ենթարկվում նշված երկու գրքերը: Փորձ է արվում ոչ միայն արժևորել դրանց նշանակությունը, այլ նաև ցույց տալ դրանցում առկա սուբյեկտիվ և գաղափարական մեկնաբանությունները, որոնք պայմանավորված են հեղինակի կրոնդավանական ընկալումներով ու պատկերացումներով:

Բանալի բառեր և արտահայտություններ. Մոուզես Փերմըլիի (Moses Parmelee), ամերիկացի միսիոներներ, բողոքականություն, Արևմտյան Հայաստան, հայեր:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարի սկզբների ամերիկացի միսիոներական կառույցները սկսեցին բուռն հետաքրքրություն ցուցաբերել Արևելքի քրիստոնյաների նկատմամբ: Վերջիններիս հետաքրքրության կենտրոնում են հայտնվում նաև հայերը: Մերձավոր Արևելքում միսիոներական շարժումը հիմնականում համակարգվում էր «Օտարերկրյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի» (American Board of Commissioners for Foreign Missions կամ ուղղակի «Ամերիկյան խորհուրդ») կողմից, որն ստեղծվել էր 1810 թ. Բոստոնում (**William E.S., 1910**): Այս կառույցի ջանքերով Օսմանյան կայսրության քրիստոնյաների՝ հատկապես հայերի շրջանում, բողոքական գաղափարները տարածելու, ինչպես նաև տեղի ժողովուրդներին ուսումնասիրելու նպատակով, դեպի Մերձավոր Արևելք սկսեցին գործուղվել տարբեր ամերիկացի միսիոներներ:

Առաջին ամերիկացի բողոքական միսիոներները, որոնք 1830-1831 թվականներին ճամփորդեցին ողջ Հայաստանի տարածքով Էլի Սմիթն (Eli Smith) ու Հարիսոն Գրեյ Օթիս Դուայթը (Harrison Gray Otis Dwight) էին (**Հովհաննիսյան Է., 2024**): Վերջիններս իրենց ուղևորության և գործունեության ընթացքում հավաքած նյութերը հետագայում հրատարակում են (**Smith E., Dwight H., 1833**), որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում Հայաստանի և հայերի մասին:

Օսմանյան կայսրության հայերի շրջանում միսիոներական գործունեությունը համակարգված դարձնելու նպատակով շուտով Կոստանդնուպոլսում հիմնադրվում է միսիոներական կայան: Բողոքական քարոզիչների գործունեության արդյուքում Օսմանյան կայսրության տարածքում սկսեցին ձևավորվել առաջին հայ ավետարանական համայնքները: Արդեն 1846 թ. հուլիսի 1-ին Կ.Պոլսի Բերա թաղամասում 40 հայ ավետարանականների կողմից հիմնադրվում է Հայ Ավետարանական եկեղեցին (**Թուրիկեան Վ., 1998**), որը չորս տարի անց՝ 1850 թ. նոյեմբերի 27-ին, սուլթան Աբդուլ Մեջիդի կողմից ճանաչվում է որպես առանձին «միլլեթ»՝ կրոնական համայնք (**Arpee L., 1946**):

Հայկական ավետարանական եկեղեցու ստեղծումն ու տարբեր քաղաքներում հայ ավետարանական համայնքների ձևավորումը չդադարեցրեց ամերիկացի միսիոներների գործունեությունը կայսրության տարածքում: Ամերիկացի բողոքական միսիոներներն իրենց գործունեությունը Օսմանյան կայսրությունում շարունակեցին դրա գոյության ողջ ընթացքում:

Ամերիկացի բողոքական միսիոներները թողել են տարբեր ուղեգրություններ, գրել հուշեր, պատրաստել և իրենց կենտրոն ուղարկել նամակներ, զեկուցագրեր և հաշվետվություններ: Դրանց մի մասը տպագրվել է «Ամերիկյան խորհրդի» պաշտոնաթերթ «The Missionary Herald»-ում: Դրանցից շատերը պարունակում են հետաքրքրական և արժեքավոր տեղեկություններ տարածաշրջանի տարբեր ժողովուրդների, այդ թվում հայերի վերաբերյալ: Այդ աշխատություններից շատերը պատշաճ չեն ներառված գիտական շրջանառության մեջ:

Այդ միսիոներներից է Մոուզես Փեյսն Փերմըլին, որը մի քանի տասնամյակ գործել է Արևմտյան Հայաստանում և իր գործունեությունը ամփոփել երկու գրքերում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հողվածում քննության է ենթարկվում ամերիկացի բողոքական միսիոներ Մոուզես Փեյսն Փերմըլի հեղինակած երկու գրքերը, որոնք վերաբերում են Արևմտյան Հայաստանում վերջինիս իրականացրած միսիոներական գործունեությանը: Դրանք պարունակում են որոշ հետաքրքրական

տեղեկություններ Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին տիրող իրավիճակի վերաբերյալ: Նշված երկու գրքերը ներկայացնող սույն հետազոտությունը կատարվել է պատմահամեմատական և համադրական-վերլուծական մեթոդով: Ցուցաբերվել է նաև քննադատական մոտեցում աշխատություններում տեղ գտած մի շարք տեսակետների, սխալ տեղեկությունների և մեկնաբանությունների վերաբերյալ:

ՔՆՆԱԲԿՈՒՄ

Մոուզես Փեյսն Փերմըլին ծնվել է ԱՄՆ-ում 1834 թ., սովորել է Վերմոնթի համալսարանում, ստացել է նաև բժշկական կրթություն, ԱՄՆ քաղաքացիական պատերազմի առաջին տարիներին կամավորական ջոկատներից մեկում ծառայել է որպես քահանա: 1863 թ. որպես բողոքական քարոզիչ ժամանել է Օսմանյան կայսրություն և գրեթե ողջ կյանքն անցկացրել այստեղ:

Մոուզես Փերմըլին, ինչպես շատ այլ միսիոներներ, իրենց առաքելությունը կատարում էին ընտանիքի հետ: Իր միսիոներական գործունեության ընթացքում հիվանդանում և մահանում են նախ վերջինիս երկու մանկահասակ աղջիկներից մեկը, ապա նաև կինը: Քանի որ Էրզրումում բողոքականների համար նախատեսված գերեզման այդ շրջանում չի եղել վերջիններիս հողարկավորում են միսիոներական կայանի բակում: Հետագայում թուրքական իշխանությունների կողմից հատուկ տարածք է հատկացվում բողոքականների գերեզմանոցի համար և նրանց մարմինները ևս տեղափոխվում են այստեղ (**Parmelee Payton M., 1888**):

Մոուզես Փերմըլին իր միսիոներական գործունեությունը հիմնականում իրականացրել է Էրզրումում: Հետագայում հաստատվել է Տրապիզոնում, որտեղ էլ ականատես է եղել Ադրուլ Համիդի կազմակերպած հայկական կոտորածներին՝ փորձելով իր նպաստը բերել հալածվող հայերի փրկության գործին: Վերջինս մահացել է 1902 թ. Բեյրութում, ուր մեկնել էր բուժման նպատակով: Մոուզես Փերմըլիի միսիոներական առաքելությունը շարունակել է դուստրը՝ Ռութ Ազնիվ Փարմըլին, որը բժիշկ-միսիոներ էր և մարդասիրական գործունեություն է իրականացրել Առաջին համաշխարհային պատերազմի և Հայոց ցեղասպանության

տարիներին: Նա որպես ականատես կարևոր վկայություններ է թողել հայերի կոտորածների վերաբերյալ (**Parmelee A. Ruth, 2002**):

* * *

Մոուզես Փերմըլին իր միսոներական գործունեության ընթացքում հրատարակել է երկու հուշագրությունների ժանրին պատկանող գրքեր: 1868 թ. Բոստոնում հրատարակվում է վերջինիս առաջին գիրքը՝ «Կյանքի տեսարանները Արարատի լեռների շրջանում» (*Life Scenes Among the Mountains of Ararat*) (**Parmelee Payton M., 1868**) վերնագրով, իսկ քսան տարի անց՝ 1888 թ-ին երկրորդը, որը կրում էր «Տունն ու աշխատանքը Եդեմի գետերի մոտ» (*Home and work by the rivers of Eden*) (**Parmelee Payton M., 1888**) խորագիրը:

Այս երկու աշխատանքները, ինչ որ իմաստով, փոխլրացնում են միմյանց, որտեղ հեղինակն անդրադառնում է իր միսոներական գործունեությանը հայերի շրջանում, միաժամանակ հաղորդելով տեղեկություններ հայերի կենցաղի, սովորությունների, կրոնի, լեզվի, մշակույթի, Օսմանյան կայսրությունում տիրող վիճակի ու բարքերի և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ: Քանի որ հեղինակի միսոներական գործունեության կենտրոնը Էրզրումն էր և դրա շրջակայքը, այդ պատճառով երկու գրքերում էլ ավելի մեծ տեղ է հատկացված հենց Էրզրումին:

Հեղինակն իր առաջին գրքի ներածական մասում նշում է, որ այդ փոքրիկ հատորը. «...համեստ փորձ է որոշ չափով բավարարելու միսոներական առաքելությունների ընկերների այն ուժգին և համընդհանուր ցանկությունը, որը վերաբերում է միսոներների գործունեության տարածքներում բնակվող ժողովուրդների բարքերին ու սովորություններին, երկրների ֆիզիկական առանձնահատկություններին, կյանքին, ճանապարհորդության եղանակներին և այն առօրյա, երբեմն նույնիսկ աննշան թվացող դրվագներին, որոնց նրանք մշտապես առնչվում են» (**Parmelee Payton M., 1868**): Հեղինակը նշում է նաև, որ աշխատությունը չի հավակնում տալ Արարատի լեռների շրջակա կյանքի ամբողջական նկարագրությունը:

Քանի որ Արևելքը և այնտեղ ապրող ժողովուրդներն ամերիկացիների համար մնում էին հեռավոր և անձանոթ, միսոներների նման աշխատանքները

հետապնդում էին նաև ճանաչողական նպատակներ: Դրանցով հեղինակները փորձում էին ընթերցող լայն շրջանակներին, նախ և առաջ ամերիկյան հասարակությանը, ներկայացնել ոչ միայն միսիոներների կատարած աշխատանքները, այլ նաև տվյալ երկիրը, մշակույթը և ժողովրդին: Պատահական չէ, որ այս աշխատությունների մեջ պարբերաբար անդրադարձ էր կատարվում Օսմանյան կայսրության և այնտեղ ապրող ժողովուրդների պատմությանը (**Parmelee Payton M., 1888**): Այդ պատճառով է նաև, որ տրամադրված տեղեկատվությունը հաճախ խորքային չէին:

Միսիոներների Հայաստանին նվիրված աշխատությունները կարելի բաժանել երկու խմբի: Առաջին խմբի մեջ այն գրքերն ու հոդվածներն են կամ աշխատությունների առանձին հատվածներ, որտեղ հեղինակներն իրենց հայտնի տարբեր աղբյուրների հիման վրա ներկայացնում են Հայաստանի անցյալ պատմությունը: Երկրորդ խմբում կարելի է ներառել այն անդրադարձներն ու աշխատությունները, որոնք հեղինակները գրել են որպես ժամանակակից ականատեսներ: Վերջին տիպի աշխատությունների պատմագիտական արժեքն ավելի բարձր է և դրանց մի մասն անշուշտ ունեն աղբյուրագիտական արժեք և կարող են օգտագործվել հայոց պատմության տվյալ ժամանակաշրջանի մի շարք հարցերի ուսումնասիրման համար:

Մուուգես Փերմըլին ևս իր գրքերի տարբեր հատվածներ նվիրել է հայերի անցյալ պատմությանը: «Կյանքի տեսարանները Արարատի լեռների շրջանում» աշխատության 10-րդ գլուխը վերնագրված է «Հայերը»: Հեղինակը նշում է, որ այս գլուխը շարադրելու համար մեծապես պարտական է մեկ այլ միսոներ՝ վերապատվելի Վիլիամ Քլարկի (William Clark) «The New Englander» ամսագրում տպագրած հոդվածաշարին (**Clark W., 1863**): Այս գլխում հեղինակը խիստ համառոտ անդրադառնում է հայ ժողովրդի ծագմանը, անցյալին ու ներկա իրավիճակին: Վերջինս նշում է, որ ներկայում էլ հայերն ունեն «...լավ մտավոր կարողություններ, ձեռներեց են ու էներգիայով լեցուն» (**Parmelee Payton M., 1868**):

Ամերիկացի միսոներներին Հայաստանը հետաքրքրում էր նաև աստվածաշնչյան պատմությունների, երկրային դրախտի, Արարատին և

քրիստոնեական այլ սրբազան վայրերին հաղորդակից լինելու տեսանկյունից: Մոուզես Փերմըլին ևս իր նկարագրություններում հաճախ զուգահեռներ է անցկացնում իր այցելած կամ տեսած վայրերի և դրանց աստվածաշնչյան տարբերակների միջև (**Parmelee Payton M., 1868**):

Իր «Տունն ու աշխատանքը Եդեմի գետերի մոտ» (Home and work by the rivers of Eden) գրքի ներածական մասում հեղինակը նշում է, որ իր նպատակն է տալ տեղեկություններ այն շրջանի վերաբերյալ, որը հավանաբար համարվում է «մարդկության օրրանը», իսկ առաջին գլուխը վերնագրված է «Դրախտի գետերն ու տները»: Այստեղ հեղինակն անդրադառնալով Էրզրումին՝ համարելով, որ այն գտնվում էր երկրային դրախտին մոտ, քանզի նրանից ոչ հեռու սկիզբ են առնում աստվածաշնչյան երկրային դրախտի չորս գետերը: Էրզրումից ոչ հեռու է գտնվում նաև Նոյի տապանի հանգրվան Արարատը (**Parmelee Payton M., 1888**):

Գրքերը համեմված են նաև բնության տեսարանների և շրջակա միջավայրի գեղարվեստական բնույթի նկարագրություններում: Պետք է նշել, որ նման աշխատություններին հաճախ բնորոշ է շարադրանքի նման ոճը: Հավանաբար հաշվի է առնվել ընթերցողների պահանջմունքը, քանի որ նմանատիպ գրքերը հասցեագրված էին ընթերցող լայն շրջանակներին: Ամերիկացի ընթերցողին միայն փաստերով և վիճակագրական տեղեկություններով լեցուն աշխատությունները քիչ ծանոթ կամ գրեթե անծանոթ երկրների և ժողովուրդների մասին պակաս հետաքրքիր կլինեին:

Պատմագիտական տեսակետից արժեքավոր են այն աշխատությունները, որտեղ ավելի մեծ տեղ են հատկացված ականատեսի տեսած ու արձանագրած փաստերին ու իրադարձություններին և ավելի սակավ են գեղարվեստական զեղումները: Ցավոք, իր գրքերում Մոուզես Փերմըլին երեբեմն որպես կանատես չի հայտնում շատ կարևոր մանրամասներ, ի տարբերություն նմանատիպ շատ աշխատանքների, որն անշուշտ ավելի կբարձրացներ դրանց աղբյուրագիտական արժեքը:

Հեղինակի երկու գրքերում էլ առկա են նկարներ, որտեղ պատկերված են տարբեր քաղաքների ընդանուր տեսարաններ, տարբեր ազգությունների

ներկայացուցիչներ, աշխատանքային գործիքներ, Օսմանյան կայսրությունում տարածված փոխադրամիջոցներ և այլն:

Հաշվի պետք է առնել նաև այն, որ միսիոներներն իրադարձություններն ու երևույթները նկարագրում և վերլուծում էին իրենց սեփական կրոնադավանական պատկերացումների և ընկալումների տեսանկյունից:

Այս գրքերում հանդիպում են նաև վրիպակներ ու փաստակն սխալներ, իրադարձություններն ու փաստերը, հատկապես հայոց եկեղեցու և դավանանքին վերաբերող հատվածները, շարադրված են բողոքական աշխարհակալման տեսանկյունից:

* * *

Միսիոներ Մոուզես Փեյսն Փերմըլի Օսմանյան կայսրության մայրաքաղաք է ժամանում 1863 թ. հուլիսին (**Parmelee Payton M., 1868**): Հեղինակի «Կյանքի տեսարանները Արարատի լեռների շրջանում» գրքի առաջին երկու գլուխները նվիրված են իրենց ժամանմանը և Կոստանդնուպոլսի համառոտ նկարագրությանը (**Parmelee Payton M., 1868**): Ժամանումից անմիջապես հետո, հեղինակը, չնայած Պոլսի գեղեցկությանն ու հետաքրքրությանը, շտապում է շարունակել իր ճամփորդությունը դեպի Արարատյան լեռների շրջան, որն իր աշխատության նկարագրությունների հիմնական նպատակն է հանդիսանում:

Շուտով նրանք շոգենավով ժամանում են Տրապիզոն, այնտեղից էլ ցամաքային լեռնային ճանապահրներով ուղեկցորդների ուղեկցությամբ հասնում են Էրզրում՝ ճանապարհին անցնելով Բաբերդով (**Parmelee Payton M., 1868**):

Առաջին ամերիկացի միսիոներները, որոնք 1830 թ. եղել էին Էրզրումում, վերապատվելիներ Սմիթն ու Դույթն էին (**Հովհաննիսյան Է., 2024**): Այստեղ դեռևս 1839 թ. գործում էր ամերիկյան բողոքական միսիոներական կայան (**Parmelee Payton M., 1868**), որի ներկայացուցիչները դիմավորում են Մոուզես Փերմըլին և իր կնոջը՝ տրամադրելով համապատասխան կացարան: Էրզրումի միսիոներական կայանի գործունեությունը ժամանակավորապես դադարեցվել էր Ղրիմի պատերազմի շրջանում և կրկին վերականգնվել 1862 թ. (**Parmelee Payton M., 1868**):

Էրզրումը հանդիսանում էր Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում ամերիկացի բողոքականների հիմնական կայանը, որտեղից էլ վերջիններս իրականացնում էին իրենց քարոզչությունը հայերի շրջանում:

Իր երկու աշխատություններում Մուուգես Փերմըլին հաճախակի է անդրադառնում Էրզրումին ու նրա հասարակական, տնտեսական կյանքին: Իր առաջին գրքում հեղինակը նկարագրում է Էրզրումի խստաշունչ կլիմայական պայմանները՝ այն համարելով. «... ամենաառողջարար կլիման աշխարհում» (**Parmelee Payton M., 1868**):

Վերջինս նկարագրում է Էրզրումի բերդի անառիկ պարիսպները՝ նշելով որ անգամ հրազենի և հրանոթի կիառման պայմաններում դրանք բավականին ամուր էին անհրաժեշտ դիմադրության համար: Անդրադարձ է կատարում քաղաքի տներին, դրանց կառուցվածքին, բակերին ու ներքին հարդարանքին, ավանդական թոիրին ու դրա գործածությանը, լավաշի պատրաստմանը և առհասարակ տեղի հայերի առօրյա կյանքին (**Parmelee Payton M., 1868; 1888**): Քանի որ տների տանիքները հարթ էին և հողով պատված, գարնանը դրանք պատվում էին կանաչով և ամբողջ քաղաքը ստանում էր կանաչ գույն: Հարթ տանիքներ չունեին քաղաքի միայն մի քանի շենքեր՝ 2-3 եկեղեցի և փաշայի պալատը:

Էրզրում քաղաքում էր կենրոնացած տարածաշրջանի ողջ առևտուրը: Հեղինակն անդրադառնում է քաղաքի առևտրային կյանքին, Էրզրումի արևելյան տիպի շուկաներին, այնտեղ տիրող մթնոլորտին, վաճառվող ապրանքներին և այլն (**Parmelee Payton M., 1868**): Քաղաքի շուկաներում էին գտնվում տարբեր արհեստանոցներ, շրջակա գյուղերից գյուղացիներն այստեղ էին բերում իրենց ապրանքերը փոխանակման համար, քաղաքի շուկաներում էր կատարվում նաև դրամափոխանակումը:

Էրզրումի մասին անդրադարձները բավականին շատ են նաև հեղինակի երկրորդ գրքում՝ «Տունն ու աշխատանքը Եդեմի գետերի մոտ»: Այստեղ հեղինակը ներկայացնում է նաև Էրզրում և Կարին անվանումների ստուգաբանությունները (**Parmelee Payton M., 1888**):

Մոուզես Փերմըլին մեջբերումներ անելով Էրզրումի անգլիացի հյուպատոսի «Whiffs from Ararat» հոդվածից՝ անդրադառնում է նաև տեղի երկրաշարժերին (**Parmelee Payton M., 1888**):

Հեղինակի հավաստմամբ 1870-ական թթ. սկզբներին Էրզրումն ունեցել է մոտ 60 հազար բնակիչ: Քաղաքի և շրջակա շուրջ հարյուր գյուղերի համար գործել են 3 ամերիկացի միսիներներ (**Parmelee Payton M., 1888**): 1879 թ. դրությամբ Էրզրում քաղաքի բողոքական համայնքի թիվն հասնում է 150-ի (**Parmelee Payton M., 1888**):

Էրզրումում միսիոներները բացել էին դպրոց տղաների համար, որտեղ պատրաստում էին քարոզիչներ: Աշակերտները ուսման ընթացքում կիրակի օրերին մեկնում էին հարևան գյուղերը քարոզչություն անելու: Մոուզես Փերմըլի վկայությամբ վերջիններս գյուղերում հաճախ հանդիպում էին ագրեսիվ վերբերմունքի: Էրզրումի միսիոներների դպրոցի համար շուտով կառուցվում է սեփական շենք (**Parmelee Payton M., 1888**):

Միսիոներներին անգլիացի հյուպատոսի աջակցությամբ հաջողվում է տեղի բողոքական եկեղեցուն կից կառուցել զանգակատուն, թեև թուրքերը դեմ էին և որպես կանոն չէին թույլատրում զանգեր հնչեցնել եկեղեցիներում (**Parmelee Payton M., 1888**):

Էրզրումն անստիճանաբար վերածվում է կարևոր միսիոներական կենտրոնի: 1864 թ. հունիսին Էրզրումում տեղի է ունենում Արևելյան Թուրքիայի միսիայի բողոքական միսիոներների ժողով, որին ներկա են գտնվում տարբեր քաղաքներից միսիոներներ իրենց ընտանիքներով: Նման ժողովներ տեղի էին ունենում ամեն տարի տարբեր քաղաքներում (**Parmelee Payton M., 1868**): Ժողովին քննարկվել են տարբեր հարցեր իրենց առաքելության արդյունավետ կազմակերպման ուղղությամբ: Քննարկվող հարցերից մեկն էլ հանդիսացել է, արդյոք իրենք պետք է կրոնական գրականությունը վաճառեն թե անվճար նվիրեն: Վերջինիս վկայությամբ անվճար նվիրվող գրքերը տեղացիների կողմից հաճախ օգտագործվում էին որպես թուղթ, ուստի որոշվում է, որ դրանք պետք է վաճառվեն: Քննարկվում է տեղացի հովիվներին ու քարոզիչներին կրթելու հարցը:

Քննարկվում է նաև ամերիկացի միսիոներների կողմից հիմնադրված եկեղեցիների ֆինասավորման խնդիրը և որոշվում է, որ աստիճանաբար պետք է այդ հարցը դրվի տեղացի բողոքական քրիստոնյաների վրա: Հեղինակը նշում է, որ որոշ ժամանակ անց Թուրքիայում գործող բողոքական եկեղեցիները արագորեն դարձան անկախ, այսինքն նրանք այլևս ֆինանսական կախվածություն չունեին ամերիկացի միսիոներներից և պահվում էին ձևավորված բողոքական համայնքների հաշվին (**Parmelee Payton M., 1888**):

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի սկզբին ևս Սոուդես Փերմըլին գտնվել է Էրզրումում: Այդ ժամանակ տեղի բողոքական միսիան բաղկացած է եղել 16 անձից, որից 13-ը եղել են կանայք և երեխաներ: Պատերազմի պատճառով վերջիններս տեղափոխվում են Տրապիզոն: Էրզրումում մեկական միսիոներ պետք է հերթափոխեր պատերազմի ընթացքում (**Parmelee Payton M., 1888**):

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի, ռուսների կողմից Էրզրումի գրավման մասին տեղեկությունները ևս տեղ են գտել Փերմըլիի երկրորդ գրքում (**Parmelee Payton M., 1888**):

Բողոքական միսիոներները, որպես կանոն, իրենց աշխատություններում և զեկուցագրերում մեծ տեղ էին հատկացնում հայոց եկեղեցուն: Սոուդես Փերմըլին ևս իր գրքերի մի քանի գլուխներ նվիրել է հայոց եկեղեցուն, նրա ծիսակարգին, տոներին, նվիրապետական համակարգին (**Parmelee Payton M., 1868**):

Ինչպես մյուս միսիոներների պարագայում, այստեղ ևս հանդիպում ենք քննադատական, երբեմն էլ քամահրական և կոպիտ արտահայտությունների եկեղեցական համակարգի և հայ հոգևորականների հասցեին (**Parmelee Payton M., 1868**): Հեղինակն առաքելական դավանանքն համարում է. «...անահավատ և կռապաշտ կրոն, որը սխալմամբ անվանվել է Քրիստոնեություն» և իր առաքելությունն է համարում դրա դեմ պայքարելը (**Parmelee Payton M., 1868**):

Որպես ականատես վերջինս նկարագրում է Էրզրումի հայկական եկեղեցում Սուրբ ծննդյան արարողությունը: Եկեղեցում արարողությունների ժամանակ կանանց և տղամարդկանց համար առանձնավցած են եղել առանձին հաստիակներ:

Նրա հավաստմամբ Էրզրումի հայկական եկեղեցին եղել է քաղաքի ամենամեծ շինությունը (**Parmelee Payton M., 1868**):

Մոուզես Փերմըլին նկարագրություններում կարևոր տեղ են զբաղեցնում տեղացիների առօրյա կյանքին ու կենցաղին անդրադարձները:

Միսիոներները հաճախ էին իրականացնում տարբեր ուղևորություններ դեպի Էրզրումի շրջակա գյուղեր, ինչպես նաև կայսրության արևելյան նահանգների մի շարք քաղաքներ: Այդ այցերը հետապնդում էին թե՛ քարոզչական և թե՛ ճանաչողական նպատակներ: Հեղինակը հավաստմամբ, թեև դեպի Արևելյան Հայաստան կատարած գաղթին, Էրզրումի գյուղերի մեծ մասը շարունակում էին մնալ հայաբնակ (**Parmelee Payton M., 1868**): Տեղացիները հիմնական զբաղմունքը շարունակում էր մնալ գյուղատնտեսությունն ու անասնապահությունը (**Parmelee Payton M., 1868**):

Գյուղական տները գրեթե ունեին գրեթե նույն կառուցվածքն ինչ Քսենոֆոնի նկարագրած ժամանակներում: Մարդիկ ապրում էին ընտանի կենդանիների հետ մեկ հարկի ներքո: Միսիոներներին այցերից մեկի ժամանակ հյուրասիրում են սուրճ և շաքար: Ընթրիքի սեղանը ավելի քան պարզ էր, հյուրասիրում են լավաշ, պանիր, ինչպես նաև մածուն: Սեղանին դրված չի եղել անգամ պատառաքաղ ու գդալ: Հյուրերը մածունը կերել են տեղացիների նման՝ լավաշով ուղղակի ընդանուր ավսեից (**Parmelee Payton M., 1868**):

Հեղինակն հաճախ է անդրադառնում հայկական ամուսնաընտանեկան սովորույթներին, հայկական նահապետական ընտանիքներին: Վերջինս նշում է, որ հայերի շրջանում տարածված էր վաղ տարիքից երեխաների նշանադրությունն ու ամուսնությունը: Աղջիկների դեպքում ամուսնության տարիքը երբեմն հասնում է 10-11 տարեկանը: Տարածված էր նաև ավելի վաղ տարիքում նշանադրելու սովորույթը: Մոուզեսը փաստում է, որ հայերը ավելի կարևորություն տալիս էին տղա երեխաներին: Վերջինիս պնդմամբ, երբ որևէ մեկին հարցնում ես, թե քանի երեխա ունի, որպես կանոն նշում են տղա երեխաների թիվը: Գրեթե բոլոր հայկական գյուղերում կային դպրոցներ տղաների համար, իսկ աղջիկների համար դրանք հազվադեպ էին: Հեղինակի հավաստմամբ միսիոներների ջանքերով

աղջիկների կրթության նկատմամբ հետքերը սկսեց աստիճանաբար աճել, ինչպես նաև հասարակության մեջ շատ նահապետական սովորույթների սկսեցին նահանջել (**Parmelee Payton M., 1868**):

Հեղինակը նկարագրում նաև բազմաթիվ այլ սովորույթներ: Դրանցից մեկի համաձայն օրինակ նորածին աղջկա ճակատին կամ վզին շղթայի վրա ամրացվել են ոսկե մետաղադրամներ, որոնք ընթացքում ավելացվել են: Հետագայում դա դառնել է աղջկա օժիտի մի մասը, որն անգամ իր ապագա ամուսինը որևէ դեպքում չէր կարող վերջնել կնոջից: Հեղինակի վկայությամբ կանայք դրանք պահպանում էին այրիանալու կամ այլ դժբախտությունների ժամանակ օգտագործելու նպատակով: Կանայք կարող էին նաև չստորագրել տան վաճառքի փաստաթղթերը՝ դրանով կանխելով գործարքը (**Parmelee Payton M., 1888**): Այս ամենը հետաքրքիր փաստեր են, որոնք վկայում են հայկական հայրիշխանական բնույթի ընտանիքներում կանանց ամրագրված որոշակի իրավունքների մասին:

Հեղինակի դիտարկմամբ Պոլսում հայ կանայք ավելի առաջադեմ էին, կրթված և հասարակական կյանքում ունեին ակտիվ դերակատարում, հագնում էին եվրոպական հագուստներ: Եվրոպական հագուստները տարածված էին նաև Տրապիզոնի հայ կանանց շրջանում: Սակայն ներքին գավառներում դրությունը մի փաթիլ այլ էր: Անգամ Էրզրումում կանայք միայնակ փողոց դուրս չէին գալիս, շուկա չէին գնում, կրում էին հատուկ հագուստ (ehram), որը փակում էր կանաց դեմքը, բացի աչքերից: Մոռուգես Փերմըլիի վկայությամբ գյուղական վայրերում կանայք ոչ միշտ էին դեմքերը ծածկում, բացառությամբ նշանվածների կամ նոր ամուսնացածների: Սակայն վերջիններիս ազատությունները շատ ավելի սահմանափակ էին, քան քաղաքայիններիս (**Parmelee Payton M., 1888**):

Խուսում է կանանց կրթության ուղղությամբ միսիոներենի իրականացրած ջանքերի մասին: Մոռուգես Փերմըլիի հավաստմամբ այդ ջանքերը ոչ միայն ուղղակի, այլ նաև անուղղակի հետևանքներ ունեցան: Այդ տարիներին հայոց եկեղեցին ևս սկսում է ուշադրություն դարձնել կանանց կրթության հարցերին և Էրզրումում բացվում է աղջիկների դպրոց, որի համար հետագայում առանձին շենք

է կառուցվում, ուր ուսանում էին ավելի քան հարյուր աղջիկներ (**Parmelee Payton M., 1888**):

Մոուզեսը հետաքրքիր մանրամասներով նկարագրում է նաև հայկական հարսանիք, որին անձամբ ներկա է եղել (**Parmelee Payton M., 1868**):

Բողոքական քարոզիչը քննադատելով մի շարք նահապետական սովորույթներ, որոնք պահպանվել էին հայերի շրջանում, գովաբանում է դրանցից մեկը, երբ որդիները պարտավոր էին հոգ տանել իրենց տարեց ծնողների նկատմամբ (**Parmelee Payton M., 1868**):

Մոուզես Փերմըլին նկարագրում է նաև տեղացիների գերեզմաններն և թաղման ծեսերը: Վերջինս նշում է, որ Էրզրումը բոլոր կողմերից պատված էր քրիստոնեական և մահմեդական գերեզմանոցներով: Տեղի հայերի շիրմաքարերի վրա կամ խաչ էր քանդակված կամ էլ գառան գլուխ, որը խորհրդանշում էր «Աստծո գառ» հասկացությունը (**Parmelee Payton M., 1868**):

Մոուզես Փերմըլիի գրքերը պարունակում է ազգագրական բնույթի բազմաթիվ այլ հետաքրքիր նյութեր: Կան առօրյա կյանքի բազմաթիվ դրվագների նկարագրություններ, ուտելիքի պատրաստման, սեղան նստելու, հյուրասիրության, բաղնիք այցելության, ազգային տոների, տոմարի (**Parmelee Payton M., 1888**) և այլն:

Միսունները իրենց հետ բերում էին նաև կենցաղին վերաբերող նորամուծություններ: Մոուզես Փերմըլիի հավաստմամբ միսունների միջոցով Էրզրումում հայտնվեցին և սկսեցին պատրաստվել առաջին թիթեղյա վառարանները, կիրառվել անագե կենցաղային իրեր, վերջիններս սկսեցին լայնորեն կիրառել նաև ապակիներ պատուհանների համար (**Parmelee Payton M., 1888**):

Ինչպես արդեն նշվեց, մսիսիոներական գործունեության բերումով Մոուզես Փերմըլին այցելում է նաև Արևմտյան Հայաստանի և շրջակայքի մի շարք քաղաքներ ու բնակավայրեր և հաղողում կարևոր տեղեկություններ:

Նման այցերից մեկի ժամանակ վերջինս լինում է Արաբկիրում և Հարպուտում²: Հեղինակն Արաբկիրը համարում է շատ գեղեցիկ քաղաք, որտեղ, ի տարբերություն Էրզրումի, տները միմյանց կպած չէին, այլ կառուցված էին առանձին-առանձին, ունեին սեփական այգի, որտեղ հիմնական ծառատեսակը թթենին էր: Քաղաքը շրջապատված էր այգիներով և հեռվից նման էր անտառի, սակայն Էրզրումի համեմատ այնտեղ ավելի շոգ էր (**Parmelee Payton M., 1868**): Արաբկիրում միսոներները ակտիվ գործունեություն էին իրականացնում, արդեն ձևավորվել էր բողոքական համայնք, կառուցվել էր երկու մատուռ և դպրոց: Ամերիկացի միսիոներներն արդեն հեռացել էին քաղաքից՝ իրենց գործը թողնելով տեղում ձևավորված համայնքի ներկայացուցիչներին (**Parmelee Payton M., 1868**): Միսոներները բավականին հաջողություններ էին արձանագրել նաև Խարբերդում, որտեղ բողոքական քարոզիչներ պատրաստող կրոնական դպրոցից բացի, հիմնվել էր նաև աղջիկների համար դպրոց (**Parmelee Payton M., 1868**):

Կնոջ առողջական խնդիրներով պայմանավորված Մոուզես Փերմըլին 1866 թ. աշնանը ընտանիքով ժամանակավոր տեղափոխվում է Տրապիզոն: Այստեղ գտնվելու ընթացքում վերջինս նավակով ուղևորություններ է կատարում Տրապիզոնից ոչ հեռու ծովեզրին գտնվող մի քանի քաղաքներ՝ Կերասուն, Օրդու և կրկին տրամադրում տեղեկություններ այդ քաղաքների վերաբերյալ (**Parmelee Payton M., 1868**): Միսիոներների քարոզչության արդյունքում առաջին բողոքական համայնքները ձևավորվել էին նաև Սև ծովի առափնյա բնակավայրերում ապրող հույների շրջանում (**Parmelee Payton M., 1888**): Ամերիկացի բողոքական միսիոներների առաջին կայանը Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում հիմնադրվել էր հենց Տրապիզոնում 1835 թ. և հիմնականում նպատակ ուներ գործել հայերի շրջանում: 1877 թ. դրությամբ քաղաքի 40 հազար բնակիչներից 3 հազարը հայեր էին, հույների թիվը մոտ 7 հազար էր (**Parmelee Payton M., 1888**):

² Խոսքը Խարբերդի մասին է:

Դեպի Պարսկաստանի սահման կատարած այցի ընթացքում հեղինակը հայկական գյուղերից բացի այցելում է նաև քրդական գյուղեր: Մոուզես Փերմըլին տեղեկացնում է, որ իրեն հայտնի է, որ Աստվածաշունչը թարգմանվել էր հայատառ քրդերենով, ոչ միայն քրդերի շրջանում քրիստոնեությունը տարածելու, այլ նաև քրդախոս հայերի համար: Վերջինիս հավաստմամբ քրդական որոշ շրջանակներ անգամ պատրաստ են եղել հետևել բողոքականությանը, որն ավելի շատ հետապնդել է քաղաքական նպատակներ (**Parmelee Payton M., 1888**):

Երբ այցելում են Բայազետ, ակնատես են լինում, որ քաղաքը մեծապես տուժել էր վերջին ռուս-թուրքական պատերազմից, իսկ բնակչության մի մասը գաղթել էր: Այստեղից միսիոներները ցանկանում են անցնել Ռուսական կայսրության սահմանը, սակայն վերջիններիս անձնագրերի վավերացված չլինելու պատճառով հնարավոր չի լինում դա անել (**Parmelee Payton M., 1888**):

Մոուզես Փերմըլին անցնում է նաև հայկական Պարտեզ քաղաքով, որը իր տաք կլիմայի պատճառով հարուստ էր մրքատու այգիներով (**Parmelee Payton M., 1888**): Վերջինիս տպավորում է նաև Կարսը: Նա միսիոներական գործունեության տեսակետից Կարսն համարում է «ստրատեգիական կետ», քանի որ այն ուներ մեծ թվով հայ բնակչություն և հանդիսանում էր Ռուսաստանին սահմանակից քաղաք (**Parmelee Payton M., 1888**): Նրա վկայությամբ Կարսն ունեցել է շուրջ 10 հազար բնակչություն, այնտեղ գործել է հայկական դպրոց և լիցեյ:

Մոուզես Փերմըլին 1870-ական թթ. սկզբներին Բիթլիս այցի ժամանակ նշում է, որ տեղի քրիստոնյաները հագնվում էին քրդերի պես, կրում նույն զենքերը և անգամ խոսում քրդերեն: Թեև հաճախ տեղի հայերը ճնշումների էին ենթարկվում քրդերի կողմից, սակայն, նրա վկայությամբ, երկու ժողովուրդներին հիմնականում հաջողվել էր ապրել կողք-կողքի խաղաղ պայմաններում (**Parmelee Payton M., 1888**): Բիթլիսում ևս գործել են բողոքական միսիոներներ և ձևավորվել էր բողոքական համայնք (**Parmelee Payton M., 1888**):

Բիթլիսից նա այցելում է Մարդին քաղաք, որտեղ մուսուլմանները հիմնականում արաբներ էին, իսկ քրիստոնյաները ասորիներ: Մոուզես Փերմըլին, հղում անելով Ամերիկյան խորհրդի «The missionary Herald» պաշտոնաթերթին,

նշում է, որ 1875 թ. դրությամբ Մարդին քաղաքն ունեցել է 16,386 բնակիչ, որից 3188-ը եղել են հայեր (**Parmelee Payton M., 1888**):

Մոուզես Փերմըլին լինում է նաև Վանում: Նրա բորոշմամբ վանեցիների տները, հագուստը, կենցաղն ու պահվածքը շատ ավելի բարձր ու քաղաքակիրթ էր, քան շատ այլ քաղաքների: Վանում ևս գործում էին ամերիկացի միսիոներներ, կար ձևավորված համյանք՝ իր եկեղեցիով ու դպրոցով (**Parmelee Payton M., 1888**):

Կարևոր է ընդգծել, որ միսիոներներին քաղաքից քաղաք իրենց ճամփորդությունների ընթացքում հիմնականում ուղեկցել են տեղական կառավարիչների կողմից տրամադրված զինված ոստիկան ուղեկիցները՝ զաբիթիները (zabiteh): Նրանք ունեցել են նաև իշխանությունների կոմից տրամադրված հատուկ գրություններ, որը ոչ միայն նպաստել է նրանց անվտանգ երթևեկին, այլ նաև այդ ընթացքում համապատասխան կացարանի և աջակցության տրամադրմանը (**Parmelee Payton M., 1888**): Այս ամենը ցույց է տալիս, որ միսիոներները Օսմանյան կայսրությունում վայելու էին պետական աջակցություն:

* * *

Ինչպես արդեն նշվել է, Մոուզես Փերմըլին իր երկու գրքերում էլ մեծ տեղ է հատկացնում միսիոներական գործունեության ներկայացմանը: «Տունն ու աշխատանքը Եդեմի գետերի մոտ» գրքի երկրորդ գլուխն ամբողջության նվիրված է դրան, իսկ յոթերորդ գլխում անդրադառնում է միասունների առօրյա պարտականություններին և կենցաղային կյանքին (**Parmelee M., 1888**):

Մոուզես Փերմըլիի հավաստմամբ 1868 թ. Էրզրումի միսիոներական կայանը վերկազմակերպվում է, նոր միսիոներներ են միանում Մոուզես Փերմըլիին, նախկինում տան մեջ գործող մատուռի փոխարեն նույն տեղում առանձին մատուռ է կառուցվում, որի կից սենյակներում ստեղծվում են դպրոցների՝ առանձին տղաների ու աղջիկների համար (**Parmelee Payton M., 1888**):

Վերջինիս գործունեության տարիներին Էրզրումում ու շջակայքում բողոքական աղոթարանների թիվը 5-ից հասել է 20-ի, իսկ հետևորդների թիվը 300-ից մոտ 1000-ի (**Parmelee Payton M., 1888**):

Միսիոներները հաճախ իրենց քարոզները հայերի շրջանում իրականացնել են թուրքերեն, սակայն նրանցից շատերը փորձել են սովորել հայերեն, որը կնպաստեր ավելի արդյունավետ աշխատանք իրականացնել հայերի շրջանում: Մոուզես Փերմըլին ինն ամիս տևած ջանքերից հետո կարողանում է կատարել իր առաջին հայերեն քարոզը: Երկու տարի տևած ջանքերից հետո է միայն նրան հաջողվում որոշակիորեն սովորել հայերեն, թեև իր իսկ պնդմամբ միսոներները լեզուն սկսում են սովորել առաջին օրից սկսած և երբեք էլ հնարավոր չի լինում այն կատարյալ տիրապետել (**Parmelee Payton M., 1868**):

Միսիոներները լայնորեն աշխարհաբար թարգանությամբ հրատարակում և տարածում էին նաև կրոնական գրականություն:

Մոուզես Փերմըլին «Կյանքի տեսարանները Արարատի լեռների շրջանում» գրքի 23-րդ գլխում, որը վերնագրված է «Հալածանքներ», անդրադառնում է բողոքականների նկատմամբ հալածանքներին: Այս ենթագլխի առաջին իսկ նախադասությամբ հեղինակը Թուրքիայում կրոնական ազատությունների վիճակը բնութագրում է «հիանալի» (**Parmelee M., 1868**): Ընթերցելով այդ հատվածը պարզ է դառնում, որ հեղինակը հալածանքներ ասելով նկատի ունի տեղացի առաքելական հայերի կողմից որոշակի բացասական վերաբերմունքը բողոքականություն ընդունած համաերկրացիների նկատմամբ: Այստեղ հեղինակը խոսում է բողոքականություն ընդունած Հովհաննես անունով մի գյուղացու նկատմամբ անհանդուրժողականության և միսիոներների ու թուրքական իշխանությունների աջակցությամբ նրա իրավունքների վերականգնման և պաշտպանության մասին (**Parmelee M., 1868**): Այս ամենը կրկին ցույց է տալիս, որ բողոքականության տարածումը Օսմանյան կայսրության տարածքում վայելում էր բարձր հովանավորչություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բողոքական միսիոներների առաջին այցից երեք տասնամյակ անց ամերիկացի բողոքական քարոզիչները հաստավել էին Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր խոշոր քաղաքներում և բազմաթիվ գյուղերում (**Parmelee M., 1888**)՝ ստեղծելով համայնքներ համախատասխան կառույցներով: 19-րդ դարի երկրորդ

կեսին Արևմտյան Հայաստանում, մասնավորապես Էրզրումի տարածաշրջանում, ակտիվ միախոնեռական գործունեություն է իրականացնում Մոուզես Փերմըլին: Վերջինս իր գործունեությունը նկարագրում է իր հեղինակած հուշագրական ժանրին պատկանող երկու գրքերում: Դրանցում հեղինակը հիմնական շեշտադրում է կատրում իր քարոզչական գործունեության ներկայացմանը, սակայն որպես ականատես հաղորդում է նաև հետաքրքրական տեղեկություններ 19-րդ դարի 60-70-ական թվականներին Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակի, արևմտահայության սոցիալ-տնտեսական, հոգևոր-մշակութային, կրթական կյանքի, սովորույթների, կենցաղի և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Մոուզես Փերմըլիի հեղինակած գրքերն ունեն որոշակի պատմագիտական արժեք 19-րդ դարի երկրորդ կեսի հայոց պատմության մի շարք հարցերի ուսումնասիրման հարցում: Սակայն աշխատանքում տեղ են գտել մի շարք փաստական սխալներ, դեպքերն ու իրադարձությունները ներկայացված և մեկնաբանված են հեղինակի կրոնական պատկերացումների տեսանկյունից: Հաշվի առնելով այս հանգամանքը Մոուզես Փերմըլիի գրքերը և դրանցում տեղ գտած որոշ փաստեր հայոց պատմության ուսումնասիրման աղբյուր կարող են հանդիսանալ քննադատական մոտեցում ցուցաբերելու պարագայում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Թուրիկեան Վ. (1998)**, Նոր յայտնություններ Հայաստանեայց ավետարանական եկեղեցիին հիմնադրութեան եւ հիմնադիր անդամներուն մասին, Հայկազեան հայագիտական հանդես, Հատոր ԺԸ, Պեյրութ, 1998, էջ 253-259:
2. **Հովհաննիսյան Է. (2024)**, Ամերիկացի բողոքական քարոզիչների առաջին ճամփորդությունը եւ ուսումնասիրությունները Հայաստանում 1830-1831 թթ., «Էջմիածին» կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր, Ս.Էջմիածին, ՁԱ տարի, համար Ա, էջ 120-132, (առաջին մաս), ՁԱ տարի, համար Բ, էջ 93-104, (երկրորդ մաս):

3. **Հովհաննիսյան Է. (2024)**, Ամերիկացի միսիոներ Հարիսոն Դուայթի հաղորդած տեղեկությունները Օսմանյան կայսրության հայության շրջանում բողոքականության տարածման վերաբերյալ, Հայագիտական հանդես, 2(65), էջ 237–285:
4. **Smith E., Dwight H. Gray Otis (1833)**, *Researches of the Rev. Eli Smith and Rev. Harrison Gray Otis Dwight in Armenia: Including a Journey Through Asia Minor, and into Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas*, in 2 vols., Boston: Crocker and Brewster, New York: Jonathan Leavitt ed.
5. **Arpee L. (1946)**, *A Century of Armenian Protestantism 1846-1946*, New York., Armenian Missionary Association of America ed.
6. **Parmelee A. Ruth (2002)**, *A pioneer in the Euphrates Valley*. Princeton & London: Gomidas Institute ed.
7. **Parmelee Payton M.(1868)**, *Life scenes among the mountains of Ararat*. Boston: Mass. Sabbath School Society ed.
8. **Parmelee Payton M. (1888)**, *Home and work by the rivers of Eden*. Philadelphia: American Sunday School Union ed.
9. **Clark W. (1863)**, Armenian history. *The New Englander*, 22 (July), pp. 507–529; (October), pp. 672–698.
10. **William E. S. (1910)**, *The Story of the American Board*, Boston: The Pilgrim Press ed.

REFERENCES

1. **Tootikian V. (1998)**, Nor yaytnowt'iwnner Hayastaneayc avetaranakan ekegheciin himnadrowt'ean ew himnadir andamnerown masin /New Data about the founding of the Armenian Evangelical Church and its founding members/, Haigazian Armenological Review, volume 18, Beirut, 1998, pp. 253-259.
2. **Hovhannisyan E. (2024)**, Amerikaci boghoqakan qarozichneri ar'ajin twamp'ordowt'yowny' ew owsowmnasirowt'yownnery' Hayastanowm 1830-1831

- t't'. /The first travel and researches of American Protestant missionaries in Armenia in 1830-1831/, "Etchmiadzin" Theological and Armenological Journal, Etchmiadzin, January, 2024, pp. 120-132, (part one), February, pp. 93-104, (part two).
3. **Hovhannisyan E. (2024)**, Amerikaci misioner Harison Dowayt'i haghordac' teghekowt'yownnery' O'smanyann kaysrowt'yan hayowt'yan shrjanownm boghoqakanowt'yan tarac'man veraberyal /The reported information of the American missionary Harrison Dwight about the spread of Protestantism among the Armenians of the Ottoman Empire/, Hayagitakan Handes, Yerevan, 2 (65), pp. 237–285.
 4. **Smith E., Dwight H. Gray Otis (1833)**, Researches of the Rev. Eli Smith and Rev. Harrison Gray Otis Dwight in Armenia: Including a Journey Through Asia Minor, and into Georgia and Persia, With a Visit to the Nestorian and Chaldean Christians of Oormiah and Salmas, in 2 vols., Boston: Crocker and Brewster, New York: Jonathan Leavitt ed.
 5. **Arpee L. (1946)**, A Century of Armenian Protestantism 1846-1946, New York., Armenian Missionary Association of America ed.
 6. **Parmelee A. Ruth (2002)**, A pioneer in the Euphrates Valley. Princeton & London: Gomidas Institute ed.
 7. **Parmelee Payton M. (1868)**, Life scenes among the mountains of Ararat. Boston: Mass. Sabbath School Society ed.
 8. **Parmelee Payton M. (1888)**, Home and work by the rivers of Eden. Philadelphia: American Sunday School Union ed.
 9. **Clark W. (1863)**, Armenian history. The New Englander, 22 (July), pp. 507–529; (October), pp. 672–698.
 10. **William E. S. (1910)**, The Story of the American Board, Boston: The Pilgrim Press ed.

**Information on Western Armenia and the Armenians Presented by the American
Protestant Missionary Moses Parmelee**

Conclusion

Key words and expressions: Moses Parmelee, American missionaries, Protestantism, Western Armenia, Armenians.

As a result of the missionary activities carried out by American Protestant missionaries, numerous Protestant communities were established in various settlements of Western Armenia during the 19th century. In the second half of the 19th century, Moses Payson Parmelee arrived in the Ottoman Empire intending to conduct missionary work among Western Armenians. He documented his activities in two volumes, published in the United States in 1868 and 1888, entitled *Life Scenes Among the Mountains of Ararat* and *Home and Work by the Rivers of Eden*, respectively.

In these works, the author primarily focuses on his missionary endeavors. In addition, they provide a wealth of valuable information concerning the social and cultural life, daily practices, customs, and various other aspects of Western Armenia and the Armenians. From this perspective, these publications hold significant historical and source-critical value for the study of the spread of Protestantism among Armenians, as well as for the investigation of numerous issues pertaining to 19th-century Armenian history.

This article examines the two aforementioned works. The study aims not only to assess their scholarly significance but also to highlight the subjective and ideological interpretations they contain, which are shaped by the author's theological perspectives and personal worldview.

Эдгар Оганнисян, Аветис Арутюнян

**Информация об Западной Армении и армянах, представленная американским
протестантским миссионером Моузесом Пармели**

Заключение

Ключевые слова и выражения: *Моузес Пармели, американские миссионеры, протестантское движение, Западная Армения, армянский народ.*

В результате миссионерской деятельности американских протестантских миссионеров в различных населённых пунктах Западной Армении в XIX веке сформировались многочисленные протестантские общины. Во второй половине XIX века Моузес Пейсон Пармели прибывает в Османскую империю с целью проведения миссионерской работы среди западных армян. Свою деятельность он описал в двух книгах, изданных в США в 1868 и 1888 годах, под названиями *Жизненные сцены среди гор Арарата (Life Scenes Among the Mountains of Ararat)* и *Дом и работа у рек Эдема (Home and Work by the Rivers of Eden)* соответственно.

В этих трудах автор в первую очередь представляет свою миссионерскую деятельность. Помимо этого, работы содержат множество ценных сведений о социальной и культурной жизни, быте, обычаях и ряде других аспектов Западной Армении и армян. С этой точки зрения, данные работы имеют значительную историко-научную и источниковедческую ценность для изучения истории распространения протестантизма среди армян, а также для исследования ряда вопросов истории армян XIX века.

В данной статье рассматриваются указанные две книги. Делается попытка не только оценить их значимость, но и выявить субъективные и идеологические интерпретации, содержащиеся в них, которые обусловлены теологическими взглядами и представлениями автора.

Էդգար Հովհաննիսյան - Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ պատմության և հասարակագիտության ֆակուլտետի դեկան, պ.գ.թ., դոցենտ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայկական սփյուռքի պատմություն, Հայաստան-Սփյուռք հարաբերություններ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պատմության

հարցեր: Հեղինակ է շուրջ յոթանասուն գիտական հրապարակումների:
hovhannisyanedgar16@aspu.am

Ավետիս Հարությունյան- պատմական գիտությունների թեկնածու, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ ի Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնակատար: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է՝ Առաջին աշխարհամարտ, հայ գաղթակա-նություն, Հայոց եղասպանություն, Վասպուրականի պատմություն, Հայաստանի պատմական աշխարհագրություն: Հեղինակ է 3 մենագրության, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, պարսկերեն, հունգարերեն և գերմաներեն լեզուներով հրատարակված շուրջ 200 գիտական հոդվածների, գիտամեթոդական 3 ժողովածուների (համահեղինակությամբ), Հայոց եկեղեցու պատմության 10-րդ դասարանի դասագրքի (համահեղինակությամբ), avharutunyan@mail.ru

Эдгар Оганнесян - Декан факультета истории и общесоведения наук АГПУ им. Х. Абовяна, кандидат исторических наук, доцент. Сфера научных интересов: История армянской диаспоры, взаимоотношения Армения-Диаспора, История Католикосата Великого Дома Киликийского. Является автором около семидесяти научных публикаций. hovhannisyanedgar16@aspu.am

Ավետիս Արությունյան – К. и. н., профессор кафедры истории Армении Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна. Научные интересы: Первая мировая война, армянская эмиграция, Геноцид армян, история провинции Ван, историческая география Армении. Является автором 3-х монографий, около 200 научных статей, опубликованных на армянском, русском, английском, французском, персидском, венгерском и немецком языках, а также 2-х учебно-методических сборников (в соавторстве), учебника школы 10-го класса по истории Армянской церкви (в соавторстве, avharutunyan@mail.ru)

Edgar Hovhannisyan - Dean of the Faculty of History and Social Sciences of the Armenian State Pedagogical University, PhD, Associate Professor. Scientific interests: History of the Armenian Diaspora, Armenia-Diaspora relationship, History of the

Catholicosate of the Great House of Cilicia. He is the author of about seventy scientific publications. hovhannisyanedgar16@aspu.am

Avetis Harutyunyan – Candidate of historic sciences, professor at the Chair of the History of Armenia at the State Pedagogical University after Kh. Abovyan. Scientific interests: First World War, Armenian emigration, Armenian Genocide, history of Van province, historical geography of Armenia. He is the author of 2 monographs, about 200 scientific articles published in Armenian, Russian, English, French, Persian, Hungarian, and German languages, as well as 2 teaching methodical and teaching aid collections (co-authored), a 10th grade school textbook on the history of the Armenian Church (co-authored), avharutunyan@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 04.12.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 16.12.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀՐԱՆՏ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱԿԱՊԵՏԱԿԱՆ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՆՇՈՒՄԸ ՀՀ ԶԱՆԳԻԲԱՍԱՐԻ,
ԲՈՅՈՒՔ-ՎԵԴԻԻ, ԴԱՎԱԼՈՒԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ, ՍՈՒՐՄԱԼՈՒԻ ԳԱՎԱՌՈՒՄ
1918-1920 ԹԹ.¹

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.211

ԱՍՓՈՓՈՒՄ

Ադրբեջանի կողմից ուղղորդվող մահմեդաբնակ շրջանների խռովարարական տրամադրությունների հաղթահարումը, օրինականության և կարգ ու կանոնի հաստատումը եղել է Առաջին հանրապետության սուվերեն իրավունքների ապահովման, նրա հետագա գոյության կարևոր գրավականներից: Եվ միայն բանակցարնթացքը փակուղի մտնելուց և միջպետական ուղիներով հնարավորությունները սպառելուց հետո կառավարությունը դիմեց ռազմական ուժի և վերահաստատեց ՀՀ իշխանությունների լիազորությունները Զանգիբասարում, Վեդիբասարում, Սուրմալում և այլ շրջաններում:

Բանալի բառեր և արտահայտություններ. Զանգիբասար, Վեդիբասար, Սուրմալու մահմեդաբնակ, հակապետական-հակահայկական ելույթներ, Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջան:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1918 թ. անկախ հռչակված Հայաստանի Հանրապետությունը բախվեց մահմեդաբնակ Զանգիբասարի, Վեդիբասարի և այլ շրջանների բնակչության հակահայկական-հակապետական գործողությունների հետ, որոնք աջակցվում էին Ադրբեջանի և Թուրքիայի կառավարությունների կողմից: ՀՀ կառավարության

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բարձրագույն կրթության և Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Գիտական ծրագիր N 25RG-6A113).

գործադրած ջանքերի շնորհիվ, սպառելով հակամարտության հանգուցալուծման հաղաղ միջոցները, ՀՀ զինուժի ջանքերով կանխվեց ՀՀ տարածքի այդ հատվածների բռնակցումը Ադրբեջանին, իսկ մահմեդական բնակչությունը համակերպվեց և ենթարկվեց Հայաստանի օրինական իշխանություններին:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Գիտական հետազոտությունն կատարվել է արխիվային փաստաթղթերի, գրականության տվյալների և այլ վավերագրերի հիման վրա՝ իրագործելով իրադարձությունների պատմաքննություն՝ հենվելով պատմահամադրական, համեմատական մեթոդների վրա:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Թեմայի դիտարկումը վերաբերում է հայկական պետության կայացման 1918-1920 թթ. դասերի վերհանմանը, ՀՀ իրագործած միջոցներին մահմեդաբնակ Զանգիբասարի, Վեդիբասարի և այլ շրջանների խռովարարական տրամադրությունների հաղթահարման և ՀՀ իշխանությունների օրինական լիազորությունների վերահաստատմանը: Ռ. Հովհաննիսյանը նշում է. «Հայաստանի Հանրապետությունը երբեք չձեռքազատվեց թշնամական շրջապատման ուրվականից: Մի քանի միլիոն մահմեդականներ բնակվում էին Թուրքիայի և Ադրբեջանի հարևան նահանգներում և այդ երկու երկրների միջև. Հայաստանի հարավային միջնաշխարհում ևս 300.000-ը՝ թուրք-թաթարներ, տիրում էին Արաքս գետի հովտին: Թեև հայերի թիվը Երևանի նահանգում ամբողջությամբ վերցրած, կրկնակի շատ էր, թաթարները գերակշռում էին գյուղական շրջանների մեծ մասում և հիմնականում հաղորդակցության ու փոխադրության ճանապարհներին, ինչպես և մեծամասնություն էին կազմում Սուրմալուի, Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի հարավային գավառներում» (Հովհաննիսյան Ռ. 2005; Կնյազյան Դ. 2008; Ղուլյան Յու., 2011, N 1):

1919 թ. հունվարին հայկական զորքերը գրավեցին Սուրմալուի ամբողջ գավառը և Շարուր-Դարալագյազի այն մասը, որ գտնվում էր թուրքերի ձեռքին ու տեղում հաստատեցին հայկական իշխանություն («Մշակ» 1919, հունվարի 3): 1919 թ. հունվարին հայկական զորքերի ձեռնարկած գործողությունների հետևանքով

հպատակություն հայտնեց նաև Բոյուք-Վեդի թուրքաբնակ գյուղը՝ ընդունելով կառավարության պահանջները: Շուրջ 2000 տուն ունեցող թուրքաբնակ գյուղի հնազանդեցումը որոշ ժամանակով հնարավորություն ստեղծեց նրանցից մթերքներ ստանալ (**Ղուլյան Յու., 2009**): Սակայն առերես ընդունելով ՀՀ իշխանությունը, նրանք այլ մտադրություն ունեին, հակառակվեցին զինաթափմանը՝ հանդես չբերելով իշխանությանը ենթարկվելու ռեալ տրամադրություն և հրաժարվելով հարկերի վճարումից (**«Զանգ» 1919, հունվարի 31**):

1918-1920 թթ. մահմեդական ընդվզումների դեմ պայքարի առումով զգալի խնդիրներ կուտակվեցին Զանգիբասարում (ներկայիս Մասիսի շրջանը) և հարակից շրջաններում, որը ընկած էր Զանգու գետի ստորին հոսանքում՝ Երևանի մոտ գտնվող Չարբախ գյուղից մինչև Արաքս գետը ընկած ընդարձակ հարթավայրային տարածքը՝ կազմված Ատրպատականից ներթափանցած մահմեդական բնակչություն ունեցող 15 գյուղերից (**Ղուլյան Յու. 2011. N 1**):

Ադրբեջանի առաջնորդները բացահայտ օգտվում էին Թուրքիայի պաշտոնական և ոչ պաշտոնական աջակցությունից, ինչի մասին վկայում է Տ. Դեվոյանցը Փարիզ՝ գեներալ Գ. Ղորղանյանին ուղարկված 1919 թ. հոկտեմբերի 28-ի զեկուցագրում (**Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն), թիվ 17/ 17, պահ. 12, դ. 3, թ. 75**): Տ. Դեվոյանցը ստեղծված իրավիճակը հստակ է ներկայացնում. «Բայց թիկունքում, Զանգիբասարի մեջ՝ Իգդիրի շրջանի, Ղամարլուի եւ Շարուր-Նախիջեւանի սահմանների մօտ, դրուֆիւնը աւելի լուրջ կերպարանք ստացաւ: Զանգիբասարի մեջ միշտ կը գտնուէին տաճկական եւ Ազրբեյջանի գործակալներ եւ ղեկավարներ, որոնք կը կազմակերպէին ժողովուրդը, կը հայթայթէին նրանց Շարուր-Նախիջեւանի շրջանից Արաքսի վրայով զէնք եւ փամփուշտ: Այս թշնամական բոյնը, որի մեջ էին համախմբուում միշտ հարաւից եկող տաճկական եւ Ազրբեյջանի մարզիչները, գաղտնի կերպով ղեկավարուում էին Հայաստանի ազրբեյջանական ներկայացուցչի կողմից եւ իրենից ներկայացնում էր մի տեսակ ամբողջ, որը պետք է խաղար մեծ դեր այն դէպքում, երբ սկսուէր ընդհանուր պատերազմ մահմեդականների կողմից հայերի դէմ, որովհետեւ նա կը

գտնուէր պետութեան մայրաքաղաքի քթի տակ, շատ մօտիկ» (**Դեյէանց Տ. 1945; «Հայրենիք» (Բոստոն), N 5 (250), Սեպտ.- Հոկտ.**): Այդ իրադարձությունների սաղմնավորման հենց սկզբից հայկական հատուկ ծառայությունը բավականաչափ տեղեկացված է եղել թաթարների նախապատրաստությունների մասին, որի մասին է վկայում պոդպորուչիկ Մ. Դոդոխյանի կողմից վերծանված ծածկագիր զեկուցագիրը (1919 թ. մայիսի 23)՝ կազմված Ջանգիբասարի շրջանի պետ կապիտան Հարությունյանի տեղեկությունների վրա, որոնցում իրազեկվում էր թաթարական զորուժի տեղաշարժերի, զինվածության, Ջանգիբասարի Ազգային խորհրդին օժանդակելու համար այնտեղ հրավիրված 467 ասկյարների, Նախիջևան-Դավալու-Տաշքենդ-Իլիսի-Ղորուղի-Քերիմբեքլու հետախուսագծի մասին (**ՀԱԱ, ֆ. 290, ց. 2, գ. 30, թ. 1**): Այդ փաստաթուղթն ուղարկվում է վարչապետին ի գիտություն: Գնդապետ Ալ. Շնեուրը մինչև 1919 թ. մայիսի 24-ը ընդգրկող ժամանակահատվածին վերաբերող հետախուզական ամփոփագրում նշում է Բոյուք-Վեդիի և Կարաբագյարսկի (նաև՝ Կարաբագլիյար) թաթարների հաճախակի հարձակումների մասին հայկական զորամասերի վրա, որի մասին տեղեկացվում է անգլիական հրամանատարությանը (**ՀԱԱ, ֆ. 199, ց.1, գ. 73 (71), թ. 29**):

1919 թ. հուլիսի 1-ին Դավալուի մոտ մուսուլմանների կողմից սպանվում են 9 հայ զինվոր և 12 գյուղացի, Բոյուք-Վեդիի հնազանդեցման համար ուղարկված հայկական զորամասն ընկնում է ծուղակի մեջ և փաստացի գլխովին ոչնչացվում՝ տալով 35 սպանված և 127 վիրավոր, որն էլ դարձավ Բոյուք-Վեդիի մահմեդական ապստամբության պատճառը, որը կարճ ժամանակ անց զուգահեռաբար տարածվեց Շարուր-Նախիջևանում (**Զոհրաբյան Է. 2012**): Հարկադրված ՀՀ կառավարությունը դիմում է կտրուկ քայլերի և անգլիացիների հավանությունը ստանալուց հետո պատժիչ զորամաս ուղարկում Բոյուք-Վեդի (**ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 198, թ. 189; «Հառաջ» 1919, N 40, նոյեմբերի 6; «Наше время» 1919, N 154, օգոստոսի 10**): Այդուհանդերձ հայկական զինուժին չի հաջողվում ճնշել Բոյուք-Վեդիի ապստամբած մահմեդականներին, որը ցույց տվեց ՀՀ ռազմական անպատրաստությունը և թուլությունը, որից օգտվելով հուլիսի 19-ին մահմեդական բնակչության ընդհանուր ապստամբություն բռնկվեց, ՀՀ զորամասերը

նահանջեցին Չանգեգուր, խլրտումներ սկսվեցին Սուրմալուի, Էջմիածնի և Երևանի այլ գավառների մահմեդաբնակ բնակավայրերում և ըստ էության Հայաստանը երեք կողմից հայտնվեց շրջափակման իրավիճակում (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 133, թ. 173; «Слово» 1919, N 1, 10,13, 24, 31 августа; Զոհրաբյան Է., 2012):

ՀՀ հետախուզական բաժնի 1919 թ. հուլիսի 16-ի ամփոփագրում (N P 0309) Շնեուրը և Դեվոյանցը հաղորդում են Քյալբալայ Ասկյար Հաջի Աքփյար օղլու Թուրքիա մեկնելու մտադրության մասին՝ 10-15 հրետանավորներ բերելու համար, որ Բոյուք-Վեդիում կենտրոնացել են 5000 զինյալներ, այդ թվում 15 թուրք ասկյարներ և 2 հրահանգիչներ, ինչպես նաև 30 ադրբեջանական սպաներ, որ ամեն օր Ադրբեջանից ստանում են դրամ, ավելացնելով, որ Հաջի Աքփյարը ուղարկել է 500 հազար ռուբլի, ինչը հավաստում էր, որ այդ ամենի նպատակը ՀՀ կառավարությանը չենթարկվելն է, հրահրողը Ադրբեջանն էր (ՀԱԱ, ֆ. 199, ց.1, գ. 73 (71), թ. 99):

Ապստամբ գյուղերը Ադրբեջանի կառավարության կողմից հատուկ ուշադրության են արժանանում, որի ներկայացուցիչը Բոյուք-Վեդին Ադրբեջանի կազմում ընդգրկելու նպատակով բանակցություններ է վարում վարչապետ Ալ. Խատիայանի հետ, որը այն Հայաստանի ներքին հարց համարելով, գտնում է, որ այն երբեք Ադրբեջանին չի համարվել և մեկ-երկու բնակավայրի ինքնորոշման հարց չի կարող լինել: Ինքը՝ Խատիայանն անձամբ կողմ էր, որ բոյուք-վեդիները տեղափոխվեն Ադրբեջան և, Ադրբեջանի ներկայացուցչի համաձայնության դեպքում, պատրաստակամություն է հայտնում այդ հարցը ներկայացնել կառավարության քննարկմանը: Ադրբեջանի ծրագրերում Բեուք-Վեդիի կարևորությամբ էր թերևս պայմանավորված, որ Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Խան-Թեքինսկին պահանջում էր ամեն կերպ օգնություն հասցնել ապստամբ գյուղին («Յառաջ 1919, նոյեմբերի 11):

1919 թ. հուլիսի 18-ին Բոյուք-Վեդի գյուղի մոտ տեղի ունեցած արյունալի ընդհարումների և հայկական բանակի կրած ծանր կորուստներին է անդրադառնում Բաքվում ՀՀ դեսպան Տ. Բեկզադյանը, շեշտելով, որ Բոյուք-Վեդիի իրադարձությունների հետ կապված Բաքվում թաթարների կողմից դրսևորվում է

անբարյացակամ վերաբերմունք հայերի նկատմամբ, սադրիչ ճառեր են արտասանում ընդդեմ հայերի, որ այդ առիթով ինքը նամակով դիմել է Արտգործմինիստրին (**Բեկզադյան Ս., 2025**): Ըստ Ռ. Հովհաննիսյանի եզրահանգման, Ջանգիբասարի մուսուլմանական գյուղերը վճռական քայլերի էին դիմել՝ միավորվելու Արաքսի հովտի իրենց հավատակիցների հետ և դառնալու «Հարավարևմտյան Ադրբեջանի» մաս (**Hovannisian R. 1982, Vol. II**): Ամռանը, երբ անկարգությունները տարածվեցին Վեդիբասարից մինչև Ջանգիբասար, մահմեդական սադրիչները կազմաքանդում էին երկաթուղագծերը՝ գնացքները շուտ տալիս գծերից և թալանում, օրինակ, հայ աշխարհագրոբայինների փոքր ջոկատներին դարանակալելով Էջմիածնի շրջանում և հարձակվելով նրանց վրա (**Hovannisian R., 1982. Vol. II**):

1919 թ. օգոստոսի առաջին օրերին համառ կռիվներ ծավալվեցին Բեյուք-Վեդիում, Սուրմալուում, Կաղզվանում, Սարիղամիշում և ամբողջ արևմտյան ճակատի երկարությամբ: 1919 թ. հոկտեմբերի 29-ի զեկուցագրում (N KP 71)՝ ուղղված վարչապետին, կապիտան, ՀՀ հետախուզական ծառայության սպա Վ. Գ. Սուրադյանը հայտնում էր, որ Նախիջևանից Հալիլ բեյը Ջանգիբասարի շրջանի Իլիսի-Կորուզի (նաև Իլիսի-Ղորուղի) բնակավայրը ունի Մամեդ բեյի ծանուցագիր է ուղարկել, կոչ անելով ցանկացողներին տեղափոխվել այդ շրջանից (**ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 73 (71), թ. 182**): Վարչապետին ուղղված 1919 թ. նոյեմբերի 16-ի զեկուցագրում (N KP106) կապիտան Վ. Սուրադյանը հայտնում էր, որ թաթարները իրենց շտաբը Իլիսի-Կորուզիից տեղափոխել են Շոռլու-Դեմուրչի, որ իր կողմից ձերբակալվել են 7 հոգի, ինչը ուժեղ խմորումներ է առաջ բերել Ջանգիբասարում (**ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 271, թ. 37**):

1919 թ. վերջում Ջանգիբասարի թուրք հրամանատար գնդապետ Մեհմեդ բեյը կոչ է անում մահմեդական առաջնորդներին կանգնել անսասան՝ վստահեցնելով, որ լրացուցիչ օգնություն կհասնի Բայազետի 11-րդ թուրքական դիվիզիայից: Դեկտեմբերի 24-ին Ջանգիբասարի գրեթե բոլոր գյուղերի ներկայացուցիչները հավաքվում են՝ գործողությունների ընթացքը որոշելու համար: Նրանց մի մասը կողմ էին հայկական կառավարության հետ համաձայնությանը, եթե տեղական

վարչակազմը և աշխարհագրորդ մնային բացառապես մուսուլմանական, ոչ մի զինված հայի թույլ չտրվեր մտնել շրջան, և թույլատրվեր պահել իրենց զենքերը, հակառակ դեպքում՝ շարունակել չենթարկվել ՀՀ իշխանություններին: Մեհմեդ բեյը վերջնական որոշում կայացնելուց առաջ խորհրդակցում է Հալիլ բեյի հետ՝ պարզելու, թե որքան իրական օգնություն կարող է տրամադրվել, եթե դիմադրությունը շարունակվի, սակայն վերջինս ինքն էր աջակցության խնդրում զեներալ Քյազիմ Կարաբեքիրից: Գեներալ-նահանգապետ Սամեդ բեյ Մեհմանդարովի միջոցով Մեհմեդ բեյը խորհուրդ է տալիս դիմել Բաքվի ռազմական իշխանություններին (**Hovannisian R. 1982. Vol. II**):

1919 թ. նոյեմբերի վերջերին ադրբեջանական բանակը ետ է քաշվում Զանգեզուրից, սակայն հաստատվում է Լենքորանում և Ղարաբաղում, ինչը տպավորություն է ստեղծում, թե հնարավոր է համաձայնության գալ Զանգեզուրի ստատուս-քվոյի շուրջ, որը վարչապետ Ն. բեկ Ուսուբբեկովի համար հարմար առիթ է դառնում միջամտելու Վեդիբասարի, Զանգիբասարի և մյուս մուսուլմանական շրջանների գործերին: Սակայն գլխի ընկնելով Ադրբեջանի ռազմավարության իմաստը, Ալ. Խատիսյանը եզրահանգում է, որ Զանգեզուրի և Երևանի մերձակայքի անկլավների կարգավիճակի միջև չեն կարող զուգահեռ անցկացվել (**Hovannisian R., 1982. Vol. II**):

Գլխավոր շտաբի հետախուզական բաժնի 1920 թ. հունիսի 17-ի ամփոփագրի տվյալներով Բոյուք-Վեդիում ապստամբների տրամադրության տակ կար 1 լեռնային թնդանոթ, 4 գնդացիր՝ 3-ը՝ ձեռքի, 1 «Մաքսիմ», որ ապստամբներին գնդացրային գործ ուսուցանելու նպատակով Թուրքիայից ժամանել էին 9 գնդացրորդներ, որ Բոյուք-Վեդի-Սադարակի շրջանում կենտրոնացված են 500 զինված թաթարներ և 1 գումարտակ ասկյարներ, որ հունիսի 9-ին Բուլաղ-Բաշից ժամանել են 100 զինված տեղական թաթարներ՝ թուրք սպաների ուղեկցությամբ, իսկ Զաֆարաբաղի և Փարաքարի ճակատներում 10-15 օր առաջ եղել են մոտ 200-300 թաթարներ, որոնք փորձել են խոչընդոտել ցորենի բերքահավաքը: Ամփոփագրի վերջում արձանագրվում էր հարուստ զանգիբասարցիների տեղափոխման մասին Պարսկաստան (**ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս II, թ. 49**):

1920 թ. ապրիլի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը ընկած ժամանակահատվածում տեղի ունեցած ռազմական գործողությունների մասին ակնարկաշարում գեներալ Հովհ. Հախվերդյանը հայտնում է, որ Ջանգիրասարի մահմեդական բնակչությունը Շարուրի միջոցով ամուր կապեր հաստատելով Նախիջևանի և Բայազետի հետ, դարձել է ծանրակշիռ ռազմական ուժ, բավականաչափ վարժեցված և կարգապահ, իսկ 700-800 ասկյարների առկայությունն էլ ավելի մեծ վստահություն է ներշնչել նրանց՝ ապստամբելու ՀՀ օրինական իշխանությունների դեմ (**Հովհաննիսյան Ռ. 2005, Հատ. I**): Ինչպես նշվում է այդ փաստաթղթում, ի վերջո ՀՀ կառավարության համբերությունը սպառվում է, և նա վճռում է հունիսի կեսերին (հունիսի 18-25) գործի միջոցով հնազանդեցնել հայ բոլշևիկների մայիսյան խռովությունից ոգևորված Ջանգիրասարի բնակչությանը՝ գրավելով Վեդիբասարը, այնուհետև՝ Շարուրը՝ մինչև Շահթախթի կայարանը (**ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս II, թ. 180-183; Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. 2000, 270-276**): 15-ից ավելի թաթարական գյուղերի հակահայկական խռովությունը ճնշվում է, և հունիսի 20-ին վերջնականապես գրավելով Ջանգիրասարը, հայկական գործերը վերցնում են 2 թնդանոթ, 3 գնդացիր, 40 հազար փամփուշտ և բազմաթիվ հրացաններ (**«Ցառաջ» 1920, 24 հունիսի, N 131; «Ռազմիկ» 1920, 20 հունիսի, N 1, Երևան**):

Ուշագրավ են Սուրմալուի շրջանի դեպքերը. 1919 թ. հունվարի 27-ի ամփոփագրում (N 12) նշվում է, որ Սուրմալուից թուրքերի հեռանալուց անմիջապես հետո՝ տեղական մահմեդականության կազմակերպման գործով Իգդիրում զբաղվել են զինվորական նահանգապետ Մամեդ բեկը, իսկ Ղամարլուում՝ Սուլեյման բեկը: Հայտնվում էր, որ Արալիս է ժամանել Մակվի սարդարի (հավակնում էր Շարուր-Նախիջևանի շրջանը միացնել իր խանությանը) ներկայացուցիչ Սաֆո Ալի բեկը 30 սարբազների հետ, որոնցից 15-ը քրդեր էին (**ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 252, թ. 2**): 2-րդ Հայկական հետևակային գնդի գնդապետ Մելիք-Մուրադովը Հայկական դիվիզիայի հրամանատարին ուղղված 1919 թ. մարտի 19-ի զեկուցագրում (N 151) նշում էր Սուրմալու-Պառնաուտի շրջանում թուրքական հրահանգիչների գործունեությունը հաստատող փաստերի մասին (**ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 252, թ. 43**):

Դեռ 1918 թ. օգոստոսի 19-ին Էջմիածին կայարանից 5 վերստ հեռավորության վրա թաթարների կողմից գազանաբար խոշտանգվում և սպանվում են Հայկական 1-ին միլիցիոն գնդի 4 զինվոր, որը կատարվել էր թաթարական Չոբանքյարա գյուղի բնակիչների կողմից, որոնք հայտարարել էին իրենց անհնազանդության մասին ՀՀ իշխանություններին և կազմել 100 հոգուց բաղկացած ավազակախումբ: ՀՀ Տարածքի Վարչակազմի և միլիցիայի տեսուչի հրամանով այստեղ է ուղարկվում ամերիկյան գնդապետ Ֆորդի գլխավորած խառը հանձնաժողովը՝ հետաքննելու դեպքերը, որի ընթացքում հայտնաբերվում են Մարգարա գյուղում սպանված մեկ հայ մարդու, մի աղջկա և 4 տարեկան երեխայի դիակները, մեղավորները շուտով ձերբակալվում են, որը հաստատվում է թաթարներից և հայերից կազմված խառը հանձնաժողովի ստորագրությամբ (ՀԱԱ, ֆ. 275, ց. 1, գ. 230, թ. 17):

1919 թ. հունվարի 30-ին Նախարարների խորհրդի նիստում լսվում է Զինվորական նախարարի և ՆԳ նախարարի զեկուցումը Սուրմալուի գավառի Ղամարլու գյուղի (Մեծամոր) և Դավալուի շրջանում զինված հարձակումների, թուրքական այն ընդհանուր շարժման մասին, որ նկատվում էր հանրապետության սահմաններում, հանձնարարելով այդ մասին իրազեկել անգլիական գլխավոր հրամանատարությանը Անդրկովկասում, և խնդրել մի անգլիացի սպա ուղարկել մեր Զինվորական նախարարի մոտ՝ իբրև անգլիական զորահրամանատարության ներկայացուցիչ (ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 486, մաս I, թ. 32; գ. 47, թ. 47; ֆ. 199, ց. 1, գ. 96, թ. 20):

ՀՀ Նախարարների խորհրդը 1919 թ. փետրվարի 28-ի նիստում լսում է ՆԳ նախարարի հայտարարության մասին, որ Դավալուի շրջանում թուրքերը հրաժարվում են հայկական կառավարության իշխանությունը ճանաչելուց, և որ Դավալուի կոմիսարը հայտնել է երեք հայերի սպանության և զեներալ Ֆ. Լաուրթնի (իրականում ոչ թե զեներալ, այլ գնդապետ, որոշ փաստաթղթերում՝ կապիտան) կողմից ոմն Գայդարովի մահմեդական ազգաբնակչության ղեկավար նշանակելու մասին: Ըստ այդմ Նախարարների խորհուրդը որոշում է դիմել բրիտանական Լաուրթնին ու մայրը Չարլզին կարգը վերահաստատելու համար միջոցներ ձեռք առնելու մասին (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100 (43), թ. 33; գ. 96, թ. 32):

1919 թ. մարտի 8-ին ՀՀ ԱրտԳործնախարարությանն ուղղված գրության մեջ Ներքին Գործերի նախարարի պաշտոնակատարը շեշտում էր, որ Դավալուի շրջանում հաճախակիացել են թաթարների կողմից ՀՀ տարածքի խաղաղ բնակիչների վրա հարձակումները՝ ուղեկցվելով սպանություններով և կողոպուտներով, որ այդ շրջանի բնակիչները մշտապես գտնվում են վախի մեջ և զրկված են իրենց տնտեսությամբ զբաղվելու հնարավորությունից՝ խնդրելով կապվել Թիֆլիսում ու Երևանում գտնվող բրիտանական ներկայացուցիչների հետ՝ թաթարների վրա ազդելու, որպեսզի վերջիններս դադարեցնեն թշնամական գործողությունները (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 209, թ. 60):

1919 թ. մարտի 3-ին Ղամարլուի գավառամասի կոմիսար Տեր-Հովհաննիսյանը Հայաստանի Տարածքի Վարչակազմի և միլիցիայի կոմիսարին հայտնում էր, որ շրջանի թուրքերի հանդգությունը օր օրի ավելի ու ավելի համառ բնույթ է ստանում, որ ամեն օր Ղամարլու տանող խճուղու վրա ճանապարհվողները ծաղր ու ծանակի են ենթարկվում թուրքերի կողմից, որ մեկ-մեկ Ղամարլու անցնելն անհնարին է. «Ճանապարհը ամեն օր սևին է տալիս անցնող թուրքերով, բոլորն էլ տղամարդիկ և անպայման զինված ընտիր զենքերով: Թեև օրական զինված թուրքերը 100-ով են անցնում անգլիացոց առաջից և թեև անգլիացիք գիտեն թուրքերի այդ սպառնական շարժումը, բայց լուր ու անտարբեր ականատես էին» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 209, թ. 67): Մահմեդականները Վեդիբասարում բավականին ակտիվ էին, ունեին թուրք սպաների կողմից ռազմական պատրաստություն անցած 5-6 հազար կովոդ, զգալի ռազմամթերք: Այդ մասին տեղյակ լինելով, ՀՀ Նախարարների խորհրդի 1919 թ. ապրիլի 1-ի նիստում հանձնարարվում է ԱրտԳործնախարարին Ներքին Գործերի և Զինվորական նախարարների հետ միասին բանակցել Լաուրթոնի (ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 100 (43), թ. 56; գ. 96, թ. 57), չնայած անգլիացիները արմատական լուծումներ չառաջադրեցին՝ քողածածկված եզրեր ունենալով թաթարների հետ:

1919 թ. ամռանը հայկական վարչակազմը վտարվել էր Արաքս գետի ստորին հովտից, և նույնիսկ Զանգիբասարի շրջանում, որը տարածվում էր Երևանի և Էջմիածնի միջև երկաթուղու երկայնքով, հայերի կողմից նշանակված մուսուլման

կոմիսարը Ուլուխանլուի իր շտաբ-բնակարանից դուրս իշխանություն չունեք, Ջանգիբասարի 26 գյուղերի 30,000 բնակիչները մշտական ճնշման տակ էին: Խռովարարներին մաքսանենգ ճանապարհով ներմուծվում էին մեծ գումարներ Երևանում Ադրբեջանի դիվանագիտական առաքելության աշխատակիցների միջոցով (**«Հառաջ» 1920, 14 մարտի**):

Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատումը ևս ոչ մի կերպ չազդեց Ջանգիբասարցիների գործողությունների վրա, մայիսի 13-ին թուրք-մահմեդական ջոկատը հարձակվեց Վարմազիար, Ջաֆարաբադ և Փարաքար գյուղերի վրա (**«Նոր աշխատավոր» 1920, 23 մայիսի**), որին հակազդելու համար միջոցներ ձեռնարկվեցին, Ջանգիբասարի մահմեդական զինված բնակիչներին առաջարկվեց զինաթափվել, ճանաչել ՀՀ իշխանությունների իրավասությունը, վճարել հարկերը, որը անպատասխան մնաց: Կառավարությունը նման իրավիճակում նպատակահարմար գտավ դիմել վճռական միջոցների, և հունիսի 18-ին վերջնագիր ներկայացրեց՝ պատասխանի համար տալով 6 ժամ, որն ընդունեց միայն Ուլուխանլու (ներկայումս՝ Մասիս) գյուղը, մնացած մահմեդաբնակ գյուղերից որևիցե պատասխան չստացվեց (**Ձոհրաբյան Է. 2006, N 1, 5**), տվյալ պահին Ջանգիբասարի խռովարարներն ունեին ավելի քան 4 հազար զինված մարդ, 600-800 ասկյար, 3 թնդանոթ և 8 գնդացի (**«Հառաջ» 1920, 27 հունիսի**):

Երբ Հաջի Շեյխ Ալի Ախունդովը (Ախունտ) և Մեշեդի Ջելիլը 1920 թ. փետրվարին ժամանեցին Բաքու՝ ռազմական աջակցություն խնդրելու, Հալիլ փաշան գրեց գեներալ Քյազիմ Կարաբեքիրին, որ Ադրբեջանը կտրված է շրջանից և չի կարող որևէ կոնկրետ օգնություն տրամադրել: Նա խնդրեց, որ թուրքական XV բանակային կորպուսից սպաներ և զենք ուղարկվեն: Կարաբեքիրը հրամայեց 1-ին կովկասյան դիվիզիայի 18-րդ գնդի զորամասերին անցնել Արաքս գետի հովիտ: Նույն ամսին կապիտան Մուհեդդինը (Մուհիթթին) և լեյտենանտ Իհսանը (Էքսան) մի քանի հրահանգիչների հետ ժամանեցին Բայազետից՝ Ջանգիբասարի տղամարդկանց մոբիլիզացնելու և հրացաններով, գնդացիներով և թնդանոթներով վարժեցնելու համար: Մայիսին և հունիսին խռովարարները դարձան ավելի համարձակ՝ խափանելով երկաթուղային երթևեկությունը և

ասպատակելով Էջմիածնի մոտ գտնվող Չափարաբաղ, Փարաքար և Խաթունարխա հայկական գյուղերը, ինչպես նաև Չարբախը, որը գտնվում էր Երևանից 6 վերստ (4 մղոն) հեռավորության վրա (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 461, թ. 22, 28-29; գ. 46, թ. 2; «Հառաջ» 1920, 1 փետրվարի, 18 փետրվարի, 13 ապրիլի):

Դեռ Բյուրո-Կառավարության ստեղծումից առաջ հայկական ռազմական իշխանությունները Չանգիբասարին կոչ էին արել զինաթափվել: Գեներալ-մայոր Շելկովնիկյանը մարտի 8-ին զեկուցում է, որ Չանգիբասարի մոտիկությունը Երևանին և երկաթուղու երկայնքով նրա ռազմավարական դիրքը անհրաժեշտ են դարձնում նրա գրավումը, գտնելով որ անհրաժեշտ կլինի առնվազն 2000 հետևակային և 250 հեծելազոր, միաժամանակ խորհուրդ տալով, որ զորամասերը առաջ շարժվեն Երևանից և Փարաքարից դեպի Չանգիբասար, իսկ Կարխունից (Ղարխուն) և Աղամզալուից կողային ճնշում գործադրեն թշնամու վրա՝ դուրս շարտելով տարածքից: Նախարարների խորհուրդը մարտի 16-ին քննարկելով գեներալի զեկույցը, գտավ, որ անհրաժեշտ կլինի առնվազն 3000 մարդ («Հառաջ» 1920, 1 փետրվարի, 16 փետրվարի, 18 փետրվարի, 13 ապրիլի): ՀՀ կառավարությունը մեղադրեց Չանգիբասարին հայ ու ադրբեջանցի բոլշևիկների և թուրքական գլխավոր շտաբի հետ դավադրության մեջ: Մայիսի 15-ին պարտադրվեց լիակատար շրջափակում, և Վաղարշապատի (Էջմիածին) ջոկատի հրամանատար, փոխգնդապետ Արսեն Շահմազյանին հանձնարարվեց բռնագրավել տարածք մտնող կամ դուրս եկող բոլոր ապրանքները և տուգանել ու պատժել խախտողներին: Հունիսի 12-ին, կառավարությունը հաստատեց ռազմական գործողությունների ծրագիրը (Hovannisian R., 1996. Vol. III): Հիմնական թիրախները Խաչափարախ, Հաջի-Էյլաս, Շորլու Դեմուրչի, Շորլու-Մեհմանդար և Շարիֆաբաղ (Թագա Քարխուն) ամրացված գյուղերն էին (Hovannisian R., 1996. Vol. III):

Եվ այսպես, Չանգիբասարում կտրուկ օպերացիա ձեռնարկվեց, որը 1920 թ. հունիսի 18-ին ավարտվեց հաջողությամբ, ինչը մեծ աղմուկ առաջ բերեց Ադրբեջանում՝ մուսուլմանների նկատմամբ «բռնությունների» առումով, որը ՀՀ-ն համարեց իր ներքին խնդիրը՝ մեղադրելով Ադրբեջանին ռազմական

գործողություններ ծավալելու մեջ. «Հակառակը, Ձեր գործերը երկու անգամ՝ մեկ մայիսի 20-ին, մեկ էլ հունիսի կեսերին առանց որևէ հիմունքի արշավեցին ՀՀ տարածքների վրա» (**«Ժողովուրդ» 1920, հուլիսի 9; «Յառաջ» 1920, հուլիսի 8**): Հունիսի 18-ի կեսօրին գնդապետ Շահմազյանը իր գորաջոկատը դասավորեց Ջանգիրասարի հյուսիսային սահմանների շուրջը և վերջնագիր ներկայացրեց մուսուլմանական խորհրդին՝ ճանաչել հայկական կառավարության իրավասությունը, և ենթարկվել լիակատար զինաթափման (**Hovannisian R., 1996. Vol. III**): Հունիսի 19-ի լուսաբացից առաջ գիշերային լռությունը խախտվեց երկու կողմերից եկող կրակով: Թուրքական ջոկատներն անհաջող փորձեցին առաջխաղացում կատարել դեպի Ուլուխանլու և Քարխուն և այրել երկաթուղային կամուրջը՝ զրահապատ գնացքի մուտքը կանխելու համար: Շահմազյանի շարասյուները շարժվեցին Նորագավիթից, Փարաքարից և Քարխունից՝ կենտրոնանալով Հրազդան (Ջանգու) գետի ձախ ափին գտնվող ամուր ամրացված Հաջի-Էյլաս գյուղի վրա: Թուրք սպա Քյազիմ բեյի հրամանատարությամբ և թնդանոթային կրակով աջակցվող ուժերը դիմադրեցին մինչև առավոտյան ժամը 11-ը, բայց չկարողացան դիմակայել: Հաջի-Էյլասի անկումը հարթավայրի տասնյակ մուսուլմանական բնակավայրեր ենթարկեց հայկական հրետանու անողորմ հարվածներին: Մինչև գիշերը հայկական արշավախումբը գրավեց գրեթե բոլոր ամրակետերը մինչև երկաթուղի, այդ թվում՝ Շորլու-Դեմուրչի, Ենգիջա, Վերին (Վերին) և Ներքին (Ստորին) Նեջերլու (**«Հառաջ» 1920, 19, 22 հունիսի; Վրացյան Ս., 1928**):

Ջանգիրասարի մահմեդական գյուղերի օրինական ՀՀ իշխանություններին հնազանդեցման օպերացիան իրականացրեց դեռևս Ջանգեզուրում աչքի ընկած փայլուն զինվորական, այդ պահին արդեն Վաղարշապատի գորախմբի հրամանատար գնդապետ Արսեն Շահմազյանը, որը Նորագավիթի կողմից գրոհելով, արագ գրավում է Ջանգիրասարի համար հանգուցային Հաջի-Էյլազ գյուղը, որով կանխորոշվում է Ջանգիրասարի ճակատագիրը (**Hovannisian R., 1996. Vol. III; «Հառաջ» 1920, 27 յունիսի, 1920**), դրան հաջորդում է Գոյքիվմբեթ, Քելալի, Չոբան-Քյարա, Շոռլու-Մեհմանդար և մնացած գյուղերի գրավումը,

մահմեդականները փախչում են, իսկ 1920 թ. հունիսի 21-ին կարճ և վճռական մարտից հետո հայկական զորաջոկատը գրավում է Սարաջալար գյուղը, որով և ավարտվում է Ա. Շահմազյանի զորախմբի առջև դրված խնդիրը (**«Հառաջ» 1920, 27 յունիսի**), որպես ռազմական ավար հայկական կողմին է անցնում 2 թնդանոթ, 3 գնդացի, մի քանի հազար փամփուշտ, ռազմամթերք (**«Մշակ» 1920, 4 հուլիսի**): Հաջորդ առավոտյան հայկական զորաջոկատը գրավում է Շորլու-Մեհմանդարը և Դոխբուզը, ապա շարժվում դեպի երկաթուղու և Արաքս գետի միջև գտնվող գյուղերը: Թուրքական ջոկատները նահանջում են դեպի Սեյդքենդ և Սարաջալար՝ վնասելով երկու երկաթուղային կամուրջները, սակայն ի գուրու չեն լինում կասեցնել հայկական կողմին: Մի շարք գյուղեր, այդ թվում՝ Սարաջալարը ընկնում են հունիսի 21-ին, Զանգիբասարի մեծաթիվ խուճապահար բնակիչներ փախչում են դեպի Արալիխ-Բաշքենդ: Արսեն Շահմազյանը ամրանում է Արաքսի ափին՝ գրավելով 1 թնդանոթ, 1500 արկ, 6 Մաքսիմ գնդացի, հարյուրավոր հրացաններ և 400,000 փամփուշտ: Զանգիբասարի խռովարարների կորուստները մեծ էին, հայկական գնահատականներով՝ մինչև 500 հոգի, այդ թվում՝ մի քանի թուրք սպաներ: Հայկական կորուստները կազմում են 100 վիրավոր և 22 սպանված, որոնց թվում էր լեյտենանտ Արամ Քաջազունին՝ վարչապետի երկրորդ որդին: Հունիսի 23-ին կառավարությունը պաշտոնական հաղորդագրություն է հրապարակում, որում պարզաբանում է ռազմական գործողությունների պատճառները. 15 կամ ավելի ինքնահռչակ «անկախ» գյուղեր դիվերսիա էին իրականացրել երկաթուղու վրա և դարձել էին Ադրբեջանի և Թուրքիայի ձեռքին գործիք: Զգուշացվում էր, որ նույն ճակատագիրն է սպասվում բոլոր նրանց, ովքեր հրաժարվում են ճանաչել ՀՀ իշխանությունը: Զանգիբասարյան անկլավը վնասագերծվում է՝ թեթևացնելով երկաթուղու և մայրաքաղաքի վրա ճնշումը: Կառավարությունը 2 միլիոն ռուբլի է հատկացնում զոհվածների ընտանիքներին օգնելու համար (**ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 461, թ. 53; «Հառաջ» 1920, 22, 24, 25 հուլիսի; «Նոր աշխատավոր» 1920, 22-23 հունիսի, «Հայրենիք» 1920, օգոստոսի 12; «Борьба» 1920, 23 июня**):

1920 թ. հուլիսի 6-ին արդեն Խորհրդային Ադրբեջանի անունից արտգործոնվում Մ. Հուսեյնովը վարչապետ Հ. Օհանջանյանին՝ պատճենը Գ.

Չիչերինին և ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Ս. Կիրովին ուղղված նոտայում մեղադրում է, որ Զանգիբասարը ջախջախելուց և այն մուսուլման գյուղացիությունից մաքրելով, Հայաստանը հարձակման է անցել Շարուր-Նախիջևանում և Ղազախում՝ սպառնալով լուծարել Տ. Բեկզադյանի և Ս. Կիրովի միջնորդությամբ Հուսեյնովի հետ կայացրած համաձայնությունը՝ հուլիս 15-ին գումարելու հայ-ադրբեջանական կոնֆերանս վիճելի հարցերը քննարկելու համար (ՀԱԱ, ֆ. 278, ց. 5, գ. 35, թ. 32):

Այդ նույն ժամանակ ՀՀ կառավարությունը պատրաստվելով նաև Վեդիբասարի հնազանդեցման գործողություններին, փորձում է կիրառել ճկուն մարտավարություն, որպեսզի չկրկնվեին 1919 թ. հուլիս-օգոստոսյան անհաջողությունները: Ինչպես Զանգիբասարի պարագայում, ՀՀ կառավարությունը Վեդիբասարի մահմեդական գյուղերին դիմում է հնազանդության առաջարկով, սակայն ապարդյուն, որից հետո միայն սկսվում է հայկական զորամասերի հարձակումը երկու ուղղություններով՝ Ղամարլու-Արտաշատից և Նոր Բայազետ-Գավառից: Այդ գործողությունները սկսվում են 1920 թ. հուլիսի 10-ին, համառ մարտերից հետո մահմեդաբնակ Կարայալ, Զաթոռան, Ալի-Մամեդ, Ենգիջա, Կոթուզ, Աղասի-Բեզլու և Ներքին Կարաբեքլու գյուղերը գրավվում են հայկական զորամասերի կողմից, որոնք հուլիսի 12-ին մտնում են Բոյուք-Վեդի, որին հաջորդում է թաթարների փախուստը Դավալու-Զինջիրլուի վրայով (**«Հառաջ» 1920, 13 մայիսի**): Հայկական հրամանատարությունը խուսափում է Վեդիբասարը օղակի մեջ առնելուց, ինչպես դա եղել էր 1919 թ. հուլիս-օգոստոսյան դեպքերի ժամանակ, այլ ընդհակառակը, այս անգամ «մարդասիրական միջանցք» է բացում, որպեսզի հայկական իշխանությունների հետ չհաշտվողները անարգել հեռանան, սակայն այդպես տեղի չի ունենում, մահմեդական բնակիչները խուճապի են մատնվում և փախչում, իսկ հրամանատարությունը անգամ չի կարողանում իր հետ տարհանել շտաբի արխիվը: «Նոր աշխատավոր»-ը 1920 թ. հուլիսի 29-ի համարում փաստում է թուրք-թաթարական դավադրության, վեդիբասարցիների և զանիբասարցիներին ընդդեմ հայկական իշխանությունների խռովության հրահրման մեջ, որոնք հայտարարել էին, թե Ադրբեջանի սահմանները անցնում են

Երևանի տակով («Նոր աշխատավոր» 1920, 29 հունիսի): Ջանգիբասարի, Վեդիբասարի և Գայլի Դրունքի մոտ կրած ջարդերից հետո Նուրի փաշան թուրքական աղաների և ասկյարների հետ ետ է քաշվում Բայազետ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, կարելի է ասել, որ Ջանգիբասարի և Վեդիբասարի մահմեդաբնակ գյուղերի ենթարկեցումը օրինական իշխանություններին Առաջին հանրապետության հաջողված էջերից է ՀՀ սուվերեն իրավունքների ապահովման տեսանկյունից: ՀՀ կառավարության և ուժային կառույցների համաձայնեցված գործողությունների արդյունքում մահմեդաբնակ շրջանները չկամությամբ, սակայն հարկադրված ենթարկվեցին ՀՀ իշխանություններին: Արդյունքում, ՀՀ տարածքային ամբողջականությանը պահպանվեց, վերահաստատվեց օրինական իշխանությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱԱ - Հայաստանի Ազգային Արխիվ
2. Հայաստանի Հանրապետության արխիվ (Բոստոն).
3. Դեդեալանց Տ. (1945), Կեանքիս դրուագներից, «Հայրենիք» (Բոստոն), No 5 (250), սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 93-100:
4. Զոհրաբյան Է. (2006), Հայաստանի Հանրապետության ադրբեջանաբնակ ապստամբ շրջանների հնազանդեցումը 1920 թ. հունիս-հունիսին. «Բանբեր Երևանի Համալսարանի». N 1 (118), Երևան, էջ 3-22:
5. Զոհրաբյան Է. (2012), Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները» (1918 թ. դեկտ.-1920 թ. ապրիլ), Երևան, «Տիգրան Մեծ» հրատ.:
6. Կնյազյան Դ. (2008), Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Երևան, Հեղ. հրատ.:
7. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (2000), Քաղաքական պատմություն. Փաստաթղթերի և նյութերի ժողովածու. Խմբ. Գ. Գալոյանի, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:

8. **Հովհաննիսյան Ռ. (2005)**, Հայաստանի Հանրապետություն: Հատոր I. Առաջին Տարին, 1918-1919, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ.:
9. **Ղուլյան Յու. (2009)**, Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից 1918-1920 թթ., Երևան, «Եգեա» հրատ.:
10. **Ղուլյան Յու. (2011)**. Մահմեդական բնակչության հակապետական ելույթները ՀՀ-ի դեմ (1919 թ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1 (117), էջ 110-119:
11. **Բեկզադյան Տ. (2025)**, Ադրբեջանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանի օրագիրը (11 մարտի 1919 թ. - 27 օգոստոսի 1919 թ.). Աշխատասիրությամբ՝ Վլ. Հարությունյանի, Երևան, Հեղ. հրատ.:
12. **Hovannisian R. (1982)**. The Republic of Armenia. From Versailles to London, 1919-1920. Volume II. Berkeley. Los Angeles.London. University of California Press.
13. **Hovannisian R. (1996)**, The Republic of Armenia. From London to Sevres February-August, 1920. Volume III. Berkeley.Los Angeles.London. University of California Press.

REFERENCE

1. **NAA** - National Archives of Armenia.
2. **Archive of the Republic of Armenia** (Boston).
3. **Deoyeants T. (1945)**. Episodes from My Life, Hayrenik (Boston), No. 5 (250), September–October, pp. 93–100.
4. **Gulyan Yu. (2009)**, History of Armenia-Azerbaijan Relations, 1918-1920. Yerevan, “Egea” Publishing House.
5. **Gulyan Yu. (2011)**, Anti-State Demonstrations of the Muslim Population Against the Republic of Armenia (1919), “Bulletin of the Archives of Armenia,” No. 1 (117), pp. 110-119.

6. **The Republic of Armenia, 1918–1920. (2000)**, Political History: A Collection of Documents and Materials. Ed. G. Galoyan, Yerevan, Academy of Sciences of the Republic of Armenia, Science Publishing House.
7. **Hovhannisian R. (2005)**. The Republic of Armenia: Volume I. The First Year, 1918–1919. Yerevan, “Tigran Mets” Publishing House.
8. **Hovannisian R. (1982)**. The Republic of Armenia. From Versailles to London, 1919-1920. Volume II. Berkeley.Los Angeles.London. University of California Press.
9. **Hovannisian R. (1996)**. The Republic of Armenia. From London to Sevres February-August, 1920. Volume III. Berkeley.Los Angeles.London. University of California Press.
10. **Knyazyan D. (2008)**. The Caucasian Policy of the Azerbaijan Democratic Republic, 1918–1920. Yerevan, Author's Edition.
11. **Tigran Bekzadyan 2025**. The diary of Tigran Bekzadyan, the diplomatic representative of the Republic of Armenia in Azerbaijan (March 11, 1919 – August 27, 1919): Edited by V. Harutyunyan, Yerevan, Author Publ.
12. **Zohrabian E. 2006**. The Subjugation of the Azerbaijani-Inhabited Rebel Districts of the Republic of Armenia in June–July 1920. “Bulletin of Yerevan University,” No. 1 (118), Yerevan, pp. 3–22.
13. **Zohrabian E. 2012**. The Nakhijevan Issue and Armenia's “Allies” (December 1918–April 1920). Yerevan, “Tigran Mets”.

Համառոտագրություններ

ՀԱԱ - Հայաստանի Ազգային Արխիվ

Abbreviations

NAA - National Archives of Armenia.

Ваник Вирабян, Грант Вирабян

Подавление антигосударственных восстаний в Зангибасарском, Беюк-Ведийском,

Давалинском районах армении и в провинции Сурмалу

в 1918-1920 гг.

Заключение

Ключевые слова и выражения: Зангибасар, Ведибасар, Сурмалу, населённые мусульманами, антигосударственные и антиармянские выступления, Республика Армения, Азербайджан.

Преодоление мятежных настроений мусульманских регионов, контролируемых Азербайджаном, и установление правопорядка были важными гарантиями обеспечения суверенных прав Первой Республики и ее дальнейшего существования. И только после того, как мирные переговоры зашли в тупик и возможности межгосударственных каналов были исчерпаны, правительство прибегло к военной силе и восстановило полномочия властей РА в Зангибасаре, Ведибасаре, Сурмалу и других регионах.

Vanik Virabyan, Hrant Virabyan

Suppression of anti-state uprisings in the Zangibasar, Boyuk-Vedi, and Davalu regions

of Armenia, and in the Surmalu province in 1918-1920

Conclusion

Key words and expressons: Zangibasar, Vedibasar, Surmalu Muslim-populated, anti-state-anti-Armenian speeches, Republic of Armenia, Azerbaijan.

Overcoming the rebellious moods of the Muslim-populated regions controlled by Azerbaijan, establishing law and order were important guarantees for ensuring the sovereign rights of the First Republic and its further existence. And only after the peaceful negotiations reached a deadlock and the possibilities through interstate channels were

exhausted, the government resorted to military force and re-established the powers of the RA authorities in Zangibasar, Vedibasar, Surmalu and other regions.

Վանիկ Վիրաբյան - Խ. Աբովյանի անվան Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր: Իրագործում է 1918-1990-ական թթ., Առաջինից Երրորդ հանրապետություններում ազգամիջյան զարգացումների, բնակչության էթնիկ խմբերի, ազգային փոքրամասնությունների տեղաշարժերի ուսումնասիրություն և համալիր հետազոտություն, 20-21-րդ դարերի ընդհանուր տարածաշրջանային և համաշխարհայնացման գործընթացների տիրույթում: ՀՀ Գիտակետով 25RG-6A113 ծածկագրով «Ազգամիջյան զարգացումները և բնակչության էթնիկ խմբերի տեղաշարժերը Հայաստանի Հանրապետությունում (1918-1990-ական թթ.)» Գիտական նախագծի ղեկավար: vanikvirabyan@mail.ru

Հրանտ Վիրաբյան – Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և հասարակագիտության ֆակուլտետի պատմության բաժնի «Հայոց պատմության» ամբիոնի Մագիստրոս: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է՝ էթնիկ հակամարտություններ, Երրորդ Հանրապետության հիմնախնդիրներ: Հեղինակ է 4 հոդվածների, որոնցից 3-ը՝ ազդեցության գործակից ունեցող միջազգային գիտատեղեկատվական ամսագրերում: [hrant-virabyan@bk.ru](mailto:h rant-virabyan@bk.ru)

Ваник Вирабян –Профессор кафедры Истории Армении Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна. Изучает проблемы межэтнического развития 1918-1990-х гг., перемещений этнических групп населения, движений национальных меньшинств с Первой по Третьей республиках и вопросы развития общерегиональных и глобализационных процессов 20-21 веков. Руководитель научного проекта «Межэтнические процессы и этнические группы населения в Республике Армения (1918-1990-е гг.)» по шифру 25РГ-6А113 Государственного комитета по науке Республики Армения. vanikvirabyan@mail.ru

Грант Вирабян – магистрант, кафедра истории Армении, факультет истории и социальных наук, Армянский государственный педагогический университет имени

Х. Абовяна. Сфера научных интересов: этнические конфликты, проблемы Третьей республики. Автор 4 статей, 3 из которых опубликованы в международных научных и информационных журналах с импакт-фактором. hrant-virabyan@bk.ru

Vanik Virabyan – Professor of the Chair of History of Armenia of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan. He studies the problems of inter-ethnic development in 1918-1990s, movements of ethnic groups of the population, movements of national minorities from the First to Third Republics, and issues of the development of general regional and globalization processes of the 20-21st century. Head of the Scientific Project "Inter-Ethnic developments and ethnic groups of population in the Republic of Armenia (1918-1990s)" under the code 25RG-6A113 of the State Committee for Science of the Republic of Armenia. vanikvirabyan@mail.ru

Hrant Virabyan – postgraduate student, Department of History, Faculty of History and Social Sciences, Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan. The scope of scientific interests includes: Ethnic conflicts, problems of the Third Republic. He is the author of 4 articles, 3 of which are in international scientific and information journals with an impact factor. hrant-virabyan@bk.ru

Խմբագրություն է ուղարկվել 09.09.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 17.09.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ԱՐՄԱՆ ԱՆԴՐԻԿՅԱՆ

ԻՐԱՆԱՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԹԵՄԵՐԸ XIX Դ..

ՊԱՐՄԿԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ ՆԱՍՐԵԴԴԻՆ ԵՎ
ՄՈԶԱՖՖԱՐԵԴԴԻՆ ՇԱՀԵՐԻ ՕՐՈՔ*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.212*

ԱՄՓՈՓՈՒՄ

Պարսկահայությունը և նրա հոգևոր իշխանությունը հարաբերական հանգիստ ստացան Ֆաթի Ալի Շահ Ղաջարի գահակալության տարիներին: Քաջ գիտակցելով, որ Իրանում և հատկապես Նոր Ջուղայում, բնակվող հայկական տարրը հսկայական օգուտներ է բերում իր պետությանը, Ֆաթի Ալի շահը կտրուկ քայլեր ձեռնարկեց հայերին և հայկական կրոնական կառույցները իր պաշտպանության տակ առնելու ուղղությամբ: Թուրքմենչայի պայմանագրի կնքումից հետո Ատրպատականի և մասամբ նաև Նոր Ջուղայի հայության զանգվածային արտագաղթը Իրանից դեպի Ռուսական կայսրություն, ևս ստիպեցին Ֆաթի Ալի շահին իր բարձր հովանավորության տակ առնելով հայերին ու հայոց եկեղեցին, կանխել հայկական տարրի հետագա արտահոսքը երկրից:

Բանալի բառեր և արտահայտություններ. պարսկահայություն, հոգևոր թեմ, շահ, գաղթօջախ, կրոնական կառույցներ, հայ առաքելական եկեղեցի, թեմի առաջնորդ, իրավաքաղաքական և տնտեսական միջոցառումներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1820-ական թթ. պարսկահայերի նկատմամբ հալածանքները զսպելու նպատակով զգալի աշխատանքներ են իրականացրել Ֆաթի Ալի շահը և երկրի բարձրաստիճան շիա հոգևորականությունը: XIXդ. երկրորդ կեսին, ինչպես և նախորդ դարերում Հայ Առաքելական եկեղեցու իրանահայ թեմերն իրենց ինքնավարության շնորհիվ պարսկահայ գաղթօջախների բնակչության իրավական դրության երեշխավորներն էին և պարսկական պետություն-հայ

համայնք իրավաքաղաքական հարաբերությունները կարգավորող միակ լիազոր մարմինները:

Ատրպատականի թեմի առաջնորդ Գեորգ եպիսկոպոս Վեհապետյանը 1855թ. Նասրեդին շահին մի բողոքագիր է ներկայացրել իր հոգևոր հոտի ծանր դրության մասին: Գեորգ Սրբազանը խնդրել էր շահին իրավաքաղաքական ու տնտեսական բնույթի մի շարք միջոցներ կիրառել, որոնք նրա կարծիքով կբարելավեին Թավրիզի և հարակից գավառների հայ բնակչության վիճակը: Գեորգ եպիսկոպոսի ջանքերով ձեռք բերված իրավունքները դրական դեր խաղացին Ատրպատականի հայերի կյանքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն ուսումնասիրությունը կատարվել է պատմական սկզբնաղբյուրների, գիտական գրականության պատմաքննական տվյալների և փաստերի հաշվառումով: Կիրառվել է պատմահամեմատական-համադրական մեթոդը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Տարազան ցեղերի ցեղապետերի, տեղական կառավարիչների, մոլեռանդ ամբոխի և ընդհանրապես անսանձ տարրերի հայերի նկատմամբ հալածանքներն ու ինքնիրավչությունը զսպելու նպատակով Ֆաթի Ալի շահը 1825թ. ժամանեց Սպահան և մունետիկների միջոցով քաղաքի բնակչության շրջանում հրապարակեց ֆիրման, որում ասվում էր, որ «եթե որևէ մեկը համարձակվի նեղել ու հալածել իմ հպատակ հայերին, կենթարկվի պատիժների» (**Բայբուրդյան Վ., 2007**): Հայերին և հայոց եկեղեցին Ֆաթի Ալիի կողմից սիրաշահելու հաջորդ քայլը 1832թ. հրապարակված շահական ֆերմանն էր, համաձայն որի Նոր Ջուղայի Ս.Ամենափրկիչ վանքը ամեն տարի պետական գանձարանից պետք է ստանար 262 թուման պարգև, որը աննախադեպ երևույթ էր Իրանի նման կրոնապետության պարագայում: Հարցն այն է, որ նորջուղայեցիների հանդեպ հովանավորչական վերաբերմունք ունեցող պետական կառույցներից բացի, Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ բավական լոյալ դիրքորոշում էր որդեգրել նաև երկրի բարձրաստիճան շիա հոգևորականությունը, որը երբեք չէր խրախուսում տեղական մանր-մունր մոլեռանդ և տգետ տարրերի հայատյացությունն ու նրանց

կողմից իրականացվող հալածանքները:

XIXդ. երկրորդ կեսին, ինչպես և նախորդ դարերում Հայ Առաքելական եկեղեցու իրանահայ թեմերն իրենց ինքնավարության շնորհիվ հանդիսանում էին պարսկահայ գաղթօջախների բնակչության իրավական դրության երեշխավորները և պարսկական պետություն-հայ համայնք իրավաքաղաքական հարաբերությունները կարգավորող միակ լիազոր մարմինները: Այս գործընթացում կարևոր դեր էր հատկացված թեմակալ առաջնորդներին, որոնք հոգևոր պետեր լինելուց բացի, պարսկական իշխանությունների կողմից ճանաչվում էին հայ համայնքների կառավարիչներ: Պատահական չէր, որ թեմակալ առաջնորդի անձից և նրա գործունեությունից էր կախված այս կամ այն թեմի իշխանության տակ գտնվող հայության բարօրության խնդիրը: Այս առթիվ ավելորդ չենք համարում մեջբերել Նոր Զուղայի պատմությանը քաջագիտակ Հարություն Տեր-Յովհանյանցի դիպուկ ձևակերպումը. «Երջանկութիւն և ապերջանկութիւն ժողովրդեանն Հայոց Պարսկաստանի կախի գառաջնորդէն, զի եթէ իցէ առաջնորդն ժողովրդասէր և արիաջան պաշտպանօղ իրաւանց ժողովրդեան, առանց թոյլ տալոյ զրկանաց և անիրաւութեանն, տիրելոյ նոցա՝ անդորրանայ ժողովուրդն, որպէս անդորրացեալ կայ յայսմ ժամանակի շնորհիւ հզօր պաշտպանութեանցն ներկա Սրբազան առաջնորդի /նկատի ունի Տեր Թադէոս եպս. Բեկնազարյանին-Ա.Ա./» (**Տեր Յովհանէանց Յ., 1880**): Հարկ է նշել, որ Իրանահայ թեմերը 1441թ.-ից ի վեր միշտ եղել են Էջմիածնի հոգևոր-իրավական ենթակայության տակ, որը բխում էր դարավոր սովորութային իրավունքից և հնագույն եկեղեցական կանոններից (**Մարտիրոսյան Հ., 2007**): Պարսկական իշխանությունները թե՛ Սեֆյան, և թե՛ Ղաջարական հարստությունների օրոք Հայոց եկեղեցուն ու նրա թեմերին բավական լայն ինքնավարություն էին շնորհել, որոնք արձանագրվել էին շահական ֆերմաններում: Միննույն ժամանակ գոնե մինչև XXդ. սկիզբը պաշտոնական որևէ փաստաթղթով չէր սահմանվել պարսկահայության ու հոգևոր թեմերի իրավաքաղաքական կարգավիճակը:

Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում պարսից պետության սահմաններում գործում էին Հայ Առաքելական եկեղեցու Ատրպատականի

(Թավրիզի) և Նոր Ջուղայի կամ Իրանահնդկական թեմերը՝ Թավրիզ և Նոր Ջուղա կենտրոններով: Ատրպատականի թեմը՝ Սբ Թադեի վանք կենտրոնով, Հայոց եկեղեցու հնագույն կրոնավարչական կառույցներից էր և ժամանակին նրա դերն այնքան մեծ էր, որ յուրաքանչյուր Հայոց նոր կաթողիկոսի ընտրության դեպքում անհրաժեշտ էր թեմակալ առաջնորդի հավանությունը: Մինչև 1833թ. Թադեի վանքը մնաց որպես թեմական կենտրոն, սակայն պարսկահայերի՝ Արևելյան Հայաստան գաղթից հետո վանքի դերն ու նշանակությունը խամրեց, իսկ թեմական կենտրոնը փոխադրվեց Թավրիզ: Բանն այն էր, որ Թադեի վանքի վիճակի ենթակայության տակ գտնվող Պարսկաստանի հյուսիս-արևմտյան գավառների՝ Խոյի ու Սալմաստի հայության գերակշիռ մասը հեռացավ: Պարսկական իշխանությունների բոլոր ջանքերը Սիմեոն Բզնունի արքեպիսկոպոսի միջոցով ստեղծել այստեղ «Նոր Էջմիածին» ապարդյուն անցան (**Մարտիրոսյան Հ., 2007**), և վանքը վերջնականապես կորցրեց իր դերը որպես թեմական կենտրոն: Թավրիզի կամ Ատրպատականի թեմը մինչև XIXդ. կեսերը բավական թշվառ գոյություն էր պահպանում և Էջմիածնից ուղարկված առաջնորդները կամ կարճ շրջան էին կառավարում հոգևոր հոտը կամ էլ հանդիպելով դժվարությունների՝ շուտափույթ հեռանում էին՝ հաջորդ առաջնորդներին թողնելով անխնամ եկեղեցիներ և հազարավոր թումանների հասնող պարտքեր: Սրանց մեջ քիչ թե շատ օգտավետ գործունեություն ծավալեցին Հովհաննես Եպս.Ղրիմեցին և Սաթունյան Սրբազանը: Դրությունը կտրուկ փոխվեց թեմում Գեորգ Եպիսկոպոսի առաջնորդության տարիներին: Հետագա տարիներին, շնորհիվ Նասրեդին և Մոզզաֆարեդին շահերի հայանպաստ քաղաքականության, Թավրիզի հայ բնակչությունը և հոգևոր թեմը ստացան բազում արտոնություններ, որոնց տրամաբանական ավարտը հանդիսացավ 1901թ. ընդունված Ատրպատականի թեմական կանոնադրությունը և թեմական առաջնորդի ընտրության կարգը, որն ամրագրվեց «Ատրպատականի թեմական առաջնորդի ընտրության համար կայանալիք ընտրողական ընդհանուր ժողովի ներքին կանոնադրությունը» վերնագրով փաստաթղթում (**Մարտիրոսյան Հ., 1969**):

Նոր Ջուղայի կամ Իրանահնդկական թեմը ձևավորվել է XVIIդ. սկզբներին

Շահ Աբբաս 1-ի կողմից Սպահան տեղափոխված հայ բնակչության հոգևոր իշխանությունն ապահովելու նպատակով: Արդեն հաջորդ դարում, երբ Սեֆյան հարստության կործանումից և աֆշարների ու զենդերի միջև արյունալի գահակալական կռիվների արդյունքում բազմաթիվ նորջուղայեցիներ հեռացան երկրից՝ հաստատվելով աշխարհի տարբեր կողմերում, թեմի հոգևոր իշխանության աշխարհագրությունը փոխվեց: Եվ քանի որ հեռացածներից շատերը հաստատվել էին Հնդկաստանում՝ չկտրելով կապերը «փոքր հայրենիքի» հետ, թեմը հին անվան կողքին ստացավ նաև նոր անվանում՝ Իրանահնդկական: Ինչպես և Ատրպատականի թեմի պարագայում, այնպես էլ Իրանահնդկականի դեպքում, մինչև XIX դ. կեսերը վիճակը անմխիթար էր: Հնդկահայ գաղութի թուլացումը բացասական ազդեցություն ունեցավ Նոր Ջուղայի հոգևոր թեմի համար, քանզի հնդկահայ մեծահարուստները մեծ գումարներ էին նվիրաբերում քաղաքի և շրջակա հայերով բնակեցված գավառների կրոնական և կրթական հիմնարկները պահելու համար: Այս ամենին գումարվում էին նաև իրանական քոչվոր ցեղերի ասպատակություններն ու տեղական կառավարիչների անսանձ թալանը: Նորջուղայեցիների հարստությունը և բարեկեցիկությունը շարժում էր տեղական ապադասակարգային տարրերի նախանձը և հրահրվելով տեղի մոլեռանդ մահմեդական տարրերի կողմից՝ կազմակերպում էին հայկական թաղամասերի թալան և ջարդեր: Ճիշտ է, իր ժամանակին Ֆաթի Ալի շահը մի քանի անգամ զսպեց քոչվոր լոռերի ու բախտիարների ավազակախմբերին, բայց ջուղայեցիների իրավական անպաշտպան կարգավիճակը նոր ասպատակությունների և զանազան խժոժությունների լայն հնարավորություն էր տալիս: Ղաջարական առաջին տիրակալները և նրանց նշանակած պաշտոնյաները հրաժարվեցին հաշվի նստել այն արտոնությունների հետ, որոնք ստացել էին նորջուղայեցիները Շահ Աբբաս 1-ից և նրա հետնորդներից: Նոր Ջուղայի և շրջակայքի 30-ից ավելի եկեղեցիներից որպես գործող մնացել էին մի քանիսը: Այս դժվարին պայմաններում թեմակալ առաջնորդներից շատերը ներփակվել էին սեփական հոգևոր հոտի շրջանակներում և երկչոտ փորձեր էին կատարում՝ փոքր-ինչ բարելավելու գաղութահայության դրությունը (Անդրիկյան Ա., 2020): Ինչպես նշեցինք վերը,

պարսկահայության վիճակը կտրուկ փոխվեց Նասրեդին շահի օրոք, որի՝ հայերի հանդեպ բարեխնամությունը հմտորեն օգտագործեց Թադեոս եպս. Բեկնազարյանը, ում ազգանվեր և եկեղեցանպաստ գործունեության մասին կան հիշատակություններ: Ինչ վերաբերվում է թեմական կանոնադրությանը, ապա այն ընդունվեց Պարսկաստանում ծավալված հեղափոխական շարժումների ազդեցության տակ 1909թ. և կոչվում էր «Կանոնադրություն Պարսկա-Հնդկաստանի թեմի հայոց ազգային սահմանադրության» (**Մարտիրոսյան Հ., 2007**):

Ինչպես Պարսկաստանի ազգային և կրոնական մյուս փոքրամասնությունները, այնպես և հայերը, չնայած որոշ բացառությունների, երկրում գործող շարիաթական օրենքների համաձայն իրավական բազմաթիվ սահմանափակումների էին ենթարկվում: Հայերին չէր թույլատրվում կրել պարսկական զգեստ, անձրևի ժամանակ դուրս գալ տանից, մի քանի անգամ շուկայում ձեռք տալ մթերքին, ձի հեծնել, մզկիթներից բարձր եկեղեցիներ կառուցել և զանգեր հնչեցնել, չէին կարող մեկ հավատից անցնել մյուսին, բացի մահմեդականությունից, իրավունք չունեին զենք կրել, վարել պետական պաշտոններ և իշխել մահմեդականներին (**Բայբուրդյան Վ., 2005**): Դրությունը փոխվեց և բազմաթիվ սահմանափակումներ մեղմացվեցին Նասրեդին և նրա հաջորդ Մոզզաֆար շահերի օրոք: Նասրեդին շահի՝ հայերի նկատմամբ տաժած հարգանքից հմտորեն օգտվեցին Ատրպատականի և Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդները, որոնց շնորհիվ լուրջ իրավաբաղադրական ձեռքբերումներ ունեցան պարսկահայերը:

Ատրպատականի թեմակալ առաջնորդների պայքարը իրենց հոգևոր իշխանության տակ գտնվող հայության իրավա-քաղաքական և կրոնական ազատությունների համար (Գեորգ եպիսկոպոս Վեհապետյան և այլք)

Ատրպատականի թեմի առաջնորդ Գեորգ եպիսկոպոս Վեհապետյանը 1855թ. Նասրեդին շահին մի բողոքագիր է ներկայացրել իր հոգևոր հոտի ծանր դրության մասին: Գեորգ Սրբազանը խնդրել էր շահին իրավաբաղադրական ու տնտեսական բնույթի մի շարք միջոցներ կիրառել, որոնք նրա կարծիքով կբարելավեին Թավրիզի և հարակից գավառների հայ բնակչության վիճակը:

Շահին առաջարկված միջոցառումներին վերաբերվող արխիվային փաստաթուղթը պահվում է ՀՀ Ազգային արխիվում և առաջին անգամ շրջանառության մեջ է դրել պրոֆեսոր Ա.Գ.Աբրահամյանը (**Աբրահամյան Ա., 1967**): 14 կետից բաղկացած բողոքագրում ներկայացված են հետևյալ խնդիրները. 1. Իրավունք չտալ հավատափոխ հային պահանջել իր հարազատների գույքը, որը բխում էր այսպես կոչված «Իմամ Ջաֆարի» օրենքի դրույթներից (**Բայբուրդյան Վ., 2005**) և լայնորեն կիրառվում էր Պարսկաստանում, 2. Արգելել հայերի բռնի հավատափոխությունը, 3. Թույլ չտալ ամերիկյան բողոքական միսիոներներին քարոզչությամբ զբաղվել Պարսկաստանում, 4. Արգելել կալվածատերերին՝ հայ գյուղացիներից պահանջելու խոտ և ցախ, 5. Սահմանվածից ավելի մաքս չպահանջել Ռուսաստան մշակության գնացող պարսկահայերից, 6. Արգելել աղջիկ փախցնել և պատժել փախցնողներին, 7. Սանձել Ղարաղաղի խաների և բեկերի անիրավությունները, 8. Օգնել Թավրիզի հայկական Ներսիսյան դպրոցին 250 թուման նպաստով, 9. Պարսկական գյուղերում ցրված հայերին հավաքել մի տեղ, 10. Միրով վարվել հպատակ հայերի հետ, 11. Թեհրանի և Թավրիզի հայերին ազատել հարկերից, 12. Արգելել անզավակ հայ մարդկանց գույքի գրավումը, 13. Թույլ տալ հայ եկեղեցիներում զանգեր հնչեցնել, 14. Օրինականացնել հայկական եկեղեցիների կալվածքների սեփականության իրավունքը (**Աբրահամյան Ա., 1967**): Իր ժամանակի համար թեմակալ առաջնորդի վերոհիշյալ առաջարկությունները բավական համարձակ էին, եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ բողոքագրի առաքումից ոչ շատ առաջ Թավրիզում մոլեռանդ մահմեդականները երկու անգամ 1848 և 1850 թվականներին խժոժություններ էին կազմակերպել հայերի դեմ և ջարդեր կազմակերպելու փորձեր էին արել, որոնց արդյունքում նույնիսկ հայերի բռնի մահմեդականացման դեպքեր էին գրանցվել: Թավրիզի փողոցային խուժանը և լյուսպենացված հասարակության մաս կազմող լրթիները, օգտվելով տեղական իշխանությունների բացահայտ թողտվությունից և հայերի իրավական խոցելի, պետականորեն չկարգավորված կարգավիճակից, փորձեցին տիրանալ հայերի գույքին և միայն կենտրոնական իշխանությունների պատժիչ գործողությունների արդյունքում հաջողվեց հանդարտեցնել իրավիճակը քաղաքում (**Բայբուրդյան Վ.,**

2005): Գեորգ Սրբազանը լավ էր հասկանում, որ նման դեպքերը կրկնվելու միտում ունեն և շահական հրամանագիրը ստանալով կկարողանա իր հոգևոր հոտը պաշտպանել հետագա ոտնձգություններից: Նասրեդին շահը բավարարեց Գեորգ եպիսկոպոսի բողոքագրի 13 կետերը՝ մերժելով հայոց եկեղեցիներում զանգահարության պահանջը: Շահը և նրա շրջապատը լավ էին հասկանում, որ նույնիսկ պարզ զանգահարության հանգամանքը կարող էր նորից գրգռել մոլեռանդ ամբոխին և պատրվակ հանդիսանար նոր խժոժությունների համար Թավրիզում և Թեհրանում: Շուտով հրապարակվեց շահական ֆերման (հրովարտակ), որը Պարսկաստանում բարձրագույն իրավական ակտի ուժ ուներ և որում ամրագրված էին Ատրպատականի հոգևոր թեմի հովանու տակ գտնվող հայերի իրավունքները: Գեորգ եպիսկոպոսի ջանքերով ձեռք բերված իրավունքները դրական դեր խաղացին Ատրպատականի հայերի կյանքում, ինչը արձանագրում են ժամանակակիցները¹ և իրանահայ գաղութի ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողները: Նասրեդին շահը գահ բարձրանալուց հետո ձեռնարկել էր Պարսկաստանում տնտեսական բարեփոխումների լայնածավալ գործընթաց, որը կյանքի կոչելու համար անհրաժեշտ էր պարսկահայ համայնքների գործուն մասնակցությունը երկրի հետմնաց ու քայքայված տնտեսության վերականգնման ուղղությամբ: Շահը և իր շրջապատը քաջ գիտակցում էին, որ պարսկահայ համայնքներին տնտեսական, իրավական և կրոնական բնույթի որոշ արտոնությունների տրամադրումը դրական խթան կհանդիսանան պարսկական պետության հպատակ ձեռներեց հայերի տնտեսական ներուժի բազմապատկման համար ի շահ պարսկական պետության (Անդրիկյան Ա., 2020)²:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

¹ Նազարեթ Գորոյանցը այսպես է բնութագրում Գեորգ եպս. Վեհապետյանին. «Փառահեղ դեմքով, քաղաքավար ձևերով, ծանրաբարո մեկն էր: Գիտեր ըստ պատշաճի վարվիլ օտարներու հետ և իր արժանապատվությունը հարգել տալ: 1855-ին Թեհրան գնաց և կառավարության կողմանե շատ պատվով ընդունվեցավ և հաջողեցավ հրովարտակներ և արտոնագրեր ձեռք բերել», տե՛ս Ն.Յ. Գորոեանց, Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968, էջ 356:

² Հողվածը լույս է տեսնում «Սեփական և այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազոտության հիմնական ուղղությունները. ուսումնասիրության խնդիրներն ու հեռանկարները» պետական նպատակային ծրագրի շրջանակում:

1. **Անդրիկյան Ա. (2020)**, Հայ Առաքելական եկեղեցու հոգևոր թեմերը և պարսկահայության իրավա-քաղաքական վիճակը XIXդ. երկրորդ կեսին, «Բանբեր» Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի, «Լինգվա» հրատ., № 1 (54), Երևան, էջ 247:
2. **Բայբուրդյան Վ. (2007)**, Նոր Ջուղա, Երևան, ՀՀ ԳԱԱ ՊԻ հրատ.:
3. **Մարտիրոսյան Հ. (1969)**, Ժամանակակից իրանահայ գաղութի ինքնավարության մարմինները և իրավական դրությունը, Պատմա-քանասիրական հանդես, ՀՀ ԳԱԱ հրատ, № 1 (171), Երևան, էջ 172:
4. **Մարտիրոսյան Հ. (2007)**, Իրանահայ գաղութի պատմություն, Երևան, «Զանգակ» հրատ.:
5. **Տեր Յովհաննես Զ. (1881)**, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հ. II, Նոր Ջուղա, 1880, Ամենափրկչեան Ս. Վանաց տպարան:

REFERENCES

1. **Andrikyan A. (2020)**, Hay Ar'aqelakan ekeghecow hog&or t'emery' & parskahayowt'yan irava-qaghaqakan vitwaky' XIXd. erkrord kesin /The Spiritual Dioceses of the Armenian Apostolic Church and the Legal-Political Situation of the Armenians in Persia in the Second Half of the 19th Century/, "Banber" V. Brusov State University, "Lingva" Publishing House, No. 1 (54), Yerevan, p. 247.
2. **Bayburdyan V. (2007)**, Nor Jowgha /Nor Jugha/, Yerevan, Publishing House of the RA NAS PI.
3. **Martirosyan H. (1969)**, Jhamanakacic iranahay gaghowt'i inqnavarowt'yan marminnery' & iravakan drowt'yowny' /The Bodies of Autonomy and the Legal Situation of the Modern Iranian-Armenian Colony/, Historical-Philosophy Journal, Publishing House of the RA NAS, No. 1 (171), Yerevan, p. 172.
4. **Martirosyan H. (2007)**, Iranahay gaghowt'i patmowt'yown /History of the Iranian-Armenian Colony/, Yerevan, "Zangak" Publishing House.

5. **Ter Hovhaneants Y. (1881)**, Patmowt'iwn Nor Jowghayow vor yAspahan /History of New Jugha in Aspahan/, vol. II, New Jugha, 1880, Amenaprkhian S. Vanats Printing House.

Arman Andrikyan

Iranian-Armenian ecclesiastical dioceses and the improvement of the condition of Persian Armenians in the 19th century during the reigns of Nasreddin Shah and Mozaffar Ad-Din Shah

Conclusion

Key words and expressions: Persian Armenians, ecclesiastical diocese, shah, diaspora community, religious institutions, Armenian Apostolic Church, diocesan primate, legal-political and economic measures.

The Persian Armenian community and its ecclesiastical authorities experienced a period of relative stability during the reign of Fath Ali Shah Qajar. Fully aware of the significant benefits that the Armenian population—especially that of New Julfa—brought to the Iranian state, Fath-Ali Shah undertook decisive measures to place Armenians and Armenian religious institutions under royal protection.

Following the signing of the Treaty of Turkmenchay, the mass emigration of Armenians from Atropatene and, partially, from New Julfa to the Russian Empire further compelled the Shah to extend his high patronage over the Armenian population and the Armenian Church, with the aim of preventing the continued outflow of Armenians from the country.

Арман Андрикян

Ирано-армянские духовные темы и улучшение положения персидских армян в XIX веке в период правления Насреддина и Мозаффареддина шахов

Заключение

Ключевые слова и выражения: персидские армяне, духовная тема, шах, диаспоральный очаг, религиозные структуры, Армянская апостольская церковь, предводитель темы, правовые, политические и экономические меры.

Персидско-армянская община и ее духовная власть получили относительную стабильность в годы правления Фат-Али шах Каджар. Осознавая значительную пользу, которую армянское население, особенно проживавшее в Новая Джульфа, приносило иранскому государству, Фат-Али шах предпринял решительные шаги по взятию армян и армянских религиозных институтов под государственное покровительство.

После подписания Туркманчайский договор массовая эмиграция армян из Атропатены и частично из Новой Джульфы в Российскую империю вынудила шаха, взяв под свое высшее покровительство армян и Армянскую церковь, принять меры по предотвращению дальнейшего оттока армянского населения из страны.

Արման Անդրիկյան - ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի հետազոտությունների բաժնի գիտաշխատող պատմական գիտությունների թեկնածու, armanandrikian@gmail.com

Арман Андрикян - Кандидат исторических наук, Научный сотрудник отдела исследований диаспоры, Институт археологии и этнографии НАН РА,
E-mail: armanandrikian@gmail.com

Arman Andrikyan - PhD in History, Research Fellow, Department of Diaspora Studies Institute of Archaeology and Ethnography, NAS RA,
Email: armanandrikian@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 06.12.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 17.12.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ՇԱՀԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ
 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ՇԱՐԺՈՒՄ» (1966–1967) ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՎԵՐԱՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» (1969–1971) ԸՆԴՀԱՍՏԱԿՅԱ
 ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.213

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է «Հայաստանի վերամիավորման շարժում» (1966–1967) և «Հայաստանի վերամիավորման միություն» (1969–1971) ընդհատակյա կազմակերպությունների համադրական վերլուծությունը՝ դիտարկելով դրանք որպես խորհրդահայ այլախոհության մեջ ազգային վերամիավորման գաղափարի մարմնավորում: Երկու կառույցներն էլ վերամիավորման գաղափարը դարձրել էին իրենց գործունեության առանցքային նպատակ, ինչը արտահայտված էր ինչպես ծրագրային առաջնահերթություններում, այնպես էլ կազմակերպությունների անվանումներում: Նրանց գործունեության հիմնական ուղղությունները ներառում էին Հայաստանի տարածքային ամբողջականության վերականգնումը, Հայոց ցեղասպանության մասին բարձրաձայնումը և պատմական արդարության հաստատումը:

Համադրական վերլուծության արդյունքում հիմնավորվում է, որ «Հայաստանի վերամիավորման շարժումը» և «Հայաստանի վերամիավորման միությունը» ներկայացնում են նույն գաղափարական հոսքի երկու տարբեր դրսևորումներ: Դրանք առանձնանում են գաղափարական, կառուցվածքային և անվանական բազմաշերտ ընդհանրություններով՝ դառնալով խորհրդահայ ազգային-քաղաքական այլախոհական շարժման կարևորագույն փուլերից մեկը:

Բանալի բառեր և արտահայտություններ. այլախոհություն, «Հայաստանի վերամիավորման շարժում», «Հայաստանի վերամիավորման միություն», Հայոց

ցեղասպանություն, Ղարաբաղ, Նախիջևան, Հայոց լեզու, «Դատական կատակերգություն»:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1960-ական թվականներից Խորհրդային Հայաստանում սկսեցին ձևավորվել քաղաքական այլախոհության այն ուղղությունները, որոնք դարձան ազգային-քաղաքական պայքարի գաղափարական հիմքը: Խորհրդահայ այլախոհական շարժումը ուներ երեք հիմնական գաղափարական առանցք՝ Լեոնային Ղարաբաղի և Նախիջևանի վերամիավորումը Մայր Հայաստանին, հայոց լեզվի պետական կարգավիճակի և ինքնության պահպանությունը, ինչպես նաև Հայաստանի անկախության վերականգնումն ու մարդու հիմնարար իրավունքների պաշտպանությունը: Այս ուղղություններն ամբողջացնում էին խորհրդահայ այլախոհական շարժման գաղափարական համակարգը՝ դառնալով դրա քաղաքական և բարոյական բնութագիրը սահմանող առանցքային դրույթներ (Հարությունյան Շ., 2024):

Նշված գաղափարներն արտացոլված էին Խորհրդային Հայաստանի գրեթե բոլոր ընդհատակյա խմբերի և կազմակերպությունների ծրագրերում, նպատակներում ու գործելաոճում: Մասնավորապես՝ Ղարաբաղի և Նախիջևանի վերամիավորման պահանջն առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում, դառնալով ոչ միայն քաղաքական պահանջատիրության, այլև ազգային ինքնագիտակցության պահպանման ու վերակենդանացման խորհրդանիշ: Այս գաղափարը՝ որպես ազգային-քաղաքական պայքարի առանցք, իր հետևորդներն ուներ բոլոր շարժումներում, սակայն խորհրդահայ այլախոհական միջավայրում ձևավորվեցին նաև կազմակերպություններ, որոնք այն դարձրեցին իրենց գոյության և գործունեության գլխավոր գաղափարախոսական նպատակ:

Այս համատեքստում առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում «Հայաստանի վերամիավորման շարժում» (1966–1967 թթ.) և «Հայաստանի վերամիավորման միություն» (1969–1971 թթ.) ընդհատակյա կազմակերպությունները, որոնք ազգային վերամիավորման գաղափարը ոչ միայն

դրել են իրենց գործունեության առանցքում, այլև արտացոլել են այն սեփական անվանման մակարդակում: Նշված կառույցների ծրագրային և գործնական գործունեության առանցքային բովանդակությունը կազմել են Հայաստանի տարածքային ամբողջականության վերականգնման, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և պատմական արդարության վերականգնման հիմնահարցերը:

Պետք է ընդգծել, որ նման գաղափարական ուղղությունն որդեգրած ընդհատակյա-այլախոհական կազմակերպություններ Խորհրդային Հայաստանում գործել են նաև ավելի վաղ կամ նույն ժամանակահատվածում: Դրանցից կարելի է նշել «Հայ երիտասարդների միություն» (1962–1963 թթ.), «Հայ հայրենասերների միություն» (1967–1968 թթ.) և «Հանուն Հայրենիքի» (1968 թ.) կազմակերպությունները, որոնք իրենց հերթին դարձել են գիտական հետազոտությունների առարկա՝ որպես խորհրդահայ քաղաքական այլախոհության դրսևորումներ:

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվում հատկապես «Հայաստանի վերամիավորման շարժման» և «Հայաստանի վերամիավորման միության» համադրական ուսումնասիրությանը, ինչը պայմանավորված է երկու կազմակերպությունների միջև առկա բազմակողմ ընդհանրություններով: Դրանք դրսևորվում են ոչ միայն գաղափարական-ծրագրային մակարդակում, այլև կառուցվածքային, կազմակերպական և նույնիսկ անվանական նմանությամբ, ինչը թույլ է տալիս դրանք դիտարկել որպես նույն գաղափարական հոսքի երկու արտահայտիչ դրսևորումներ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունը իրականացնելիս հիմնականում կիրառվել են պատմական, պատմահամեմատական և աղբյուրաբանական մեթոդները, ինչը թույլ է տվել բազմակողմանիորեն դիտարկել «Հայաստանի վերամիավորման շարժում» (1966–1967) և «Հայաստանի վերամիավորման միություն» (1969–1971) ընդհատակյա կազմակերպությունների ձևավորման, գաղափարական ուղղվածության և գործունեության առանձնահատկությունները: Հետազոտության

շրջանակում կարևոր տեղ է հատկացվել պետական և անձնական արխիվային նյութերի խորքային ուսումնասիրությանը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Հայաստանի վերամիավորման շարժում» ընդհատակյա կազմակերպություն

1966–1967 թթ. Խորհրդային Հայաստանում այլախոհական գործունեություն է իրականացրել «Հայաստանի վերամիավորման շարժում» ընդհատակյա կազմակերպությունը: Կազմակերպության անվանումը և գաղափարական առաջնահերթությունները բացահայտորեն արտացոլում էին հայրենասիրական շրջանակներում այդ տարիներին տիրող հասարակական-քաղաքական տրամադրությունները: Այն իր գործունեության կենտրոնում դրել էր ազգային հիմնախնդիրների բարձրաձայնումը և դրանց լուծմանը նպաստող գործնական քայլերի իրականացումը: Այս շրջանակում բնական էր, որ ազգային հարցերով մտահոգված այլախոհական մյուս խմբերի նման, կազմակերպությունը նույնպես իր ծրագրում ընդգրկել էր Լեոնային Ղարաբաղի և Նախիջևանի վերամիավորման, ինչպես նաև Հայոց ցեղասպանության ճանաչման և հիշատակի պահպանման հիմնահարցերը:

Կազմակերպության անդամները, կարողանալով գտնել տպագրական հարմարանքներ, 1966-1967 թթ. ընթացքում պատրաստել և տարածել են Ղարաբաղի և Նախիջևանի խնդիրներին և Հայկական հարցին անդրադարձող թռուցիկներ: Այդ թռուցիկների միջոցով, այլախոհական այս խմբի անդամները բարձրաձայնել են, որ խորհրդային կառավարությունը միտումնավոր չի լուծում Հայկական հարցը, այն օգտագործել է խորհրդա-թուրքական դիվանագիտության մեջ՝ ի վնաս հայ ժողովրդի, և ոտնահարել է հայ ժողովրդի իրավունքներն ու նվիրական զգացմունքները (**Հարությունյան Վ., 2014**):

Պարույր Հայրիկյանի անձնական արխիվում պահպանված թռուցիկի օրինակներից մեկը հնարավորություն է տալիս վերականգնել կազմակերպության նպատակադրումների և խնդիրների լուծման վերաբերյալ ունեցած պատկերացումներն ու մոտեցումները: Թռուցիկը ստորագրված է «Հայաստանի

վերամիավորման շարժման կենտրոնական խորհրդի անունից», ինչը վկայում է կազմակերպության ներքին կառուցվածքի և ներկայացուցչական մարմնի գոյության մասին: Թռուցիկի բովանդակության ուսումնասիրությունը բացահայտում է, որ կազմակերպությունը Լեոնային Ղարաբաղի և Նախիջևանի՝ որպես պատմականորեն հայկական տարածքների, Խորհրդային Հայաստանին վերամիավորումը դիտարկել է որպես քաղաքական նպատակ, որի իրականացումն առավել արդյունավետ էր պատկերացվում Խորհրդային Հայաստանի կառավարության միջոցով: Տեքստում առաջ է քաշվում համախմբման և աջակցություն ցուցաբերելու կոչ՝ նպատակ ունենալով ուժեղացնել հանրային աջակցությունն այնպիսի քաղաքական գիծ որդեգրելու համար, որը հնարավորություն կտար Խորհրդային Հայաստանի ղեկավարությանը Մոսկվայում պաշտպանել վերամիավորման հարցում հայկական շահերը: Թռուցիկի վերջում, մասնավորապես գրված է. «Ցույց տանք մեր աջակցությունը Հայաստանի կառավարությանը՝ Ադրբեջանի մեջ մտցված հայկական հողերը Հայաստանին վերամիավորելու հարցում: Մեկ անգամ ցույց տանք Հայկական հարցի արդարացի լուծման համար պայքարելու մեր անսասան կամքն ու պատրաստակամությունը» (Պարույր Հայրիկյան անձնական արխիվ):

1967 թվականին Պետական անվտանգության կոմիտեն (ՊԱԿ) ձեռքակալեց «Հայաստանի վերամիավորման շարժում» ընդհատակյա կազմակերպության անդամներին՝ Մարտին Նալբանդյանին, Ալբերտ Ղուբասարյանին, Մուրիկ Մարգարյանին, Մկրտիչ Մովսիսյանին, Արկադի Հայրապետյանին, Ռուբեն Սաֆարյանին և Իվան-Վանիկ Ստեփանյանին: Նրանց մեղադրանք առաջադրվեց ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 206¹ հոդվածով, որը նախատեսում էր պատասխանատվություն «սովետական պետական և հասարակական կարգերը արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելու» համար: 1967 թ. նոյեմբերի 25–29-ը տեղի ունեցավ յոթ հոգուց բաղկացած խմբի դատավարությունը, որի արդյունքում դատապարտյալներին սահմանվեցին մեկ տարի վեց ամսից մինչև երկու տարի վեց ամիս ազատազրկման ժամկետներ: Համաներման կիրառման արդյունքում՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1967 թ. հոկտեմբերի

31-ի որոշմամբ, խմբի չորս անդամներ վաղաժամկետ ազատ արձակվեցին (Մանուկյան Ա., 2005):

1968 թ. ընթացքում գործող «Հանուն հայրենիքի» ընդհատակյա կազմակերպությունը այդ նույն տարում տպագրում է նույնանուն ամսագիր, որի հոդվածներից մեկը՝ «Դատական կատակերգությունը», նվիրված է «Հայաստանի վերամիավորման շարժում» կազմակերպության դատավարությանը: Հոդվածի հեղինակը՝ Հովիկ Վասիլյանը, անդրադառնալով դատավարության քաղաքական ենթատեքստին, գրում է. «Դարձյալ հայ ժողովրդի 3 ազնիվ ու հայրենասեր զավակներ դատվեցին հանուն այն բանի, որ քննադատել էին մի քաղաքականություն, որը բխելով ռուս-թուրքական հարաբերությունների շահերից, բոլորովին հաշվի չէր առնում այդ առնչությամբ տուժող Հայ ժողովրդի շահերը» (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6, թ. 22):

Դատավարության ընթացքը նկարագրելիս Հ. Վասիլյանը ընդգծում է դատական գործընթացի անօրինական բնույթը՝ նշելով. «մեղադրական որևէ լուրջ փաստի բացակայությունը հնարավորություն չէր ընձեռում դատական կազմին գեթ ձևականորեն մնալու օրինականության սահմաններում»: Հեղինակի այս դիտարկումները կարևոր են նրանով, որ ներկայացնում են ոչ միայն դատավարության նկատմամբ ընդհատակյա այլախոհ շրջանակների գնահատականը, այլև այն քաղաքական ու իրավական միջավայրը, որի շրջանակում իրականացվում էր այլախոհական գործունեության ճնշումը Խորհրդային Հայաստանում:

«Հայաստանի վերամիավորման միություն» ընդհատակյա կազմակերպություն

1969 թ. աշնանը հայ այլախոհական միջավայրում ձևավորվում է նոր ընդհատակյա կազմակերպություն՝ «Հայաստանի վերամիավորման միությունը» (ՀՎՄ): Կազմակերպության անվանումը, գաղափարական ուղղվածությունն ու ծրագրային առաջնահերթությունները լիովին համահունչ էին ժամանակաշրջանի ազգային-քաղաքական մտահոգություններին: ՀՎՄ-ն իր գործունեության կենտրոնում դրել էր Հայոց ցեղասպանության հիշատակի բարձրաձայնումը, ինչպես նաև Հայաստանի պատմականորեն կորցրած տարածքների՝ Նախիջևանի

և Լեոնային Ղարաբաղի՝ Խորհրդային Հայաստանին վերամիավորման խնդիրը, ինչը հստակ արտահայտված էր կազմակերպության անվան մեջ:

Չնայած կազմակերպության գործունեության մեջ նկատելի են նաև անկախական գաղափարների որոշ ձևակերպումներ, դրանց դերը երկրորդային էր: ՀՎՄ-ի հիմնական նպատակն ու ռազմավարական ուղղվածությունը մնում էր Նախիջևանի և Ղարաբաղի միացման հարցի առաջ մղումը, ինչը դիտարկվում էր որպես ազգային-քաղաքական առաջնահերթություն խորհրդահայ այլախոհական շարժման համատեքստում:

Մինչև «Հայաստանի վերամիավորման միության» ձևավորումը Սուրեն Մելիքյանը խորությամբ ուսումնասիրել էր հայոց պատմությունը և հանգել դիտարկմանը, որ Խորհրդային Հայաստանի պայմաններում հայկական ազգային շահերը համակարգված կերպով անտեսվում են: Այս ուսումնասիրությունները, ինչպես նաև տարբեր միջավայրերում Լեոնային Ղարաբաղի և Նախիջևանի վերաբերյալ ունեցած քննարկումները, նպաստեցին նրա մոտ ազգայնական և հայրենասիրական ընկալումների ձևավորմանը: Այդ գաղափարական հիմնավորման վրա Մելիքյանը նախաձեռնում է գաղտնի խմբի ստեղծումը, որի նպատակն էր ուսումնասիրել Ղարաբաղի և Նախիջևանի պատմական ու քաղաքական անցյալը և հետագայում այդ տարածքների Խորհրդային Հայաստանին վերամիավորման հարցը բարձրացնել համապատասխան իշխանական կառույցներում:

1969 թ. սեպտեմբերին և հոկտեմբերին Մելիքյանը կազմակերպում է մի շարք հանդիպումներ համախոհների հետ՝ քննարկելով կազմակերպության ձևավորման ու գործունեության հիմնադրույթները: Քննարկումների արդյունքում որոշում է ընդունվում նորաստեղծ ընդհատակյա կառույցը անվանել «Հայաստանի վերամիավորման միություն» և ղեկավարի պաշտոնում ընտրել Սուրեն Մելիքյանին, որն արդեն կազմել էր կազմակերպության ծրագիրն ու նպատակադրումները: Կազմակերպության հիմնական նպատակն էր ձգտել Խորհրդային Հայաստանին միացնել բոլոր այն տարածքները, որոնք

պատմականորեն հանդիսացել էին Հայաստանի մաս (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 8, թ. 4):

Այս ժամանակահատվածում ազգային և հայրենասիրական համոզումներ ունեցող Վալտեր Մելիքյանը (Սուրեն Մելիքյանի եղբայրը), ինչպես նաև Յուրիկ Բուդաղյանը և Սերոբ Սարգսյանը, տեղեկանալով Սուրեն Մելիքյանի նախաձեռնությամբ ստեղծված ընդհատակյա կազմակերպության գոյության մասին, որոշեցին միանալ «Հայաստանի վերամիավորման միությանը» և իրենց գաղափարական մասնակցությամբ աջակցել կազմակերպության նպատակների իրականացմանը:

1969 թ. հոկտեմբերին և 1970 թ. հունվարին տեղի ունեցած գաղտնի հավաքույթների ընթացքում Յուրիկ Բուդաղյանը հանդես է եկել ազգային խնդիրներին նվիրված ելույթներով՝ ընդգծելով, որ Լեոնային Ղարաբաղը և Նախիջևանը պետք է միացվեն Խորհրդային Հայաստանին: Վալտեր Մելիքյանի նախաձեռնությամբ կազմակերպված մեկ այլ հանդիպման ժամանակ ներկայացվել է ՀՎՄ-ի համառոտ ծրագիրը, Բուդաղյանի կազմած կանոնադրությունը, ինչպես նաև հանձնարարականներ՝ ուսումնասիրելու հայկական պատմությանը նվիրված գրականությունը: Ծրագրում նշվում էր, որ կազմակերպությունն ունենալու է ընդհատակյա կառուցվածք և ստեղծելու է նոր խմբեր ու խմբակներ՝ համախոհների ներգրավման նպատակով:

Կազմակերպության անդամները համոզված էին, որ հայ ժողովուրդը կանգնած է ազգային ինքնության կորուստի վտանգի առաջ, իսկ խորհրդային համակարգում ժողովրդավարությունն ու ազատությունը բացակայում են: Այս քննարկումների արդյունքում նրանք հաստատեցին իրենց միասնական դիրքորոշումն ու վճռականությունը՝ Լեոնային Ղարաբաղի և Նախիջևանի Խորհրդային Հայաստանին միացման հարցում, ինչից հետո ՀՎՄ-ի ներսում սկսվեցին ավելի հաճախակի հանդիպումներ և ավելի կազմակերպված գործունեություն՝ նոր անդամներ ներգրավելու նպատակով (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 8, թ. 6):

ՀՎՄ անդամները, ունենալով կապեր խորհրդահայ այլախոհական շարժման այլ ներկայացուցիչների հետ, ձեռք էին բերել ազգային գաղափարներ պարունակող մի շարք նյութեր ու ձեռագրեր: Այդ նյութերին ծանոթանալուց հետո Յուրիկ Բուդաղյանը 1970 թ. հեղինակեց «Դիտարկումներ», «Երկու խոսք», «Մեր խնդիրներն արդի էտապում», «Հայոց ազգային հարցը և նրա լուծման հնարավորությունները» և «Ազգային հարցի էությունը» վերնագրերով հոդվածներ: Բուդաղյանը դրանցում ընդգծում էր, որ խորհրդային իշխանությունները հետևողականորեն ոտնահարում են հայ ժողովրդի ազգային զգացմունքներն ու իրավունքները: «Մեր խնդիրներն արդի էտապում» հոդվածում նա նաև նշում էր, որ հակակառավարական խմբեր գոյություն ունեն ԽՍՀՄ այլ հանրապետություններում ևս և կոչ էր անում ստեղծել միասնական պայքարի ճակատ այդ խմբերի հետ: Նրա աշխատություններում կրկնվող հիմնական ուղերձն այն էր, որ ազատությունը «բանտարկված է կարմիր քողով», անկախության ձգտումը՝ ճնշված, իսկ Խորհրդային Հայաստանը գտնվում է քաղաքական-տնտեսական կախվածության և ճնշման պայմաններում:

Նույն ժամանակահատվածում Վալտեր Մելիքյանը հրատարակեց «Ներկա էությանը՝ անցյալի շարունակությունն է» և «Հիշեցում հայրենասերներին» հոդվածները, որտեղ շեշտում էր, որ Խորհրդային կառավարության վարած քաղաքականությունը հակասում է մարքսիստական սկզբունքներին և իր բնույթով ռեակցիոն է: Մելիքյանի դիտարկմամբ՝ երկրում խարխլվում են մարդու իրավունքները, գործում է բռնության համակարգ, իսկ ազգային համայնքների նկատմամբ իրականացվում է մշակութային և քաղաքական ճնշում: Հոդվածների եզրափակիչ հատվածներում նա կոչ էր անում հայերին պայքարել ազգային միասնության, իրավունքների պաշտպանման և ինքնիշխանության վերականգնման համար (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 8, թթ. 27-28):

ՀՎՄ-ն նաև կարողացել է ազգային գաղափարներ պարունակող մի շարք հոդվածներ և թռուցիկներ տարածել Լեռնային Ղարաբաղում՝ ձգտելով այնտեղ ձևավորել պայքարի օջախներ և ընդլայնել կազմակերպության ազդեցության աշխարհագրությունը: Այդ նպատակով Վալտեր Մելիքյանը պատրաստել է շուրջ

տասը ձեռագիր նյութեր, որոնք 1970 թ. նոյեմբերին գաղտնի կերպով փոխադրվել են Ստեփանակերտ՝ տարածման և գիտակցության ձևավորման նպատակով (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 8, թ. 30):

1971 թ. փետրվարին Պետական անվտանգության կոմիտեն բացահայտեց «Հայաստանի վերամիավորման միություն» ընդհատակյա կազմակերպությունը, ինչին ի պատասխան սկսվեցին կազմակերպության անդամների ձերբակալությունները: 1971 թ. փետրվարի և մայիսի ընթացքում կալանավորվեցին Վալտեր Մելիքյանը, Յուրիկ Բուդաղյանը, Սերոբ Սարգսյանը, Սուրեն Մելիքյանը և Արամայիս Խաչատրյանը: Դատաքննության ընթացքում ՀՎՄ ձերբակալված անդամները պնդում էին, որ կազմակերպության հիմնադրումը, հավաքների անցկացումն ու ազգային գաղափարներով տոգորված նյութերի պատրաստումը և տարածումը միտված չեն եղել խորհրդային իշխանության թուլացմանը կամ քայքայմանը:

1971 թ. հոկտեմբերի 18-ին դատարանը ՀՎՄ անդամներին մեղավոր ճանաչեց ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 206¹ հոդվածով («սովետական պետական և հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը») և նրանց նկատմամբ սահմանեց հետևյալ ազատազրկման ժամկետները. Վալտեր Մելիքյան՝ 3 տարի, Յուրիկ Բուդաղյան՝ 3 տարի, Սերոբ Սարգսյան՝ 2 տարի, Սուրեն Մելիքյան՝ 2 տարի, Արամայիս Խաչատրյան՝ 1 տարի (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 8, թ. 12):

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ դատավճռից շուրջ հինգ ամիս անց ՊԱԿ-ի հանձնարարությամբ անցկացվեց նոր դատավարություն՝ նոր դատավորի և դատախազի մասնակցությամբ: 1972 թ. մարտի 20-ին կայացված երկրորդ դատավճռով փոխվեց մեղադրանքի իրավական որակումը. ՀՎՄ անդամները մեղավոր ճանաչվեցին ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 65-րդ հոդվածի 1-ին մասով («հակասովետական ագիտացիա և պրոպագանդա») և 67-րդ հոդվածով («առանձնապես վտանգավոր պետական հանցագործություններին ուղղված կազմակերպիչ գործունեություն, ինչպես նաև հակասովետական կազմակերպությանը մասնակցություն») (Սուրեն Մելիքյանի անձնական արխիվ):

Նոր դատավճռով Վալտեր Մելիքյանը դատապարտվեց 4 տարի ազատազրկման, Յուրիկ Բուդաղյանը՝ 3 տարի 6 ամիս, Սուրեն Մելիքյանը՝ 3 տարի, իսկ Սերոբ Սարգսյանը՝ 2 տարի: Առաջին դատավճռով 1 տարվա ազատազրկման դատապարտված Արամայիս Խաչատրյանը երկրորդ դատավարության ընթացքում ներգրավվեց արդեն վկայի կարգավիճակով (ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 8, թթ. 33-34):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1960–1970-ական թթ. խորհրդահայ այլախոհական շարժման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Հայաստանի վերամիավորման շարժում» (1966–1967) և «Հայաստանի վերամիավորման միություն» (1969–1971) կազմակերպությունները ներկայացնում են ազգային-քաղաքական դիմադրության այն ձևերը, որոնք ձևավորվել են Խորհրդային Հայաստանի հասարակական-քաղաքական դաշտում՝ վերամիավորման գաղափարի շուրջ: Երկու կառույցներն էլ, չնայած իրենց գործողությունների սահմանափակ ծավալին, հայ այլախոհական շարժման մեջ զբաղեցրել են առանձնահատուկ տեղ՝ արտահայտելով ազգային ինքնության, պատմական արդարության և տարածքային ամբողջականության վերականգնման պահանջը:

Չնայած կազմակերպությունների գործունեությունը ճնշվեց խորհրդային ռեպրեսիվ կառույցների կողմից, նրանց գոյությունն ու գաղափարական ժառանգությունը ունեցան նշանակալի ազդեցություն խորհրդահայ այլախոհական շարժման հետագա զարգացման վրա: Նրանց գաղափարներն ու քաղաքական պահանջները հետագայում արտացոլվեցին այլախոհական միջավայրի ավելի լայն շրջանակներում՝ նպաստելով ազգային ինքնագիտակցության ամրապնդմանը և հայ հասարակության մեջ վերամիավորման հարցի պահպանմանը որպես կենսունակ քաղաքական օրակարգ:

Համառոտագրություններ

ՀԱԱ – Հայաստանի ազգային արխիվ

Abbreviations

HAA - National Archives of Armenia

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հարությունյան Շ. (2024)**, Այլախոհության գաղափարական ուղղվածությունները Խորհրդային Հայաստանում 1960–80-ական թթ., Երևան, Գիտական տեղեկագիր, № 1 (46), էջ 67-78:
2. **Հարությունյան Վ. (2014)**, Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում, Երևան, «Վան Արյան» հրատ.:
3. **Մանուկյան Ա. (2005)**, Քաղաքական այլախոհությունը Հայաստանում 1950–1988 թթ., Երևան, «Ամրոց Գրուպ» հրատ.:
4. ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 6:
5. ՀԱԱ, ֆ. 1191, ց. 20, գ. 8:
6. Պարույր Հայրիկյանի անձնական արխիվ, փաստաթղթեր:
7. Սուրեն Մելիքյանի անձնական արխիվ, փաստաթղթեր:

REFERENCES

1. **Harutyunyan Sh. (2024)**, Aylaxohowt'yan gaghap'arakan owghghvac'owt'yownnery' Xorhrdayin Hayastanowm 1960–80-akan t't'. /Ideological orientations of dissent in Soviet Armenia in the 1960s–1980s/, Scientific Bulletin, No. 1 (46), p. 67-78.
2. **Harutyunyan V. (2014)**, Aylaxohowt'yowny' Xorhrdayin Hayastanowm /Dissent in Soviet Armenia/, Yerevan, Van Aryan Publishing.
3. **Manukyan A. (2005)**, Qaghaqakan aylaxohowt'yowny' Hayastanowm 1950–1988 t't'. /Political Dissent in Armenia (1950–1988)/, Amrots Group Publishing.
4. NAA, fund 1191, list 20, file 6.
5. NAA, fund 1191, list 20, file 8.
6. Paruyr Hayrikyan personal archive, documents.
7. Suren Melikyan personal archive, documents.

**Manifestations of the Idea of Territorial Reunification in the Underground
Organizations “Union for the Reunification of Armenia” (1966–1967) and “Movement
for the Reunification of Armenia” (1969–1971)**

Conclusion

***Key words and expressions:** Dissent, Union for the Reunification of Armenia, Movement for the Reunification of Armenia, Armenian Genocide, Nagorno-Karabakh, Nakhichevan, Armenian language, Judicial Comedy.*

The article presents a comparative analysis of the underground organizations “Union for the Reunification of Armenia” (1966–1967) and “Movement for the Reunification of Armenia” (1969–1971), examining them as embodiments of the idea of territorial reunification within the context of Soviet-Armenian dissident activity. Both organizations defined the principle of reunification as their central ideological and political objective, a priority clearly reflected both in their programmatic guidelines and in their very names. Their activities focused primarily on the restoration of Armenia’s territorial integrity, the public articulation of the Armenian Genocide, and the pursuit of historical justice.

The comparative examination demonstrates that these two structures represent distinct manifestations of a common ideological current. They share multi-layered similarities—ideological, organizational, and nominal—positioning them as significant stages in the evolution of national-political dissent in Soviet Armenia.

Шаген Арутюнян

**Проявления идеи территориального воссоединения в подпольных организациях
«Движение за воссоединение Армении» (1966–1967) и «Союз за воссоединение
Армении» (1969–1971)**

Заключение

Ключевые слова и выражения: диссидентство, «Движение за воссоединение Армении», «Союз за воссоединение Армении», Геноцид армян, Нагорный Карабах, Нахичевань, армянский язык, «Судебная комедия».

В статье представляется сравнительный анализ подпольных организаций «Движение за воссоединение Армении» (1966–1967) и «Союз за воссоединение Армении» (1969–1971), рассматриваемых как выражение идеи территориального воссоединения в контексте советско-армянского диссидентского движения. Обе организации определяли идею воссоединения в качестве ключевой идеологической и политической цели, что ярко проявляется как в их программных установках, так и в самих названиях. Основные направления их деятельности были ориентированы на восстановление территориальной целостности Армении, публичное освещение проблемы Геноцида армян и утверждение исторической справедливости.

Сравнительный анализ показывает, что данные организации представляют собой два варианта проявления единого идеологического течения. Они характеризуются многоуровневыми сходствами идеологическими, организационными и номинальными, что позволяет рассматривать их как важные этапы в развитии национально-политического диссидентского движения в Советской Армении.

Շահեն Հարությունյան - Պատմական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները՝ ԽՍՀՄ այլախոհական շարժումները 1960-1980-ական թվականներին, դրանց առաջացման նախադրյալները, առանձնահատկությունները, գաղափարական ուղղությունները և դրսևորումները: Հեղինակ է շուրջ 10 գիտական հոդվածի: sh.harutyunyan.edu@gmail.com

Shahen Harutyunyan – Ph.D. in History. Research interests include dissident movements in the USSR during the 1960s–1980s, their preconditions, specific features, ideological directions, and modes of expression. Author of about 10 scholarly articles. sh.harutyunyan.edu@gmail.com

Шаген Арутюнян - Кандидат исторических наук. Сфера научных интересов охватывает диссидентские движения в СССР 1960–1980-х годов, предпосылки их

возникновения, особенности, идеологические направления и формы проявления. Автор около 10 научных статей. sh.harutyunyan.edu@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 10.03.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 19.03.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ՄՇԱԿՈՒՅԹ

ԻՎԵԹ ԹԱԶԱՐՅԱՆ

ԻԴԱ ՔԱՐ. 20-ԴԴ ԴԱՐԻ «ԲՈՂԵՄԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒՀԻՆ»

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.214

ԱՍՓՈՓՈՒՄ

20-րդ դարի լուսանկարչության պատմության մեջ հայազգի լուսանկարիչ Իդա Քարը (Աիդա Քարամյան, 1908–1974) առանձնանում է որպես բազմակողմանի և նորարար արվեստագետ, որի գործունեությունը նշանակալի ազդեցություն է թողել ոչ միայն հայկական, այլև միջազգային լուսանկարչական մշակույթի վրա: Նրա ստեղծագործական ուղին ձևավորվել է բազմաշերտ միջավայրում՝ ներառելով սյուրռեալիստական փորձարարությունները, բոհեմական մշակույթի ազատատենչ ոգին և ժամանակի գեղագիտական նորարարությունները:

Քարի ստեղծագործական արվեստի առանցքը կազմում են դիմանկարները, որոնք առանձնանում են հոգեբանական խորությամբ և գեղարվեստական արտահայտչականությամբ: Դրանց միջոցով լուսանկարչուհին կարողանում էր բացահայտել ոչ միայն մոդելի ֆիզիկական կերպարը, այլև ներաշխարհը՝ ստեղծելով միաժամանակ փաստագրական և խորհրդանշական պատկերներ: Նրա լուսանկարներում հաճախ միահյուսվում են իրականությունն ու արվեստի պայմանականությունները, ինչը դրանք դարձնում է մշակութային հիշողության յուրօրինակ գործեր:

Իդա Քարը ստեղծել է ավելի քան 10 000 լուսանկար, որոնց զգալի մասը պահվում է մասնավոր հավաքածուներում և համաշխարհային հեղինակավոր հաստատություններում: Նրա աշխատանքները լայնորեն ներկայացվել են ցուցահանդեսներում, իսկ 1960 թ. Լոնդոնի «Ուայթչեփլ» պատկերասրահում կազմակերպված անհատական ցուցահանդեսը դարձավ բեկումնային՝ հաստատելով լուսանկարչության տեղը կերպարվեստի համատեքստում:

Քարի ստեղծագործական ժառանգությունը կարևոր է ոչ միայն գեղագիտական արժեքներով, այլև պատմամշակութային նշանակությամբ: Նրա լուսանկարները պահպանել են ժամանակի խոշորագույն արվեստագետների, մտավորականների և հասարակ մարդկանց կերպարները՝ վերածվելով 20-րդ դարի մշակութային դիմանկարի: Այսպիսով, Իդա Քարին կարելի է դիտարկել որպես հայ և համաշխարհային լուսանկարչության առանցքային գործիչ, որի արվեստը այսօր էլ շարունակում է պահպանել իր արդիականությունը:

Քանալի բառեր և արտահայտություններ. Իդա Քար, Աիդա Քարամյան, լուսանկար, լուսանկարչական արվեստ, վավերագրական լուսանկարչություն, հայկական լուսանկարչություն, հայագիտություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լուսանկարչությունը 20-րդ դարում վերածվեց ոչ միայն տեխնիկական նորարարության արդյունքի, այլև մշակութային հիշողության ու ինքնության պահպանման կարևոր գործիքի: Այն հնարավորություն տվեց ոչ միայն փաստագրել իրականությունը, այլև արտահայտել ստեղծագործական նոր ուղղություններ ու գեղագիտական որոնումներ: Այս համատեքստում առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում հայագիտական արվեստագետների ներդրումը համաշխարհային լուսանկարչության զարգացման մեջ:

20-րդ դարի լուսանկարչության պատմության մեջ կարևոր դեր ունի հայագիտական լուսանկարիչ Իդա Քարը: Նրա արվեստը ձևավորվեց բազմաշերտ մշակութային միջավայրում՝ համադրելով սյուրռեալիզմի և բոհեմականության ազդեցությունները: Ծնվելով Տամբովում և ապրելով Ռուսաստանում, Իրանում, Եգիպտոսում ու Փարիզում՝ Քարը կերտեց ինքնատիպ ստեղծագործական ուղի: Լուսանկարչությամբ զբաղվել է սկզբում պատահականորեն, սակայն շուտով այն դարձավ նրա արվեստի հիմնական միջոցը:

Քարի արվեստը զերծ էր դասական լուսանկարչության կանոններից. սյուրռեալիստական մոտեցումները նրան թույլ տվեցին ստեղծել խորհրդանշական պատկերներ առօրյա իրերից: Լոնդոնում նա դարձավ բոհեմական մշակույթի

կարևոր դեմք՝ լուսանկարելով իր ժամանակի առաջատար արվեստագետներին: Նրա դիմանկարներն առանձնանում են մոդելի հոգեբանական խորությամբ՝ ամրագրելով լուսանկարչության գեղարվեստական վերափոխման փուլը:

Թեպետ Իդա Քարին առնչվող որոշ անդրադարձներ առկա են, սակայն դրանք մեծամասամբ սահմանափակվել են համառոտ տեղեկություններով՝ առանց խորքային վերլուծության: Հոդվածում վերլուծվում են Իդա Քարի մի քանի լուսանկարներ, որոնց հիման վրա ընդգծվում է լուսանկարչուհու ստեղծագործական մոտեցումները և անհատական ձեռագիրը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքը կատարվել է արվեստաբանական վերլուծության՝ նկարագրական մեթոդի կիրառմամբ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Իդա Քարը ծնվել է 1908 թ. Ռուսաստանի Տամբով քաղաքում՝ Անահիտ և Մելքոն Քարամյանների ընտանիքում: Երբ նա ութ տարեկան էր, ընտանիքը մեկնում է Իրան, ապա՝ Եգիպտոս: Ալեքսանդրիայում Իդան սովորում է ֆրանսիական վարժարանում, այնուհետև հոր առաջարկով մեկնում է Փարիզ՝ բժշկական կրթություն ստանալու: Փարիզում, սակայն, Իդան կիսատ է թողնում ուսումն ու սկսում զբաղվել վոկալով, հետո նաև սովորում է ջութակ նվագել:

Լուսանկարելու և կադրեր ֆիքսելու նման հնարավորությունը, կյանքի կարևոր պահերը հավերժացնելը պահանջում էր տեխնոլոգիական զարգացում և առաջընթաց: Որքան մեծանում էր լուսանկարչության պահանջարկը, այնքան ավելի արագ էին ի հայտ գալիս դրա զարգացմանն ուղղված տեխնոլոգիական բարելավումները: Յուրաքանչյուր լուսանկարիչ, որն այդ տարիներին մեծ մասշտաբով և հաջողությամբ զբաղվում էր լուսանկարչությամբ, նպաստեց լուսանկարչական տեխնիկայի և, որպես արդյունք, արվեստի այս ճյուղի զարգացմանը:

Իդայի մոտ լուսանկարչության հանդեպ սերն առաջացել է պատահականորեն՝ փարիզյան զբոսանքի ժամանակ, երբ նրա աչքով ընկել է լուսանկարչական մի արհեստանոց, որի տնօրենը, տեսնելով հետաքրքրված

աղջկան և կարծելով, որ վերջինս աշխատանք է փնտրում, առաջարկել է նրան դառնալ իր օգնականը: Նա անմիջապես համաձայնել է այն պայմանով, որ ազատ ժամանակ հնարավորություն ունենա սարքավորումներից օգտվել և սովորել:

Որոշ ժամանակ անց լուսանկարչուհին հանդիպում է իր ապագա ամուսնուն՝ եգիպտացի Էդմոնդ Բելալիին, որը նույնպես լուսանկարիչ էր: Զույգը տեղափոխվում է Եգիպտոս: Նրանք Կահիրեում հիմնում են իրենց համատեղ լուսանկարչական ստուդիան, որը կրում էր «Իդաբել» անվանումը: Ստուդիայում հիմնականում արվում էին դիմանկարներ և նատյուրմորտներ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում Քարն ու Բելալին մասնակցում են սյուրռեալիստական երկու ցուցահանդեսի, որոնցից երկրորդը՝ 1944 թ.:



Նկ 1. Ձեռքեր

Այս շրջանի լուսանկարներում առանձնանում է մի լուսանկար (նկ. 1), որտեղ մուգ ֆոնից կատարյալ ձևով դուրս են գալիս կանացի երկու ձեռքեր: Այս փոքրիկ քանդակը նման է կրոնական մասունքի կամ թանկարժեք հնագիտական գտածոյի: Այս լուսանկարը նմանվում է քանդակագործական օբյեկտի փաստագրումից անդին ընկած ստեղծագործության, որտեղ լուսանկարը ինքնին դառնում է գեղարվեստական իրողություն: Իդա Քարը կապված էր սյուրռեալիստական գաղափարախոսությամբ ստեղծագործող անձանց հետ: Այդ հարաբերությունների վառ դրսևորումն արտահայտված է հենց այս լուսանկարում: Ձեռքը թվում է, թե արձան է, սակայն իրական է՝ առաջնորդվելով երազանման իրականությամբ, որն ընկած էր սյուրռեալիզմի գաղափարախոսության հիմքում:

Ե՛վ Եգիպտոսում, որտեղ Քարը եղել է «Art et Liberté» սյուրռեալիստական խմբի ակտիվ անդամ, և՛ Փարիզում գտնվելու տարիներին նա ձեռք է բերել լուսանկարչական փորձառություն, որի նպատակն էր տապալել գաղափարական

բոլոր հիերարխիաները: 1930-1940-ական թվականներին Քարը մի շարք լուսանկարներ է արել, որտեղ պատկերված են քիչ թե շատ սովորական առարկաներ, սակայն նա առաջարկում է դրանց այլընտրանքային, հաճախ զգացմունքային մեկնաբանություն, դիտակետ (**Garb T., 2016**):

Քարի ու Բելալիի միությունը, սակայն, երկար չի տևում: Կարճ ժամանակ անց Իդան ամուսնանում է մեկ այլ լուսանկարչի՝ Վիկտոր Մասգրեյվի հետ, որի հետ բնակություն է հաստատում Լոնդոնում: Այստեղ էլ սկսվում է «բոհեմական լուսանկարչուհու» կարիերան՝ ամենաակտիվ ստեղծագործական շրջանը: 1947 թ. նա սկսում է լուսանկարել թատրոնի դերասանների կոմերցիոն դիմանկարներ: 50-60-ականներին նրա բնորոշների ցանկը ներառում էր դարաշրջանի ամենանշանավոր նկարիչների, քանդակագործների, բանաստեղծների, դրամատուրգների և կոմպոզիտորների անունները: Լոնդոնում Քարը հանդիպում է իր ապագա «հերոսներին» և շուտով՝ 1954 թ., կազմակերպում «40 արտիստներ Փարիզից և Լոնդոնից» փոքրիկ ցուցահանդեսն իր ամուսնու «Համար մեկ» պատկերասրահում՝ Սոհոյում:

Նկարիչների և գրողների դիմանկարներ ստեղծելը, որպես կերպարվեստի հայտնի ուղղություն, նոր չէր: 1930-ականներին Բրասայնը ակտիվ լուսանկարում էր իրեն շրջապատող հանրահայտ նկարիչներին: Այս համատեքստում պետք է նշել, որ Իդայի՝ 1950-ականներին արված գործերն արժանիորեն շարունակում էին ձևավորված ավանդույթը (**Von Joel M.**):

Լոնդոնի խոշորագույն «Ուայթչեփլ»¹ պատկերասրահում 1960 թ. կազմակերպվել է Իդա Քարի անհատական ցուցահանդեսը, որով նա դարձավ Մեծ Բրիտանիայում անհատական խոշոր ցուցահանդես անցկացրած առաջին կին լուսանկարիչը: Այդ ցուցահանդեսը կարևոր էր նաև երկրում լուսանկարչությունը՝ որպես արվեստի ինքնուրույն ճյուղ ցույց տալու համար, քանի որ պատկերասրահը դրանից 2 տարի առաջ հյուրընկալել էր ամերիկացի նկարիչ Ջեքսոն Փոլոքի առաջին խոշոր ցուցահանդեսը և, այդպիսով, ուներ սկսնակ արվեստագետներին

¹ Whitechapel Gallery:

հարթակ տրամադրելու համբավ (The Guardian): Քարի անձնական փորձի մեծ դրսևորում էին արվեստի խոշոր գործիչների դիմանկարները, ուր արտացոլված էր Փարիզի և Լոնդոնի բոհեմական կյանքը (Քոչար Վ., 2007):

Լուսանկարչության պատմության մեջ մեծ է եղել Իդա Քարի ներդրումը հատկապես իր ստեղծած դիմանկարներով, որոնցում անմահացրել է 20-րդ դարի երկրորդ կեսի անվանի մարդկանց: Դիմանկարային ժանրի նրա լավագույն ստեղծագործություններում



Նկ 2. Օգուստուս Ջոն, 1959 թ.

հավերժացվել են արվեստի տարբեր բնագավառի ներկայացուցիչներ՝ նկարիչներ, դերասաններ, ռեժիսորներ, կոմպոզիտորներ, գրողներ, արվեստի քննադատներ և այլք: Լավագույն օրինակներից է ուելսցի նկարիչ, գծագրող և փորագրող Օգուստուս Ջոնի դիմանկարը (նկ. 2), որում արվեստագետը պատկառելի տարիքում է: Նա պատկերված է նստած՝ հենված այն դարակին, որի վրա խնամքով շարված են հավանաբար իր իսկ ստեղծագործությունները: Ջոնի՝ զարմանք արտահայտող հայացքին հետաքրքիր կերպով հակադրված են ետին պլանում դրված կանացի քանդակային ֆիգուրների՝ միմյանց ուղղված հեզնական հայացքները, որոնք կարծես զրուցելիս լինեն: Պատերին առկա զուգահեռ և կենտրոնաձիգ ուղղությամբ զարգացող գծային կառուցվածքները ակնհայտորեն առնչվում են օպտիկական արվեստին բնորոշ ձևաբանական սկզբունքներին:

Դիտարժան է Բրիջիթ Ռայլիի դիմանկարը (նկ. 3): Առաջին հայացքից լուսանկարում տեսնում ենք նուրբ դիմագծերով միջին տարիքի մի կին՝ սև ու սպիտակ գծերով պատի ֆոնին: Հաշվի առնելով Իդա Քարի ստեղծագործական մոտեցումը (լուսանկարել բնորդին մասնագիտական միջավայրում)՝ այս



Նկ 3. Բրիջիթ Ռայլի դիմանկարը, 1963

տեսողական խաբկանքի տպավորություն: Կնոջ մարմինը՝ մասնավորապես ուղղահայաց ձգված ձեռքը, ներդաշնակորեն ձուլվում է այդ միջավայրին՝ ձևով և ուղղությամբ դառնալով դրա տրամաբանական շարունակությունը: Մարմնի դիրքը խթանում է կոմպոզիցիայի ներքին դինամիկային՝ բազմակի տարածության միաձուլման տպավորություն թողնելով: Միևնույն ժամանակ, գամող հայացքով մոդելը դեմքի խաղաղ արտահայտությամբ հակակշռում է ֆոնի ինտենսիվ վիզուալ շարժմանը՝ ստեղծելով հուզական և կոմպոզիցիոն հավասարակշռություն:

Իդա Քարը բնորդի մասնագիտությունը շեշտելու համար հաճախ լուսանկարի հորինվածքում ընդգրկում էր վերջինիս բնորոշ որևէ առարկա կամ առարկաներ, օրինակ՝ գրողներին՝ գրադարանի ֆոնին, երաժիշտներին՝ համապատասխան երաժշտական գործիքների հետ, քանդակագործներին՝ արվեստանոցում և այլն:

Այլ թեմա է ներկայացվում «Պետական վիճակախաղ, Ստալինյան տաղտ» լուսանկարում (նկ. 4), ուր դեն նետված տոմսերի աղբակույտի մեջ կանգնած մի

լուսանկարի ֆոնի ընտրությունը պատահական չէ: Բնորդ նկարչուհին «օպ-արտի»² լավագույն ներկայացուցիչներից է, և այդ գծերը ներկայացնում են նրա ստեղծագործական ոճը, որոնց հետ կարծես ներդաշնակորեն միաձուլված լինի: Չնայած գծերը իրականում հարթ մակերևույթին են արված և եռաչափ չեն, դրանք տեսողական պատրանքի

միջոցով ձևավորում են խորության և շարժման զգացողություն՝ թողնելով

² Օպ-արտի (օպտիկական արվեստ) հետևորդները գույների, ձևերի ու նախշերի հատուկ համադրությամբ ստեղծում են տեսողական պատրանք՝ պատկերին հաղորդելով շարժում:

կին նայում է ձախ կողմ: Նրա հետևում նստած վիճակախաղ վաճառող տղամարդը նայում է հակառակ ուղղությամբ: Առջևի պլանում մանկասայլակի մեջ պառկած երեխա է, որի գրկում զարմանալիորեն տեղավորված է մի մեծ պայուսակ: Երեխայի հայացքն ուղղված է



տեսախցիկին, իսկ հետին պլանում պատկերված կինն ուշադրությամբ նայում է վիճակախաղի տոմսին: Վիճակախաղի սեղանը ձգողական ուժով անցորդների ամբողջ ուշադրությունը կենտրոնացնում է իր վրա: «Մարդկային ողջ կյանքն այստեղ է՝ ֆիքսված մի լուսանկարչի կողմից, որը գերազանց հետևում էր սեփական բնագոյներին և, կիրառելով իր ֆորմալ հմտությունները, արտահայտում էր դրանք արվեստի մեջ» (The Guardian):

Նկ. 4. Պետական վիճակախաղ,
Ստալինշտատ, 1959 թ.

Իդա Քարի բազմաժանր աշխատանքները, որոնք արժեքավոր են նաև իրենց գեղագիտական լուծումներով, համարվում են 20-րդ դարի եվրոպական լուսանկարչական արվեստի կարևոր նվաճումներից:

Իդա Քարն Արևմուտքի այն եզակի լուսանկարիչներից էր, որին թույլատրված էր մուտք գործել Խորհրդային Միություն և անգամ աշխատել այնտեղ: Հայաստանում նա եղել է երկու անգամ՝ 1957 թ. և 1962 թ.: 1957 թ. Իդա Քարն առաջին անգամ Հայաստան է այցելել Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հրավերով: Այդ ժամանակ էլ հանդիպել է Մարտիրոս Սարյանին (նկ. 5), Ավետիք Իսահակյանին, Գոհար Գասպարյանին, Ալբերտ Ազարյանին, ճարտարապետ Գրիգոր Աղաբաբյանին, քանդակագործ Արա Սարգսյանին և լու-

ասանկարել նրանց: Նա չի ցանկացել որևէ ավելորդ և արհեստական տարրեր մտցնել բնորոշների հանդերձանքի, արդուզարդի և հարդարանքի մեջ, այլ փորձել է շեշտել իր վրա թողած բանաստեղծական տպավորությունը (**Քոչար Վ., 2007**):

Հայրենիքում Իդայի բնորոշները ոչ միայն հայտնի, այլև հասարակ մարդիկ էին՝ իրենց վարք ու բարքով և կենցաղով: Ի տարբերություն Արևմուտքից եկած այլ լուսանկարիչների՝ Իդայի համար հասարակ մարդկանց հետ զրուցելը, նրանց հետ մտերմանալը և անկեղծության ճիշտ պահը որսալը սկզբունքային էր: Նա շրջել է երկրով մեկ ու ստեղծել մի շարք լուսանկարներ, որոնցից կարելի է հիշատակել հայ մանուկների, փայտե առաջին կարուսելի, գինեգործների, հայկական բերք ու բարիքի, շուկայի, նարդի խաղացող տղամարդկանց և բուրդ լվացող կանանց լուսանկարները: Նման լուսանկարներն ավելի տպավորիչ են, ինչպես ասում է անգլիացի գրող Ջոն Բյորջերը. «Տեսողությունն առաջնային է խոսքի համեմատ (**Бёрджер Дж., 2012**)» :



Նկ 5. Մարտիրոս Սարյան

Իդա Քարի լուսանկարներում առկա օրինաչափությունների (ամբողջից մասի առանձնացում, ավելորդ դետալների բացակայություն) վերհանումը թույլ են տալիս խոսել նրա ձևավորած անհատական ստեղծագործական ձեռագրի մասին: Առօրյա կյանքում՝ ոչ ստուդիայի միջավայրում, կիրառել է «ստուդիայի օրենքները». նա կարծես ստուդիան տեղափոխել է կյանք:

1962 թ. անգլիական գեղարվեստական «Ստուդիո» ամսագիրն իր գործունեության ողջ ընթացքում առաջին անգամ փետրվար ամսի ամբողջ համարը նվիրել է Իդա Քարի լուսանկարչական գործունեությանը: Նույն տարում Մոսկվայում բացվել է նրա լուսանկարների մեծ ցուցահանդեսը (**Քոչար Վ., 2007**):

Իդան մինչև կյանքի վերջը՝ 1974 թվականը, ապրել է Լոնդոնում: Այսօր նրա աշխատանքները պահվում են Լոնդոնի դիմանկարների ազգային պատկերասրահում, որտեղ մի քանի տարի առաջ կազմակերպվեց Իդայի աշխատանքների ցուցահանդեսը՝ «Իդա Քար. Բոհեմական լուսանկարչուհի» խորագրով (Ida Kar: Bohemian Photographer <https://www.npg.org.uk/whatson/exhibitions/2011/ida-kar-bohemian-photographer-minisite/>)

Քարի հավերժացրած դիմանկարները լի են արտահայտչականությամբ, գեղարվեստական հատկանիշներով: Խորհրդանշական հազեցվածությունը երբեմն թույլ է տալիս լուսանկարի կերպարը համարել պայքարի, ընդվզման խորհրդանիշ՝ ընդհանրապես դուրս բերելով իրականությունից և մոտեցնելով այուրեալիստական աշխարհին: Փաստագրական, ռեպորտաժային բնույթի լուսանկարներից նույնպես Քարը ունի այնպիսի օրինակներ, որոնք օժտված են ներքին խաղով և արտիստիզմով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իդա Քարի ստեղծագործական ուղին լուսանկարչության պատմության մեջ առանձնանում է իր բազմաշերտությամբ և նորարարությամբ: Նրա ձևավորած արվեստային միջավայրը՝ Ռուսաստանից մինչև Փարիզ, Եգիպտոսից մինչև Լոնդոն, նրան հնարավորություն տվեցին ներմուծել տարբեր մշակութային և գեղագիտական շերտեր իր լուսանկարչության մեջ: Այուրեալիզմի փորձարարական ավանդույթներն ու բոհեմական միջավայրի ազատատենչ ոգին Քարին դարձրին այն լուսանկարիչներից մեկը, որը ոչ միայն արձանագրում էր իրականությունը, այլև վերափոխում այն՝ վերածելով խորհրդանշական և գեղարվեստական պատկերի:

Քարի ամենամեծ ներդրումը կարելի է տեսնել նրա դիմանկարներում. դրանք չեն սահմանափակվում մոդելի արտաքին նկարագրությամբ, այլ բացահայտում են անհատի ներաշխարհը, հոգեբանական լարվածությունը և ստեղծագործական ներուժը: Նրա ընտրած բնորդները՝ սկսած եվրոպական առաջատար

արվեստագետներից մինչև հայ մտավորականներ ու հասարակ մարդիկ, արտացոլում են ոչ միայն անհատական պատմություններ, այլև ժամանակի մշակութային դիմագիծը:

Հայաստանում արված նրա լուսանկարները վկայում են սեփական արմատների հետ Քարի խոր կապի մասին. նա կարողացավ համադրել միջազգային փորձը տեղական մշակութային ավանդույթների հետ՝ ստեղծելով պատկերներ, որոնք միաժամանակ փաստագրական են և գեղարվեստական:

Այսպիսով, Իդա Քարի գործունեությունը ցույց է տալիս, որ լուսանկարչությունը 20-րդ դարում վերածվեց ոչ միայն փաստագրման, այլև գեղարվեստական ինքնարտահայտման միջոցի: Նրա արվեստը միաժամանակ կրում է իր դարաշրջանի պատմական շունչը և ունակ է խոսել ներկայիս դիտորդի հետ՝ դարձնելով Իդա Քարին լուսանկարչության համաշխարհային պատմության առանցքային կերպարներից մեկը:

Իդա Քարը ուներ նուրբ ճաշակ, ինչը զգացվում էր դիմանկարներում՝ լույսի մտածված կիրառման և բնորդներին բնորոշ իրերի դասավորությամբ: Իդա Քարն իր լուսանկարների հերոսներից մեկն էր, միայն թե տեսախցիկի հակառակ կողմում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Քոչար Վ. (2007)**, Հայ լուսանկարիչներ, Երևան, Հեղինակային հրատ.:
2. **Von Joel M. (2020)**, A Bohemian Rhapsody, «F22 magazine», Ida Kar - f22 (state-media.com), 09.11.2020:
3. **Garb T. (2016)**, Ida Kar: Bohemian Photographer, «The Worlds of Modernism: Gender and Global History», edited by Kutzinski V. D., Donskis L., Yale University Press.
4. **Бёрджер Дж. (2012)**, Искусство видеть [The Art of Seeing], изд. «Клаудберри» (СПб/St. Petersburg):

REFERENCES

1. **Kochar V. (2007)**, Hay lowsankarichner /Armenian Photographers/, Yerevan, self-published book:
2. **Von Joel M. (2020)**, November 9. A Bohemian Rhapsody. F22 magazine. Retrieved from <https://www.state-media.com/f22/ida-kar>
3. **Garb T. (2016)**, Ida Kar: Bohemian Photographer. In V. D. Kutzinski & L. Donskis (Eds.), *The Worlds of Modernism: Gender and Global History*. Yale University Press.
4. **Бёрджер Дж. (2012)**, *Iskusstvo videt' /Искусство видеть/ [The Art of Seeing]*, изд. “Клаудберри” (СПб/St. Petersburg):

ԿԱՅՔ / WEBSITE

Ida Kar: Bohemian Photographer <https://www.npg.org.uk/whatson/exhibitions/2011/ida-kar-bohemian-photographer-minisite/>, 25.03.22

<http://goethe-zentrum.am/hy/event/20-6/>, 21.03.22

Ida Kar: Bohemian Photographer, 1908-1974 – review, *The Guardian*, [Ida Kar: Bohemian Photographer, 1908-1974 – review | Photography | The Guardian](#)

ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Նկ 1. Ձեռքեր:

Նկ 2. Օգոստոս Ջոն, 1959 թ.

Նկ 3. Բրիջիթ Ռայլի դիմանկարը, 1963 թ.:

Նկ 4. Պետական վիճակախաղ, Ստալինշտատ, 1959 թ.:

Նկ 5. Մարտիրոս Սարյան:

LIST OF FIGURES

Fig. 1. D'er'qer /Hands/.

Fig. 2. O'gowstows Jon /Augustus John/, 1959.

Fig. 3. Brijit' R'ayli dimankary' /Portrait of Bridget Riley/, 1963.

Fig. 4. Petakan vitwakaxagh, Stalinshtadt /State Lottery, Stalinstadt/, 1959.

Fig. 5. Martiros Saryan /Martiros Saryan/.

Yvette Tajarian

Ida Kar: A "Bohemian Photographer" of the 20th Century

Conclusion

Key words and expressions: *Ida Kar, Aida Karamian, photograph, photo album, documentary photography, Armenian photography, Armenian studies.*

In the history of 20th-century photography, the Armenian-born photographer Ida Kar (Aida Karamian, 1908–1974) stands out as a versatile and innovative artist whose work had a significant impact on both Armenian and international photographic culture. Her creative trajectory developed within a multilayered environment that encompassed surrealist experimentation, the free-spirited atmosphere of bohemian culture, and the aesthetic innovations of her time.

At the core of Kar's artistic legacy lies portraiture, distinguished by psychological depth and artistic expressiveness. Through her portraits, she was able to reveal not only the physical appearance of her sitters but also their inner world, creating images that were at once documentary and symbolic. Her photographs often intertwine reality with artistic conventions, turning them into unique documents of cultural memory. Ida Kar produced more than 10,000 photographs, many of which are preserved in private collections and prestigious international institutions. Her works have been widely exhibited, with the landmark solo exhibition at London's Whitechapel Gallery in 1960 affirming photography's place within the broader context of the visual arts.

Kar's creative heritage is valuable not only for its aesthetic qualities but also for its historical and cultural significance. Her photographs immortalized prominent artists, intellectuals, and ordinary individuals of her time, thereby shaping a cultural portrait of

the 20th century. Thus, Ida Kar can be regarded as a key figure in both Armenian and world photography, whose art continues to maintain its relevance today.

Ивет Таджарян

Ида Кар: "Богемный фотограф XX века"

Заключение

Ключевые слова и выражения: Ида Кар, Аида Карамян, фото, фотоальбом, документальная фотография, Армянская фотография, Арменоведение.

В истории фотографии XX века особое место занимает фотограф армянского происхождения Ида Кар (Аида Карамян, 1908–1974), деятельность которой оказала значительное влияние не только на армянскую, но и на международную фотокультуру. Её творческий путь сформировался в многообразной среде, включавшей эксперименты сюрреалистического авангарда, свободолобивую атмосферу богемной культуры и эстетические новаторства времени. Центральное место в искусстве Кара занимают портреты, отличающиеся психологической глубиной и художественной выразительностью. С их помощью фотографу удавалось раскрыть не только внешность модели, но и её внутренний мир, создавая одновременно документальные и символические образы. В её фотографиях нередко переплетаются реальность и художественные условности, что превращает их в уникальные свидетельства культурной памяти.

Ида Кар создала более 10 000 фотографий, значительная часть которых хранится в частных коллекциях и авторитетных международных учреждениях. Её работы широко экспонировались на выставках, а персональная выставка 1960 года в лондонской галерее "Уайтчепел" стала переломным событием, закрепив фотографию как равноправную форму изобразительного искусства.

Творческое наследие Кара важно не только с эстетической, но и с историко-культурной точки зрения. Её фотографии сохранили образы крупнейших деятелей искусства, интеллектуалов и простых людей, превратившись в культурный портрет XX века. Таким образом, Ида Кар по праву может рассматриваться как ключевая

фигура армянской и мировой фотографии, чье искусство сохраняет актуальность и сегодня.

Իվեթ Թաջարյան - Արվեստագիտության թեկնածու, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական կենտրոն-Մատենադարանի Արևելագիտության բաժնի ավագ գիտաշխատող, Մատենադարանի թանգարանի ղեկավար, Երևանի պետական համալսարանի դոցենտ և Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի դասախոս: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է հայ-իրանական արվեստի փոխառնչությունները, իրանահայ գաղթօջախի արվեստը, իսլամական արվեստը, հայ և համաշխարհային լուսանկարչությունը: Հեղինակ է շուրջ վեց տասնյակ գիտական հոդվածի, երեք մենագրության և հինգ ցուցադրության ավրոմի: yvettetaj@yahoo.com

Yvette Tajarian - PhD in Art History, Senior Researcher at the Department of Oriental Studies of the Mesrop Mashtots Research Institute of Ancient Manuscripts – Matenadaran, Head of the Matenadaran Museum, Associate Professor at Yerevan State University, and Lecturer at the Chair of History and Theory of Armenian Art. Her research interests include Armenian-Iranian artistic relations, the art of the Iranian-Armenian Diaspora, Islamic art, and both Armenian and global photography. She is the author of around sixty scholarly articles, three monographs and five exhibition catalogues. yvettetaj@yahoo.com

Ивет Таджарян - Кандидат искусствоведения, старший научный сотрудник отдела востоковедения Научно-исследовательского центра древних рукописей имени Месропа Маштоца — Матенадаран, заведующая Музеем Матенадарана, доцент Ереванского государственного университета и преподаватель кафедры истории и теории армянского искусства. Ее научные интересы охватывают армяно-иранские художественные взаимосвязи, искусство ирано-армянской диаспоры, исламское искусство, армянскую и мировую фотографию. Автор около шестидесяти

научных статей, трёх монографий и пяти выставочных каталогов.
yvettetaj@yahoo.com

Խմբագրություն է ուղարկվել 24.10.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 04.11.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ

ՆԱԻՐԻ ԲԱԼԱԲԵԿՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՈՐՄՆԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ
ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.215

ԱՄՓՈՓՈՒՄ

Ուրարտական որմնանկարչական արվեստը կարևոր տեղ է զբաղեցնում հին աշխարհի մշակութային ժառանգության մեջ: Այն ձևավորվել և զարգացել է մ.թ.ա. 9-6-րդ դարերում Ուրարտու պետության տարածքում, որը զբաղեցնում էր Հայկական լեռնաշխարհի մեծ մասը՝ ներկայիս Հայաստանի Հանրապետության, Արևելյան Թուրքիայի (Արևմտյան Հայաստան), Իրանի Իսլամական Հանրապետության հյուսիսարևմտյան և Վրաստանի Հանրապետության հարավային շրջաններում:

Ուրարտական որմնանկարչական արվեստը հին աշխարհի մշակույթում առանձնանում է իր ինքնատիպությամբ, գեղարվեստական կատարողականությամբ, հասարակական լայն շերտերի ընդգրկմամբ և գաղափարական բովանդակությամբ: Այն ոչ միայն դեկորատիվ արվեստ էր, այլև պետական գաղափարախոսության, կրոնական պատկերացումների և մշակութային ինքնության արտահայտություն: Իրավամբ, հայ ժողովրդի մշակութային հարուստ ժառանգության մեջ ուրարտական որմնանկարչությունը թեև սկսել է ուսումնասիրվել տակավին նախորդ դարի կեսերից, և դեռ բացահայտումների և խոր ու համակողմանի ուսումնասիրման կարիք ունի, այնուամենայնիվ այսօր այն լայն ճանաչման ու գնահատանքի է արժանացել:

Ուրարտական նյութական մշակույթի բազմաթիվ օրինակներ (նմուշներ) դարձել են գիտական մեծաթիվ արժեքավոր հետազոտությունների առարկա, առաջացրել ու մինչև օրս էլ առաջացնում են հիացմունք, զարմանք, տեղի են տալիս քննարկումների, վերլուծությունների:

Բանալի բառեր և արտահայտություններ. որմնանկարչություն, մոնումենտալ արվեստ, գեղանկարչություն, ուրարտական արվեստ, գեղարվեստական մշակույթ, ճարտարապետական հարդարանք:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության և նրա հարևան երկրների տարածքում սփռված պատմության և մշակույթի ուրարտական հուշարձանները մեր ժողովրդի անջնջելի հիշողություններն են, այն պատվանդանը, որի վրա են հիմնված նրա քաղաքական, բարոյական, հոգևոր և գեղագիտական ըմբռնումները: Դրանք հայ ժողովրդի կենսագրությունն են, նրա ինքնության ազդարարները, նրա հերոսական և ողբերգական պատմության լուռ վկաները, համաշխարհային մշակութային ժառանգության անքակտելի մասը, քաղաքակրթության զարգացման գործում նրա ներդրած ավանդի հավաստումը: Հայ ժողովրդի նյութական մշակույթի պատմության մեջ ուրարտական որմնանկարչության պահպանված պատառիկները անգնահատելի արժեքներ են: Եվ պատահական չէ, որ նման զլուխգործոցների պահպանությունը համարվում է պետական և հայագիտական մեծ ու ազգանվեր գործ:

Ուրարտական որմնանկարչությունը (որմ՝ պատ, որմնանկարչություն՝ պատերի նկարագարում)՝ Ուրարտական թագավորության ժամանակաշրջանից հայտնի արվեստի մի ճյուղ է, որը մեզ բացահայտվել է հիմնականում հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերված փլված պատերի բեկորների, պատերի վրա պահպանված գունանյութերի հետքերի, կենցաղային և ծիսական նշանակության անոթների վրա արված պատկերների և որոշ գրավոր աղբյուրների միջոցով: Թեև Ուրարտուից պահպանված որմնանկարները համեմատաբար քիչ են, այնուամենայնիվ դրանք կարևոր պատկերացում են տալիս այդ ժամանակաշրջանի գեղարվեստական ճաշակի, եղած գաղափարական ընկալումների, դեկորատիվ-կիրառական նշանակություն ունեցող առարկաների մշակության մասին:

Ուրարտական որմնանկարչությունը հաճախ միահյուսված էր ճարտարապետության հետ և առավելաբար ընդգծում էր տվյալ շինության խորհրդանշական ազդեցությունը, պալատական սրահների վեհությունն ու հզորությունը, դրանց հանդիսավոր նշանակությունը: Այդպիսով, որմնանկարները ծառայում էին ոչ միայն զարդարանքի, գեղագիտական ընկալումները բավարարելու համար, այլև հանդիսամուտ էին որպես գաղափարական՝ ուժի, աստվածային պաշտպանության, թագավորական իշխանության հզորության ներկայացման ազդու գործիք:

Գեղանկարչության տեսակ համարվող որմնանկարչության հայկական մեզ հայտնի օրինակները պատկանում են հենց ուրարտական շրջանին: Դրանք մասնավորապես Կարմիր բլուրի (**Պիատրովսկի Բ., 1971**), Էրեբունի պալատի (մ.թ.ա. VII դ.) որմնանկարներն են (**Հովհաննիսյան Կ., 1973**), որոնք հայտնաբերվել են 1950 թվականին, ուր պատկերված են աստվածների երթը, որսի տեսարաններ և այլն: Հետագայում որմնանկարների բազմաթիվ բեկորներ են հայտնաբերվել հայկական հելլենիստական դարաշրջանի Արտաշատ քաղաքում և այլուր, սակայն հայկական որմնանկարչությունն առավել զարգացում է սպրել միջնադարյան Հայաստանում, որին կանդրադառնանք մեր հաջորդ հոդվածում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թեմայի ուսումնասիրության ընթացքում կիրառվել է հին աշխարհի՝ մեր դեպքում Ուրարտական թագավորության շրջանի մոնումենտալ գեղանկարչության առաջացման սոցիալական, փիլիսոփայական, հոգեբանական, արվեստագիտական և մանկավարժական մեթոդաբանություն՝ կիրառվելով մի քանի մեթոդներ՝ քննական, վերլուծական, համադրական, ինտեգրատիվ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մ.թ.ա. 9-րդ դարի կեսերին Հայկական լեռնաշխարհի տարածքում ստեղծվեց մի պետություն, որին վիճակված էր դառնալ մ.թ.ա առաջին հազարամյակի առաջին կեսի հզորագույն տերություններից մեկը: Խոսքը Ուրարտուի կամ Վանի թագավորության մասին է, որի առաջացման (ձևավորման) առաջին

տեղեկությունները հիշատակվում են Ասորեստանի արքա Սալմանասար 3-ի թողած սեպագիր արձանագրություններում (**Առաքելյան Բ., 1988**)

Նախ և առաջ, հարկ ենք համարում ընդգծել, որ մինչև Ուրարտական պետության ստեղծումը Հայկական լեռնաշխարհի մեծ մասը ընդգրկված էր մեկ միասնական մշակութային դաշտի մեջ, որով պայմանավորված՝ պետականության ստեղծումը խորթ չէր տեղաբնակների համար: Պետականության և միակենտրոն ղեկավարման արդյունքում իրականացվում է սոցիալ-մշակութային մի շարք բարեփոխումներ՝ ստեղծվում է պետական ջրային համակարգ, միասնական և կենտրոնացված դիցարան, ուրույն ճարտարապետական ոճ և այլն: Այս գործընթացների համակարգում կարևոր էր այսպես կոչված խորհրդանշական իշխանության դերը (ըստ Պիեռ Բուրդյոի՝ խորհրդանշական իշխանության մասերն են կազմում լեզուն, ճարտարապետությունը, կերպարվեստը, որն էլ ավելի է խթանում ուրարտական պետության ձևավորմանն ու զարգացմանը): Այս իրողությունները մենք հարմար ենք գտնում քննարկել Ուրարտուի որմնանկարչական մշակույթին վերաբերող ուսումնասիրությունների համատեքստում:

Որմնանկարչությունը, որպես արվեստի ուրույն բնագավառ, ձևավորվել է Վանի թագավորությունում: Որմնանկարներ են հայտնի Կարմիր բլուր, Էրեբունի, Արմավիր և այլ հուշարձաններից: Նշված հնավայրերից հայտնաբերված որմնանկարները զգալի չափով փոխեցին մեր պատկերացումները ուրարտական հոյակերտ կառուցվածքների ներքին տարածությունների գեղարվեստական հարդարանքի մասին, ցույց տալով, որ որմնանկարչությունը, որպես գեղարվեստական ստեղծագործության բնագավառ, կանգնած է եղել շատ բարձր մակարդակի վրա:

Դեռևս 1930-ական թվականներից սկսված՝ ուղղորդված պեղումները ցույց տվեցին, որ ճարտարապետական որմնանկարները Ուրարտուում կազմել են ինչպես աշխարհիկ, այնպես էլ պաշտամունքային հոյակերտ շինությունների հարդարանքի անբաժանելի մասը: Դրա հիասքանչ արտահայտությունը եղան Էրեբունիի Խալդի

աստժո տաճարի պեղումների ընթացքում հայտնաբերված որմնանկարների բեկորները (Հովհաննիսյան Կ., 1973):

Ուրարտական որմնանկարների հորինվածքը միապլանային է՝ կազմված հաջորդական շարքերից, որոնք դասավորված են հորիզոնական շերտերով: Այդպիսի հորինվածքում կարելի է դիտել հեռանկարային կառուցվածքի ամենանախնական պատկերացումները: Այդ հորինվածքներում հեռապատկերի խորությունը որոշում է պատկերագարը որմնանկարի հորիզոնական շերտերի խիստ համաչափ ուղիղ, որը զարգանում է դեպի վեր՝ իբրև տարածական խորություն: Երբեմն որմնագարդերն իրենց հորինվածքով կազմավորվում են որոշակի երկրաչափական ձևով, ասենք սկավառակի վրա կամ ամփոփված շրջանակի մեջ: Այդ է պատճառը, որ չնայած երբեմնի ընդարձակ հորինվածքներից մեզ է հասել հաճախ որմնանկարների միայն աննշան պատառիկներ, այնուամենայնիվ հնարավոր է լինում վերականգնել նրանց սկզբնական տեսքը՝ հիմք ընդունելով բաղկացուցիչ տարրերի կրկնության իրողությունը: Որմնանկարների պաշտամունքային թեմաներում կարելի է տեսնել աստվածների թափոր, սրբազան կենդանիներ, կենաց ծառ, իսկ աշխարհիկ մոտիվներում՝ որսի տեսարաններ, անասնապահության ու երկրագործության պատկերներ այլն: Կերպարները աստվածություններին պատկերում են աջ ոտքը կենդանու մեջքին, ձախը՝ գլխին, կիսադեմով: Դրանք լավ մշակված են, սակայն, գլխագարդի և հագուստի մանրամասները՝ կտորի նախշերը, թիթեղյա վրականները և այլն:

Հաջողվել է բացահայտել նաև որմնանկարների կատարման եղանակը: Պարզվում է, որ որմնագարդերի նշագրումները շրջանակների կամ գծերի ձևով պատերի վրա նախապես կատարվել են քանոնով ու կարկինով, որից հետո գծագրված մակերեսներին կարմիր ներկով ներգծվել են նկարների ուրվագծերը, որոնք այնուհետև ծածկվել են զանազան գույներով: Որմնանկարներում նախշակադապարի կիրառություն չի նկատվում, ընդ որում, նկարները կատարված են միանգամայն անկաշկանդ, վստահ ձեռքով և նրբագեղ գծերով, որոնք վկայում են նկարիչների մեծ փորձի, հմտության և գծանկարչական վարպետության մասին: Եվ

Եթե այդ վարպետությունը միանգամայն համոզիչ կերպով դրսևորվում է աշխարհիկ թեմաներում (որսի տեսարան, անասնապահության ու երկրագործության պատկերներ) կամ նկարչի ստեղծագործական անհատականության մեջ, որն արտահայտվում է գծերի ու ծավալների յուրահատուկ մեկնաբանության նրբերանգներով, ապա պաշտամունքային որմնանկարներում նկարիչը դուրս չի գալիս հորինվածքների կատարման պաշտոնական և խիստ սահմանափակ եղանակների շրջանակներից: Բնորոշ է, որ զարդանկարների կամ մարդկային կերպարանքների գծագրման ժամանակ ուրարտական նկարիչները հետևել են համամասնական կառուցվածքների օրինակներին, որոնք կիրառվել են նաև ճարտարապետության մեջ: Մակայն Էրեբունիի որմնանկարները տարբերվում են մյուսներից ոչ միայն իրենց գծանկարչությամբ, այլև պայծառ գույների ներդաշնակությամբ: Սովորաբար հիմնաներկի վրա քսվում էին երկնագույն, կապույտ, կարմիր (տարբեր նրբերանգներով), կանաչ, դեղնակարմիր և սև գույների ներկեր: Ինչպես նկատվում է ներկապնակն այնքան էլ հարուստ չէր, սակայն պայծառ և հյութեղ գույների համադրությունը հիանալի տպավորություն էր գործում: Որմնանկարների երանգավորման հիմնական գույները կապույտն ու կարմիրն էին:

Որմնանկարներում, իբրև կանոն, գույների խառնում չի նկատվում: Նրանք երանգավորման տարբերությունը ստանում էին տվյալ գույների ուժեղացման միջոցով, հավանաբար ներկի կրկնակի շերտ քսելով: Որմնանկարների՝ մեզ հասած մնացորդները ցույց են տալիս, որ նրանք դարերի ընթացքում պահպանվել են կապույտ և սև գույնի ներկերի դիմացկունության շնորհիվ (Նկ. 1, 2):

Նկ.2



Նկ.1



Որմնանկարների համար կիրառվում էին ինչպես բնական, այնպես էլ արհեստական ներկեր: Էրեբունիում հայտնաբերված անոթներից մեկում գտնվել են մեծ քանակությամբ կապույտ ներկի բրիկետներ, իսկ Թոփրակ կալեում ներկերը եղել են փոշու տեսքով (**Пиотровский Б., 1944**):

Ներկեր պատրաստելու համար ուրարտացիները կիրառում էին այնպիսի եղանակներ, որոնք հայտնի էին Միջագետքում: Այսպես, սպիտակ ներկը նրանք ստանում էին գիպսից, սևը՝ ածխից, կարմիրը՝ հայկական հարթավայրերում տարածված որդան կարմիր միջատից և երկաթի օքսիդից, իսկ վառ կապույտ ստանալու համար օգտագործում էին երկնագույն քարը: Ներկեր պատրաստում էին նաև պղնձից, անագից, կապարից և այլ նյութերից:

Որմնանկարը կատարվում էր սպիտակ բարակ ձեփի վրա, որով ծածկվում էր հում աղյուսով շարված պատերի հարդի խառնուրդով հաստ ձեփածածկը:

Ուրարտական պետության տարբեր մասերում հայտնաբերված համանման որմնանկարների հորինվածքային լուծումների համեմատությունը ցույց է տալիս, որ նրանք ենթարկվել են ստեղծված ավանդների որոշակի կանոններին և ժամանակի ընթացքում այդ տարրերը օրինականացվել են: Ըստ որում նկարների հորինվածքային թեմաները պայմանավորված են եղել ոչ այնքան պատվիրատուի կամքով, որքան դարերով ստեղծված կանոններով, որոնք մշակվել են փորձնական, ստեղծագործական որոնումների ընթացքում (**Тирацян Г., 1988**):

Այս առումով որոշակի ընդհանրություն է նկատվում ուրարտական և ասորեստանյան որմնանկարների միջև, հատկապես զարդանկարային թեմաների, նրանց հորինվածքային կառուցվածքի, ինչպես նաև որոշ տարրերի մեկնաբանության մեջ: Եվ, չնայած նրան, որ ուրարտական որմնանկարները սերտորեն առնչվում են ասորեստանյան արվեստի հետ, այսուհանդերձ ուրարտական գեղանկարչությունն իր երկարատև զարգացման ընթացքում ձեռք է բերել միայն իրեն բնորոշ երանգավորում, որն անկրկնելի յուրահատկություն է հաղորդել այդ արվեստին: Ասորեստանյան արվեստի գեղագարդման հնարքները փոխ առնելով, ուրարտական նկարիչները զգալի չափով հարստացրել են դրանք, Հին Արևելքի արվեստի մեջ ներմուծելով իրենց սեփականը: Ասորեստանյան

այնպիսի կենտրոնների որմնախորշերը, ինչպիսիք էին՝ Դուր-Շարուկին, Նիմրուդը, Թիլ-Բոբսիպը և ուրիշներ, ընդհանուր շատ տարբեր ունեն ուրարտական որմնանկարների հետ (աստիճանավոր աշտարակիկներ, վարդյակներ, նոնենիներ, խնձորենիներ, սրբազան ծառ՝ երկու կողմերին կանգնած աստվածներով, եզրագարդերի դրվագված հորինվածքներ, ճոխ զարդարված սկավառակներ և քառանկյունիներ՝ դեպի ներս ընկած կողմերով, որոնց մոտ տեղադրված են մարդկային գլուխներով թևավոր ցուլերի (Շեդու), ծնկաչոք առյուծների կամ ցուլերի պատկերներ) (Tiratsyan G., 2003): Թերևս սա է ուսումնասիրողներին դրդում պնդելու, որ ուրարտական մոնումենտալ գեղանկարչության ձևավորման պրոցեսը տեղի էր ունենեցել հին Ասորեստանի արվեստի հետ ունեցած փոխադարձ սերտ կապի ազդեցությամբ, որոնց համար, ամենայն հավանականությամբ, իբրև ավանդույթ է ծառայել դարերի խորքից եկող Շումերի մշակույթը, որի որմնանկարների հնագույն նմուշները հայտնաբերվել են Թել-Ուկայրի տաճարում:

Մեր այս հոդվածի քննարկման երկրորդ մասում անդրադարձ կկատարենք ուրարտական արվեստի նկատմամբ հետաքրքրությունների ձևավորմանը հանրակրթական դպրոցում, ուստի՝ դիտարկելով հանրակրթական դպրոցներում Ուրարտուի արվեստի դասավանդումը՝ հարկ ենք համարում կանգ առնել մի շարք գործոնների վրա՝

Ա) Հարկավոր է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները և դասընթացը մատուցել ըստ համապատասխան տարիքային խմբի գիտելիքների, կարողությունների և հմտությունների՝ հարկ եղած դեպքում ցուցաբերելով թե՛ անհատական, թե՛ խմբային մոտեցում:

Բ) Կիրառել հնարավորինս տարբեր մեթոդներ, որոնք կնպաստեն դասավանդման գործընթացի ընկալմանն ու արդյունավետությանը: Այս առումով հատկապես կարևոր են դիտակտիկ նյութերի կիրառումը, արտադպրոցական դասաժամերը ուրարտական ժամանակաշրջանի հուշարձաններում անցկացնելը, ինչն ավելի կենդանի և անմիջական կդարձնի աշակենտների կապը ուրարտական արվեստին:

Մեր հետազոտական աշխատանքը էլ ավելի արդյունավետ դարձնելու համար հարկ ենք համարել տարբեր հետազոտությունների անցկացնել թե՛ հանրակրթական դպրոցներում (մասնավորապես ուսումնական պրակտիկայի ժամանակ), թե՛ ուրարտական ժամանակաշրջանին վերաբերող տարբեր հնավայրերում, և թե՛ թանգարաններում: Այս ամենի արդյունքում պարզվեց, որ աշակերտների համար չափազանց կարևոր նշանակություն ունեն դիտակտիկ նյութերի կիրառումը: Այդպիսիք կարող են հանդիսանալ ուրարտական արվեստին վերաբերող տարբեր նկարների ցուցադրումը (հատկապես սահիկաշարերի ցուցադրումներ), ինչը մեծապես նպաստում է աշակերտների տեսողական հիշողության զարգացմանը: Բարձր դասարաններում բավականին արդյունավետ և հետաքրքիր է 6 մասից բաղկացած «Հայոց պատմություն» ֆիլմաշարի Ուրարտուին վերաբերող հատվածը, որտեղ տարբեր տեխնոլոգիաների միջոցով փորձ է արվում ներկայացնել Վանի թագավորության ամբողջական պատմությունը, ինչն ուղեկցվում է տվյալ ժամանակաշրջանով զբաղվող լավագույն գիտնականներից մեկի՝ պ.գ.դ. պրոֆ. Ա.Փիլիպոսյանի մեկնաբանություններով: Եթե այս հանգամանքին ավելացնենք, որ ֆիլմի նկարահանումները իրականացվել են նաև Արևմտյան Հայաստանի տարածքում գտնվող մի շարք կարևոր ուրարտական հուշարձաններում, ապա վստահորեն կարելի է համարել, որ սա այս թեմայի դասավանդման ընթացքում լավագույն դիտակտիկ նյութերից մեկն է:

Դասընթացի ուսուցման համար պակաս նշանակություն չունեն արտադասարանային աշխատանքները: Դրանցից շարքում հատկապես կարևոր են այցելությունները թանգարաններ և պատմամշակութային հուշարձաններ: Այստեղ ևս մեծ ջրբաժան կա Երևանի և մարզերի աշակերտների միջև: Եթե առաջինները կարող են իրենց դասերը յուրացնելուց հետո այցելել Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան, Հայաստանի պատմության թանգարան, Երևանի պատմության թանգարան, ապա նույնը չենք կարող ասել մարզերում սովորող աշակերտների համար: Մեր հետազոտությունները ցույց են տվել, որ Երևանում գտնվող վերոհիշյալ հաստատությունները մարզերից այցելում են ոչ այդքան հաճախ (մեծամասամբ թանգարան մուտքի համար սահմանված

անվճար օրերին): Մյուս խնդիրն այն է, որ Երևան այցելած աշակերտները այս կամ այն հաստատությունում փորձում են լինել ոչ այդքան երկար ժամանակով, քանի որ փորձում են հնարավորինս շատ վայրերում լինել, որոնց զգալի մասը ժամանցային բնույթ են կրում:

Մեր կարծիքով, այս խնդիրը կարելի է լուծել մի քանի եղանակներով: Նախ և առաջ հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության գրեթե ողջ տարածքում առկա են ուրարտական ժամանակաշրջանի հուշարձաններ և այս առումով շատ արդյունավետ կլինի այս կամ այն մարզի աշակերտներին կապել իրենց իսկ բնակավայրին մոտ գտնվող հուշարձանների հետ: Որպես օրինակ բերենք Արմավիրի մարզը: Այստեղ գտնվում են Հայաստանի ամենանշանավոր ուրարտական ամրոցներից երկուսը՝ Արգիշտիխինիլին և Արմավիրը: Քիչ հեռու է տեղակայված Մեծամորի նշանավոր հուշարձանը, որի ուրարտական շերտերը ևս ակնառու են: Այս առումով այս հուշարձաններին մոտ գտնվող դպրոցները կարող են կապվել և մի շարք միջոցառումներ իրականացնել այնտեղ: Դրանցից կարելի է առանձնացնել բացօթյա դասերը, պլանային աշխատանքները, ինչու չէ, նաև բնապահպանական և ճանաչողական միջոցառումները: Այս ամենը մեծապես կխթանի այն գաղափարի ամրապնդմանը, որ հենց աշակերտներն են տվյալ հուշարձանների պահպանները և նրանց հանրահռչակման ջատագովները: Կարծում ենք, սա կարող է արդյունավետ չափորոշիչ դառնալ:

Պրակտիկայով ձեռք բերված համոզմունքների հիման վրա, կարող ենք ասել, որ ցածր տարիքի աշակերտներին հետաքրքրում են հատկապես կիրառական արվեստի նմուշները՝ ծիսապաշտամունքային սյուժեով՝ դրվատված վահաններ և սաղավարտներ, տարբեր աստվածությունների արձանիկներ և այլն: Առանձնահատուկ տեղ են գրավում թանգարանի ցուցասրահում գտնվող որմնանկարները: Սա ևս մեկ միջոց է, որը, ըստ մեզ, կարող է հաջողություն գրանցել դպրոցականների շրջանում ուրարտական արվեստի կարևոր ճյուղերից մեկի՝ որմնանկարչության ճանաչմանն ու ընկալմանը դասընթացին:

Այս բնագավառում ևս մեկ ծրագիր, որի մասին կուզեի ակնարկ անել, դա «Պատանի հնագետ» դպրոցն է, որն արդեն լայն ճանաչում է գտել: Էրեբունի

պատմահնագիտական արգելոց-թանգարանում դպրոցականների հետ տարվող էքսկուրսիաներից և ծրագրերից պարզ դարձավ, որ աշակերտներից շատերը ցանկանում խորացնել և լրացուցիչ տեղեկություններ ստանալ պատմամշակութային հուշարձանների ժառանգության և հատկապես Ուրարտուի արվեստի և հնագիտության վերաբերյալ, լրացուցիչ գիտելիքներ ստանալ Ուրարտուի պատմության և արվեստի մասին, ինչպես կարելի է սովորել կարդալ ուրարտական սեպագիր արձանագրությունները և այլ հետաքրքիր հարցեր: Այս դպրոցի ստեղծումը հետապնդում է մի քանի նպատակ՝

Ա) Մեծացնել պատանիների շրջանում պատասխանատվությունը պատմամշակութային ժառանգության նկատմամբ:

Բ) Նրանց մեջ սերմանել այն գաղափարը, որ հենց իրենք են պատմամշակութային ժառանգության կրողը, պահպանողը և հանրահռչակողը:

Գ) Մեր սերմանել ուրարտագիտության ակնառու ոլորտների՝ հնագիտության, արվեստի և պատմության նկատմամբ:

Կարծում ենք, որ նմանատիպ դպրոցի մոդելի կիրառումը Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում կարող է մեծապես նպաստել աշակերտների շրջանում սեր դեպի հուշարձաններ, արվեստ ու պատմություն:

Ամփոփելով առաջարկությունը՝ հարկ ենք համարում նշել, որ վերը հիշատակված մեթոդները, ծրագրերը և գաղափարները դեռևս բավական չեն հանրակրթական դպրոցներում Ուրարտուի արվեստի պատշաճ մատուցման համար: Մեր կարծիքով պետք է ստեղծել հատուկ հայեցակարգ, որտեղ ներառված կլինեն Ուրարտուի արվեստի դասավանդման մեթոդները: Սա շատ լուրջ և պատասխանատու գործընթաց է, որը կարելի է իրականացնել միայն տվյալ ժամանակաշրջանի բոլոր բնագավառների գիտակ մասնագետների ինչպես նաև հմուտ մեթոդիստների ներգրավմամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թեմայի ուսումնասիրության արդյունքում հանգեցինք հետևյալին.

Ա) Սեփական երկրի մշակույթի անաչառ համակողմանի և մատչելի ձևով մատուցելու գործոնը կարևոր նշանակություն կարող է ունենալ վերջիններիս հայագիտական աշխարհայացքի ձևավորման գործում:

Բ) Շատ կարևոր է երիտասարդ սերնդի ներկայացուցիչների լայն աշխարհայացքը, որը կնպաստի հայկական մշակույթի ներկայացմանը ամբողջական համամարդկային նվաճումների համատեքստում: Այս առումով Ուրարտուի մշակույթի հետ ծանոթացումը կրթօջախներում կարող է օգնել վերոնշյալ հարցադրման իրականացմանը:

Դիտարկելով սույն թեմայի դասավանդումը՝ հարկ ենք համարում կանգ առնել մի շարք գործոնների վրա՝

- Ուսանողներին դասընթացը մատուցել ըստ համապատասխանության՝ ելնելով կարողություններից և հմտություններից՝ հարկ եղած դեպքում ցուցաբերելով և՛ անհատական, և՛ խմբային մոտեցում:
- Հնարավորինս կիրառել տարաբնույթ մեթոդներ, որոնք կնպաստեն դասավանդման գործընթացի արդյունավետ ընկալմանը: Այս առումով հատկապես կարևոր են պրակտիկ նյութերի կիրառումը, արտադպրոցական զրույցներն ու զեկույցները ուրարտական ժամանակաշրջանի հուշարձանների մասին, ինչն ավելի կենդանի և անմիջական կդարձնի սովորողների կապը ուրարտական արվեստի հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Պիատրովսկի Բ. (1971)**, Ուրարտական ճարտարապետություն, Հայ ժողովրդի պատմություն, հատ. I, Երևան, Ակադեմ. հրատ.:
2. **Հովհաննիսյան Կ. (1973)**, Էրեբունիի որմնանկարները, Երևան, ՀՍՍՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ:
3. **Առաքելյան Բ. (1988)**, Ուրարտու-Հայաստան, Երևան, ՀՍՍՀ ԳԱԱ, Պատմության ինստիտուտ:
4. **Пиотровский Б. (1944)**, История и культура Урарту, Ереван, [изд. АН АССР.](#)
5. **Тирацян Г. (1988)**, Культура древней Армении, Ереван, [Изд-во АН АрмССР.](#)

6. **Tiratsyan G. A. (2003)**, From Urartu to Armenia, Civilisations du Proche-Orient I, *Archéologia et Environnement* 4, Neuchâtel.

REFERENCES

1. **Piotrovsky B. (1971)**, Owrartakan twartarapetowt'yown, Hay jhoghovrdi patmowt'yown /Urartian Architecture. **History of the Armenian People**/, Vol. I. Yerevan: Academy of Sciences of the Armenian SSR.
2. **Hovhannisyan K. (1973)**, E'rebownii ormnankarnery' /The Wall Paintings of Erebuni/, Yerevan, Institute of Art, Academy of Sciences of the Armenian SSR.
3. **Arakelyan B. (1988)**, Owrartow-Hayastan /Urartu–Armenia/, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR.
4. **Piotrovsky B. (1944)**. Istoriya i kul'tura Urartu /The History and Culture of Urartu/, Yerevan, [изд. АН АССР](#).
5. **Tiratsyan G. (1988)**, The Culture of Ancient Armenia, Yerevan, [Изд-во АН АрмССР](#).
6. **Tiratsyan G. (2003)**. *From Urartu to Armenia. Civilisations du Proche-Orient*, I; *Archaeologia et Environment*, 4. Neuchâtel.

Nairi Balabekyan

Urartian fresco art in the culture of the Ancient World

Conclusion

Keywords and expressions: *fresco, monumental art, painting, Urartian art, Art culture, architectural decor.*

Urartian fresco art occupies an important place in the cultural heritage of the ancient world: It was formed and developed in the 9th-6th centuries BC on the territory of the state of Urartu, which occupied most of the Armenian Highlands in the territory of the modern Republic of Armenia, Eastern Turkey (Western Armenia), the North-West of the Islamic Republic of Iran and the southern regions of the Republic of Georgia.

Urartian fresco art in the culture of the Ancient World is distinguished by its originality, artistic execution, coverage of broad strata of society and ideological content. It was not only decorative art, but also an expression of state ideology, religious beliefs and cultural identity. By right, although Urartian fresco painting in the rich cultural heritage of the Armenian people began to be studied in the middle of the last century, it still needs to be discovered and studied in depth and comprehensively., nevertheless, today it has received wide recognition and high value.

Numerous samples of the Urartian material culture have become the subject of numerous valuable scientific studies, have caused and still cause admiration, surprise, give way to discussions and analysis.

Наири Балабекян

Урартское фресковое искусство в культуре древнего мира

Заключение

Ключевые слова и выражения: фреска, монументальное искусство, живопись, урартское искусство, художественная культура, архитектура.

Урартское фресковое искусство занимает важное место в культурном наследии древнего мира. Он сформировался и развивался в 9-6 веках до нашей эры на территории государства Урарту, которое занимало большую часть Армянского нагорья на территории современной Республики Армения, Восточной Турции (Западная Армения), Северо-Запада Исламской Республики Иран и южных регионов Республики Грузия.

Урартское фресковое искусство в культуре Древнего мира отличается оригинальностью, художественным исполнением, охватом широких слоев общества и идеологическим содержанием. Это было не только декоративно-прикладное искусство, но и выражение государственной идеологии, религиозных представлений и культурной самобытности. И правда, в богатом культурном наследии армянского народа урартская фреска, хотя и начала изучаться еще с середины прошлого века и

все еще нуждается в открытиях и глубоком и всестороннем изучении, тем не менее, сегодня она получила широкое признание и высокую оценку.

Многочисленные образцы (экспонаты) урартской материальной культуры стали предметом многочисленных ценных научных исследований, вызвали и до сих пор вызывают восхищение, удивление, вызывают дискуссии, анализы.

Նաիրի Բալաբեկյան – Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Կերպարվեստի ամբիոնի հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ հայկական եկեղեցական որմնանկարչություն: Հեղինակել է մեկ հոդված: nairibalabekyan77@gmail.com

Наири Балабекян - Соискатель кафедры "Изобразительное искусство" факультета художественного образования АГПУ им. Хачатура Абовяна.

Научные интересы: армянская церковная фреска. Автор одной статьи. nairibalabekyan77@gmail.com

Nairi Balabekyan - Candidate for the Department of Fine Arts at the Faculty of Art Education of the ASPU after Khachatur Abovyan. Research interests: Armenian church fresco. The author of one article: nairibalabekyan77@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 03.12.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 17.12.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՁԱՆՅԱՆ

ԴԻԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՅԸ՝ ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.216

ԱՍՓՈՓՈՒՄ

Ազգային դպրոցի՝ որպես կրթության և ազգային անվտանգության կայացման հիմնասայան, ուսումնասիրությունը ոչ միայն մեծ հետաքրքրություն, այլև կարևորություն է ներկայացնում այն առումով, որ այն, չնայած հրապարակի վրա եղած ոչ այնքան բազմաթիվ ուսումնասիրությունների առկայությանը, ցարդ վիճահարույց է, և շատ հարցեր նորովի գնահատման կարիք ունեն, ինչպես օրինակ՝ Ազգային դպրոցի ստեղծման գործընթացային քայլաշարը, կրթության ընթացքում ազգայինի պահպանման ուղիներն ու մեթոդները, ժամանակակից տեխնոլոգիաների, գիտատեխնիկական առաջընթացի ու ազգայինի փոխհարաբերության ճիշտ կառուցումը և այլ հարցեր: Այս հարցերին ենք փորձել անդրադարձնալ սույն հոդվածում՝ ազգայինի գաղափարը նեղացնելով մինչև «Ազգային կրթություն» և «Ազգային դպրոց» հասկացությունները:

Հոդվածի¹ գլխավոր նպատակն է ուսումնասիրել Ազգային դպրոցի ստեղծման հիմքերն ու հնարավորությունները, կանխատեսել դրա կայացման ճանապարհին հնարավոր ռիսկերը, բացահայտել Ազգային դպրոցի տեղն ու դերը կրթության զարգացման և մեր հասարակության կյանքում՝ գնահատելով դրա ազդեցությունը

¹ Հոդվածը որպես զեկուցման նյութ ներկայացվել է 2024 թ. օգոստոսի 29-30-ը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և «Գեղարդ» գիտավերլուծական հիմնադրամի կողմից կազմակերպված «Պատմամշակութային ժառանգության հիմնախնդիրները հետխորհրդային շրջանում» թեմայով միջազգային գիտաժողովում:

ազգային անհատի ձևավորման վրա, առաջարկել լուծումներ Ազգային դպրոցի մոդելի իրագործման ուղղությամբ:

Սույն հետազոտության արդյունքում պարզ են դառնում Ազգային դպրոցի՝ որպես կրթության և ազգային անվտանգության հիմնասյան կայացման գործընթացի թույլ կողմերը, որոնցում առկա հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիների ընտրությունը թե՛ խիստ կարևոր, թե՛ խնդրահարույց կարող են լինել Ազգային պետության գոյության և հարատևման համար:

Բանալի բառեր և արտահայտություններ. Ազգային դպրոց, պետություն, ազգային կրթություն, մեթոդ, ուսուցիչ, մարտահրավեր, տեխնիկական առաջընթացը, կրթական պահանջներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային դպրոցի հարցի նորովի վերաիմաստավորումը առաջնային է դառնում հատկապես ՀՀ ներկա ռազմաքաղաքական իրավիճակի տեսանկյունից, երբ ադրբեջանական ակնհայտ ագրեսիայի պայմաններում առավել հրատապ է դառնում թուրք-ադրբեջանական կեղծարարությանը պատշաճ պատմագիտական և քաղաքական հակահարված տալու անհրաժեշտությունը, ինչը, կարծում ենք, պետք է սկսել Ազգային անհատի կերտմամբ:

Ազգային լինելը այսօր ակներև ժամանակակից է: Հագուստի, զարդեղենի, պարագաների, կահավորանքի նորաձևությունը ողողված է ազգային տարրերով: Անգամ նորաձիհներին տրվող անունների մեջ ենք այսօր առավել ազգային, քան երբևէ: Նման երևույթները հակազդեցության բնական ձևեր կարելի է համարել համաշխարհային գլոբալիզացիայի դեմ: (Ակնհայտ է, որ ներկա գլոբալացումն առաջիկա տասնամյակներում շատ կոնկրետ ազդեցություն է ունենալու հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների՝ տնտեսության, քաղաքականության, գիտության, կրթության և մշակույթի վրա) (Աթոյան Վ., 2014): Աշխարհասփյուռ հայ ժողովրդի համար նման կենսակերպի որդեգրումը ապահովագրում է ազգին արևմտականության (westernization) սպառնալիքից:

Սա լավ է, բայց՝ ոչ բավարար: Պետականություն ունենալը հայ ազգի համար միշտ եղել է ազգապահպանության գործընթացի և՛ միջոց, և՛ նպատակ: Հետևաբար

այս երկու արժեքները խիստ կապված են պատճառահետևանքային բազում կապերով: Հատկապես արդի ժամանակահատվածում մարտահրավերները այս առումով ավելի քան լուրջ են, նույնիսկ՝ սպառնալից:

Հետևաբար հարկ էնք համարում խոսել ազգային ինստիտուտներից ազգային կրթության և ազգային դպրոցի մասին՝ որպես ազգային պետության գոյության և կայուն զարգացման գրավական: Այն, որ կրթությունը պետք է ծառայի պետության ամրությանը, իսկ պետությունը՝ վերջինիս զարգացմանն ու կայացմանը, դա հայտնի է բոլորիս, սակայն թե որքա՞ն խորքային են այս կապերը այսօր արդեն՝ առաջնային ազգային անվտանգության ռազմավարության տեսանկյունից, այս մասին, թերևս, արժե խոսել:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի մեթոդաբանական հետազոտության համար առաջնային հիմք են ծառայել Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի կողմից լույս ընծայված գիտաժողովի նյութերի ժողովածուն, «Կրթության մասին» ՀՀ օրենքը՝ մասնավորապես հոդված 4-րդ և 5-րդ, ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարական ծրագիրը, համացանցային նյութեր, նոր ՀՊԶ-ի ներդրմանն ուղղված մասնագիտական վերապատրաստումների ընթացքում ձեռք բերված մեր հմտություններն ու կարողությունները, դասապրոցեսների ու տարաբնույթ դաս-միջոցառումների ընթացքում ուսուցիչների կողմից գործադրվող մեթոդները և այլն:

Նշված նյութերի համադրման, համեմատման և վերլուծության մեթոդաբանությամբ փորձ է արվել վեր հանել ժամանակակից Ազգային դպրոցի էությունն ու ապագայի տեսլականը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Պետությունը և պետականությունը բարձրագույն արժեքներ են: Ուսուցիչ-աշակերտ համագործակցության վերջնարդյունքը պետք է լինի ոչ միայն ինտելեկտուալ, այլև ազգային անհատի ձևավորումը: Ահա թե ինչպես պետք է կրթությունը ծառայի պետության կայացման և պետականության պահպանման գործին: Ազգային անվտանգության ռազմավարության տեսանկյունից ազգապահպանությունը՝ հայապահպանությունը, հիմնարար արժեք է Հայաստանի

Հանրապետության անվտանգ և հարատև գոյության համար: Ասվածի հետ անխոս համաձայնվելու համար բավական է ուշադիր նայել վերջինիս քարտեզին: Աշխարհագրական նման պայմաններում (քաղաքակրթական և առևտրական խաչմերուկներ, սահմանակից ոչ բարեկամ պետություններ) բազմաբնույթ «փոթորիկներին» դիմակայելու ամենակուրտ վահանը պետք է լինի ազգային սերնդի ձևավորումը: Հետևաբար հայ ազգը կարիք չունի պարզապես պետության: Այն կարիք ունի ազգային պետության: Նմանօրինակ պետությունը և՛ նպատակը, և՛ երաշխավորը պիտի լինի Ազգային դպրոցի համար: Հայապահպանության գործում հայագիտական ճյուղերի՝ հայոց լեզվի, գրականության, պատմության և մշակույթի՝ որպես ազգային հոգևոր ժառանգության հարատևությունն ապահովող և ազգային ինքնությունը ձևավորող գործոնների զարգացումը և սերնդից սերունդ ճիշտ փոխանցումը առաջին հերթին Ազգային դպրոցի գործառույթն է: Միննույն ժամանակ Ազգային դպրոցի ցանկալի մոդելը պետք է հետ չմնա գիտակրթական ոլորտի համաշխարհային նվաճումներից: Վերջիններիս ճիշտ տեղայնացումը ազգային կրթական համակարգում կկանխի «ուղեղային արտահոսքը»:

Հենց այս պատճառով այսօր շատ է խոսվում Ազգային դպրոցի, դրա տարբեր կառուցվածքային ձևերի (փորձ է կատարվում ստեղծել այդ ձևերը, այդ թվում՝ ավագ ու մասնավոր դպրոցների տեսքով) մասին, տարբեր անվանումներ են տրվում, նորամուծություններ են կատարվում՝ փորձելով վերափոխել մեզ ժառանգություն հասած դպրոցը: Հետևաբար, որպես այդ ամենի արդյունք պետք է ընդգծել, թե որքանով է պահպանվել և փոփոխվել հին դպրոցը, քանի որ հենց այդ փոփոխությունների ընթացքում է պետք կարողանալ փոխանցել հնից եկող ազգային տարրերը, և պահպանել դրանք նորամուծությունների արդյունքում: Այսինքն՝ որքանով է մեզ հաջողվել ձևավորել Ազգային դպրոց՝ ազգային կրթական որոշակի համակարգով, որի նպատակն է ազգային դաստիարակության միջոցով (որի հիմքում պետք է լինեն ազգային կենսափորձը, մշակույթը, լեզուն, բարոյականությունը և այլն) ձևավորել ազգային անհատ: Այդպիսով, ազգային կարող է լինել այն, ինչ բխում է ազգի բնական գենետիկական որակներից, հետևաբար Ազգային դպրոցը նախևառաջ միտված է գենետիկական-ժառանգական

միասնական որակ ունեցող ազգային սերունդ կազմավորելուն: Եվ դա արվում է դասավանդվող առարկաների միջոցով:

Ամեն ազգ կարող է յուրովի պատկերացնել Ազգային դպրոցի մոդելը, բայց դրա հիմքում միշտ դրվում է ազգային գաղափարախոսությունը: Օրինակ՝ ֆիններն իրենց ազգային էպոսն անցնում են առաջին դասարանից մինչև վերջինը, և Հելսինկիում կա հատուկ ինստիտուտ, որը զբաղվում է միայն էպոսի ուսումնասիրմամբ (**Դոլուխանյան Ա., 2023**): Ազգայինի նկատմամբ «յուրովի» մոտեցում է որդեգրել Ադրբեջանը, որի ԳԱԱ-ում վերջերս բացվեցին այսպես կոչված «Արևմտյան Ադրբեջանի» ուսումնասիրություններին վերաբերվող շինծու բաժիններ, որի ձևակերպման տակ ենթադրվում է ՀՀ ներկայիս ինքնիշխան տարածքը:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում եկանք եզրահանգման, որ իրականում Ազգային դպրոց ստեղծելը բարդ գործընթաց է՝ պայմանավորված բազմաթիվ գործոններով, որոնցից փորձել ենք առանձնացնել մի քանիսը՝ հաշվի առնելով մեր մանկավարժական գործունեության ընթացքում ձեռք բերած փորձը, դժվարություններն ու մարտահրավերները:

Ըստ այդմ՝ Ազգային դպրոցի կերտման ճանապարհին առանձնացրել ենք հետևյալ գործոնները.

1. Համաշխարհային գիտատեխնիկական առաջընթաց

Մի կողմից անհրաժեշտ է ընդառաջ գնալ զարգացող ու ժամանակակից աշխարհին, մյուս կողմից՝ պահպանել ազգայինը, ինչը բավականին դժվարին մարտահրավեր է: Այսօրվա հայ դպրոցը, վերցնելով համաշխարհային գիտատեխնիկական առաջընթացի փորձը, պետք է պահպանի ազգային որակական հատկությունները, կենսափորձը, լեզուն, պատմությունը, մշակույթը: Դա բնավ չի սահմանափակում համամարդկային արժեքներին ու գաղափարներին հասու, դրանցով առաջնորդվող սերունդ դաստիարակելու կրթական պահանջները: Դեռևս V դարում Մովսես Խորենացին հայ հանրությանը պատգամում է դառնալ իր ժամանակի հունահելլենական մշակութային ու կրթական կյանքի հետևորդ (**Դոլուխանյան Ա., 2023**): Հետևաբար, Ազգային դպրոցը

ինքնըստինքյան ստանձնում է Տեսակի Նորոգման Ու Պահպանման Օրենքի իրագործումը **(Ազգային Դպրոց,**

<https://vahagnakanch.wordpress.com/2008/06/06/%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81/>):

2. Հայրենանվիրություն և հայրենասիրություն

Հայրենասիրությունը խորապես սոցիալական երևույթ է, հասարակության գոյության և զարգացման հզոր աղբյուր, մարդու կենսունակության և կենսակայունության բնութագրիչ, իսկ ահա կրթության ոլորտը առաջին և կարևորագույն ասպարեզն է, որտեղ անհրաժեշտ է ներմուծել հայրենասիրական գաղափարներ ու ոգի (Եղիազարյան Ս., 2023): Ազգային դպրոցի առաքելությունն է հայրենասիրությունը դիտարկել որպես գիտելիքահեն կրթության հիմք, իսկ մերօրյա իրականության պայմաններում այն ամենակարևոր և մեծ արժեքներից է:

Ազգային ինքնագիտակցությամբ օժտված, հայրենասերի բարձր կոչմանն արժանի, հայրենիքի գաղափարը վեր դասող քաղաքացի դաստիարակել կարող ենք՝ սովորողներին նախևառաջ հաղորդակից դարձնելով նախահայրերի փառապանծ անցյալին և ներառելով ռազմահայրենասիրական թեմաներով տարբեր միջոցառումների մեջ: Այս տեսանկյունից ներկա սերունդն առավել գաղափարակից է նշված երևույթներին, քանի որ տեղի ունեցած Արցախյան պատերազմի կենդանի վկան է: Այս սերունդը կարող է տեսնել մերօրյա հերոսներին, խոսել նրանց հետ, հանդիպումներ ունենալ նրանց հետ, ինչը պետք է դառնա Ազգային դպրոցի պրակտիկ կրթության մի էտապը՝ նպատակ ունենալով նաև ներդրում ունենալ հայոց պատմության նորագույն շրջանի կերտման աշխատանքներին:

3. Դասագրքի կարևորություն

Ինչպես նշեցինք, գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում այսօր հնարավորություն կա դասապրոցեսը հազեցնել S2S տարատեսակ գործիքներով: Բայց շատ դպրոցներում այդ հնարավորության բացակայությունը կամ սահմանափակվածությունը առաջին պլան է մղում դասագիրքը՝ որպես ամենակարևոր գործոն:

Առհասարակ հետխորհրդային շրջանում հրատապ դարձավ ազգային դասագրքերի հրատարակման հարցը, հատկապես «Հայոց պատմության», ինչն առ այսօր կարծես լիարժեք լուծում չի ստացել: Պետք է նշել սակայն, որ հետխորհրդային շրջանում հայոց պատմության մի շարք հարցեր, ինչպես օրինակ Հայկական Լեոնաշխարհում առաջին պետական կազմավորումների, հայ ազգային կուսակցությունների, հայոց ցեղասպանության, Հայաստանի առաջին հանրապետության, Հայաստանի խորհրդայնացման և այլն, նորովի շարադրվեցին և վերախմբավորվեցին՝ արտացոլվելով նոր դասագրքերում: Ըստ այդմ կարևորվում է դասագրքերում հայոց պատմության օբյեկտիվ ներկայացումը, որպեսզի սերունդը համոզված լինի, որ իր պատմությունը ճիշտ է շարադրված, և մի օր սեփական պրպտումների արդյունքում չկանգնի հարցականի առջև:

Կարող ենք համոզված փաստել, որ մեր դասագրքերում իսպառ բացակայում է կեղծ պատմաշինարարությունը, ինչը որոշ երկրներում ոչ միայն լայն ծավալ է ստանում, այլև պետական մակարդակով խրախուսվում է: Օրինակ 6-րդ դասարանի Ադրբեջանի պատմության դասագրքում նշված է, որ ներկայիս ադրբեջանցիների նախնիները շումերների ժամանակակիցներն են եղել, իսկ շումերներն ունեցել են թյուրքական ծագում (**Мелконян А., 2022**):

Այդ թեզից էլ բխեցնում են, որ ժամանակակից Հայաստանը «ձևավորվել է» Արևմտյան Ադրբեջանի տարածքում:

7-րդ դասարանի «Ադրբեջանի պատմություն» դասագիրքը «մեկնաբանում է», որ Հայաստանը 18-րդ դարի պատմական քարտեզներում բացակայում է, և այդ երկիրը ստեղծել են ռուս նվաճողները՝ իրենց կողմից գրավված տարածքում հայերի վերաբնակեցման ճանապարհով (**Мелконян А., 2022**):

Հետևաբար, կարող ենք նշել օբյեկտիվ դասագրքերի և ձեռնարկների ստեղծման կարևորությունը սերնդի դաստիարակության առումով, ինչը նաև կարևոր է ազգամիջյան տարաձայնություններից խուսափելու համար (**Мелконян А., 2022**):

Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության (RAA) երևանի գրասենյակի պատասխանատու Սամվել Կարապետյանը գտնում

էր. «Եթե ստեղծվեն ազգային դպրոցին վայել դասագրքեր, որոնցով աշակերտներին ուսուցանեն և դաստիարակեն առաջին դասարանից, տասը տարին բավական է քաղաքացիական նկարագրով առաջին սերունդը դաստիարակելու համար: Այդ շրջանավարտներն ապագայում կքաշեն այս երկրի հոգսը, կդառնան երկրի տերերը» (<https://www.hayagitaran.am/2014/03/id-4333.html>):

4. Ուսուցիչ և մեթոդ

Բազմիցս խոսվում է, որ տեխնիկական առաջընթացը ձևավորել է նոր դպրոց՝ նոր տեխնիկական հազեցվածությամբ ու նոր կրթական պահանջներով: Այսօրվա մանկավարժությունը մշակել է բազմաթիվ մեթոդներ, որոնք կիրառվում են մեր դպրոցներում: Իսկ ով՞ է այդ ամենի կրողն ու փոխանցողը, դրանցով ուսուցանողը, իհարկե ուսուցիչը: Այսօր ուսուցչին օգնում են բազմաթիվ տեխնիկական միջոցներ, իսկ պարագաների բացակայության դեպքում դարձյալ ուսուցիչն է որոնում-գտնում այլընտրանքային միջոցներ, կամ էլ մնալով միայնակ այդ կարևորագույն հարցի ճանապարհին՝ ստիպված է լինում կամա թե ակամա հենվել աշակերտի զգայական կողմի վրա, ինչը մեծապես զգացվում է «Պատմություն», «Գրականություն» և այլ ուսումնական առարկաների դեպքում:

Նույն իրավիճակն է մեթոդների ընտրության դեպքում, երբ ուսուցչն ինքն է կանխորոշում՝ ինչ կերպ առաջնորդվել դասապրոցեսի ժամանակ: Երբեմն հակասություն է առաջանում Ազգային դպրոցի մոդելի և դրա գործադրման միջև, երբ ուսուցիչն անցնելով երկարատև վերապատրաստում, շարունակում է առաջնորդվել նախկին մեթոդներով: Հարց է առաջանում՝ ո՞վ է թերացել, ուսուցիչ՞ը, կրթական վարչական ապարատ՞ը, թե՞ մեղավորներ փնտրենք այլուր:

Կա մի փաստ. ուսուցչի առաքելությունն է դառնում ոչ միայն գիտելիք տալը: Մանկավարժության գլխավոր խնդիրը դառնում է ուսուցչի և սովորողի միասին աշխատելու և փոխվստահելի մթնոլորտ ստեղծելու համար համապատասխան պայմանների ու հնարավորությունների ստեղծումը:

Այսօր ուսուցիչներ պատրաստող թիվ մեկ ԲՈՒՀ-ի՝ (Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան)

գիտաշխատողները նշում են, որ ապագա ուսուցիչը պետք է կարողանա ինքնուրույն մտածել և բացահայտել սեփական առաքելության զգացումը, կանխատեսել և զգալ մարտահրավերները, իմանալ դրանց հաղթահարելու, դիմակայելու ու դրանց հարմարվելու ճանապարհները: Այսինքն՝ ձևավորել արհեստավարժ մանկավարժ: Այս մոտեցումը փոխում է ապագա ուսուցիչների պատրաստման կառուցվածքը: Միասնական, համերաշխ, ընդհանուր նպատակներ, երջանիկ ու արժանապատիվ ապագա ունեցող հասարակություն ստեղծելու համար անհրաժեշտ է վերաիմաստավորել մանկավարժության և կրթության առաքելությունը, գործառույթներն ու նպատակները, փոխակերպել ուսուցչի դերն ու մասնագիտությանը ներկայացվող պահանջները (**Թփուզյան Ա., 2023**): Այս համատեքստում, բնականաբար, նոր խնդիրներ ու մարտահրավերներ են դրվում մանկավարժության առջև:

Հետևաբար, առաջին պլան են մղվում այն մեթոդները, որոնք բացահայտում են հայտնին ու անհայտը միջառարկայական, խնդրահենք, գիտելիքահեն համագործակցային ուսուցման կազմակերպման միջոցով: Մեթոդներ, որոնք ձևավորում են քննական-վերլուծական և ինքնուրույն մտածողությունը, ինքնաճանաչողությունը, կանխատեսելու, նախագծելու, մոդելավորելու, միասին և ինքնուրույն մտածելու, միմյանցից սովորելու և միմյանց սովորեցնելու, երկխոսություն ծավալելու, կոնկրետ հիմնախնդիր հետազոտելու և դրա լուծումներն առաջարկելու հմտությունները (**Թփուզյան Ա., 2023**): Սրանք առաջին հայացքից կարող են պարզապես բառերի կույտ թվալ, բայց անդրադառանալով դրանցից յուրաքանչյուրին առանձին-առանձին՝ հասկանում ենք, որ ուսուցիչը պետք է և կարող է լինել ամենաանփոխարինելի միջնորդը գիտելիքի և աշակերտի միջև:

Այսպիսով, Ազգային դպրոցի կազմակերպումը ենթադրում է ոչ միայն անհրաժեշտ գործիքակազմ, այլև կազմակերպչական հսկայական աշխատանք: Հետևաբար, նշված հիմնադրույթների իրագործումը թողնել զուտ դպրոցի ու ուսուցչի ուսերին, ճիշտ չէ:

Այսպիսով, հաշվի առնելով պետականության, ազգային անվտանգության և ազգային կրթական համակարգի վերոնշյալ սերտ փոխկապվածությունը՝ վստահ ենք, որ պետք է խուսափել և պաշտպանվել ազգային կրթական համակարգը ցնցող բոլոր արտաքին և ներքին գործոններից: Կարծում ենք, որ ցանկացած հիմնարար փոփոխություն կրթական համակարգում պետք է իրականացվի զգուշորեն. չհիմնավորված ռիսկայնությունը, չարդարացված արագությունը, չհաշվարկված կանխատեսելի և անկանխատեսելի հետևանքները կործանարար կարող են լինել մեր մեծ ազգի, հետևաբար նաև՝ մեր փոքր պետության համար:

Հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել են առաջարկություններ

1. Ցանկացած հիմնարար որոշում կայացնել ըստ անհրաժեշտության ձևավորված միջգերատեսչական մասնագիտական խմբում իրականացված կառուցողական քննարկումների արդյունքում: Հաճելի անհրաժեշտություն կլինի, եթե նման քննարկումներին մասնակցեն նաև դպրոցահասակ սերդի հետ աշխատող տարբեր մասնագետներ:
2. Պետությունն իր վարած քաղաքականությամբ պարտավոր է աջակից լինել այդ ամենին՝ ապահովելով որոշակի պայմաններ: «Կրթության մասին» ՀՀ օրենքով ամրագրված է, որ կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն Ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է (**«Կրթության մասին» ՀՀ օրենք, 14.04.1999**): Վերոնշյալ ձևակերպումը հիմնավորում է մտահոգություններն այն մասին, թե սերնդի հետ ինչպիսի մասնագետ է աշխատում. ինչպիսին է նրա մասնագիտական պատրաստվածության մակարդակը, արժեհամակարգային դիրքորոշումը: Հետևաբար ծագում է տրամաբանական մի հարց՝ ինչպես հայտնաբերել համակողմանիորեն զարգացած ազգային մանկավարժին: Կարծում ենք, որ հարկ է վերանայել ուսուցչին աշխատանքի ընդունելու կարգը: Այդ գործընթացը պետք է

իրականացվի դպրոցից դուրս և ներառի ոչ միայն անձի իմացական մակարդակի, այլ նաև՝ հոգեբանական և արժեհամակարգային դիագնոստիկան: Իսկ թե սա ի՞նչ գործիքներով և ինչպե՞ս պետք է իրականացնել՝ համապատասխան մասնագետների քննարկելիք հարցն է:

3. Ազգային ամուր գաղափարախոսական հիմք ստեղծելու համար առաջարկում ենք վերանայել սերնդին ազգային էպոսը՝ «Սասնա Ծռերը», ներկայացնելու և մեկնաբանելու մոդեցումները՝ առավելապես շեշտադրելով վերջինիս ազգային գաղափարախոսական բովանդակությունը: Էպոսի ուսուցումը իրականացնել պարտադիր կրթության բոլոր մակարդակներում՝ համապատասխանեցնելով այն սովորողի տարիքային ցենզին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազգային դպրոց ստեղծելով՝ մենք բարձրացնում ենք ազգի որակը, ամրապնդում նրա մեջ հայրենասիրության, միասնականության և ազգային ինքնության գիտակցումը, ստեղծում մի սերունդ, որն առաջնորդվում է իր ազգային առանձնահատկությունները կարևորելու, դրանք պահպանելու անհրաժեշտության գիտակցությամբ:

Ազգային մտածողությամբ սերունդ դաստիարակելը կարևոր է մեր երկրի համար, քանի որ հիմնականում թշնամի երկրներով շրջապատված, առ այսօր տարածքի ու գոյության կռիվ մղող մեր ժողովուրդն ունի բազմաթիվ չլուծված խնդիրներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աթոյան Վ. (2014)**, Ազգային անվտանգության հիմնախնդիրներ (դասախոսություններ), Երևան, «Տնտեսագետ» հրատ.:
2. **Դոլուխանյան Ա. (2023)**, Հայ հին, միջնադարյան և մերօրյա մանկավարժության ընդհանրությունները և պարտադիր պահանջները, «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» խորագրով միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ հրատ.:
3. **Եղիազարյան Ս. (2023)**, Հայրենասիրությունը գիտելիքահեն կրթության հիմքում, «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և

զարգացման հեռանկարները» խորագրով միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, Խ.Արմվյանի անվան ՀՊՄՀ հրատ.:

4. **Թովուզյան Ա. (2023)**, Մանկավարժության զարգացման ժամանակակից հիմնախնդիրներ, «Բարձրագույն մանկավարժական կրթության հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները» խորագրով միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, Խ.Արմվյանի անվան ՀՊՄՀ հրատ.:
5. «**Կրթության մասին» ՀՀ օրենք (14.04.1999)**, հոդված 4, կետ 1, ընդունվել է Ազգային ժողովի կողմից, ՀՕ-297:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=68299>
6. **Мелконян А. (2022)**, Проблемные вопросы в школьных учебниках истории Армении // Электронный научно-образовательный журнал «История». – 2022, Т. 13, Выпуск 12 (122). Часть II. URL: <https://history.jes.su/s207987840024067-2-1/>
7. **Ազգային Դպրոց**, By Vahagnakanch.
<https://vahagnakanch.wordpress.com/2008/06/06/%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81/>
8. <https://www.hayagitaran.am/2014/03/id-4333.html>

REFERENCES

1. **Atoyan V. (2014)**, Azgayin anvtangowt'yan himnaxndirner (dasaxosowt'yownner) /National Security Issues (Lectures)*/, Yerevan, “Tndesaget” ed.
2. **Dolukhanyan A. (2023)**, Hay hin, mijnadaryan & mero'rya mankavarjhowt'yan y'ndhanrowt'yownnery' & partadir pahanjery' /The Commonalities and Mandatory Requirements of Armenian Ancient, Medieval, and Modern Pedagogy/, Proceedings of the International Conference on “Issues in Higher Pedagogical Education and

Prospects for Development", Yerevan, Kh. Abovian Yerevan State Pedagogical University Publishing.

3. **Yeghiazaryan S. (2023)**, Hayrenasirowt'yowny' giteliqahen krt'owt'yan himqowm /Patriotism as the Foundation of Knowledge-Based Education/, Proceedings of the International Conference on "Issues in Higher Pedagogical Education and Prospects for Development", Yerevan, Kh. Abovian Yerevan State Pedagogical University Publishing.
4. **Topuzyan A. (2023)**, Mankavarjhowt'yan zargacman jhamanakakic himnaxndirner /Contemporary Issues in the Development of Pedagogy/, Proceedings of the International Conference on "Issues in Higher Pedagogical Education and Prospects for Development", Yerevan, Kh. Abovian Yerevan State Pedagogical University Publishing.
5. «Krt'owt'yan masin» HH o'renq /Law of the Republic of Armenia on Education/ (14.04.1999), Article 4, Point 1, adopted by the National Assembly on 14.04.1999, HO-297:
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=68299>
6. **Melkonyan A. (2022)**, Problemnyye voprosy v shkol'nykh uchebnikakh istorii Armenii /Problematic Issues in Armenian History Textbooks // Elektronnyy nauchno-obrazovatel'nyy zhurnal "Istoriya". – 2022. – T. 13. – Vypusk 12 (122). Chast' II. URL: <https://history.jes.su/s207987840024067-2-1/>
7. **Azgayin Dproc/ National School/** By Vahagnakanch.
<https://vahagnakanch.wordpress.com/2008/06/06/%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81/>](<https://vahagnakanch.wordpress.com/2008/06/06/%D5%A1%D5%A6%D5%A3%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81/>)
8. <https://www.hayagitaran.am/2014/03/id-4333.html>

Hasmik Amirjanan, Diana Margaryan

The National school as the basis of education and national security

Conclusion

Key words and expressions: National school, state, national education, method, teacher, challengers, technical progress educational requirements.

The article presents the role of the National school in the preservation of national education and ensuring national security: basic concepts, components, directions and methods. The issues related to the role of the National School in ensuring national identity and security in the context of global globalization are considered. Educating a generation with a national mindset is crucial for our country, as our people—largely surrounded by hostile states and still engaged in a struggle for territory and survival—face numerous unresolved challenges.

On the path toward the formation of the National School, we have identified the following factors: global scientific and technological progress, patriotism, the importance of the textbook, the teacher, and teaching methodology. By creating a National School, we enhance the quality of the nation, strengthen the awareness of patriotism, unity, and national identity, and form a generation guided by an understanding of the importance of valuing and preserving its national characteristics.

In the course of our research, we came to the conclusion that in fact, the creation of a National school is a complex process due to many factors. His organization requires not only the necessary tools, but also a lot of organizational work. Therefore, the state is obliged by its policy to support all this.

Асмик Амирджанян, Диана Маргарян

Национальная школа как основа образования и национальной безопасности

Заключение

Ключевые слова и выражения: Национальная школа, государство, национальное образование, метод, учитель, вызов, технический прогресс, образовательные требования.

В статье представлены роль Национальной школы в сохранении национального образования и обеспечения национальной безопасности: основные концепции, компоненты, направления и методы. Рассматриваются вопросы, касающиеся роли Национальной школы в обеспечении национальной идентичности и безопасности в контексте глобальной глобализации. Воспитание поколения с национальным мышлением имеет важное значение для нашей страны, поскольку наш народ, в основном окружённый враждебными государствами и по сей день ведущий борьбу за территорию и существование, имеет множество нерешённых проблем.

На пути формирования Национальной школы мы выделили следующие факторы: мировой научно-технический прогресс, патриотизм, важность учебника, учитель и метод. Создавая Национальную школу, мы повышаем качество нации, укрепляем в ней осознание патриотизма, единства и национальной идентичности, формируя поколение, которое руководствуется осознанием важности своих национальных особенностей и необходимости их сохранения.

В ходе наших исследований мы пришли к выводу, что на самом деле создание Национальной школы-сложный процесс, обусловленный множеством факторов. Его организация требует не только необходимого инструментария, но и огромной организационной работы. Следовательно, своей политикой государство обязано поддерживать все это.

Հասմիկ Ամիրջանյան - ՀՀ ԳԱԱ, պատմության ինստիտուտ, ավագ գիտաշխատող, պ.գ.թ., «Արգենտինյան Հանրապետություն» թիվ 76 դպրոցի պատմության ուսուցչուհի: Գիտական հետաքրքրությունները՝ նոր շրջանի պատմություն, ժողովրդագրության հարցեր, հայ-վրացական հարաբերություններ, հայ եկեղեցու պատմություն, ժամանակակից մանկավարժության հիմնախնդիրներ: Հեղինակ է շուրջ 60 գիտական հոդվածների: Մասնակից է հանրապետական և միջազգային շուրջ 40 գիտաժողովների: amirjanyan.hasmik@rambler.ru

Դիանա Մարգարյան - «Արգենտինյան Հանրապետություն» թիվ 76 դպրոցի ուսուցչուհի, դասվար: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից մանկավարժության հիմնախնդիրներ, հայոց պատմություն, իրավունք: dianmargaryan@gmail.com

Асмик Амирджанян – Национальная академия наук, старший сотрудник, к.и.н. Учитель истории в начальной школе N 76, «Аргентинская Республика». Научные интересы: новая история, демографические вопросы, армяно-грузинские отношения, история армянской церкви, проблемы современного педагогического образования. Автор около 60 статей. Участник около 40 республиканских и международных научных конференций.

Диана Маргарян - Учитель в начальной школе N 76, «Аргентинская Республика». Научные интересы: проблемы современного педагогического образования, история Армении, права. dianmargaryan@gmail.com

Hasmik Amirjanyan – The Nationale Academy of Sientific, p.d.h., History teacher ot Yerevan "Argentinayan Hanrapetutyun" School N 76. Sientific interests-New History, demographic issus, Armenian-georgian rileations, history o Armenian churche, Issues in Modern Pedagogy. Author of about 60 articles. Participated in about 40 national and international scientific conferences.

Diana Margaryan - Teacher ot Yerevan "Argentinayan Hanrapetutyun" School N 76. Sientific interests-Issues in Modern Pedagogy, Armenian History, law. dianmargaryan@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 05.11.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 11.11.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ԺԵՆՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.217

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացրել ենք հայոց լեզվի շարահյուսության ուսուցման մեթոդիկայի տեսության ձևավորման եվ զարգացման պատմական ուղիները՝ ընդգծելով դրա հոգեբանական, տրամաբանական և լեզվաբանական հիմքերը:

Հատուկ ուշադրություն է դարձված լեզվի ուսուցման հոգեբանական հիմքերին. ինչպես են աշակերտի զգայական ու մտավոր կարողությունները, տարիքային և հոգեկան զարգացման փուլերը ազդում շարահյուսական գիտելիքների յուրացման վրա: Ներկայացվում է նաև տրամաբանության դերը՝ որպես մտածողության զարգացման միջոց, ինչպես նաև ուսուցման գործընթացում երեխայի անհատական կարողությունները դիտարկելու անհրաժեշտությունը:

Հոդվածում մանրամասն նկարագրվում են այնպիսի ականավոր մանկավարժների ու լեզվաբանների ներդրումները, ինչպիսիք են Խ. Աբովյանը, Ս. Մանդինյանը, Ն. Տեր-Ղևոնդյանը, Մ. Աբեղյանը, Ա. Ղարիբյանը, Ֆ.Խլղաթյանը և այլք: Փորձ է արված վերլուծելու նրանց դասագրքերը, մեթոդական մոտեցումները և հայոց լեզվի ուսուցմանն առնչվող տեսական ու գործնական սկզբունքները:

Բանալի բառեր և բառակապակցություններ. շարահյուսագիտություն, մանկավարժական հոգեբանություն, քերականական հոգեբանություն, քննադատական մտածողություն, տրամաբանական մտածողություն, տարիքային առանձնահատկություն, քերականական ոճաբանություն, բանադրում, պատկերավորման-արտահայտչական շարահյուսական միջոցներ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակության և ուսուցման համար հիմք է ընդունվում մայրենի լեզուն, ուստի հայոց լեզվի ուսուցման հարցերին անդրադառնալը մշտապես արդիական է և ժամանակակից կրթական համակարգի առաջնահերթություններից է: Ճիշտ և գրագետ խոսք կառուցելու տեսանկյունից հատկապես կարևորվում է շարահյուսության ուսուցումը: Քերականության ուսուցման գործընթացը շարահյուսական միավորների զուգաձևությունները և ոճական հատկանիշները բացահայտելու, դրանք խոսքի տարբեր տեսակների մեջ կիրառելու մեծ հնարավորություններ է տալիս:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի ուսումնասիրության հիմքում ընկած է համադրական, պատմահամատեքստային և վերլուծական մոտեցումների կիրառումը: Աշխատանքի ընթացքում ուսումնասիրվել են հայոց լեզվի ուսուցման պատմական զարգացումը ներկայացնող դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ և գիտական հոդվածներ, մանկավարժական, հոգեբանական և լեզվաբանական տեսական աշխատանքներ: Հիմնականում օգտագործվել է վերլուծության մեթոդը՝ նպատակ ունենալով բացահայտելու շարահյուսության ուսուցման մեթոդիկայի ձևավորման փուլերը, դրանց մեջ ներգրաված հոգեբանական և տրամաբանական ազդեցությունները, ինչպես նաև լեզվաբանական մտածողության դերը ուսուցման գործընթացում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայերենի քերականության (շարահյուսություն) ուսուցման առումով առաջին ամբողջական աշխատանք կարելի է համարել *Հովհաննես Երզնկացու* «Հաւաքումն մեկնութեան քերականի» աշխատությունը, որում հավաքվել, խմբավորվել, կարգի բերվել, ճշտվել և օգտագործվել են մինչև 13-րդ դ. առաջին կեսը հրապարակի վրա եղած նախորդ համարյա բոլոր քերականների երկերը: Սակայն հայոց լեզվի ուսուցման մեթոդիկան սկսել է զարգանալ դեռևս 5-րդ դարից, երբ առաջ եկավ գրելու պահանջը: Այդուհանդերձ, հայոց լեզվի մեթոդիկան մինչև 19-րդ դարի կեսերը միայն դիդակտիկայի մի ճյուղ էր և չունեւր առանձին ընկալում:

Հետագայում մասնավոր մեթոդիկաների զարգացման գործընթացում առանձնացավ նաև հայոց լեզվի մեթոդիկան:

Հայտնի է, որ մինչ այդ մանկավարժության մեջ ներառվում էին նաև փիլիսոփայությունը և հոգեբանությունը, սոցիոլոգիան և բարոյագիտությունը, որոնք որոշում էին կրթության նպատակները և դրանց իրականացման ուղիները:

Հայոց լեզվի մեթոդիկան սերտորեն կապված է հատկապես լեզվաբանության և այլ բնագավառների հարաբերակցությունից առաջացած գիտությունների հետ (հոգելեզվաբանություն, հանրալեզվաբանություն, նյարդալեզվաբանություն, լեզվափիլիսոփայություն, մանկավարժական լեզվաբանություն, լեզվանշանագիտություն, լեզվաերկրագիտություն, լեզվամշակութաբանություն, հարալեզվական բնագավառներ՝ շարժումների լեզու և այլն) (Աղաջանյան Զ., 2021):

Շարահյուսության ուսուցման մեթոդական համալիրի համար կենսական նշանակություն ունի լեզվի հոգեբանական կողմը: Այն օգնում է ուսուցման գործընթացը հոգեբանորեն ճիշտ կազմակերպելուն: Ժամանակակից մեթոդիկան առանց ուսուցման գործընթացի հետազոտության հոգեբանական նորագույն տվյալների օգտագործման չի կարող կյանքի աճող պայմանները բավարարել, ուսուցման ընթացքում մեծ արդյունքների հասնել, ուսուցումը հեշտ, հաճելի, արդյունավետ ու միաժամանակ գիտական ու նպատակային դարձնել (Խալաթյան Գ., Թորգոմյան Ս., Հարությունյան Ռ., 2023):

Շարահյուսության ուսուցման մեթոդիկայում հատկապես կարևորվում է մանկավարժական հոգեբանությունը, որն ուսումնասիրում է աշակերտի ստացած գիտելիքների հաստատուն յուրացման, ունակությունների և հմտությունների, նրա խոսքի ու մտքի փոխկապակցված զարգացման հոգեբանական հիմունքները: Հոգեբանությունը հնարավորություն է տալիս ուսուցչին գաղափար կազմելու աշակերտի հոգեկան առանձնահատկությունների, ուսուցանվող նյութի նկատմամբ ցուցաբերած հետաքրքրությունների մասին:

Ինչպես թելադրում են Վոդովոզովի դիդակտիկայի սկզբունքները, ուսուցումը պետք է համապատասխանի երեխայի մտավոր զարգացմանը, պետք է

հարգել երեխայի զարգացման անհատական առանձնահատկությունները: Հոգեբանական մի շարք սկզբունքներ հնարավոր են դարձնում աշակերտների տարիքային առանձնահատկությունների, բնավորության գծերի, հիշողության, ուշադրության, ընկալունակականության և մի շարք այլ որակների հաշվառումը, ինչն էլ հայոց լեզվի ուսուցչին օգնում է դասի կազմակերպման գործընթացում:

Հայերենի շարահյուսության, խոսքի և մտքի անարգել զարգացումը դրվում է հայ իրականության մեջ հայտնի *քերականական հոգեբանության* հիմքում:

Այս առումով այժմ էլ արդիական է Ի. Հարությունյանի «*Լեզվի հոգեբանական խնդիրները*» աշխատությունը: Ի. Հարությունյանը հայ մանկավարժության մեջ առաջինն էր, որը կապեց մանկավարժությունը և հոգեբանությունը և դրանց օգտագործմամբ հնարավորինս ճիշտ կազմակերպեց ուսուցման արդյունավետության, ուսումնական աշխատանքի գիտական կազմակերպման որոշ հարցեր: Ըստ նրա տեսության՝ դասագործընթացը պետք է նպաստի զգացումների և ապրումների արտահայտմանը, բանական և դատողական կարողությունների, խոսքի զարգացմանը (**Հարությունյան Ի., 1888**):

Գ. Էդիլյանն իր «Հայոց լեզվի մեթոդիկա» գրքում (1923 թ.) հոգեբանությունը դիտում է ոչ թե որպես հիմնական հենք, ինչպես անում էին իրեն նախորդող մեթոդիստները, այլ որպես օժանդակ հյուսվածք: Նա հիմք դրեց *փորձառական* և *մանկավարժական հոգեբանության* ուղղություններին: Նրա կարծիքով ուսուցման գործընթացը պետք է կազմակերպել համապատասխան դասագրքեր կազմելով, որոնցում նյութերը կրնտրվեն դասարանի աշակերտների հոգեկան զարգացման աստիճանը հաշվի առնելով, կունենան կրթական ազդեցություն, ինչի գրավականն էլ կլինի հայրենասիրության, բարոյականության և գեղարվեստականության միաձույլ ոգու ներկայացումը (**Էդիլյան Գ., 1923**):

Շարահյուսության ուսուցման հիմքում ընկած է նաև տրամաբանությունը. այս երկուսի համատեղմամբ է առավելաբար զարգանում աշակերտի քննադատական մտածողությունը: Ըստ Վինոգրադովի՝ լեզվի ուսումնասիրման ընթացքում աշակերտների մեջ ձևավորվում են ընդհանրացման և որոշակիացման, վերլուծության և համադրման, ինդուկցիայի (արտածում) և դեդուկցիայի

(մակաձուլ) մտավոր գործողությունների կարողություններ, որոնք անհնարին է իրականացնել՝ առանց տրամաբանության օգնությանը դիմելու: Երեխաների դատողական կարողությունների ձևավորման և զարգացման հարցերին անդրադառնում ենք դեռևս տարրական դասարաններում: Այստեղ դատողության և մտածողության ձևավորումը բանավոր և գրավոր ճիշտ խոսք կազմելու, սեփական ապրումները արտահայտելու, մտքերն ու զգումները տրամաբանական հաջորդականությամբ ներկայացնելու հետևանք է: Արդեն միջին դպրոցում շարահյուսության ուսուցումը օգնում է աշակերտներին այս ամենը վերածելու հմտությունների:

Աշակերտների տրամաբանական մտածողության զարգացման և քերականության ուսուցման կապը հայ լեզվաբանության մեջ ներկայացրել են Ա. Հակոբյանը «Քերականության ուսուցումը և աշակերտների տրամաբանական մտածողության զարգացումը» գրքում (1964 թ.) և Հ. Հարությունյանը «Լեզվի գործնական ուսուցումը և տրամաբանական մտածողության զարգացումը» գրքում (1984 թ.): Ըստ Ա. Հակոբյանի՝ միայն կուռ տրամաբանության շնորհիվ մարդ կարող է մի համակարգի բերել իր ընդարձակ գիտելիքները և օգտագործել դրանք ինչպես հարկն է: Նա տրամաբանելու զարգացած կարողությունը նախապայման է համարում ինքնուրույն և ստեղծագործական մտածողության համար:

Մեծ է եղել հոգեբանական և տրամաբանական ուղղությունների ազդեցությունը հայերենի շարահյուսության ձևավորման և զարգացման ընթացքի վրա: Այս ուղղությունների հետևորդ հայ լեզվաբանները սահմանել են շարահյուսական տարբեր միավորներ՝ հիմքում դնելով այս դպրոցների առաջ քաշած դրույթները: Հատկապես կարևոր է նրանց կողմից առաջ քաշած տեսությունը նախադասության վերաբերյալ: Ըստ նրանց՝ նախադասությունն է մտքի ձևավորման, մարդկային հաղորդակցման հիմնական գործիքը: Եթե հոգեբանությունը նախադասությունը բնութագրում է իբրև խոսողի հոգեկան գործունեության արդյունք, հոգեբանական դատողության արտահայտություն բառերով, հոգեկան պատկերացումների զուգորդում, ապա տրամաբանությունն

այն ձևակերպում է որպես բառերով արտահայտված դատողություն, միտք (Հարությունյան Ի., 1970):

Հարկ է նշել, որ տրամաբանության ազդեցությունը շարահյուսության վրա ավելի տևական է եղել: Որքան էլ հայ լեզվաբանները փորձում են շարահյուսական միավորների նոր սահմանումներ ներկայացնել, միևնույն է, դրանցում դեռևս պահպանվում է տրամաբանության ազդեցությունը:

Հայոց լեզվի մեթոդիկան՝ որպես գիտություն, ամբողջական դարձավ 19-րդ դարի 70-80-ական թթ.: Այս շրջանում Հ. Տեր-Մելիքյանը թարգմանեց Ադոլֆ Ռուդեի «Ժողովրդական դպրոցի մեթոդիկա» (1908) աշխատությունը, որը հսկայական նշանակություն ունեցավ մասնավոր մեթոդիկաների զարգացման ու ինքնուրույնացման գործում: Նրանում հաշվի են առնված հայ դպրոցի հնարավորությունները, հայ ուսուցչի գիտական ու մեթոդական պատրաստականությունը, որը խորապես բարձրացնում էր այդ գրքի տեսական և գործնական արժեքը:

Չնայած 19-րդ դ. մանկավարժությունը փորձում էր դեռևս տարրական դպրոցների մեթոդիկան զարգացնել, այնուամենայնիվ մի շարք մանկավարժներ կարևորում էին նաև շարահյուսության ուսուցման հարցերին անդրադառնալը: Առաջինը Խ. Աբովյանն էր, որ աշխարհաբարի քերականության ուսուցման հիմքում դրեց *փորձի* հնարը (Աբովյան Խ., 1940): Մանկավարժն իր առջև ուներ երեխաների մտածելու և խոսելու ունակությունը դյուրին եղանակով զարգացնելու նպատակ (Աբովյան Խ., 1848-1948):, ինչն այսօր էլ դրվում է ժամանակակից քերականության ուսուցման հիմքում: Թեպետ նրա «Նախաշավիղ» քերականության դասագիրքը առավելապես ձևաբանության հարցերի քննություն էր, սակայն մանկավարժը կատարեց նաև շարահյուսական մի քանի հարցերի քննություն և դրանց մասին տվեց ժամանակի համար առաջընթաց դիտարկումներ: Հատկապես կարևորվում է խոսքի մասերը նախադասության անդամներից տարբերակելու նրա փորձը, ինչը թարմություն է հաղորդում շարահյուսագիտությանը, որը մինչ այդ մնում էր ձևաբանության ստվերում: Նրա աշխատությունը դառնում է աշխարհաբարի քերականության առաջին

դասագիրքը, որում մշակված դիդակտիկ մեթոդները հեղաշրջում մտցրին հայոց լեզվի դասավանդման ոլորտում:

Խ. Աբովյանից հետո հայերենի քերականության դասագիրք է կազմել Ս. Պալասանյանը՝ «Քերականություն մայրենի լեզվի» խորագրով (1874 թ.): Մեթոդական առումով այն նույնպես որոշակի հետաքրքրություն էր ներկայացնում: Հեղինակն առաջարկում է ոչ թե սերտել տալ կանոնը, այլ ըմբռնել տալ այն՝ ուսուցանվող համապատասխան քերականական իրողությունները նախապես աշակերտի դիտողությանը ներկայացնելով, դրանց էական հատկանիշը առանձնացնելով և աշակերտների ուշադրությունը դրա վրա հրավիրելով:

Ժամանակի հայ մանկավարժները (Խ. Աբովյան, Ս. Պալասանյան, Ս. Մանդինյան, Ն. Տեր-Ղևոնդյան և այլք) հայոց լեզվի մեթոդական համակարգը կոփել են՝ հետևելով Ուշինսկու, Պեստալոցու, Դիստերվեգի, Բուսլանի մեթոդամանկավարժական սկզբունքներին: Վերջիններս մեծապես կարևորում էին մայրենի լեզվի դերը երեխայի ինտելեկտուալ զարգացման և ազգային ինքնության ձևավորման գործում: Հատկապես նրա մարդակենտրոն և ազգային ինքնության վրա շեշտը դնելու սկզբունքները այսօր էլ դրված են հայ մանկավարժության և հատկապես հայոց լեզվի մեթոդիկայի հիմքում:

Մայրենի լեզվի ուսուցման ընդհանուր համակարգում քերականության դասավանդմանը որոշակի տեղ է հատկացրել նաև Ս. Մանդինյանը: Նրա կարծիքով լեզուն ավելի շուտ է ձեռք բերվում քերականության միջնորդությամբ, որովհետև քերականության օգնությամբ ուսուցիչը հնարավորություն է ունենում երեխաների ուշադրությունը լեզվական երևույթների վրա հրավիրելու, դրանք քննության և ուսումնասիրության նյութ դարձնելու: Ըստ նրա առաջ քաշած ուսմունքի՝ քերականությունը թվաբանությունից դժվար է և գուցե նման է գրահաշվի և երկրաչափության տարերքին: Ուրեմն փոքր-ինչ ուշացնելով ուսուցման սկիզբը՝ այն թե՛ ավելի հետաքրքրական զբաղմունք կդառնա և թե՛ ավելի շահավոր (**Մանդինյան Ս., 1890**):

Ս. Մանդինյանը քերականության ուսուցման հստակ ձևերի ու մեթոդների մասին է խոսում իր «Քերականական լուծումն» հոդվածում: Այն նվիրված է բարձր

դասարաններում գիտության՝ մայրենի լեզվի մասին եղած ուսուցման հարցերին, որում հեղինակը հիմնականում հակամետ է քերականագիտության հոգեբանական ուղղության բնորոշումներին:

19-րդ դարի 70-ական թթ. Ն. Տեր-Ղևոնդյանը ստեղծեց հայոց լեզվի մեթոդիկայի առաջին ամբողջական ձեռնարկը, որում մայրենի լեզվի դասավանդման բնագավառում շարահյուսության ուսուցման առումով բերված կարևորագույն նորություններից մեկը ծխական դպրոցում տարրական քերականական դասընթաց ներմուծելն էր:

Նույն շրջանում լույս է տեսնում նաև Ա. Բահաթրյանի «Քերականություն աշխարհաբար լեզվի» (1879 թ.) տարրական քերականության առաջին դասագիրքը: Ըստ դասագրքի դրույթների՝ հայոց լեզվի ուսուցումը պետք է սկսել շարահյուսական որոշ գիտելիքներ հաղորդելով (հատկապես պարզ նախադասությունների մասին), այնուհետև դրա հիման վրա սովորեցնել լեզվի մյուս բաժինները:

Ասենք, որ ժամանակին ծագել են բազում վեճեր հայ մանկավարժների միջև. այն հարցի շուրջ, թե քերականությունը որ դասարաններում պետք է ուսուցանել:

Ն. Տեր-Ղևոնդյանի քերականության դասագրքերը նախատեսված էին 2-րդ և 3-րդ դասարանների համար: Սակայն կային և հիմա էլ կան հեղինակներ, որ կարծում են, թե տարրական դասարաններում քերականության՝ որպես լեզվի առանձին բաժնի ուսուցումն ավելորդ է և նույնիսկ վտանգավոր: Այս հարցի շուրջ մեծ բանավեճ է ծագել Ղ. Աղայանի և Ն. Տեր-Ղևոնդյանի միջև: Ն. Տեր-Ղևոնդյանը քերականության ուսուցումը՝ որպես լեզվական երևույթների գիտակցման, աշակերտների բանավոր ու գրավոր խոսքը քերականական վերահսկողության տակ դնելու միջոցի խիստ կարևոր ու անհրաժեշտ էր համարում:

Ն. Տեր-Ղևոնդյանը, նյութի վերջում զետեղում էր հարցեր և առաջադրանքներ կամ նյութի մեթոդական մշակումներ՝ այս կերպ մասնավորաբար նպաստելով խոսքի զարգացմանը, առավելապես սեփական մտքերը պարզ նախադասությունների միջոցով կազմելու ունակության զարգացմանը:

Հետագայում միայն Հարություն Դադաշյանի, Հարություն Թումանյանի, Մանուկ Աբեղյանի տարրական քերականության մի շարք դասագրքերի երևան գալուց հետո է, որ Ն. Տեր-Գրիգորյանի քերականության դասագրքերը դուրս եկան գործածությունից:

Անվանի լեզվաբան Մ. Աբեղյանն այս ընթացքում ստեղծում է շարահյուսության նոր համակարգ, մանրամասն քննության ենթարկում հայերենի շարահյուսությունը: Նա իր «Տարրական քերականությունը» (1907 թ.) դասագրքից հետո կազմում է միջնակարգ դպրոցի բարձր դասարանների համար նախատեսված «Աշխարհաբարի շարահյուսությունը» (1912 թ.) դասագիրքը (ավելի վաղ բարձր դասարանների համար նախատեսված քերականության դասագրքեր էր կազմել Ս. Պալասանյանը): Նրա աշխատանքները մեծ նպաստ են բերել հայերենի շարահյուսագիտությանը հատկապես շարահյուսական եզրույթների ստեղծմամբ և առաջադրմամբ, սակայն մեթոդական տեսանկյունից դրանք ոչ մի նորություն չեն բերել:

Ա. Ղարիբյանը հայոց լեզվի մեթոդիկական դրեց լեզվաբանական հիմքի վրա՝ կարևորելով նյութի գիտականությունը: Նա մեթոդիկական ուսուցման տարրական օղակից բարձրացրեց վեր՝ հիմք դնելով միջին դասարանների հայոց լեզվի մեթոդիկային: Ա. Ղարիբյանը առաջիններից էր, որ նախապատվությունը տվեց նյութի լեզվաբանական ուղղվածությանը: Այս կերպ հետագա հեղինակները հայոց լեզվի ուսուցման մեթոդիկային վերաբերող աշխատանքներում սկսեցին կարևորել լեզվական կողմը:

Ա. Ղարիբյանը իր «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» ձեռնարկում մեծ նշանակություն է տալիս շարահյուսության ուսուցման մեջ լրացման և լրացյալի հարաբերությունը հասկանալուն, քանի որ այն ունի կարևորագույն նշանակություն նախադասության իմաստը սպառիչ կերպով հասկանալու հարցում (**Ղարիբյան Ա., 1954**): Մանկավարժը կարևոր քայլ է անում նաև *մանկավարժական լեզվաբանություն* եզրույթի ստեղծմամբ:

Ս. Գյուլբուղաղյանը նույնպես անդրադարձել է քերականության ուսուցման հարցերին: Նա առաջիններից էր, որը խոսեց քերականության ուսուցման

հիմնական խնդիրների մասին: Նրա ցանկությունն էր թեթևացնել ուսուցանվող նյութի խորքայնությունը, սովորեցնել միայն առաջնային, գլխավոր հատկանիշները (**Գյուլբուդաղյան Ս., 1978**): Հեղինակը մասնավորաբար առանձնացնում է շարահյուսական իրողությունների, հատկապես կապակցությունների մակերեսորեն սովորելու հետևանքները:

Ա. Մանուկյանը մայրենի լեզվի քերականության ուսուցումը համարում է աշակերտների խոսքը զարգացնելու, խոսքի թերությունները վերացնելու միջոց: Նա կարծում է, որ աշակերտների խոսքի զարգացումը պետք է տարվի հիմնականում բառերն ու նախադասությունները կապակցելու հմտությունների մշակման ու կատարելագործման ուղղությամբ (**Մանուկյան Ա., 1969**):

Ավելի ուշ Վ. Թումանյանն իր «Շարահյուսության գործնական ուսուցման հարցեր» աշխատանքում բառապաշարի հարստացումը խոսքի զարգացման և ոճի մշակման հիմնական նախադրյալն էր համարում: Այդ է պատճառը, որ նրա աշխատանքում տեղ են գտել շարահյուսության ուսումնասիրման ընթացքում կատարվող բառային աշխատանքներ ևս: Այս առումով առաջադրում է բառակապակցությունների ուսուցումը, տարբեր խոսքի մասերի կրկնությունը իրականացնել շարահյուսական համապատասխան թեմաների ուսուցման ընթացքում, վարժությունների համար առաջադրել բնագրային օրինակներ և տեքստեր, որոնք պարունակում են բացատրության պահանջ ներկայացնող բազմաթիվ բառեր (**Թումանյան Վ., 1987**):

Քերականության ուսուցման հարցերին առնչվող անդրադարձումներ ունի նաև Ֆ. Խլղաթյանը: Նա իր աշխատանքներում ներառել է ոչ միայն բուն քերականության, այլև քերականական ոճաբանության ուսուցումը: Այստեղ հեղինակը նախապես զգուշացնում է ուսուցիչներին չտարվել անցանկալի գայթակղությամբ և քերականական ոճական հնարավորությունների փոխարեն չներկայացնել բուն քերականությունը:

Ֆ. Խլղաթյանը շարահյուսության բաժնում առանձնացնում է ոճաբանական ուղղվածությամբ խոսքի ուսումնասիրության երկու ուղղություն՝ պատկերավորման-արտահայտչական շարահյուսական միջոցներ, որոնք

միավորվում են *բանադարձում* ընդհանուր անվամբ (նույնասկիզբ, նույնավերջ, հանգույց, կցուրդ, գուգադրություն, խաչաձևում, զեղչում, ավելադրություն, աստիճանավորում, հարանունություն, բառախաղ, հակադրություն, ճարտասանական հարց, ճարտասանական բացատրություն, անշաղկապություն, բազմաշաղկապություն, շրջադասություն, հեզնանք, պարադոքս), և շարահյուսական հոմանիշ կառույցներ, նրանց ոճական առանձնահատկություններ: Նա ուսուցման գործընթացում կարևորում է համաձայնական և խնդրառական հարցերը, ներգործական և կրավորական կառուցվածքներին, ստորադասական և դերբայական դարձվածով կառույցներին, ինչպես նաև մեջբերվող խոսքի տարբեր ձևերին վերաբերող փոխակերպումները՝ դրանք հիմնավորելով այն փաստով, որ ներառված են բուհական ընդունելության քննության ծրագրում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայոց լեզվի շարահյուսության ուսուցումը երկար ճանապարհ է անցել՝ զարգանալով փիլիսոփայական, հոգեբանական և լեզվաբանական հիմքերի վրա:

2. Ժամանակակից մեթոդիկան ձգտում է համադրել այս բոլոր ուղղությունները՝ ստեղծելով բազմաշերտ ուսուցման համակարգ, որը ընդամին գիտական է, գործնական և հոգեբանորեն հիմնավորված:

3. Հայոց լեզվի շարահյուսության ուսուցումը ծառայում է մի նպատակի՝ զարգացնել աշակերտի լեզվամտածողությունը, ստեղծագործական կարողությունները և խոսքի գրագետ ու իմաստայից ձևակերպմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբովյան Խ. (1940), Նախաշավիղ կրթութեան ի պէտս նորավարժից, Երևան, Հայկ. ԽՍՀ պետ. հրատ.:
2. Աղաջանյան Զ. (2021), Հայոց լեզվի ուսուցման և խոսքի մշակույթի ձևավորման մեթոդիկա, Երևան, «Նաիրի» հրատ.:
3. Գյուլբուղաղյան Ս. (1978), Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, ԵՊՀ հրատ.:
4. Էդիլյան Գ. (1923), Հայոց լեզվի մեթոդիկա, Թիֆլիս, 5-տպարան Պոլիգ:

5. **Թումանյան Վ. (1987)**, Շարահյուսության գործնական ուսուցման հարցեր, Երևան, «Լույս» հրատ.:
6. **Խալաթյան Գ., Թորգոմյան Ս., Հարությունյան Ռ. (2023)**. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, «Մեկնարկ» հրատ.:
7. **Հարությունյան Ի. (1888)**. Լեզվի հոգեբանական խնդիրները, Երևան, «Արձագանք»:
8. **Հարությունյան Հ. (1970)**. Անդամ նախադասությունները ժամանակակից հայերենում, Երևան, ԵՊՀ հրատ.:
9. **Ղարիբյան Ա. (1954)**. Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, Հայպետհրատ:
10. **Մանուկյան Ա. (1969)**. Խոսքի զարգացումը հայոց լեզվի ուսուցման ընթացքում, Երևան, «Լույս»:
11. **Մանդինյան Ս. (1890)**. Մայրենի լեզու, Երևան, «Արարատ»:

REFERENCES

1. **Abovyan Kh. (1950)**, Naxashavigh krt'owt'ean i pe'ts noravarjhic /A Preparatory Guide to Education for Beginners/, State Publishing House of the Arm. SSR.
2. **Aghajanyan Z. (2021)**, Hayoc lezvi owsowcman & xosqi mshakowyt'i d'&avorman met'odika /Methodology of Teaching Armenian Language and Developing Speech Culture/, Yerevan, “Nairi”.
3. **Gyulbudaghyan S. (1978)**, Hayoc lezvi met'odika /Methodology of Armenian Language/, Yerevan, YSU Publishing House.
4. **Edilyan G. (1923)**, Hayoc lezvi met'odika /Methodology of Armenian Language/. Tbilisi, Printing House No. 5, “Poligr”.
5. **Tumanyan V. (1987)**, Sharahyowsowt'yan gorc'nakan owsowcman harcer /Issues of Practical Teaching of Syntax/. Yerevan, “Luys”.
6. **Khalatyan G., Torgomyan S., Harutyunyan R. (2023)**, Hayoc lezvi dasavandman met'odika /Methodology of Teaching Armenian Language/, Yerevan, “Meknark”.
7. **Harutyunyan I. (1888)**, Lezvi hokebanakan xndirner' /Psychological Problems of Language/, Yerevan, “Artsagank”.

8. Harutyunyan H. (1970), *Andem naxadasowt'yownnery' jhamanakacic hayerenowm /Impersonal Sentences in Modern Armenian/,* Yerevan, YSU Publishing House.
9. Gharibyan A. (1954), *Hayoc lezvi met'odika /Methodology of Armenian Language/,* Yerevan, Haypethrat.
10. Manukyan A. (1969), *Xosqi zargacowmy' hayoc lezvi owsowcman y'nt'acqowm /Development of Speech in the Process of Teaching Armenian/. Yerevan, "Luys".*
11. Mandinyan, S. (1890), *Mayreni lezow /Mother Tongue/,* Yerevan, "Ararat".

Zhenya Hovhannisyan

Historical and theoretical paths of the formation and development of syntax teaching methodology

Conclusion

Key words and expressions: syntax, educational psychology, grammatical psychology, critical thinking, logical thinking, developmental characteristics, age-related characteristics, didactic methods, grammatical stylistics, composition/ essay writing, figurative and expressive syntactic devices.

The article presents a historical and theoretical overview of the development of teaching methodology for Armenian language syntax, with a focus on its linguistic, logical, and psychological foundations. It analyzes key stages in the evolution of methodological thought—from the medieval works of Hovhannes Yerznkatsi and the principles initiated by Mesrop Mashtots to the methodological systems formed in the 19th–20th centuries. The study shows how Armenian language teaching methodology was initially viewed as a branch of didactics and later evolved into an independent discipline. Special attention is paid to students' age-related, sensory, and intellectual characteristics as psychological factors influencing the acquisition of syntax. The role of logic and individualized approaches is emphasized as a means of enhancing learning effectiveness. The article also examines the theoretical and practical contributions of prominent

educators and linguists such as Khachatur Abovyan, S. Mandinyan, M. Abeghyan, A. Gharibyan, F. Khlghatyan and others. Overall, the study highlights syntax instruction as a crucial tool not only for linguistic knowledge acquisition but also for developing students' speech and logical thinking.

Женя Оганнисян

Исторические и теоретические пути формирования и развития методики преподавания синтаксиса

Заключение

Ключевые слова и выражения: синтаксис, педагогическая психология, грамматическая психология, критическое мышление, логическое мышление, особенности развития, возрастные особенности, дидактические методы, грамматическая стилистика, сочинение/ изложение изобразительно-выразительные синтаксические средства.

В статье представлен историко-теоретический обзор становления и развития методики преподавания синтаксиса армянского языка с акцентом на её лингвистические, логические и психологические основы. Анализируются ключевые этапы формирования методической мысли — от средневековых трудов Ованнеса Ерзнкаци и принципов, заложенных Месропом Маштоцем, до методических систем XIX–XX веков. Показано, как методика преподавания армянского языка сначала рассматривалась как часть дидактики, а затем оформилась как самостоятельная наука. Особое внимание уделяется возрастным, чувственным и умственным особенностям учащихся как психологическим условиям усвоения синтаксиса. Рассматривается роль логики и индивидуального подхода как факторов повышения эффективности обучения. Анализируются теоретические и практические подходы ведущих педагогов и лингвистов — Х. Абовяна, С. Мандиняна, М. Абегиана, А. Гхарибяна, Ф. Хлгатыана и др. Авторы подчёркивают, что обучение синтаксису

является не только средством передачи языковых знаний, но и важнейшим инструментом развития речевого и логического мышления учащихся.

Ժենյա Հովհաննիսյան – Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի մասնագետ, նույն ամբիոնի հայցորդ: j.m.5.1997@mail.ru

Zhenya Hovhannisyana- Specialist at the department of armenian language and methods of teaching them at Khachatur Abovyan armenian state pedagogical university, applicant for the same department. j.m.5.1997@mail.ru

Женя Оганнисян - специалист кафедры армянского языка и методики их преподавания-Армянского государственного педагогического университета имени Хачатура Абовяна: соискатель той же кафедры. j.m.5.1997@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 06.11.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 17.11.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ԱՐՄԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԼՍՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՑՆՈՂ ՄԻՋՈՑ*DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.218*

ԱՄՓՈՓՈՒՄ

Մշակութային արժեքների առաջնահերթությունը, անհատի հոգեբանաբարոյական զարգացման կողմնորոշումը, հուզաստեղծագործական վերաբերմունքը աշխարհի նկատմամբ պայմանավորում է հասարակության զարգացման կայուն ընթացքը:

Մեծ դեր է տրվում արվեստի լրացուցիչ կրթական հաստատություններին՝ մատաղ սերնդի հոգևոր մշակույթի զարգացման գործում, որոնք նախատեսված են երեխաներին ծանոթացնելու գեղագիտական արժեքներին, զարգացնելու ստեղծագործական ունակությունները, ձևավորելու դրական արժեքանական ուղեցույցներ:

Երաժշտությունը՝ որպես արվեստի տեսակ, ունի հոգևոր ու բարոյական մեծ ներուժ, հանդիսանում է կյանքի գեղագիտական յուրացման ձև և արտացոլում է կենսական երևույթների բազմազանություն, նպաստում աշխարհի գեղարվեստական ճանաչմանը:

Երաժշտական գործունեությունը տարբերվում է իր յուրահատկություններով և ենթադրում է մի շարք հատկանիշների առկայություն, որոնք անհրաժեշտ են դրա իրականացման համար. երաժշտական բնատուր հակումներ, հուզական զգայունություն և ընկալունակություն, զարգացած հոգեշարժական ոլորտ, երաժշտական ընդունակություն և այլն:

Սույն հոդվածում կարևորվում է երաժշտական լսողության դերը, որի զարգացումն իրականացվում է ընդունակության շնորհիվ:

Բանալի բառեր և արտահայտություններ. արվեստ, երաժշտական լսողություն, լադ, երաժշտական ընդունակություն, իմպրովիզացիա, գեղագիտական արժեքներ, երաժշտական գործունեություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երաժշտաստեղծագործական ընդունակությունները գոյություն չունեն առանց երաժշտության ընկալման կամ նրա վերարտադրման՝ կենդանի ձայնով կամ պատկերացմամբ: Լինելով բնածին, սոցիալական և անհատական բարդ համադրություն՝ նրանք զարգանում են միայն երաժշտական գործնական գործունեության մեջ: Ահա, այսպիսի գործունեություն է համարվում իմպրովիզացիան, դրանով իսկ երաժշտակրթական գործունեությունը հանդես է գալիս որպես գործընթաց, իսկ երաժշտական ընդ ունակությունները՝ միմյանց հետ սերտորեն համագործակցող անհատի ներուժ: Երաժշտաստեղծագործական ընդունակությունների ձևավորման գործընթացը կարելի է ներկայացնել, որպես երաժշտական տպավորությունների աճող ռեակցիա, որոնք ստեղծում են երաժշտություն լսելու և կատարելու (իմպրովիզացիա) անհրաժեշտություն:

Երաժշտական ընդունակությունների զարգացումը ենթադրում է հոգեբնական մեխանիզմների իմացություն, որոնք ընկած են երաժշտական մտածողության և երևակայության հիմքում և պայմանավորված են հանդես եկող կերպարների վերարտադրման հիմնական գործընթացների որակներով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Այստեղ ուսումնասիրում ենք երաժշտական ամենակարևոր ընդունակություններից մեկը՝ երաժշտական լսողությունը: Երաժշտական ընդունակությունների զարգացումը տեղի է ունենում սովորողների ուսուցման գործընթացում, որի արդյունավետությունը, դրա հետ նաև, երաժշտական զարգացման հաջողությունը, անքակտելի կապի մեջ են գտնվում մեթոդիկայի ուսուցման հետ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Երաժշտական լսողություն

«Լայն իմաստով, երաժշտական լսողությունը երաժշտական հնչյունները տարբերելու կարողությունն է, երաժշտական ստեղծագործությունների բովանդակությունը ընկալելը, զգալը և հասկանալը» (Серединская В., 1962):

Ըստ երաժիշտ-ուսուցիչների մեծամասնության, հաջողակ երաժշտական գործունեությունը մեծ մասամբ կախված է երաժշտական լսողությունից, ուստի հատուկ ուշադրություն է դարձվում այս երևույթի ուսումնասիրությանը՝ երաժշտահոգեբանական և մանկավարժական գրականության մեջ: Գիտնականների, ուսուցիչների և հոգեբանների բազմաթիվ աշխատանքներ նվիրված են երաժշտական լսողության զարգացման խնդրին:

Բոլոր մարդիկ, առհասարակ, բնությունից օժտված են լսողությամբ: Երաժշտությունը լիարժեք ընկալելու համար անհրաժեշտ է ունենալ զարգացած երաժշտական լսողություն:

Երաժշտական լսողության ֆունկցիոնալ և արտաքին դրսևորման առանձնահատկությունների ուսումնասիրության, դրա կառուցվածքի և տիպաբանության զարգացման, երաժշտական հոգեբանության և մանկավարժության բնագավառում առաջատար գիտնականների հետ ներգրավված լսողության տարբեր ձևերի (ներքին, բացարձակ, հարմոնիկ, տեմբրային) ուսումնասիրությամբ զբաղվել են հոգեբանության և մանկավարժության առաջատար գիտնականներ (Յու.Վ. Ալին, Լ.Լ. Բոչկարև, Ա.Լ. Գոցլիպեր, Ի.Վ. Դավիդովա, Վ. Կաուֆման, Ն.Լ. Մալցևա, Է.Վ. Նազայկիսնկի, Ա.Լ. Օստրովսկի, Ս.Ի. Օսկինա, Գ.Ս. Ռիգինա, Վ.Լ. Սերեդինսկայա և այլք):

Երաժշտական լսողությունը, երաժշտության առանձին տարրերի (բարձրություն, ուժգնություն, տեմբր), ինչպես նաև երաժշտական համակարգում և ստեղծագործության մեջ հնչյունների ֆունկցիոնալ կապը զգալու ընդունակությունն է (Серединская В., 1962):

Կա մի կարևոր հարց. իսկ այն կարո՞ղ է լինել նաև հիմտություն: Այո, լսողությունը, պարզվում է, կարող է լինել ձեռքբերովի հիմտություն, որը կարելի է զարգացնել ժամանակի ընթացքում:

Երաժշտության տեսության մեջ տարանջատում են լսողության մի քանի տեսակ՝ կատարյալ կամ բացարձակ լսողություն, համեմատական լսողություն, մելոդիկ լսողություն և հարմոնիկ լսողություն, ներքին լսողություն: Այժմ փորձենք ներկայացնել դրանցից յուրաքանչյուրը:

Երաժշտական և լսողական կարողությունների ընկալումը ամբողջ երաժշտական ստեղծագործությունն ընկալելու և հասկանալու համար կոչվում է «արխիտեկտոնիկ լսողություն» (տերմինը առաջին անգամ ներկայացվել է Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի կողմից):

Բացարձակ կամ կատարյալ լսողություն

Բացարձակ լսողության դեպքում մարդը կարողանում է միայն լսելով, ճշգրիտ որոշել, թե ինչ նոտա են նվագում (ցանկացած նոտա) և ձայնարտաբերել՝ առանց նախապես լարվելու: Ըստ հետազոտությունների, երաժիշտների (ոչ թե ընդհանուր բնակչության) միայն հինգ տոկոսն ունի ֆենոմենալ կատարյալ լսողություն:

Հատկապես կատարյալ լսողության մասին այսօր էլ երբեմն ասում են, որ այն անհատի մոտ կամ լինում է, կամ չի լինում, այլ կերպ՝ բնածին է: Սակայն որոշ գիտնականներ ու երաժիշտներ էլ այն կարծիքի են, որ կատարյալ լսողությունը նույնպես կարող է լինել ձեռքբերովի հմտություն:

Առանձնացվում է բացարձակ լսողության 2 տեսակ՝ պասիվ և ակտիվ:

Առաջին դեպքում, հնարավոր է ճանաչել ձայնաբարձրությունը, բայց չկատարել այն նշված բարձրությամբ, երկրորդ դեպքում՝ ճանաչել ձայնաբարձրությունը և կատարել նշված բարձրությամբ:

Համեմատական լսողություն

Համեմատական լսողության դեպքում անհատն ի վիճակի է ընկալել երաժշտական ինտերվալները, գամմաները, եռահնչյունները, այսինքն՝ հնչյունները մեկը մյուսին համեմատելով և այդպիսով միմյանցից տարբերակել: Գուցե մարդը չկարողանա զարգացնել կատարյալ լսողություն, ինչն է, համեմատական լսողությունը զարգացնելն ու օգտագործելը համեմատաբար ավելի հեշտ է, և այն ցանկացած երաժշտի կղարձնի ավելի պրոֆեսիոնալ:

Մելոդիկ լսողություն

Մելոդիկ լսողությունը մեղեդին լսելու և դրա կառուցվածքը հասկանալու (ձայնաբարձրություն, շարժման ուղղություն և ռիթմական խմբավորում), ինչպես նաև ձայնով վերարտադրելու ունակությունն է: Այն մշակվում է երաժշտության ուսուցման գործընթացում:

Հարմոնիկ լսողություն

Հարմոնիկ համահնչյունները լսելու, հնչյունների ակորդային համակցությունները և դրանց հաջորդականությունները ձայնով կամ երաժշտական գործիքով վերարտադրելու ունակություն: Գործնականում դա կարող է արտահայտվել, օրինակ, նույնիսկ առանց նոտային տեքստի՝ երաժշտության նվագակցության և մեղեդու ընտրությամբ:

Հարմոնիկ լսողության զարգացումը հնարավոր է, նույնիսկ այդ ունակության նախնական բացակայության պայմաններում:

Լսողության տեսակների շարքում հարմոնիկ լսողության դերը և նշանակությունը պայմանավորում է սովորողների երաժշտական լսողության զարգացումն ընդհանրապես: Լսողության տվյալ տեսակը ընդհանուր հիմքեր ունի մելոդիկ լսողության հետ. լադի զգացողություն և երաժշտալսողական պատկերացումներ:

Լադային լսողություն:

Լադային լսողությունը, դա լադատոնային տարբերությունները լսելու, ընկալելու և որոշելու կարողությունն է (օրինակ, կայունություն և անկայունություն, լուծում կամ ոչ լուծում) ինչպես առանձին հնչյունների, այնպես էլ ամբողջ ակորդների և համահնչյունների, կամ նույնիսկ մեղեդու հատվածներում: Բայց դա հնարավոր է միայն որոշակի համատեքստում:

Ներքին լսողություն:

Ձայնաբարձրության ճիշտ ինտոնավորման ներքին պատկերացումներ՝ առանց ձայնի վերարտադրության, կամ ավելի պարզ՝ ներքին լսողությունը հնչյունները երևակայությամբ պատկերացնելու ընդունակությունն է: Ընդ որում, սկզբնական շրջանում այն կարող է լինել ինտուիտիվ (ներըմբռնողական), առանց

գիտակցելու, որ հատուկ է երաժշտականությամբ օժտված մարդկանց, սակայն աշխատանքի ընթացքում պետք է դառնա գիտակցական և նպատակաուղղված:

Գործնականում դա արտահայտվում է ուսումնասիրվող ստեղծագործությունում մեղեդու ընտրությամբ, հնարավոր է նվագակցությամբ: Մշակվում է երաժշտության ուսուցման գործընթացում:

Պայմանավորված այն հանգամանքով, որ ներքին լսողությունը հիմնված է հիշողության մեջ տպավորված, երաժշտական կերպարների հնչողության տարբեր տարրերով, դրա զարգացման մեջ մեծ նշանակություն ունի ընկալման և հիշողության որակը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ երաժշտական վատ ընկալման դեմքում, ներքին լսողության հետ նույնիսկ երկարատև աշխատանքից հետո էլ, այն շատ թույլ է կատարելագործվում, և, ընդհակառակը, ինչքանով դրանք կատարյալ են, այդքան բարձր որակ ունի ներքին լսողությունը: Ահա թե ինչու դրա դաստիարակությանը պետք է նախորդի աշխատանքը երաժշտական ընկալման և հիշողության վրա:

Սրանք լսողության հիմնական տեսակներն են:

Հաշվի առնելով այն փաստը, որ մինչ հարմոնիկ լսողության ձևավորումը և զարգացումը մենք ծանոթանում ենք երաժշտությանը մեկտղիկ լսողության միջոցով, ուստի, վերջինիս ուսումնասիրումը շատ կարևոր է:

Ինտոնացիոն լսողությունը, երաժշտական ընդունակությունների կարևոր բաղադրիչներից մեկն է: Այն տարբեր բարձրության հնչունները ընկալելու, հիշելու և վերարտադրելու ունակությունն է: Սուֆեշիոյում, հիմնական ուշադրությունը տրվում է հնչունների կապերի, մեղեդու ուսումնասիրմանը: Հետևաբար, ավելի ճիշտ է լսողության այս հատկությունը անվանել ոչ թե ինտոնացիոն՝ այլ մեկտղիկ լսողություն, մասնավորապես՝ մեղեդին ընկալելու, հիշելու և վերարտադրելու ընդունակություն:

Մեկտղիկ լսողության հոգեֆիզիոլոգիական հիմքը վերաբերում է ռեֆլեքսների ձևավորմանը՝ ինչպես լսողական փորձի, այնպես էլ երգերի վերարտադրության ժամանակ: Այստեղ մեծ նշանակություն ունի ինտոնացիոն

կողմը: Մելոդիկ լսողության զարգացման գործում, ինտոնացիան ընկալվում է որպես մելոդիկ շրջադարձ և որպես ձայնի մաքրության ճշգրտություն:

Այս բոլոր զգացումները կապված են ոչ թե հնչյունների կոնկրետ բարձրության՝ այլ միայն իրենց փոխհարաբերության հետ, նրանք չեն կարող առաջանալ պատահական, առանձին հնչյուններ ընկալելիս: Միայն մեղեդու հնչյունները, լսողում կազմակերպված հնչյունները կարող են ստեղծել այս զգացումները:

Տեպլովը տալիս է հետևյալ սահմանումը. «Լադի զգացումը, հնչյունների միջև որոշակի հարաբերությունների զգացմունքային վերապրումն է, և այն, որը մենք անվանում ենք հնչյունների լադային գունավորում, հոգեբանական տեսանկյունից առաջին հերթին հանդիսանում է որոշ հուզական որակ» (Теплов Б., 1947):

Շատ կարևոր է, մինչ տոնայնությունների տեսական գիտելիքների յուրացումը, դաստիարակել լադի զգացումը տարբեր բարձրություններում, ձևավորել տոնայնությունը, դրա լարվածքը զգալու, ցանկացած տոնայնությունում աստիճանները ազատորեն վերարտադրելու և իմպրովիզացիա կատարելու կարողություն:

Ըստ Դավիդովայի, լսողության զարգացումն առհասարակ, ունի հետևյալ կառուցվածքը. սկզբում պետք է լսել, զգալ, այնուհետև տեսականորեն գիտակցել: (Давыдова Е., 1975):

Վերլուծելով երաժշտական լսողության հիմնական ձևերը՝ մելոդիկ և հարմոնիկ լսողություն, Տեպլովը եկավ այն եզրակացության, որ լսողության հիմքում երկու ընդունակություններ են.

- լադային զգացողություն, որը կոչվում է զգայական կամ երաժշտական լսողության հուզական բաղադրիչ,
- երաժշտական լսողության պատկերացման ունակություն, որը կոչվում է երաժշտական լսողության վերարտադրողական կամ երաժշտական լսողական բաղադրիչ:

Այսպիսով, երաժշտական լսողությունը չի կարելի դիտարկել որպես մեկ ունակություն, դա առնվազն երկու հիմնական ունակությունների համադրություն է:

Երաժշտական լսողության ձևավորումը կարող է հաջող սկսվել դեռ առաջին դասարանի երաժշտության դասերին: Նպատակաուղղված աշխատանքը այդ ուղղությամբ ստեղծում է բարենպաստ պայմաններ երաժշտության տարրերի ընկալման և հետագա զարգացման համար:

Ըստ Բ. Տեպլովի՝ ընդունակության հասկացությունը ներառում է 3 հատկանիշներ.

1. Ընդունակություն ասելով, մենք հասկանում ենք այն հոգեբանական-անհատական առանձնահատկությունները, որոնք տարբերում են մի մարդուն մյուսից:
2. Ընդունակություններ են կոչվում ոչ միայն ընդհանրապես անհատական առանձնահատկությունները, այլև այնպիսիները, որոնք առնչվում են ինչ-որ գործունեության կատարման հաջողության հետ:
3. Ընդունակություն հասկացությունը չի դասվում այն գիտելիքներին, որոնք արդեն մշակված են տվյալ մարդու հետ:

Ընդունակությունը, ըստ էության, դինամիկ հասկացողություն է և գոյություն ունի շարժման, զարգացման մեջ: Հաշվի առնելով այս, պետք է նկատել, որ զարգացումն իրականացվում է այս կամ այն գործնական կամ տեսական գործունեության ընթացքում: Հետևաբար, ընդունակությունը չի կարող առաջանալ առանց համապատասխան, կոնկրետ գործունեության:

Ընդունակությունների զարգացումը որպես գործընթաց կարող է ընթանալ սովորելու գործընթացին զուգընթաց, սակայն կախված չէ գիտելիքների յուրացումից, նկատի ունենալով, որ զարգացումը ծնում է նոր գիտելիք, արդեն ունեցած գիտելիքների նոր ասպեկտ (տեսանկյուն):

Դրա հետ մեկտեղ, ստեղծագործական ընդունակության զարգացումը չի ենթադրում «զարգացնողի», այսինքն՝ մարդու, որը ներգործում է անձի վրա հատկապես ստեղծագործական ընդունակությունները զարգացնելու նպատակով:

Միայն ընդունակությունների համաձայնեցումից և գուգորդումից է կախված որևէ գործունեության հաջողությունը:

«Երաժշտական ընդունակություն» տերմինը համարվում է «ամենաընդունելի և առավել անվտանգ» այն իմաստով, որ այն ենթադրում է գործելու ունակություն, սակայն չի նշում «ենթադրյալ ժառանգական պոտենցիալի կամ ենթադրվող ունակությունների բնածին լինելու մասին»:

Երաժշտական ընդունակությունը տերմին է, որն օգտագործում ենք, երբ խոսում ենք երաժշտություն սովորելու հնարավորության՝ հատկապես երաժշտական հմտությունների զարգացման մասին:

Անդրադառնալով երաժշտական ընդունակություններին՝ պետք է նշել Բ. Մ. Տեպլովի մեծ դերը այդ ընդունակությունների մշակման և բնորոշման գործում: Այստեղ մեծ տեղ է զբաղեցնում «երաժշտական օժտվածություն» հասկացությունը, որը Բ. Տեպլովի կողմից բնորոշվում է որպես ընդունակությունների որակական յուրօրինակ գույակցում, որից կախված է երաժշտական գործունեությամբ հաջող զբաղվելու հնարավորությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, երաժշտական գործունեության հաջողությունը որոշվում է երաժշտական (և ոչ միայն երաժշտական) ընդունակությունների ամբողջական զարգացմամբ և համատեղ գործունեությամբ:

Երաժշտական մանկավարժության գլխավոր նպատակը հանդիսանում է սովորողների մոտ հմտությունների ձևավորումը և դրանց համադրումը գիտելիքին՝ լավագույնս խթանելով երաժշտությունը հասկանալուն և կատարելուն: Ահա այս վերջնական նպատակների ճանապարհին առկա են միջանկյալ նպատակներ. լսողության, ռիթմի, հիշողության զարգացում: Այս ամենի զարգացման շնորհիվ կիրագործվի երաժշտության ամբողջական ընկալումն ու վերարտադրումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մելիքսեթյան Գ. (2007), Դպրոցականների բազմաձայն մտածողության ձևավորումը երաժշտության դասին, Երևան, «Հայաստան» հրատ.:
2. Յուզբաշյան Յու., Վեյս Պ. (1982), Կրտսեր դպրոցականների երաժշտական մտածողության զարգացումը, մեթոդական ձեռնարկ, Երևան, «Լույս» հրատ.:
3. Агажанов А. (1977), Воспитание музыкального слуха. Сборник статей, Москва, «Музыка».
4. Гейнрихс И. (1978), Музыкальный слух и его развитие, Москва, «Музыка».
5. Давыдова Е. (1975), Методика преподавания сольфеджио, Москва, «Музыка».
6. Серединская В. (1962), Развитие внутреннего слуха в классах сольфеджио, Москва, «Музгиз».
7. Теплов Б. (1947), Психология музыкальных способностей, Москва, Ленинград, АПН РСФСР.
8. <http://all-2music.com/> - Виды музыкального слуха

REFERENCES

1. Meliksetyan G. (2007), Dprocakanneri bazmad'ayn mtac'oghowt'yan d'avorowmy' erajhshtowt'yan dasin /The Development of Musical Hearing in Preschool Children/, Yerevan, "Hayastan" Publishing House,.
2. Yuzbashyan Yu., Veys P. (1982), Krtser dprocakanneri erajhshtakan mtac'oghowt'yan zargacowmy' /The Development of Musical Thinking in Primary Schoolchildren/, A Methodological Manual, Yerevan, "Luys" Publishing House.
3. Agazhanov A. (1977), Vospitaniye muzykal'nogo slukha /The Development of MusicalHearing. Collection of Articles/, Moscow, "Muzyka".
4. Heinrichs I. (1978), Muzykal'nyy slukh i yego razvitiye /Musical Hearing and its Development/, Moscow, "Muzyka".
5. Davydova E. (1975), Metodika prepodavaniya sol'fedzhio /Methods of teaching solfeggio/, Moscow, "Muzyka".

6. **Seredinskaya V. (1962)**, Razvitiye vnutrennego slukha v klassakh sol'fedzhio /The Development of inner Hearing in Solfeggio Classes/, Moscow, “Muzyka”.
7. **Teplov B. (1947)**, Psikhologiya muzykal'nykh sposobnostey /Psychology of musical abilities, Moscow-Leningrad/, Academy of Pedagogical Sciences of the RSFSR.
8. <http://all-2music.com/> - Vidy muzykal'nogo slukha /Types of Musical Hearing/

Armine Hayrapetyan

Musical ear as a means of developing musical abilities

Conclusion

***Key words and expressions:** Art, musical ear, mode, musical ability, improvisation, aesthetic values, musical activity.*

The priority of cultural values, along with the individual`s moral-psychological development and creative-emotional attitude toward the world, ensures the stable development of society.

A significant role is given to supplementary art education institutions in developing the spiritual culture of the younger generation. They are intended to acquaint children with aesthetic values, develop their creative abilities, and shape positive value orientations.

The objective of music pedagogy is to develop learners' competencies that enable conscious perception and performance of music. Systematic and purposeful instruction in this area creates favorable conditions for mastering musical elements and fostering their further development.

Music, as a form of art, has great spiritual and moral potential, serves as a means of aesthetically comprehending life, and reflects the diversity of life phenomena, contributing to the artistic understanding of the world.

Musical activity is distinguished by its unique characteristics and presupposes the presence of a number of qualities necessary for its realization: innate musical inclinations,

emotional sensitivity and receptivity, a well-developed psychomotor domain, musical abilities, and so on.

This article emphasizes the importance of musical hearing, the development of which is achieved through abilities.

Армине Айрапетян

Музыкальный слух как средство развития музыкальных способностей

Заключение

Ключевые слова и выражения: Искусство, музыкальный слух, лад, музыкальные способности, импровизация, эстетические ценности, музыкальная деятельность.

Приоритет культурных ценностей, направленность морально-психологического пазвития личности и ее творчвского-эмоциональное отношение к миру обеспечивают стабильное развитие общества.

Большая роль отводится дополнительным образовательным упреждениям искусства в развитии духовной культуры подрастающего поколения. Они предназначены для ознакомления детей с эстетическими ценностями, развития творческих способностей и формирования положительных ценностных ориентиров.

Цель музыкальной педагогики заключается в развитии у обучающихся умений и навыков, обеспечивающих осознанное восприятие и исполнительскую деятельность в области музыки. Систематическая и целенаправленная работа в данном направлении способствует созданию благоприятных условий для освоения музыкальных элементов и их дальнейшего совершенствования.

Музыка, как вид искусства, обладает большим духовным и нравственным потенциалом, является формой эстетического освоения жизни и отражает многообразие жизненных явлений, способствуя художественному познанию мира.

Музыкальная деятельность отличается своими особенностями и предполагает наличие ряда характеристик, необходимых для ее осуществления: врожденные

музыкальные склонности, эмоциональная чувствительность и восприимчивость, развития психомоторная сфера, музыкальные способности и т.д.

В данной статье подчеркивается важность музыкального слуха, развитие которого осуществляется благодаря способности.

Արմինե Հայրապետյան – Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Գեղարվեստական կրթության ֆակուլտետ, Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ երաժշտատեսական և երաժշտապատմական առարկաների ուսումնասիրում: Ունի հրատարակված մեկ հոդված:

arminehayrapetyan8888@gmail.com

Армине Айрапетян - Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна, факультет художественного образования, преподаватель кафедры музыкальной педагогики. Научные интересы: изучение музыкально-теоретических и музыкально-исторических дисциплин. Имеет одну опубликованную статью. arminehayrapetyan8888@gmail.com

Armine Hayrapetyan - Armenian State Pedagogical University named after Khachatur Abovyan, Faculty of Fine Art Education, lecturer at the Department of Music Pedagogy. Scientific interests: study of music theory and music history subjects. Has one published article. arminehayrapetyan8888@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 15.10.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 27.10.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ՄԱՆԵ ԲԱՐԵՂԱՍՅԱՆ

ԵՐԳՉԱԿԱՆ ՁԱՅՆԱԼԱՐԵՐԻ ԱՐՅՈՒՆԱԶԵՂՄԱՆ ՊԱԹՈԳԵՆԵԶԸ ԵՎ ԴՐԱ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.219

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում է երգչական ձայնի ձևավորումը, զարգացումն ու պահպանումը ինչպես մանկավարժական, այնպես էլ բժշկական տեսանկյուններից: Նշվում է, որ ձայնալարային հիվանդություններից ամենատարածված և առավել ռիսկայիններից է ձայնալարի արյունազեղումը (վոկալ հեմատոման), որը հաճախ է հանդիպում ձայնախոսքային գործունեություն ծավալող անձանց մոտ: Կլինիկական դրսևորումներն են՝ ձայնի հանկարծակի կորուստը, խոպոտության զգացումը, ռեզիստրային խանգարումներն ու փոփոխությունները ու վերին նոտաների կորուստը: Հիվանդության ախտորոշման հիմնական մեթոդները բժշկական են՝ վիդեոլարինոսկոպիա, վիդեոստրոբոսկոպիա և ձայնային ֆունկցիոնալ անալիզ: Վերականգնման և կանխարգելման հիմնական բաղադրիչը ձայնային հիգիենան է, որը ներառում է ձայնային ռեժիմի պահպանում, ֆիզիոլոգիական գործոնների վերահսկում և մասնագիտական հսկողություն: Բժշկական և մանկավարժական մեթոդների համադրությունը ապահովում է ձայնային ֆունկցիայի երկարաժամկետ կայունությունն և նվազեցնում կրկնվող վնասվածքների ռիսկը:

Բանալի բառեր և արտահայտություններ. ձայնալարի արյունազեղում, մասնագիտական ձայնագործունեություն, վնասվածքներ, գիտական գրականություն, կլինիկական դիտարկումներ, նյարդամկանային համակարգ, ախտորոշում, երգիչ, երգեցողություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հողվածում հիմնավորվում է, որ ձայնալարի արյունազեղումը (վոկալ հեմատոմա) սուր պաթոլոգիա է, որն առաջանում է ձայնալարերի անոթների պատման հետևանքով: Այն առավել հաճախ հանդիպում է մասնագիտական ձայնագործունեություն ծավալող անձանց մոտ: Վոկալ հեմատոման դասվում է ոչ թե զանգվածային տարածվածությամբ, այլ՝ բարձր ռիսկայնությամբ վնասվածքների շարքին, քանի որ այն կարող է հանգեցնել ձայնի որակի կտրուկ փոփոխությունների և երկարատև վերականգնման:

Ըստ բժիշկ Մարկուս Հեսսի դիտարկումների՝ արյունազեղման պատճառները բազմաբնույթ են. այն կարող է պայմանավորված լինել ինչպես անատոմիական նախատրամադրվածությամբ՝ մակերեսային էկտագացված անոթների առկայությամբ, այնպես էլ ձայնալարերի ուժեղ մեխանիկական լարումով՝ բարձր ինտենսիվությամբ խոսքի կամ երգեցողության ընթացքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունը կատարվել է մանկավարժական և բժշկական հետազոտության մեթոդներով և սկզբունքներով, ինչպես գիտական գրականության բովանդակային վերլուծության, այնպես էլ տեսակետների, փաստերի, բժշկական ածտորոշման արդյունքների համադրման և համեմատության սկզբունքներով և պատճառ-հետևանքային կապերի զուգադրման մեթոդներով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հիմնախնդրի վերաբերյալ միջազգային գիտական գրականության մեջ դեռևս չկան հստակ տվյալներ այս հիվանդության տարածվածության վերաբերյալ, ինչի հետևանքով դժվար է գնահատել դրա իրական հաճախականությունը: Հետևաբար առկա հետազոտությունները հիմնականում սահմանափակվում են մասնագիտական խմբերի կլինիկական դիտարկումներով (Hess M., 2024):


Հետազոտությունները ապացուցում են, որ դիսֆոնիկ պացիենտների մոտ միկրոանոթային փոփոխությունները կազմում են միջինում 3.1 %, որոնց մեծ մասը պրոֆեսիոնալ երգիչներ են: Վերականգնման և կանխարգելման հիմնական բաղադրիչը ձայնային հիգիենան է, որը ներառում է ձայնային ռեժիմի

պահպանում, ֆիզիոլոգիական գործոնների վերահսկում և մասնագիտական հսկողություն:

Հիվանդության ախտորոշման հիմնական մեթոդները բժշկական են՝ վիզուալիզացիոնալ, վիզուալիզացիոնալ և ձայնային ֆունկցիոնալ անալիզ: Բուժումն իրականացվում է երկու մեթոդով, որը կախված է արյունազեղման ծավալից: Թեթև դեպքերում կիրառվում է բուժում ձայնային ռեժիմի պահպանմամբ և համապատասխան մանկավարժական պայմանների ապահովմամբ, իսկ միջին և մեծածավալ հեմատոմաների դեպքում՝ ֆոնոմիկրովիրահատություն և հետվիրահատական վոկալ թերապիա:

Բժշկական և մանկավարժական մեթոդների համադրությունը ապահովում է ձայնային ֆունկցիայի երկարաժամկետ կայունությունն և նվազեցնում կրկնվող վնասվածքների ռիսկը:

Բժիշկ Հեսարը կարևորում է ձայնալարերի նյարդամկանային համակարգի և լորձաթաղանթի ենթաշերտի վիճակը՝ որպես նախահիմք անոթային պատի խոցելիության և պատոման հավանականության բարձրացման համար: Հաճախ պատճառները ներառում են արյան մակարդեղիության խանգարումներ, ձայնալարերի պոլիպներ կամ կիստաներ, վարիկոզ կամ էկտազիա ձայնալարերում, սեռական հորմոնալ ազդեցություն, լարինգոֆարինգային ռեֆլյուքս: Արյունազեղման կլինիկական դրսևորումները բազմազան են:



Նկար 1.

Դրանցից առավել հաճախ հանդիպում են՝ ձայնի որակի հանկարծակի փոփոխությունը, ռեգիստրային խանգարումները, խոպոտությունը, վերին նոտաների կորստի զգացումը, ինչպես նաև կոկորդը մաքրելու հաճախակի ռեֆլեքսը: Երգիչների մոտ հնարավոր է բեմում ձայնի հանկարծակի կորուստ՝ մի քանի վայրկյանում:

Ձայնալարի արյունազեղման ախտորոշումն իրականացվում է բազմափուլ մոտեցմամբ՝ ներառելով տեսողական և ֆունկցիոնալ մեթոդներ: Այս առումով օգտագործվում են՝ վիդեոլարինգոսկոպիա՝ արյունազեղման փուլային գունային փոփոխությունների վիզուալ գնահատմամբ, վիդեոստրոբոսկոպիա՝ լորձաթաղանթի ալիքային շարժման որակական և քանակական գնահատման նպատակով, ձայնային ֆունկցիայի վերլուծություն՝ ներառյալ լսողական փորձաքննություն, խանգարման վերլուծություն, էլեկտրոգլոտոգրաֆիա և ֆոնետոգրամմետրիկ քարտեզում:

Բուժման մոտեցումը կախված է արյունազեղման ծավալից և տեղորոշումից: Թեթև դեպքերում կիրառվում է ձայնային ռեժիմ՝ 5–7 օրով, միջին և մեծածավալ հեմատոմաների դեպքում ցուցված է ֆոնոմիկրովիրահատություն (Spiegel J., 1996): Հազը, գրգռված խոսքը, կոկորդի մաքրումը և ձայնային ինտենսիվ լարումներն այս փուլում հակացուցված են: Անհրաժեշտության դեպքում օգտագործվում են հազը

զապող միջոցներ: Հետագա վերականգնման փուլում կարող է կիրառվել ձայնային թերապիա՝ ըստ մասնագետի ցուցման (**Kaneko H., et al., 2017**): Բժիշկ Հեսսը շեշտում է՝ մի անգամ արձանագրված արյունազեղումը բարձրացնում է դրա կրկնման հավանականությունը, ուստի կանխարգելումն ու պատճառն ամբողջությամբ հասկանալը հանդիսանում են բուժման երկարաժամկետ արդյունավետության երաշխիք (**Hess M., 2024**):

Postma և գործընկերների (1998) հետազոտության արդյունքում, որտեղ ուսումնասիրվել են 800 դիսֆոնիկ պացիենտներ, մոտ 3.1 %-ի մոտ հայտնաբերվել են մեկուսացված ձայնալարային միկրոանոթային փոփոխություններ (*varices* և *ectasias*): Նրանց 88 %-ը եղել են պրոֆեսիոնալ ձայնախոսքային մասնագետներ, որոնց զգալի մասը՝ երգիչներ: Նշվել է նաև սեռային տարբերություն. կանանց մոտ հանդիպման հաճախականությունը կազմել է 4.5 %, տղամարդկանց մոտ՝ 1.6 % (**Postma G., Blalock P., & Koufman J., 1998**).

Hochman, Sataloff, Hillman և Zeitels (1999) ուսումնասիրության մեջ ընդգրկված են եղել 42 հիվանդ, որոնցից 39-ը՝ երգիչներ: Ընդհանուր առմամբ հայտնաբերվել է 87 անոթային խանգարում, որոնց 77 %-ը գտնվել է ձայնալարի վերին մակերեսին, իսկ 83 %-ը՝ առավել ինտենսիվ շփման գոտում: Այս տվյալները վկայում են մեխանիկական լարման և անոթային խոցելիության ուղիղ կապի մասին պրոֆեսիոնալ վոկալիստների մոտ (**Postma G., Blalock P., & Koufman J., 1998**): Նման խնդրահարույց իրավիճակներում խորհուրդ է տրվում շեշտը դնել ձայնային հիգիենայի վրա՝ որպես բուժման և վերականգնման կարևոր բաղադրիչ:

Ձայնային հիգիենա

Ձայնային հիգիենան սահմանվում է որպես վարքագծային և կենսաբանական գործոնների համակցություն, որոնք ուղղված են ձայնալարերի ֆունկցիոնալ առողջության պահպանմանը և ձայնային խանգարումների կանխարգելմանը: Այն ունի հիմնարար նշանակություն հատկապես մասնագիտական ձայնագործունեություն ծավալող անձանց՝ երգիչների, դերասանների, մանկավարժների և խոսնակների համար:

Ըստ գիտական գրականության՝ ձայնային հիգիենայի պահպանման հիմնական բաղադրիչներն են.

- 1. Հեղուկի բավարար ընդունումը և լորձաթաղանթի խոնավության ապահովումը:** Օրվա ընթացքում անհրաժեշտ է ապահովել բավարար հիդրատացիա (միջինը շուրջ 2 լիտր), ինչպես նաև խուսափել չոր օդային միջավայրից, որի դեպքում նպատակահարմար է կիրառել օդի խոնավացուցիչներ:
- 2. Ձայնային ռեժիմի պահպանումը:** Պետք է խուսափել ձայնի չարաշահումից, մասնավորապես՝ երկարատև բարձր ձայնով խոսքից, բղավոցից կամ շշուկից: Ձայնալարերի վրա ավելորդ ճնշումը և մեխանիկական գերլարումը համարվում են պաթոլոգիաների հիմնական ռիսկի գործոններ:
- 3. Ֆիզիոլոգիական գործոնների վերահսկումը:** Վերին շնչուղիների հիվանդությունների (ռինիտ, ֆարինգիտ, լարինգիտ) ժամանակին բուժումը, ինչպես նաև գաստրոէզոֆագեալ ռեֆլյուքսի և ալերգիկ գործոնների կառավարումը կարևոր են ձայնալարերի ֆունկցիայի պահպանման համար: Ծխախոտի և ալկոհոլի օգտագործումը համարվում են բարձր ռիսկային գործոններ:
- 4. Վոկալ նախապատրաստումը և տաքացումը:** Մասնագիտական ձայնագործությունը պահանջում է նախնական վոկալ տաքացման և ֆոնացիոն վարժությունների իրականացում՝ ձայնալարերը բարձր ինտենսիվությամբ աշխատանքի պատրաստելու նպատակով: Տաքացման բացակայությունը մեծացնում է վնասվածքների հավանականությունը: Երգեցողությունը նման է սպորտի, ինչպես մարզիկն է տաքացնում իր մկանները մրցումներից առաջ, նույն կերպ էլ երգիչն է տաքացնում մկանները ծանրաբեռնելուց առաջ:
- 5. Կենցաղային սովորությունները:** Խորհուրդ է տրվում սահմանափակել կոֆեինի, ալկոհոլի, ինչպես նաև չափազանց աղի կամ կծու սննդի օգտագործումը, որոնք ունեն լորձաթաղանթը գրգռող կամ չորացնող ազդեցություն: Բավարար քունն ու ընդհանուր առողջ կենսակերպը

նույնպես կարևոր դեր են խաղում ձայնային հիգիենայի պահպանման գործում:

6. **Մասնագիտական վերահսկումը:** Պրոֆեսիոնալ ձայնախոսքային մասնագետների համար կարևոր է պարբերաբար անցնել հետազոտություններ ֆոնիատորի կամ ԼՕՌ բժշկի մոտ: Խոպտոտության, ձայնային հոգնածության կամ ցավի առկայության դեպքում անհրաժեշտ է անհապաղ դիմել մասնագետի և խուսափել ինքնաբուժումից (**Saeedi S., et al., 2023; Hancock R., 2014**):

Պետք է հիշել, որ ձայնը նույնպես համարվում է աշխատանքային գործիք, որը պետք է զարգացնել ու պահպանել:

Մեր կողմից առաջարկվող ձայնի հիգիենայի պահպանումը և **երաժշտական թերապիայի, հաղորդակցական խաղերի կիրառման, երգչական ազատության զարգացման, ռեզոնանսային, ֆոնետիկ/հնչյունային/, ֆոնոպեդիկ մեթոդները, ֆիզիոլոգիական երևույթների հաշվառումը** թույլ կտան ուսանողներին ձեռք բերել գիտելիքներ, հմտություններ և կարողություններ՝ ձայնային ապարատի աշխատանքի, ձայնալարերի հիվանդություններից խուսափելու վերաբերյալ՝ վոկալական, վոկալ-խոսքային և խոսքային ռեժիմներում, իմչպես նաև ինքնուրույն աշխատել սեփական ձայնի կառավարման, թերությունների շտկման և պահպանման վրա:

Դրանք էականորեն կբարձրացնեն ուսանողների՝

- վոկալ-տեխնիկական և վոկալ-կատարողական հմտությունների մակարդակը,
- պրոֆեսիոնալ ձայնային գործունեության տեսական, մեթոդական և գործնական պատրաստվածության մակարդակը,
- ուսանողների հետաքրքրվածությունը ձայնի զարգացման և պահպանման գործում,
- մասնագիտական ձայնային գործունեության հանդեպ հուզական ինտելեկտը,

- կապահովի ձայնի ձևավորման ապարատի կայունությունը արտաքին և ներքին բացասական գործոնների ազդեցության նկատմամբ,
- կնվազեցնի ձայնային ծանրաբեռնվածության և խանգարումների ռիսկի աստիճանը, որոնք առաջանում են մասնագիտական գործունեության ընթացքում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով երգչական ձայնալարերի արյունազեղման պաթոգենեզը և դրա հաղթահարման մանկավարժական մեթոդները, մենք արձանագրում ենք.

- ձայնալարի արյունազեղումը (վոկալ հեմատոմա) սուր պաթոլոգիա է, որն առաջանում է ձայնալարերի անոթների պատման հետևանքով: Այն առավել հաճախ հանդիպում է մասնագիտական ձայնագործունեություն ծավալող անձանց մոտ: Վոկալ հեմատոման դասվում է ոչ թե զանգվածային տարածվածությամբ, այլ՝ բարձր ռիսկայնությամբ վնասվածքների շարքին, քանի որ այն կարող է հանգեցնել ձայնի որակի կտրուկ փոփոխությունների և երկարատև վերականգնման:
- Հիմնախնդրի վերաբերյալ միջազգային գիտական գրականության մեջ դեռևս չկան հստակ տվյալներ այս հիվանդության տարածվածության վերաբերյալ, ինչի հետևանքով դժվար է գնահատել դրա իրական հաճախականությունը: Հետևաբար առկա հետազոտությունները հիմնականում սահմանափակվում են մասնագիտական խմբերի կլինիկական դիտարկումներով:
- Հիվանդության ախտորոշման հիմնական մեթոդները բժշկական են՝ վիդեոլարինոսկոպիա, վիդեոստրոբոսկոպիա և ձայնային ֆունկցիոնալ անալիզ: Բուժումն իրականացվում է երկու մեթոդով, որը կախված է արյունազեղման ծավալից: Թեթև դեպքերում կիրառվում է բուժում ձայնային ռեժիմի պահպանմամբ և համապատասխան մանկավարժական պայմանների ապահովմամբ, իսկ միջին և մեծածավալ հեմատոմաների դեպքում՝ ֆոնոմիկրովիրահատություն և հետվիրահատական վոկալ թերապիա:

- Բժշկական և մանկավարժական մեթոդների համադրությունը ապահովում է ձայնային ֆունկցիայի երկարաժամկետ կայունությունն և նվազեցնում կրկնվող վնասվածքների ռիսկը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ/ REFERENCES

1. Hancock R. (2014). When vocal fold blood vessels are not up to the task!. Journal of Voice, 28(6), 679–680. <https://doi.org/10.1016/j.jvoice.2013.12.004>
2. Hess M. (2024). Singers with Vocal Fold Hemorrhage [YouTube video]. Union of European Phoniaticians. <https://www.youtube.com/watch?v=5fC0DOJuB1k>
3. Postma G., Blalock P., & Koufman J. (1998), Microlaryngoscopic surgery in singers: Variances, ectasias, and hemorrhagic polyps. Journal of Voice, 12(3), 300–306. [https://doi.org/10.1016/S0892-1997\(98\)80024-7](https://doi.org/10.1016/S0892-1997(98)80024-7)
4. Saeedi S., et al. (2023), The Vocal Hygiene Treatment Programs for Singers. Journal of Voice, 37(4), 509–515. <https://doi.org/10.1016/j.jvoice.2022.03.015>
5. Spiegel J. (1996), Voice rest in the management of vocal fold hemorrhage. Journal of Voice, 10(2), 153–157. [https://doi.org/10.1016/S0892-1997\(96\)80018-9](https://doi.org/10.1016/S0892-1997(96)80018-9)
6. Kaneko H., et al. (2017), Voice rest duration and voice therapy in the management of vocal fold hemorrhage. Laryngoscope Investigative Otolaryngology, 2(6), 352–358. <https://doi.org/10.1002/lio2.109>
7. Hancock R. (2014). When vocal fold blood vessels are not up to the task!. Journal of Voice, 28(6), 679–680. <https://doi.org/10.1016/j.jvoice.2013.12.004>

Mane Bareghamyan

Pathogenesis of Vocal Fold Hemorrhage in Singers and Pedagogical Methods

for Its Overcoming

Conclusion

Key words and expressions: vocal fold hemorrhage, professional voice activity, injuries, scientific literature, clinical observations, neuromuscular system, diagnosis, singer, vocal performance.

The article examines the formation, development, and maintenance of the singing voice from both pedagogical and medical perspectives. It is noted that one of the most common and high-risk vocal fold disorders is vocal fold hemorrhage (vocal hematoma), frequently observed among individuals engaged in professional voice use. Clinical manifestations include sudden voice loss, hoarseness, register disturbances, and loss of upper notes. The main diagnostic methods are medical—videolaryngoscopy, videostroboscopy, and voice functional analysis. The core component of recovery and prevention is vocal hygiene, which involves maintaining an appropriate vocal regimen, controlling physiological factors, and undergoing professional supervision. The integration of medical and pedagogical approaches ensures long-term stability of vocal function and reduces the risk of recurrent injuries.

Мане Барегамян

Патогенез кровоизлияния в певческие голосовые складки и педагогические методы его преодоления

Заключение

Ключевые слова и выражения: кровоизлияние в голосовую складку, профессиональная голосовая деятельность, травмы, научная литература, клинические наблюдения, нервно-мышечная система, диагностика, певец, вокальное искусство.

В статье рассматриваются формирование, развитие и сохранение певческого голоса как с педагогической, так и с медицинской точек зрения. Отмечается, что одним из наиболее распространённых и опасных заболеваний голосовых складок является кровоизлияние в голосовую складку (вокальный гематом), которое часто встречается у лиц, занимающихся голосовой профессиональной деятельностью. Клинические проявления включают внезапную потерю голоса, ощущение хрипоты, нарушения регистров и потерю верхних нот. Основными методами диагностики являются медицинские - видеоларингоскопия, видеостробоскопия и функциональный анализ голоса. Ключевым компонентом восстановления и

профилактики является голосовая гигиена, включающая соблюдение голосового режима, контроль физиологических факторов и профессиональное наблюдение. Сочетание медицинских и педагогических методов обеспечивает долгосрочную стабильность голосовой функции и снижает риск повторных повреждений.

Մանե Բարեղամյան – Խ. Արվյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Երաժշտության մանկավարժության ամբիոնի հայցորդ,
mbareghamyan@gmail.com
<https://orcid.org/0009-0000-9822-5096>

Мане Барегамян - Соискатель кафедры музыкальной педагогики АГПУ им. Х. Абовяна (Ереван, Армения), mbareghamyan@gmail.com
<https://orcid.org/0009-0000-9822-5096>

Mane Vareghamyan - Petitioner Kh. Abovyan Armenian State Pedagogical Chair of music pedagogy (Yerevan, Armenia), mbareghamyan@gmail.com
<https://orcid.org/0009-0000-9822-5096>

Խմբագրություն է ուղարկվել 08.12.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 17.12.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

ԷԴԳԱՐ ԱՄԻՐՅԱՆ
ՍՊԱՐՏԱԿ ՍՈՂՈՅԱՆՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱՆ ԹՎԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՁԱՆՈՒՄ՝
ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ (AI) ԵՎ ՎԻՐՏՈՒԱԼ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
(VR) ՄԻՋՈՑՈՎ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i71.220

ԱՄՓՈՓՈՒՄ

Այս ուսումնասիրությունը քննարկում է **արհեստական բանականության (AI)** և **վիրտուալ իրականության (VR)** ինտեգրման ազդեցությունը կրթական գործընթացի վրա: Հիմնական նպատակն է ստեղծել **խելացի վիրտուալ ուսուցման միջավայրեր (IVLE)**, որոնք ապահովում են ուսուցման անհատականացում և բարձր ներգրավվածություն:

Ժամանակակից մանկավարժությունը պահանջում է կրթական գործընթացների հարմարեցում (ադապտիվություն) և անհատականացում՝ հաշվի առնելով սովորողների ճանաչողական կարիքների բազմազանությունը: Սույն ուսումնասիրությունը վերլուծում է **արհեստական բանականության (AI)** և **վիրտուալ իրականության (VR)** տեխնոլոգիաների ինտեգրված կիրառումը՝ ստեղծելով **խելացի վիրտուալ ուսուցման միջավայրեր (IVLE)**: AI-ն գործում է որպես ադապտիվ գնահատման և կանխատեսող վերլուծության համակարգ, մինչդեռ VR-ը հեշտացնում է **մարմնավորված ճանաչողությունը** և փորձառական ուսուցումը: Էմպիրիկ տվյալները, որոնք ստացվել են պատմության և կենսաբանության դասընթացներում անցկացված փորձարկումների միջոցով, հաստատում են, որ այս տեխնոլոգիաների սիներգիան զգալիորեն բարձրացնում է սովորողների **ներգրավվածությունը**, **մետաճանաչողական հմտությունները** և ուսուցման ընդհանուր արդյունավետությունը: Հոդվածը եզրակացնում է, որ IVLE-

ները հիմնաքար են հանդիսանում կրթության նոր, ավելի ներառական և ճկուն պարադիգմի համար:

Բանալի բառեր և արտահայտություններ. արհեստական բանականություն (AI), վիրտուալ իրականություն (VR), թվային մանկավարժություն, ինելացի վիրտուալ ուսուցման միջավայրեր (IVLE), ադապտիվ ուսուցում, իմերսիվ ուսուցում, կրթական տեխնոլոգիաներ, անհատականացված ուսուցում, մարմնավորված ճանաչողություն, ներառական կրթություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարի կրթական համակարգերը բնութագրվում են արագ տեխնոլոգիական էվոլյուցիայով, որտեղ թվային գործիքները դադարում են լինել պարզապես օժանդակ միջոցներ և դառնում են մանկավարժության անբաժանելի մասը: AI-ն և VR-ը գլխավորում են այս տրանսֆորմացիան՝ առաջարկելով լուծումներ ավանդական կրթության հիմնախնդիրներին՝ անհատական մոտեցման բացակայություն և պասիվ ուսուցում:

AI-ն, օգտագործելով **մեքենայական ուսուցման (Machine Learning)** մոդելները, թույլ է տալիս իրականացնել ուսանողի ուսումնական ուղու դինամիկ մոդելավորում: VR-ը, իր հերթին, ապահովում է **բարձր իմերսիվ** փորձառություն, որը կապում է տեսական գիտելիքը պրակտիկ կոնտեքստի հետ, նպաստելով հմտությունների ամրապնդմանը առանց ռիսկի:

Ուսումնասիրության նպատակներն են՝

1. Վերլուծել AI-ի և VR-ի կոգնիտիվ-մանկավարժական կիրառման տեսական մոդելները:
2. Գնահատել դրանց համատեղ ազդեցությունը ուսումնական գործընթացի որակի և սովորողի ինքնակարգավորման վրա:
3. Ներկայացնել անցկացված էմպիրիկ փորձարկումների արդյունքները՝ հիմնված կոնկրետ առարկայական ոլորտների վրա:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը բազմակողմանի է՝ միավորելով տեսական վերլուծությունը գործնական դիտարկումների հետ:

Մեթոդաբանական մոտեցումներ

1. Համակարգված գրականության վերլուծություն (Systematic Review).

Ուսումնասիրվել են առաջատար գիտական շտեմարաններում (Scopus, Web of Science) 2018-2024 թթ. հրատարակված peer-reviewed հոդվածները՝ կապված ադապտիվ ուսուցման համակարգերի (ALS) և իմերսիվ տեխնոլոգիաների հետ:

2. Տեսական շրջանակի կիրառում. Վերլուծության հիմքում դրված են **Կառուցողականիզմի** (սովորողը ակտիվ գիտելիք կառուցող է), **կոգնիտիվ բեռի տեսության** (AI-ի դերը կոգնիտիվ բեռի օպտիմալացման մեջ) և **մարմնավորված ճանաչողության** (VR-ի միջոցով) սկզբունքները:

3. Էմպիրիկ դիտարկում. Իրականացվել են դիտարկումներ և որակական վերլուծություն՝ պատմության և կենսաբանության դասընթացներում VR և AI գործիքների ինտեգրումից հետո սովորողների հուզական արձագանքների, ներգրավվածության և կոնցեպտուալ սխալների հաճախականության վերաբերյալ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ա. AI-ի դերը ադապտիվ ուսուցման մեջ

AI-ն ապահովում է ոչ թե պարզ ավտոմատացում, այլ **մանկավարժական բանականություն**:

- **Կանխատեսող վերլուծություն.** Խորը Ուսուցման ակտիվությունները վերլուծում են սովորողի ներգրավվածության (մկնիկի շարժում, պատասխանների տեմպ) և առաջընթացի տվյալները՝ կանխատեսելով ուսումնական ձախողման հավանականությունը նախքան դրա տեղի ունենալը:
- **Ավտոմատ հետադարձ կապ (NLP).** Բնական Լեզվի Մշակման տեխնոլոգիան թույլ է տալիս ապահովել անհատականացված, ակնթարթային և բովանդակային ուղղիչ հետադարձ կապ՝ հատկապես լեզուների և էսսեների գնահատման ժամանակ:

Բ. VR-ը և մարմնավորված ճանաչողությունը

VR-ը հնարավորություն է տալիս սովորողներին «քայլել» դեպի նյութը՝ դարձնելով այն զգայական: Այս տեխնոլոգիայի միջոցով իրականացվում է **մարմնավորված ճանաչողության** սկզբունքը, որտեղ մարմնական փոխազդեցությունը վիրտուալ միջավայրի հետ ամրապնդում է գիտելիքը:

- **Վտանգազերծված պրակտիկա.** Բարդ ոլորտներում (վիրաբուժություն, ինժեներական նախագծում) VR սիմուլյացիաները թույլ են տալիս կրկնել և սխալվել առանց որևէ իրական ռիսկի կամ ծախսի:

Գ. AI և VR սիներգիան՝ խելացի վիրտուալ ուսուցման միջավայրեր (IVLE)

Այս երկու տեխնոլոգիաների համադրումը ստեղծում է **ադապտիվ իմերսիվ ուսուցում**: AI-ն կառավարում է VR սիմուլյացիայի դինամիկան՝ ճշգրտելով դժվարության աստիճանը, սցենարի բարդությունը և վիրտուալ ուսուցչի (avatar) դերը՝ հիմնվելով սովորողի իրական ժամանակի ռեակցիաների վրա:

Դ. Էմպիրիկ փորձարկումների արդյունքները

Մի շարք կրթական կենտրոններում, այդ թվում՝ **GoUp 3D Centre**-ում, իրականացվել են փորձարարական դասապրոցեսներ երկու առանցքային ոլորտներում՝ հաստատելով տեսական դրույթները:

Ուսումնական ոլորտ	VR/AI Կիրառման նպատակը	Հիմնական արդյունքը
Պատմական իրադարձություններ	Փորձառական (Immersive) ներկայություն պատմական դարաշրջանում:	Զգալիորեն բարձրացած կոնտեքստուալ ընկալում և հուզական ներգրավվածություն՝ բարելավելով պատմական գիտելիքի ամրապնդումը:
Կենսաբանություն	Բարդ մոլեկուլային կառուցվածքների և բջջային գործընթացների 3D մանիպուլյացիա:	Բարձրացած տարածական մտածողություն և հայեցակարգային սխալների կտրուկ նվազում:

Դասապրոցեսների ընդհանուր արդյունավետությունը գնահատվել է որպես **շատ հետաքրքիր և արդյունավետ**, որը հիմնված է սովորողների կողմից մոտիվացիայի և ակտիվ մասնակցության բարձր ցուցանիշների վրա:

Մանկավարժական ազդեցություն

AI և VR-ի կիրառումը նպաստում է **կառուցողականիզմի** սկզբունքի իրացմանը՝ սովորողին դարձնելով գիտելիքի ակտիվ կառուցող: Այն նաև կարևոր դեր ունի **ներատական կրթության** ապահովման գործում՝ վերացնելով ֆիզիկական խոչընդոտները և ապահովելով հատուկ կարիքներ ունեցող սովորողների համար հարմարեցված գործիքներ:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել էթիկական մարտահրավերներին, մասնավորապես՝ անձնական և կոգնիտիվ տվյալների գաղտնիության պահպանմանը և **թվային անջրպետի** (Digital Divide) խորացմանը: AI և VR -ի կիրառումը արդյունավետ է նաև ժամանակի ռացիոնալ օգտագործման համար, գործիքների ճիշտ կիրառման շնորհիվ հնարավոր է դառնում շատ արագ և թիրախային ինֆորմացիայի ձեռքբերումը՝ ինչը հնարավորություն է տալիս մանկավարժին և ուսանողին կամ աշակերտին նաև վիզուալ տեսնել այդ կրթական նյութերի 3d և 2d պատկերները ինչը նպաստում է ուսումնական որակի բարձրացմանը: Կատարելով մի քանի կրթական հաստատություններում գիտական փորձեր, բավականին բարդ և ծավալուն նյութերի վերաբերյալ ունեցել ենք հետևյալ արդյունքները: Լսարանի կամ դասարանի գրեթե 100%-ի մասնակցությունը բարձրացրել է առարկայի հանդեպ հետաքրքրությունը և մատչելիությունը:

Արհեստական բանականության շնորհիվ համալրել ենք պատրաստի նյութը, որը VR -ի օգնությամբ դարձրել ենք ավելի շոշոփելի կատարելով մի շարք գիտափորձեր, ինչը մանկավարժին տվել է հավելյալ գործիքներ ուսման որակը բարելավելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

AI և VR տեխնոլոգիաները ներկայացնում են մանկավարժության զարգացման նոր և որակապես բարձր փուլ, որտեղ ուսուցումը դառնում է առավել

անհատականացված, իմերսիվ և տվյալների վրա հիմնված: Համատեղ կիրառման դեպքում դրանք ձևավորում են խելացի վիրտուալ ուսուցման միջավայրեր (IVLE), որոնք զգալիորեն գերազանցում են ավանդական ուսուցման մեթոդների արդյունավետությանը, հատկապես բարդ հայեցակարգերի ընկալման և պրակտիկ հմտությունների փոխանցման գործընթացում: Էմպիրիկ ապացույցները ցույց են տալիս, որ նման միջավայրերում իրականացվող դասապրոցեսները դառնում են ավելի արդյունավետ, հետաքրքիր և մոտիվացնող՝ նպաստելով սովորողների ակտիվ մասնակցությանը, ինքնակարգավորմանը և մետաձանաչողական հմտությունների զարգացմանը: Բացի այդ, AI-ի միջոցով հնարավոր է իրականացնել ուսուցման շարունակական մոնիթորինգ և ադապտիվ կառավարում, իսկ VR-ը ստեղծում է անվտանգ և փորձառական ուսումնական միջավայր: Կրթական հաստատությունները պետք է կենտրոնանան այս տեխնոլոգիաների լայնածավալ, համակարգված և էթիկապես պատասխանատու ներդրման վրա՝ ապահովելով ուսուցիչների պատրաստվածությունը և նպաստելով նոր սերնդի սովորողների պատրաստմանը ապագա կրթական և մասնագիտական մարտահրավերներին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ/ REFERENCES

1. **Holmes W., Bialik M., & Fadel C. (2019)**, Artificial Intelligence in Education. Center for Curriculum Redesign.
2. **Luckin R. (2018)**, Machine Learning and Human Intelligence: The Future of Education in the 21st Century. UCL Institute of Education Press.
3. <https://hspublishing.org/JRECS/article/view/779>
4. <https://www.syncsci.com/journal/AMLER/article/view/AMLER.2025.02.018>

Edgar Amiryan, Spartak Soghoian

**Transforming Education in the Digital Age with Artificial Intelligence (AI)
and Virtual Reality (VR)**

Conclusions

Key words and expressions: *Artificial Intelligence (AI), Virtual Reality (VR), Digital Pedagogy, Intelligent Virtual Learning Environments (IVLE), Adaptive Learning, Immersive Learning, Educational Technologies, Personalized Learning, Embodied Cognition, Inclusive Education.*

AI and VR technologies represent a new and qualitatively advanced phase in the development of pedagogy, where learning becomes more personalized, immersive, and data-driven. When applied together, these technologies create Intelligent Virtual Learning Environments (IVLEs) that significantly surpass traditional teaching methods in effectiveness, especially in the acquisition of complex concepts and the development of practical skills. Empirical evidence indicates that classroom processes conducted within such environments become more efficient, engaging, and motivating, promoting active learner participation, self-regulation, and metacognitive skill development. Moreover, AI enables continuous monitoring and adaptive management of learning, while VR provides a safe and experiential educational environment. Educational institutions should focus on the widespread, systematic, and ethically responsible implementation of these technologies, ensuring teacher preparedness and supporting the development of a new generation of learners ready to face future educational and professional challenges.

Эдгар Амирян, Спартак Согоян

Трансформация образования в цифровую эпоху с помощью искусственной интеллекта(AI) и виртуальной реальности (VR)

Заклучение

Ключевые слова и выражения: *искусственный интеллект (AI), виртуальная реальность (VR), цифровая педагогика, интеллектуальные виртуальные образовательные среды (IVLE), адаптивное обучение, иммерсивное обучение, образовательные технологии, персонализированное обучение, воплощённое познание, инклюзивное образование.*

Технологии искусственного интеллекта (AI) и виртуальной реальности (VR) представляют собой новый и качественно более высокий этап развития педагогики, в рамках которого обучение становится более персонализированным, иммерсивным и основанным на данных. При совместном применении данные технологии формируют интеллектуальные виртуальные образовательные среды (IVLE), которые значительно превосходят традиционные методы обучения по эффективности, особенно в процессе освоения сложных концепций и формирования практических навыков. Эмпирические данные свидетельствуют о том, что учебные процессы, реализуемые в таких средах, становятся более результативными, интересными и мотивирующими, способствуя активному участию обучающихся, развитию саморегуляции и метакогнитивных навыков. Кроме того, использование AI позволяет осуществлять непрерывный мониторинг и адаптивное управление обучением, а VR создает безопасную и экспериментальную образовательную среду. Образовательные учреждения необходимо сосредоточиться на широком, системном и этически ответственном внедрении данных технологий, обеспечивая подготовку педагогов и содействуя подготовке нового поколения обучающихся к будущим образовательным и профессиональным вызовам.

Էդգար Ամիրյան - ՇՊՀ-ի Մանկավարժության տեսություն և պատմություն ամբիոնի հայցորդ, edgaramir19@gmail.com

Սպարտակ Սողոյան – Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Հեղինակ է շուրջ 21 հոդվածի: sogspartak@mail.ru

Эдгар Амирян - Соискатель кафедры теории и истории педагогики, Ширакский государственный университет, Гюмри, Армения. edgaramir19@gmail.com

Спартак Согоян - Доктор педагогических наук, профессор. Согоян Спартак.
Автор около двадцати одного научного статьи. sogspartak@mail.ru

Edgar Amiryan - PhD Student at the Chair of Theory and History of Pedagogy, Shirak State University, Gyumri, Armenia. edgaramir19@gmail.com

Spartak Soghojan - Doctor of Pedagogical Sciences, Professor. Sogoyan Spartak,.
Author of approximately twenty-one academic articles. sogspartak@mail.ru

Խմբագրություն է ուղարկվել 03.12.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 19.12.2025թ.

Հրատարակման է ներկայացվել 14.01.2026թ.

*«Հայագիտական հանդես» ամսագրի խմբագրությունը չեզոքություն է դրսևորում
հոդվածներում արտահայտած կարծիքների ու տեսակետների նկատմամբ:*